

Տեղական ինքնակառավարման համակարգի պարգացում. համայնքների խոշորացում և միջհամայնքային համագործակցություն

ՀՀ Սյունիքի մարզի օրինակով



ՀՀ տարածքային
կառավարման
նախարարություն

giz **BMZ**



On behalf of
Federal Ministry
for Economic Cooperation
and Development

**Տեղական ինքնակառավարման համակարգի
վարգացում. համայնքների խոշորացում և
միջհամայնքային համագործակցություն**

ՀՀ Սյունիքի մարզի օրինակով

Երևան, 2011

Բրոշյուրը հրատարակվել է հայ-գերմանական պարգաճման գործընկերության «Համայնքային և տնտեսական պարգաճումը Հայաստանում» ծրագրի շրջանակում:

Հեղինակներ՝
Վահան Մովսիսյան
Սարգիս Թովմասյան
Էդգար Ղապարյան

Նախաբան

Տեղական ժողովրդավարության ամրապնդումը և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների բարելավումը Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթ խնդիրների շարքում են:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության երկարաժամկետ գործընկերն է պետական հատվածի բարեփոխումների քաղաքականության իրականացման գործում, որն ուղղված է նաև համայնքների մակարդակով ժողովրդավարության և ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ համագործակցությունը Գերմանիայի տնտեսական գործակցության և զարգացման դաշնային նախարարության («BMZ») պատվերով իրագործում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը («GIZ»):

2006 թվականից սկսած՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և տարածքային կառավարման նախարարությունը GIZ-ի համագործակցությամբ քայլեր են ձեռնարկում համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների հայեցակարգային մոտեցումների ձևավորման ուղղությամբ: ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ մշակվել է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը, որը 2008 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ի գիտություն: 2009-2011 թթ. ընթացքում իրականացվել են հայեցակարգի կատարելագործմանն ուղղված ուսումնասիրություններ՝ միջազգային փորձի համադրմամբ: Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) տեխնիկական օժանդակությամբ մշակվել են ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի համայնքների խոշորացման օրինակելի ծրագրերի նախագծերը: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա լրամշակվել և 2011 թվականի հունիսին ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը հավանության է արժանացել 2011թ. նոյեմբերի 10-ին:

Սույն ուսումնասիրության մեջ ամփոփված են Սյունիքի մարզում կատարված համապարփակ հետազոտությունները՝ որպես նշված բարեփոխումների իրականացման նախատիպ: Մշակված են վարչատարածքային բարեփոխումների հայեցակարգի բարելավման և իրագործման վերաբերյալ առաջարկությունները:

Մեծածավալ այդ հետազոտությունների եզրակացությունները և առաջարկություններն առանցքային նյութ են դարձել վարչատարածքային բարեփոխումների միջգերատեսչական աշխատանքային խմբի քննարկումների համար:

Հուսով ենք, որ այս ուսումնասիրությունը օգտակար կլինի Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա կատարելագործմանն ուղղված նախաձեռնություններում:

Դր. Դեալեֆ Բարթ

ԳՄՀՀ «Համայնքային և տնտեսական զարգացումը Հայաստանում» ծրագրի նախկին ղեկավար

Վաչե Տերտերյան

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ

Հիլկե Էբերտ

Համայնքային զարգացման բաղադրիչի ղեկավար

ԳՄՀՀ «Համայնքային և տնտեսական զարգացումը Հայաստանում» ծրագրի ղեկավար

Շնորհակալական խոսք

Աշխատանքը իրականացրել են Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը, Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգիս Թովմասյանը և Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ֆակուլտետի դեկան Էդգար Ղազարյանը՝ «Համայնքային և տնտեսական զարգացումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Հեղինակները գնահատանքի և շնորհակալության խոսք են հղում Սյունիքի մարզպետարանի և համայնքների ղեկավարությանը՝ ուսումնասիրությանն անհրաժեշտ տեղեկությունները տրամադրելու և աշխատանքին աջակցելու համար:

Հետազոտության իրականացմանը մեծապես նպաստել է տեղական ինքնակառավարման համակարգի փորձագետ Քնարիկ Այվազովան: Նա մասնակցել է համայնքների խոշորացման անրդյունքում տնտեսական օգուտների հաշվարկմանը, հավաքագրված տվյալների մշակմանը և հաշվարկների իրականացմանը:

Հատուկ շնորակալություն ենք հայնտում տարածքային կառավարման առաջին փոխնախարար Վաչե Տերտերյանին՝ սույն աշխատանքի իրականացման ամբողջ ընթացքում ցուցաբերած անգնահատելի օգնության համար:

Աշխատանքի իրականացմանը մեծապես նպաստել են. ԳՄՀՀ «Համայնքային և տնտեսական զարգացումը Հայաստանում» ծրագրի ղեկավար Դետլեֆ Բարթ, ԳՄՀՀ Համայնքային զարգացման բաղադրիչի ղեկավար Հիլկե Էբերտը, ԳՄՀՀ Համայնքային զարգացման խորհրդական Էլինա Մարկարյանը, Քելի Կիրառական գիտությունների համալսարանի Դոկտոր-պրոֆեսոր Յուրգեն Կեգելմանը, իրենց անգնահատելի առաջարկություններով և մեկնաբանություններով:

Թարգմանությունը՝ Արմեն Քեշիշյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
ԳԼՈՒԽ I. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՏԵՂՍՄԱՆ` ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	9
Համայնքների խոշորացում.....	9
Միջհամայնքային միավորումներ.....	14
Միջհամայնքային միավորման կենտրոններ.....	18
ԳԼՈՒԽ II. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	20
2.1. Մեթոդաբանությամբ նախատեսված քայլերը և գործողությունների սխեման.....	20
2.2. Պահանջվող տեղեկատվությունը և անհրաժեշտ ցուցանիշները.....	23
2.3. Համայնքների խոշորացման տարբերակների ընտրության մեթոդները.....	25
2.4. Միջհամայնքային համագործակցության մոդելները և համայնքների խոշորացումը.....	27
2.5. «Խոշոր» համայնքի տեսլականը.....	32
ԳԼՈՒԽ III. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ (ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ) ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ.....	33
3.1. Ընդհանուր տեղեկություններ Սյունիքի մարզի մասին.....	33
3.2. Մարզի տարաբնակեցման համակարգի և բնակավայրերի տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունները.....	35
3.3. Սյունիքի մարզի վարչատարածքային բաժանումը.....	39
3.4. Առկա իրավիճակի վերլուծություն.....	43
3.4.1. Ծառայությունների մատուցում.....	43
3.4.2. Համայնքային բյուջեներ.....	47
3.4.3. Ռեսուրսների գնահատում (բնական և մարդկային ռեսուրսներ).....	81
3.4.3.1. Բնական ռեսուրսներ.....	81
Հումքային ռեսուրսներ.....	81
Ռեկրեացիոն ռեսուրսներ.....	82
Ջրաբուժության (բալնեոլոգիական) ռեսուրսներ.....	82
Կլիմայաբուժության ռեսուրսներ.....	83
Տուրիստական ռեսուրսներ.....	84
Սյունիքի ռեկրեացիոն համակարգի տարածքային կազմակերպումը.....	85
Հողային ռեսուրսներ.....	86
Մարզի հողային հաշվեկշիռը.....	86
3.4.3.2. Մարդկային ռեսուրսներ.....	97
3.4.4. Ենթակառուցվածքներ.....	100
3.5.3 Նոր ձևավորվող համայնքների որոշ ցուցանիշների գնահատում.....	146
3.5.3.1.Տարաբնակեցման համակարգի և բնակավայրերի խոցելիության և զարգացման ներուժի համադրում.....	146
3.5.3.2. Նկատառումներ ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ.....	149
3.5.3.3. Հողային և բնական այլ ռեսուրսների տեղաբաշխման համադրում.....	150
3.5.3.4. Հողօգտագործման արդյունավետության բարձրացման մեխանիզմները (ներկայացվող առաջարկություններն ընդհանրական են, ուստի կարող են կիրառելի լինել նաև այլ մարզերի պարագայում).....	152
3.5.3.5. Բնակչության խտությունների համադրում.....	155

3.6	Վարչատարածքային բարեփոխումների տնտեսական արդյունավետությունը	156
3.6.1.	Համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկման մոտեցումները.....	156
3.6.1.1.	Միայն գյուղական կարգավիճակ ունեցող համայնքների խոշորացում՝ առաջին մոտեցում.....	157
3.6.1.2.	Տարբեր կարգավիճակներ (գյուղական և քաղաքային) ունեցող համայնքների խոշորացում՝ երկրորդ մոտեցում.....	159
3.6.2.	Սյունիքի մարզում համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունը.....	163
3.6.3.	Սյունիքի մարզում միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետությունը.....	205
3.6.3.1.	Նպատակային միություն	205
	Մեթոդաբանություն	206
	Նպատակային միության օրինակի ներկայացում.....	208
3.6.3.2.	Միջհամայնքային միավորում.....	212
	Մեթոդաբանություն	212
	Տաթևի միջհամայնքային միավորում.....	213
	Նորաշենիկի միջհամայնքային միավորում.....	215
	Խնածախի միջհամայնքային միավորում.....	216
3.6.3.3.	Համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետության համեմատություն	218
3.7.	Եզրակացություններ համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության սկզբունքների վերաբերյալ.....	219
	ԳԼՈՒԽ IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ (ՎԵՐԱՐՏԱՂԵԼԻ) ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	223
4.1.	Ներածություն	223
4.2.	Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումների իրականացման փուլերը	224
4.3.	Վարչատարածքային բարեփոխումների համար տեղեկատվության ապահովումը ...	226
4.4.	Ուսումնասիրությունների իրականացման մեթոդաբանությունը.....	228
4.5.	Ուսումնասիրությունների արդյունքում ձևավորվող եզրակացությունների և առաջարկությունների փաթեթը.....	231
	ԳԼՈՒԽ V. ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱԿԱՆԱՍՏԱՆԱԿՆԻ ՎԵՐԱԿԱՆԱՍՏՈՒՄԸ	233
5.1.	«Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման հայեցակարգ».....	233
5.2.	Փոփոխություններ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.....	237
5.3.	Փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում.....	238
5.4.	Փոփոխություններ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.....	241
5.5.	Փոփոխություններ բյուջետային օրենսդրության մեջ	245
5.6.	Փոփոխություններ ՀՀ հողային օրենսգրքում.....	247
	Վերջաբան.....	248
	ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ	250
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ	258
	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	265

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վարչատարածքային բարեփոխումների անհրաժեշտությունը

2010 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Գերմանական տեխնիկական համագործակցության կազմակերպության համագործակցության և մի շարք փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում կատարվել է ուսումնասիրություն՝ նվիրված ՀՀ Վայոց ձորի մարզում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման»՝ ՀՀ կառավարության հայեցակարգի գործնական իրականացմանը: Ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ առաջարկվել է ընտրել համայնքների էական խոշորացում իրականացնելու ռազմավարություն (առաջարկվել է գոյություն ունեցող 44 համայնքի փոխարեն ձևավորել 8-ը), ինչպես նաև առաջարկություններ էին ներկայացվել միջհամայնքային համագործակցության հնարավոր դրսևորումների և տեղական ինքնակառավարման ոլորտում հետագա բարեփոխումների վերաբերյալ: ՀՀ Վայոց ձորի մարզի օրինակով կատարված ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ինչպես Գերմանական տեխնիկական համագործակցության կազմակերպությունում, այնպես էլ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում և, ընդհանուր առմամբ, արժանացել դրական գնահատականի:

Սույն ուսումնասիրությունը, կենտրոնանալով ՀՀ Սյունիքի մարզի օրինակի վրա, նպատակ ունի պարզել «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման»՝ ՀՀ կառավարության կողմից ի գիտություն ընդունված հայեցակարգը գործնականում իրականացնելու հնարավորություններն ու ուղղությունները այդ մարզում: Ուսումնասիրության շրջանակներում հաշվի են առնվելու ՀՀ Վայոց ձորի մարզում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և քննարկումների արդյունքում հավանության արժանացած մոտեցումներն ու դրույթները: Միաժամանակ սույն ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձ է արվելու իրականացնել երկու մարզերի ուսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծություն, որը պետք է հնարավորինս նկարագրի «Խոշոր համայնքի» տեսլականը, ինչն էլ կարող է մոդելային օրինակ ծառայել ՀՀ մյուս մարզերում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման»՝ ՀՀ կառավարության կողմից ի գիտություն ընդունված հայեցակարգն իրականացնելու համար:

ՀՀ Սյունիքի մարզի ընտրությունը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով.

• **ՀՀ Սյունիքի մարզն ամենամեծ մարզն է ցամաքային տարածքով:** Եթե ՀՀ Վայոց ձորի մարզն ամենափոքր մարզերից է տարածքով, ապա ՀՀ Սյունիքի մարզը ամենամեծ մարզն է ցամաքային տարածքով (4506 կմ²):

• **ՀՀ Սյունիքի մարզն ամենամեծ մարզերից է համայնքների թվաքանակով:** ՀՀ Սյունիքի մարզում գոյություն ունեն 109 համայնքներ, որոնցից 7-ը՝ քաղաքային, 102-ը՝ գյուղական: Ի դեպ, քաղաքային համայնքների թվով ՀՀ Սյունիքի մարզին գերազանցում է միայն ՀՀ Լոռու մարզը (8 քաղաքային համայնք), նույնքան քաղաքային համայնքներ կան ՀՀ Կոտայքի մարզում: Գյուղական համայնքների թվաքանակով ՀՀ Սյունիքի մարզին գերազանցում են միայն ՀՀ Շիրակի մարզը (116 գյուղական համայնքներ) և ՀՀ Լոռու մարզը (105 գյուղական համայնքներ): Սա նշանակում է, որ, ի տարբերություն ՀՀ Վայոց ձորի մարզի, ՀՀ Սյունիքի մարզի հետազոտության արդյունքների կիրառումը ունենալու է մեծ մասշտաբներ և ընդգրկվածություն:

• **Բնակչության միատարրություն:** ՀՀ Սյունիքի մարզում ևս, ինչպես ՀՀ Վայոց ձորի մարզում, չկան ժողովրդագրական, առավել ևս էթնիկ խնդիրներ: Մարզում չկան բնակավայրեր, որոնք բնակեցված լինեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով: Քիչ են և ոչ էական բնակավայրերի միջև գոյություն ունեցող սոցիալ-մշակութային առանձնահատկություններն ու տարբերությունները:

• **ՀՀ Սյունիքի մարզը սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին:** Այս հանգամանքը կարևոր է այն առումով, որ ստացված արդյունքները ամբողջական պատկերացում կարող են տալ հարավային ողջ տարածաշրջանի վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության մեջ կիրառվող մեթոդների արդյունավետությունն ու ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ գործնականում դրանք կիրառելու, հետազայում նաև ողջ հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ I. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Համայնքների խոշորացում

Համայնքների խոշորացման քաղաքականությունն իրականացնելիս պետք է հիմնվել ՀՀ կառավարության կողմից դեռևս 2008 թվականի դեկտեմբերի 18-ին ի գիտություն ընդունված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի» [10] վրա: Սույն հայեցակարգով առաջարկվում է խնդրի լուծման երկու տարբերակ.

- *վարչատարածքային համակարգի վերակազմակերպմամբ համայնքների խոշորացում, այսինքն՝ համայնքների միավորում, որը կհանգեցնի իրավիճակի բարելավմանը,*

- *միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող միջհամայնքային համագործակցության ինստիտուտի ներդրում, որը թույլ է տալիս լիազորությունները պահպանելով համայնքային մակարդակում ապահովել դրանց արդյունավետ իրականացումը¹:*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջարկվող տարբերակներից ավելի ընդունելի է առաջինը, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր լուրջ և էական արդյունքների հասնել ռեսուրսները կենտրոնացնելու և դրանք առավել արդյունավետ տնօրինելու հարցերում: Այս տարբերակը հնարավորություն կտա նաև խորացնելու ապակենտրոնացման քաղաքականությունը՝ նոր կազմավորված խոշոր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ, մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում: Միաժամանակ չպետք է բացառել միջհամայնքային համագործակցության ձևավորումն ու զարգացումը (այդ թվում՝ միջհամայնքային միավորումների ստեղծումը) խոշոր համայնքներ կազմավորելիս: Ավելին՝ որքան խոշոր և կազմակերպված լինեն համայնքները, մեծ լինեն դրանց լիազորությունների շրջանակներն ու այդ լիազորությունները գործնականում

¹ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», էջ 11, www.region.am

իրականացնելու կարողություններն ու հնարավորությունները, այնքան ավելի բարենպաստ միջավայր կարող է ձևավորվել համայնքների միջև տարաբնույթ համագործակցություն ծավալելու, այդ թվում՝ միջհամայնքային միավորումներ ստեղծելու համար:

Հայաստանում համայնքների խոշորացման հայեցակարգը հիմնվում է մի շարք սկզբունքների վրա: Դրանք են՝

- 1. տնտեսական նպատակահարմարությունը,*
- 2. բնակչությանը ծառայություններ մատուցելու հնարավորության ապահովումը և բնակչության համար հանրային ծառայություններից օգտվելու հասանելիությունը,*
- 3. մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը,*
- 4. տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության ապահովումը,*
- 5. ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության ապահովումը,*
- 6. բնակչության մասնակցության ապահովումը,*
- 7. կառավարման կառուցվածքի օպտիմալացումը,*
- 8. պատվիրակվող լիազորությունների շրջանակի ընդլայնումը²:*

Միաժամանակ հայեցակարգով սահմանվել են 7 հիմնական չափորոշիչներ, որոնք պետք է հիմք հանդիսանան համայնքների խոշորացման համար: Դրանք են՝

- 1. միացվող համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայությունը,*
- 2. նոր ձևավորվող համայնքի կենտրոնը պետք է ունենա միացվող համայնքների նկատմամբ կենտրոնական դիրք, առնվազն 500 բնակիչ և անհրաժեշտ նվազագույն ծավալի ենթակառուցվածքներ,*
- 3. նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից պետք է լինի մոտ 5 կմ,*
- 4. նոր ձևավորվող համայնքում պետք է առկա լինեն տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ առնվազն մի քանի ենթակառուցվածքներ (մանկապարտեզ, բուժկետ, մշակույթի տուն/ակումբ) և միջնակարգ դպրոց,*
- 5. նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի միջև հասարակական տրանսպորտային հաղորդակցություն ապահովող ճանապարհների (առնվազն խճապատ) առկայություն,*

² Նույն տեղում, էջ 13:


6. նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի՝ նախկինում համատեղ կառավարման մարմնի առկայություն (գյուղխորհուրդ, ավանային խորհուրդ, քաղխորհուրդ),





7. նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի բնակիչների համատեղելիություն և մենթալություն³:

Միեմատիկ պատկերմամբ համայնքների խոշորացումը, ըստ գոյություն ունեցող հայեցակարգային դրույթների, կարող է ունենալ հետևյալ տեսքը (տե՛ս գծապատկերներ 1, 2):

Գծապատկեր 1


Համայնքների տեղաբաշխման գծապատկեր (պայմանական տարածաշրջանի համար)



Համայնքներն ըստ բնակչության թվի	
	15000-ից ավելի
	5001-ից 15000
	3001-ից 5000
	1001-ից 3000
	1000-ից պակաս

Գծապատկեր 2

Համայնքների խոշորացման տարբերակներ (պայմանական տարածաշրջանի համար)



³ Նույն տեղում, էջ 13:

Ըստ գործող հայեցակարգի՝ համայնքների խոշորացման համար դրանց չափերը գործոն չեն: Խոշորացման համար կարևոր չափանիշ է համայնքների միջև եղած հեռավորությունը: Այս սխեման կազմված է այդ տրամաբանությամբ:

Հարկ է նշել, որ հայեցակարգով սահմանված խոշորացման չափորոշիչները իմպերատիվ կերպով պահպանելը կարող է արհեստական դժվարությունների և լարվածության պատճառ դառնալ: Ամբողջովին ընդունելով միացվող համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայության կամ համայնքում բնակավայրերի միջև հասարակական տրանսպորտային հաղորդակցություն ապահովող ճանապարհների առկայության չափորոշիչները՝ վերապահումներ կարելի է անել մյուս չափորոշիչների առնչությամբ: Կարծում ենք, որ համայնքների խոշորացումը պետք է իրականացնել իրավիճակային ուսումնասիրությունների հիման վրա՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով տեղանքի առանձնահատկությունները: Տվյալ դեպքում առաջարկվող լավագույն լուծումները կարող են հակասությունների մեջ մտնել սահմանված չափորոշիչների հետ՝ առաջացնելով արհեստական խոչընդոտներ:

Օրինակ՝ 2-րդ չափորոշիչը սահմանում է, որ նոր ձևավորվող համայնքի կենտրոնը պետք է ունենա միացվող համայնքների նկատմամբ կենտրոնական դիրք: Մինչդեռ գործնականում կարող են լինել դեպքեր, երբ առաջարկվող համայնքային կենտրոնը (լավագույնս համապատասխանելով անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ռեսուրսներ և այլն ունենալու պահանջներին) գտնվի ոչ թե նոր ձևավորվելիք համայնքի բնակավայրերի կենտրոնում, այլ այն հիմնական ճանապարհի վրա, որը այդ բնակավայրերը կապում է նախկին շրջկենտրոնին, մայրուղիներին կամ մայրաքաղաքին: Այսինքն՝ գտնվում է ավելի բարենպաստ դիրքում, քան կարող էր համարվել բնակավայրերի կենտրոնական շրջանը: Մեկ այլ դեպքում, երբ խոսվում է ավելի լայնածավալ խոշորացման ծրագրի մասին, որի արդյունքում նոր ձևավորվելիք համայնքը պետք է ընդգրկի ենթադրենք հինգ և ավելի բնակավայրեր, նախկին համատեղ կառավարման մարմնի առկայությունը դառնում է ոչինչ չպայմանավորող գործոն: Տվյալ դեպքում ավելի իրատեսական կլինի հաշվի առնել գոյություն ունեցող կամ նոր կառուցվելիք

ենթակառուցվածքների հանգամանքը, քան նախկին, ներկայինիս հետ որևէ ընդհանրություն չունեցող կառավարման մարմնի առկայությունը:

Ըստ այդմ՝ առաջարկվում է համայնքների խոշորացման քաղաքականությունն իրականացնելիս հայեցակարգով սահմանված չափորոշիչները կիրառել ոչ թե որպես պարտադիր պայման, այլ որպես մեթոդական ուղեցույց բոլոր այն դեպքերում, երբ դրանք հնարավոր է կիրառել:

Հայեցակարգի համաձայն համայնքների խոշորացումը պետք է հանգեցնի հետևյալ արդյունքներին.

1. մարդկային ռեսուրսների համախմբում,
2. ենթակառուցվածքների համախմբում և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում,
3. ֆինանսական կարողությունների ուժեղացում և իրականացվող լիազորությունների շրջանակի ընդլայնում,
4. լրացուցիչ դրական արդյունքներ, որոնցից առանձնացվում են հետևյալները.

• համայնքների պատվիրակված լիազորությունների շարունակական փոխանցման հնարավորությունների ստեղծում,

• հետագա ապակենտրոնացման համար նպաստավոր պայմանների ստեղծում,

• համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացում,

• վարչական տարածքների խոշորացման արդյունքում տնտեսության ճյուղերի, հատկապես գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծում,

• համայնքների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման հեշտացում, արդյունավետության բարձրացում և այդ ուղղությամբ իրականացվող ծախսերի նվազեցում:

Միջհամայնքային միավորումներ

ՀՀ կառավարության կողմից ընդունված հայեցակարգը առանձնահատուկ անդրադարձ է կատարում միջհամայնքային միավորումների խնդիրներին: Դրանք դիտարկվում են պետության կողմից իրականացվող լիազորությունների և ֆինանսական միջոցների ապակենտրոնացման գործընթացներին զուգահեռ՝ ելնելով բնակչության շահերից և տնտեսական նպատակահարմարությունից: Համայնքային խնդիրներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով համայնքները կարող են կամավոր և ՀՀ կառավարության նախաձեռնությամբ միավորվել միջհամայնքային միավորումներում: Այսինքն՝ հայեցակարգը նախատեսում է միջհամայնքային միավորումների ձևավորման երկու տարբերակ՝ կամավոր և պարտադիր՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ: Ըստ այդմ՝ հայեցակարգով առանձնացվում են միջհամայնքային միավորումների ձևավորման հետևյալ մեխանիզմները.

- *Միջհամայնքային միավորումների ստեղծումը ամրագրվում է օրենքով և իրականացվում է համայնքների կամավոր միավորմամբ կամ կառավարության նախաձեռնությամբ,*

- *Ընդհանուր սահմաններ ունեցող համայնքները կարող են նախաձեռնել միջհամայնքային միավորում ստեղծելը՝ դիմելով պետական լիազորված մարմնին, ինչը կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ պետք է ամրագրվի օրենքով,*

- *Միջհամայնքային միավորումներն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, բյուջե և իրենց լիազորություններն իրականացնում են աշխատակազմի, ինչպես նաև իրենց կողմից հիմնադրված բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:*

Հայեցակարգով սահմանվում են միջհամայնքային միավորումների ձևավորման 11 սկզբունքներ: Դրանք են.

1. *Այն խոշոր համայնքները, որոնք այս պահին մարդկային, ֆինանսական և տնտեսական ռեսուրսներով ունակ են և իրականացնում են օրենքով իրենց վերապահված լիազորությունները, միջհամայնքային միավորումների կազմերում չեն ընդգրկվում, իսկ դրանց ցանկը սահմանվում է օրենքով:*

2. Մյուս համայնքները ընդգրկվում են միջհամայնքային միավորումներում, որոնց բնակչության թիվը ևս ցանկալի է, որ լինի ոչ պակաս միջհամայնքային միավորումներում չընդգրկված ամենափոքր համայնքի բնակչության թվից, ինչը կապահովի մարդկային, ֆինանսական և տնտեսական անհրաժեշտ ներուժ: Միջհամայնքային միավորման կազմում ընդգրկված համայնքները պահպանում են ընտրովի մարմինները և ունեն բյուջե:

3. Միջհամայնքային միավորումներ կարող են ստեղծվել միայն օրենքով՝ համայնքների կամավոր նախաձեռնությամբ, որի համար սահմանվում է որոշակի ժամկետ, օրինակ՝ 1 տարի, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո՝ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ:

4. Միջհամայնքային միավորումներում ընդգրկվում են ընդհանուր սահմաններ ունեցող համայնքները: Միջհամայնքային միավորման կազմում կարող են ընդգրկվել նաև համայնքների սահմաններից դուրս գտնվող հողերը: Դա կապահովի տեղական ինքնակառավարման իրականացումը ՀՀ ամբողջ տարածքում, այդ տարածքների հողի հարկը ու գույքահարկը կհանդիսանան միջհամայնքային միավորման բյուջեի եկամուտ, իսկ հողատարածքները անդամ համայնքների համար կհանդիսանան ընդհանուր օգտագործման տարածքներ:

5. Միջհամայնքային միավորման կենտրոն է լինելու տարածքի կենտրոնական մասում գտնվող ամենախոշոր համայնքներից մեկը. այս մոտեցումը կնպաստի նոր, երիտասարդ քաղաքների կայացմանը և զարգացմանը:

6. Միջհամայնքային միավորման մարմիններն են խորհուրդը և կառավարիչը: Խորհրդի կազմում ընդգրկվում են անդամ համայնքների ղեկավարները և ավագանու մեկական անդամ: Խորհուրդը մրցութային կարգով ընտրում է կառավարիչ:

7. Միջհամայնքային միավորման լիազորությունները սահմանվում են օրենքով: Պետության պատվիրակված լիազորություններն ամբողջությամբ իրականացվում են միջհամայնքային միավորման կողմից: Տեղական ինքնակառավարման այն պարտադիր լիազորությունները, որոնք օրենքով չեն վերապահվում միջհամայնքային միավորմանը, ինչպես նաև բոլոր կամավոր լիազորություններն իրականացվում են անդամ համայնքների կողմից:

8. Միջհամայնքային միավորման աշխատակազմը հանդիսանում է նաև անդամ համայնքների աշխատակազմ: Միջհամայնքային միավորման անդամ համայնքների աշխատակազմերի թվաքանակը կարող է սահմանափակվել օրենքով: Օրենքով կարող է նախատեսվել, որ փոքր համայնքները (մինչև 100-200-300-500 բնակիչ) աշխատակազմ չեն ձևավորում:

9. Միջհամայնքային միավորման բյուջեի եկամուտները սահմանվում են օրենքով:

10. Միջհամայնքային միավորմանը փոխանցվող սեփականությունը սահմանվում է օրենքով, այն նաև անդամ համայնքների սեփականությունն է:


11. Միջհամայնքային միավորումների պարտադիր լիազորությունների նկատմամբ պետության կողմից իրականացվում է իրավական վերահսկողություն, իսկ պատվիրակված լիազորությունների նկատմամբ վերահսկողության կարգը սահմանվում է օրենքով, ենթադրվում է նույն մեխանիզմը, այսինքն՝ մասնագիտական հսկողության կարգը:

Հատկանշական է, որ, համաձայն ՀՀ կառավարության հայեցակարգի, միջհամայնքային միավորումներում չեն ընդգրկվում և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունները ինքնուրույն և ամբողջ ծավալով իրականացնում են 15.000 հազար և ավելի բնակչություն ունեցող հետևյալ համայնքները՝ Երևան, Աբովյան, Արմավիր, Ալավերդի, Աշտարակ, Արարատ, Արթիկ, Արտաշատ, Գավառ, Գյումրի, Գորիս, Դիլիջան, Իջևան, Կապան, Մասիս, Հրազդան, Չարենցավան, Միսիս, Սպիտակ, Ստեփանավան, Սևան, Վաղարշապատ, Վանաձոր, Վարդենիս քաղաքները (ընդամենը՝ 24 քաղաքային համայնքներ), որոնք դասակարգվում են որպես ինքնուրույն քաղաքներ:

Միեւնատիկ պատկերմամբ միջհամայնքային միավորումների ձևավորման տարբերակները, ըստ գոյություն ունեցող հայեցակարգային դրույթների, կարող են ունենալ հետևյալ տեսքը (տե՛ս գծապատկերներ 3, 4):


Գծապատկեր 3

Համայնքների տեղաբաշխման գծապատկեր
(պայմանական տարածաշրջանի համար)



Գծապատկեր 4

Միջհամայնքային միավորումների ձևավորման տարբերակները



★ Միջհամայնքային միավորման կենտրոններ

Միջհամայնքային միավորումներ

Միջհամայնքային միավորման կենտրոններ

ՀՀ կառավարության հայեցակարգով սահմանվում են նաև միջհամայնքային միավորման մարմինները, դրանց լիազորությունները, միջհամայնքային միավորման բյուջեն և ֆինանսական միջոցները, միավորման կազմում ընդգրկված համայնքի լիազորությունները, դրանց իրականացման կարգը, միջհամայնքային միավորման սեփականությունը: Ներկայացվում են նաև միջհամայնքային միավորման ներդրման հնարավոր հետևանքները: Մասնավորապես սահմանվում է, որ միջհամայնքային միավորումների ներդրմամբ փաստացի ձևավորվում են տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակին բնորոշ խոշորացված միավորները: 24 «ինքնուրույն» համայնքներն իրենց մարդկային, ֆինանսատնտեսական և տեխնիկական ներուժով ունակ են իրականացնելու օրենքով իրենց վերապահված լիազորությունների ամբողջ ծավալը և մնացած համայնքներով ձևավորված 40-42 միջհամայնքային միավորումները: Նախատեսվում է, որ հիմնական ծառայությունները կձևավորվեն ինքնուրույն համայնքներում և միջհամայնքային միավորումներում: Ինքնուրույն համայնքների ծառայություններն իրականացվելու են համապատասխան համայնքների վարչական սահմաններում, որոնցում բնակչության թիվը կտատանվի մոտավորապես 15000-ից մինչև 150000-ի միջակայքում: Միջհամայնքային միավորումներում ձևավորված ծառայություններն իրենց լիազորությունները կիրականացնեն դրանց կազմերում ընդգրկված համայնքների վարչական սահմաններում, ինչպես նաև համայնքների սահմաններից դուրս, բայց միջհամայնքային միավորման սահմաններում գտնվող տարածքում: Այս դեպքում կենտրոնացված ծառայությունների և պատվիրակված լիազորություններ իրականացնող մարմինների ընդհանուր թիվը 915-ի փոխարեն կկազմի 62-64: Ձևավորվող ծառայությունների այս թիվը մոտավորապես համապատասխանում է պետական հարկային, սոցիալական, գանձապետական, քաղաքացիական կացության գրանցման և այլ մարմինների թվին: Դա հնարավորություն կտա պետությանը առանց լուրջ ծախսեր կատարելու վերոնշյալ պետական համապատասխան ստորաբաժանումները, դրանց կողմից օգտագործվող գույքը,

տեխնիկական միջոցները, ինչու չէ նաև մասնագետներին տեղափոխել ինքնուրույն համայնքների և միջհամայնքային միավորումների ծառայությունների կազմ: Եթե կիրառվի այս համակարգը, ապա 915 համայնքային ծառայությունների ձևավորման փոխարեն 2-3 անգամ կնվազեն համայնքներում այդ ծառայությունները կազմակերպելու համար անհրաժեշտ աշխատողների թվաքանակը և աշխատավարձի ծախսերը, 8 անգամ՝ ծառայությունների պահպանման ծախսերը, 10-13 անգամ՝ անհրաժեշտ տեխնիկական միջոցներն ու գույքը, ինչպես նաև մասնագետների ուսուցման ու վերապատրաստման ժամկետները և դրա ծախսերը: Ամենակարևոր արդյունքը կլինի փոքր համայնքներում տեղական ինքնակառավարման լիազորությունների իրականացումը, որոնք նախկինում չէին իրականացվում: Բացի դրանից, ավելի կհեշտանա պետական վերահսկողության իրականացումը, և կնվազեն պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերը:


ԳԼՈՒԽ II. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Մեթոդաբանությամբ նախատեսված քայլերը և գործողությունների սխեման

Աշխատանքի մեթոդաբանությունը հենվում է գործողությունների հետևյալ հաջորդականության վրա (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Համայնքների խոշորացման (վարչատարածքային բարեփոխումների) մեթոդաբանության սխեման



Առաջին փուլը առկա վիճակի նկարագրումն է, այսինքն՝ վարչատարածքային բաժանման առկա կառուցվածքը, դրա ձևավորման նախապատմությունը և հիմնական գործոնները բնութագրելը: Կարող են հաշվի առնվել նաև ոչ վաղ անցյալի պատմական, ինչպես նաև մշակութային և էթնիկ գործոնները:

Երկրորդ փուլում պետք է իրականացնել առկա վիճակի վերլուծություն: Վերլուծությունը պետք է իրականացնել չորս հիմնական ուղղություններով՝

1. ծառայությունների մատուցում,
2. ֆինանսներ և բյուջե,

3. բնական և մարդկային ռեսուրսներ,

4. ենթակառուցվածքներ:

Այս չորս ուղղություններով վերլուծություններ կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորման աղբյուրներ կարող են լինել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հավաքագրվող և հրապարակվող տեղեկատվությունը (վիճակագրական տարեգրքեր, հաշվետվություններ և այլն), համայնքային տնտեսությունը բնութագրող հիմնական ցուցանիշների համակարգը, որոնց շնորհիվ հնարավոր կլինի տեղեկատվություն ստանալ ոչ վիճակագրական աղբյուրներից, մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարության համակարգում գործող գանձապետարանից, մարզպետարաններից, պետական կառավարման այլ մարմիններից, մարզի և համայնքների հողային հաշվեկշիռների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներից, մարզի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրից, ինչպես նաև համայնքներից: Տեղեկատվական բազայի ձևավորման մյուս աղբյուրը նախապես պլանավորված հարցումներն են: Հարցումները կարելի է իրականացնել ընտրովի՝ մարզի նախկին գյուղական շրջաններից (տարածաշրջաններից) ընտրելով որոշակի թվով համայնքներ (համայնքների թվի ընտրությունը կարելի է պայմանավորել մարզի մեծությամբ և մարզի տարածքում համայնքների ընդհանուր թվաքանակով): Ընդ որում, համայնքները պետք է ընտրել այն տրամաբանությամբ, որ հարցումն իրականացնելիս նկատի առնվի բնակչության թվաքանակի հետևյալ դասակարգումը՝ մինչև 500 բնակիչ, 501-1000 բնակիչ, 1001-3000 բնակիչ, 3001-5000 բնակիչ, 5001 և ավելի բնակիչ: Հարցաթերթիկում պետք է ներառված լինեն հարցեր տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններից բխող ծառայությունները մանրամասնելու վերաբերյալ՝ նշելով՝ իրականացվո՞ւմ են դրանք, թե՞ ոչ, դրական պատասխանի դեպքում պետք է մանրամասնել դրա նկարագիրը, բացասական պատասխանի դեպքում՝ պատճառը կամ պատճառները:

Ծառայությունների մատուցման վերլուծությունը ենթադրում է, որ պետք է պարզել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող

ծառայությունների որակը, դրանց մատչելիությունը, ինչպես նաև արդյունավետությունը:

Համայնքի ֆինանսներն ու բյուջեն պետք է վերլուծել ըստ բյուջետային եկամուտների և ծախսումների ուղղությունների:

Բնական և մարդկային ռեսուրսների գնահատմամբ պետք է պարզել, թե բնական ինչ պաշարներ, մետաղական և ոչ մետաղական հանքավայրեր կան տվյալ համայնքի տարածքում, հողային ինչպիսի ռեսուրսներ գոյություն ունեն և ինչ արդյունավետությամբ են դրանք օգտագործվում: Կան նաև համայնքներ, որոնց տարածքում առկա են կարևոր նշանակություն ունեցող պատմամշակութային հուշարձաններ, տուրիզմի և հանգստի գոտիներ և այլն, որոնք նույնպես էական դեր կարող են խաղալ համայնքի զարգացման գործում:

Մարդկային ռեսուրսները վերաբերում են բնակչության ոչ միայն թվաքանակին, այլև կառուցվածքին՝ ըստ տարիքային և մասնագիտական հատկանիշի: Կարևոր է իմանալ, թե կրթական ինչ մակարդակ ունեն համայնքի բնակիչները և ինչ մասնագիտությունների տեր են: Սույն ուսումնասիրության շրջանակներում առանձին վերլուծության են ենթարկվել բնակչության խտության, միջին թվաքանակի ցուցանիշները բոլոր համայնքների և բնակավայրերի կտրվածքով:

Ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներից (համայնքային ճանապարհներն ու կամուրջները, խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերը, գազամատակարարման համակարգը, հեռահաղորդակցության հնարավորությունները (ֆիքսված հեռախոսակապի առկայություն, բջջային հեռախոսակապի հասանելիություն, ինտերնետի մատչելիություն, հեռուստատեսային հաղորդումների հասանելիություն) և այլն) սույն ուսումնասիրության շրջանակներում հատուկ անդրադարձ է կատարվել տրանսպորտային կապերի բնույթին՝ որպես համայնքների խոշորացման պարագայում անհամեմատ շոշափելի գործոնի: Ընդ որում, առանձին վերլուծության է ենթարկվել տրանսպորտային կապերի ազդեցությունը բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի վրա:

Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլի ճանապարհին ունենալով նախորդ փուլերի վերլուծությունների արդյունքները՝ կարելի է առաջարկել և հիմնավորել երեք տեսակի լուծումներ.

- *համայնքների խոշորացում, որը պետք է լինի հնարավոր նախընտրելի տարբերակը,*

- *միջհամայնքային միավորումների ձևավորում,*

- *նպատակային միությունների ստեղծում:*

Առաջարկվող լուծումները չորրորդ փուլում պետք է ապահովեն բավարար ռեսուրսներ, հնարավոր մեծ ծավալով և որակով հանրային ծառայությունների մատուցում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, արդյունավետ կամ «լավ կառավարում», որը ենթադրում է համայնքային ավագանու լիարժեք գործառույթների իրականացում, համայնքի բնակչության մասնակցություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացին և այլն:

Այս ամենի արդյունքում ձևավորվում ու ձևակերպվում է կենսունակ և արդյունավետ գործող համայնքի տեսլականը:

2.2. Պահանջվող տեղեկատվությունը և անհրաժեշտ ցուցանիշները

Վարչատարածքային բարեփոխումների առաջարկությունների մշակման համար անհրաժեշտ է հավաքագրել և մշակել հետևյալ հիմնական ցուցանիշները.

- *նախապատմությունը և համատեքստային տեղեկատվությունը, ներառյալ տարածքային բարեփոխումների ՀՀ կառավարության հայեցակարգը),*

- *ժողովրդագրական իրավիճակը և Սյունիքի համայնքապետարանների և Սյունիքի մարզի հիմնական ուղղվածությունը (և կառավարության համապատասխան ծրագրերը. քաղաքաշինության նախարարություն, ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի [Իրավ.ակտեր,14]՝ Սյունիքի մարզին առնչվող դրույթներ),*

- *տնտեսական իրավիճակը և Սյունիքի համայնքապետարանների և Սյունիքի մարզի հիմնական ուղղվածությունը,*

• տեղեկություններ բնական, տարածքային, աշխարհագրական և երկրաբանական ասպեկտների վերաբերյալ,

• տեղեկություններ հասարակագիտական/մշակութային/քաղաքական ոլորտների վերաբերյալ,

• հողօգտագործման և սեփականության ասպեկտները [Ինտ.կայքեր,6],

• տեղեկատվություն ենթակառուցվածքների (տրանսպորտ և բնակարանային շինարարություն, սոցիալ-տնտեսական իրավիճակ) և համապատասխան զարգացման ծրագրերի վերաբերյալ,

• համայնքապետարանների ներկա ֆինանսական դրությունը (ըստ բյուջեի տողերի՝ բյուջեի եկամուտները, ծախսերը, հատուկ ծառայությունները, ներդրումները, տեղական մակարդակով ստացվող եկամուտը, սուբսիդիաները և այլն),

• համայնքապետարանների կողմից մատուցվող ծառայությունների ներկա վիճակը/մակարդակը,

• այլ տեղեկատվություն:

Պետք է առանձնացնել նաև հետևյալ հիմնական ցուցանիշները.

• յուրաքանչյուր քաղաքացուն բաժին հասնող վարչական ծախսերը,

• յուրաքանչյուր քաղաքացուն բաժին հասնող ներդրումային ծախսերը (նաև ֆինանսավորման աղբյուրները),

• յուրաքանչյուր քաղաքացու համար համայնքապետարանին տրամադրվող սուբսիդիան (ծառայությունների առումով),

• համայնքապետարանների՝ իրականում առկա ծառայությունները (ծառայությունների ցուցակի առումով),

• համայնքային հատուկ ծառայությունների արտադրական ծախսը յուրաքանչյուր քաղաքացու և/կամ օգտագործողի հաշվով,

• Այս առաջադրանքից ակնկալվող արդյունքների տեսանկյունից մարզի և նրա համայնքապետարանների վերլուծության համար կարևոր համարվող այլ առանցքային ցուցիչներ:

2.3. Համայնքների խոշորացման տարբերակների ընտրության մեթոդները

Համայնքների խոշորացման տարբերակների ընտրությունն իրականացվում է հետևյալ մեթոդաբանությամբ:

Որպես հետազոտության օբյեկտ ընտրվում են առանձին մարզերը: Չնայած այն հանգամանքին, որ մարզերի մակարդակում վարչատարածքային բաժանումը կատարյալ համարել չի կարելի, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ մարզերն իրենցից ներկայացնում են նախկին գյուղական շրջանների մեխանիկական միացման արդյունքում ձևավորված միավորներ, այսինքն՝ նրանց կազմի մեջ մտնող համայնքներն ունեն պատմական, ենթակառուցվածքային և տնտեսական ընդհանրություններ, ինչն ավելի մեծ հնարավորություն է տալիս արդյունավետ որոշումներ ընդունելու համար:

Հարկ է նկատել, որ, որպես մեթոդաբանական սկզբունք, նախապատվություն է տրվում համայնքների՝ նախկին գյուղական միևնույն շրջանի մեջ լինելու հանգամանքին: Այսինքն՝ խոշորացվող համայնքներում նախատեսվում է ընդգրկել այնպիսի բնակավայրեր, որոնք մինչև 1995 թվականի վարչատարածքային բաժանումը ընդգրկված են եղել միևնույն գյուղական շրջանի կազմում: Այս մոտեցումը ունի ոչ թե իմպերատիվ, այլ մեթոդաբանական նշանակություն, քանզի այլ առավել կարևոր հանգամանքների առկայության դեպքում կարող են լինել որոշ բացառություններ:

Համայնքների խոշորացման տարբերակների ընտրության աշխատանքները կարելի է բաժանել երեք հիմնական փուլի.

- *գրասենյակային հետազոտական աշխատանք.*

այս դեպքում տարատեսակ քարտեզներով, վիճակագրական տվյալների և ցուցանիշների հիման վրա իրականացվում է ուսումնասիրություն գրասենյակային պայմաններում՝ հաշվի առնելով համայնքների դասավորվածությունը, հեռավորությունը միմյանցից, ենթակառուցվածքների առկայությունը, բնակչության թվաքանակը, հեռավորությունը մայրուղիներից և խոշոր ճանապարհներից և այլն:

• *դաշտային հետազոտական աշխատանք.*

այս դեպքում իրականացվում է այցելություն համայնքներ, տեղանքի ուսումնասիրություն և դիտարկում, ենթակառուցվածքների վիճակի դիտարկում, հանդիպումներ և զրույցներ համայնքների բնակիչների հետ, խոշորացման հնարավոր ուրվագծերի սահմանում:

• *Ցուցանիշների համադրման և ամփոփման աշխատանք.*

այս դեպքում փաստացի հավաքագրված տեղեկատվությունը համադրվում է նախապես մշակված տեղեկատվության հետ, որի արդյունքներով տրվում է խոշորացման ենթակա համայնքների ձևակերպում: Ըստ այդմ՝ կազմվում են նոր կազմավորվելիք համայնքները բնութագրող ցուցանիշներ և քարտեզներ:

Համայնքների խոշորացման տարբերակների ընտրության հարցում կարևոր նշանակություն ունի նոր կազմավորվելիք համայնքի ներուժի գնահատումը: Գնահատման կարևոր ցուցանիշ են համայնքի բնակչության թվաքանակը և դրա աճի դինամիկայի գնահատումը վերջին մի քանի տարիներին: Նոր կազմավորվելիք համայնքների ընտրության հարցում կարևոր է հաշվի առնել նաև բնակավայրերը միմյանց հետ կապող ճանապարհների առկայությունը, դրանց հեռավորությունն ու մատչելիությունը:

Համայնքների ընտրության հարցում հաշվի է առնվում նաև սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը: Մասնավորապես նոր կազմավորվելիք համայնքը հնարավորության սահմաններում պետք է ապահովված լինի ամենաանհրաժեշտ սոցիալական ենթակառուցվածքներով՝ բնակչությանը համապատասխան ծառայություններ մատուցելու ունակությամբ: Սոցիալական ենթակառուցվածքներ ասելով տվյալ դեպքում հասկանում ենք հանրակրթական դպրոցներ, առողջության առաջնային պահպանման կենտրոններ, մշակութային կենտրոններ, նախադպրոցական հաստատություններ և այլն:

Համայնքների խոշորացման տարբերակների ընտրության հարցում կարևոր հանգամանք է համայնքային կենտրոնի ընտրությունը: Այս առումով գոյություն ունի երեք հիմնական տարբերակ.

- *համայնքային կենտրոնն դարձնել առավել մեծ թվով բնակիչ ունեցող բնակավայրը,*

- *համայնքային կենտրոնն դարձնել բոլոր բնակավայրերի համեմատ կենտրոնական դիրք ունեցող բնակավայրը,*

- *համայնքային կենտրոնն դարձնել այն բնակավայրը, որը տրանսպորտային հանգույց է և կապում է մյուս բնակավայրերը հիմնական ճանապարհների հետ:*

Հնարավոր են դեպքեր, երբ մեկ բնակավայրը կարող է միաժամանակ իրականացնել նշված բոլոր երեք գործառույթները կամ դրանց մի մասը: Այս դեպքերից յուրաքանչյուրի ընտրությունն ունի իր առանձնահատկությունները, և յուրաքանչյուր դեպքում պետք է ցուցաբերել փորձագիտական մոտեցում: Իրավիճակի առանձնահատկություններից ելնելով՝ պետք է կատարել տարբերակներից մեկի ընտրություն:

Բացի վերը շարադրվածից, նոր ձևավորվող համայնքի կենտրոնն պետք է ընտրվի այնպիսի բնակավայր, որը միաժամանակ կհանդիսանա կամ կարող է ձևավորվել որպես տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոն, ինչը կստեղծի նախադրյալներ միջազգային պրակտիկայում արմատավորվող՝ տարածքային կազմակերպման բազմակենտրոն մոդելի ձևավորման և, ըստ այդմ, հավասարակշռված տարածքային զարգացման համար [Ինտ.կայքեր, 9,10,11]:

Կարևոր նշանակություն ունի նաև տարաբնակեցման համակարգի այն խնդրահարույց կամ խոցելի տարածաշրջանների բացահայտումը, որտեղ տեղային կենտրոնի բացակայության պատճառով համայնքների խոշորացումը ներկայումս չի կարող բավարար արդյունք ապահովել:

2.4. Միջհամայնքային համագործակցության մոդելները և համայնքների խոշորացումը


Միջհամայնքային համագործակցությունը վերաբերում է երկու կամ ավելի հարևան համայնքների կողմից համատեղ գործունեությանը համայնքային

վարչական խնդիրների, համայնքային ծառայությունների և տեղական զարգացման ոլորտներում, ինչը հնարավորություն է ընձեռում այդ գործընթացներն իրականացնելու ավելի արդյունավետ, քան համայնքները դա կանեին առանձին-առանձին:


Միջհամայնքային համագործակցությունը հիմնված է համայնքների համատեղ շահերի վրա, վերաբերում է համայնքների կողմից իրականացվող մեկ կամ մի քանի լիազորությունների, կարող է լինել ինչպես կամավոր, այնպես էլ պարտադիր, ենթադրում է դերերի և լիազորությունների համատեղ իրականացում, ինչպես նաև ռիսկերի, ծախսերի, վերահսկողության համատեղ կրում և օգուտների կիսում: Անհրաժեշտ է նշել, որ, հակառակ համայնքների խոշորացման, միջհամայնքային համագործակցությունը չի ենթադրում համայնքային լիազորությունների փոխանցում, քանի որ համայնքները պահպանում են այդ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը:

Միջհամայնքային համագործակցության տիպային ձևերից են.


• **Համատեղ ծառայությունների մատուցում:** Դա միջհամայնքային համագործակցության ամենատարածված ոլորտներից մեկն է, որը ներառում է մի շարք ծառայություններ, օրինակ՝ թափոնների կառավարումը՝ ներառյալ աղբահանությունը, ջրամատակարարումը, հանրային տրանսպորտը և այլն:



• **Համատեղ վարչարարություն:** Այս ոլորտը նույնպես ամենատարածվածներից է և կարող է ներառել հարկային վարչարարությունը՝ տեղական հարկերի մասով, շինարարության թույլտվության տրամադրումը, տրանսպորտի կառավարումը և այլն:




• **Ծառայությունների վաճառք:** Այս տեսակը վերաբերում է մեծ համայնքի կողմից իրեն շրջապատող համայնքներին ինչպես վարչական բնույթի, այնպես էլ հանրային ծառայությունների թույլտվությունների մատուցմանը:



• **Ռազմավարական պլանավորում և տարածքային զարգացում:** Այս տեսակը հիմնականում կիրառվում է այն դեպքերում, երբ համայնքը այնքան փոքր է տարածքով և բնակչությամբ, որ չի կարողանում արդյունավետ իրականացնել իր տնտեսական զարգացման քաղաքականությունն ու ծրագրերը: Նման խնդիրներ առաջանում են, օրինակ, զբոսաշրջության զարգացման ոլորտում, երբ մի քանի հարևան համայնքներ զբոսաշրջիկներին հրապուրելու համար գովազդում են միևնույն ենթակառուցվածքը կամ պատմամշակութային օբյեկտը:

• **Համատեղ ֆինանսավորում:** Այս տեսակը վերաբերում է մեծ ենթակառուցվածքային նախաձեռնություններին, լինի ճանապարհաշինարարություն թե մեկ այլ ենթակառուցվածքային ոլորտ, երբ համայնքները համատեղ ֆինանսավորմամբ հնարավորություն են ունենում այն կառուցելու:



Մասշտաբի էֆեկտը

Համայնքների խոշորացմանն ուղղված բարեփոխումների իրականացման ժամանակ նպատակահարմար է դիտարկել, թե տնտեսական, վարչական և այլ ինչ գործոններ են ուղեկցում համայնքների խոշորացմանը: Մասնավորապես խոսքը վերաբերում է մասշտաբի էֆեկտին:

Ակնհայտ է, որ, համայնքային ծառայությունների ծավալի աճին զուգընթաց, նվազում են մեկ միավոր ծառայության վրա կատարվող ծախսերը: Հետաքրքրական է, որ այդ ծախսերը անընդհատ չեն նվազում և ունեն իրենց ցածրագույն արժեքը: Մեր տարբերակում համայնքային ծառայությունների ծավալի աճը ուղղակիորեն կապված է այդ ծառայություններից օգտվողների թվաքանակի հետ, ինչը համեմատական է համայնքի բնակչության թվին⁴: Հետևաբար, համայնքները պետք է ունենան որոշակի մեծության բնակչության թվաքանակ, որպեսզի կարողանան նվազեցնել ծառայությունների մեկ միավորի միջին ծախսերը: Ընդհանուր առմամբ այս երևույթը կոչվում է մասշտաբի էֆեկտ:

Մասշտաբի էֆեկտը ավելի ցայտուն է արտահայտվում կապիտալատար գործընթացներում և ոչ այնքան հաճախ աշխատատարներում, քանի որ

⁴ Նմանատիպ էֆեկտ առաջանում է նաև միջհամայնքային համագործակցության պարագայում:

հաստատուն ծախսերը ավելի բարձր են կապիտալատար գործընթացների ժամանակ: Համայնքային մակարդակում դա նշանակում է, որ մասշտաբի էֆեկտն ավելի ցայտուն կարտահայտվի այնպիսի համայնքային ծառայությունների մատուցման դեպքում, ինչպիսիք են թափոնների կառավարումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը և այլն:

Միևնույն ժամանակ մասշտաբի էֆեկտը հստակ արտահայտվում է վարչական ծախսերի ժամանակ: Ցանկացած համայնք, անկախ իր չափերից, պետք է ունենա որոշակի թվով աշխատակազմ: Հետևաբար, փոքր համայնքներում մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը ավելի բարձր կլինեն, քան մեծ համայնքներում:

Փաստորեն ստացվում է, որ Հայաստանում համայնքների խոշորացման դեպքում մասշտաբի էֆեկտն անժխտելիորեն կարտահայտվի վարչական ծախսերի կրճատմամբ և, գուցե որոշ չափով՝ ծառայությունների մասով:

Պետք է նշել, որ համայնքային ծառայությունների համար նվազագույն բնակչության (շահառուների) թիվը, որից սկսած այդ ծառայությունների իրականացումը դառնում է տնտեսապես նպատակահարմար, ուղղակիորեն կախված է ծառայությունների տեսակից: Բազմաթիվ լիազորություններ ունեցող ու ծառայություններ մատուցող համայնքի պարագայում դա կնշանակի, ***որ ամեն ծառայության համար գոյություն ունի իր օպտիմալ չափը***: Հետևաբար, անհնար է գտնել խոշորացման մի օպտիմալ չափ, որը կբավարարի բոլոր ծառայությունների մասով մասշտաբի էֆեկտի առավելագույն արտահայտմանը: Միջազգային պրակտիկայում արդյունավետ ծառայությունների իրականացման համար օպտիմալ համայնքի չափը ընդունված է համարել մոտավորապես երեսուն հազար բնակիչ ունեցող համայնքը⁵:

Հենց այստեղ է, որ իր դերակատարումը պետք է ստանձնի միջհամայնքային համագործակցությունը, որը, ի հաշիվ իր ճկունության, կարող է ապահովել մասշտաբի էֆեկտի լավագույն ցուցանիշները:

Այսպիսով՝ ստացվում է, որ մեր առջև ծառացած խնդրի օպտիմալ լուծումը կարելի է պատկերացնել հետևյալ կերպ.

⁵ Տարածքային խոշորացման բարեփոխումները Եվրոպայում, խմբագրությամբ՝ Պավել Սվիյանիևիչի, Բուդապեշտ, Հունգարիա, 2010:

նվազեցնել վարչական ծախսերը՝ ի հաշիվ համայնքների խոշորացման՝ պահպանելով վարչական բնույթի ծառայությունների մատչելիությունը, որից հետո, միջհամայնքային համագործակցություն կիրառելով, համայնքային մնացած ծառայությունների մասով հասնել մասշտաբի էֆեկտի հնարավորինս բարձր ցուցանիշի:

2.5. «Խոշոր» համայնքի տեսլականը

ԽՈՇՈՐԱՅՎԱԾ համայնքը տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորություններն ու ծառայությունները ամբողջ ցանկով, արդյունավետ և մատչելի իրականացնելու, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումն ապահովելու համար բավարար բնական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ ու անհրաժեշտ ենթակառուցվածքներ ունեցող բնակավայրերի խումբ է, որտեղ բնակավայրերից մեկը հանդիսանում է կամ կարող է ձևավորվել որպես տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոն:

ԳԼՈՒԽ III. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ (ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՅՈՒՄ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ) ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

3.1. Ընդհանուր տեղեկություններ Սյունիքի մարզի մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Այն զբաղեցնում է 4506 կմ² տարածք կամ ՀՀ տարածքի 15.1%-ը: Մարզի բնակչությունը (շուրջ 152.900 մարդ) կազմում է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 4.7%-ը: Ուրբանիզացիայի մակարդակը բարձր է. բնակչության 67,8%-ը բնակվում է քաղաքային բնակավայրերում: Մարզի տարածքն ընդգրկում է Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրու տարածաշրջանները՝ 7 քաղաքային և 102 գյուղական համայնքներով, որոնց կազմում ընդգրկված են ընդհանուր հաշվով 134 բնակավայրեր (որոնցից 127-ը գյուղական բնակավայրեր):

ՀՀ Սյունիքի մարզը սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից պետական սահմանով սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը, իսկ Արևելքից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Մարզով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում: 2008-ին շահագործման է հանձնվել Կապան-Ծավ-Մեղրի ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որն այլընտրանք է Կապան-Քաջարան-Մեղրի միջպետական ճանապարհին:

ՀՀ Սյունիքի մարզում է գտնվում Հայաստանի ամենահայտնի պատմամշակութային վայրերից մեկը՝ Տաթևի վանական համալիրը, որը հարակից Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Տաթև, Սվարանց, Տանձատափ, Աղվանի և Բարձրավան գյուղական համայնքների հետ 2009 թվականի հունիսի 26-ին ՀՀ կառավարության կողմից հայտարարվել է զբոսաշրջության կենտրոն:

Սյունիքը օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է: Դրանցից ամենակարևորներն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլն) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքավայրերը, ինչպես նաև մի ամբողջ շարք ոչ մետաղային օգտակար հանածոները (շինարարական և

երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարերի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պեռլիտի և դիատոմիտների պաշարներ):

Կապան քաղաքից հարավ՝ Ծավ գետի կիրճում, գտնվում է աշխարհի ամենախոշոր բնական սուսիների ռելիկտային պուրակը, որը զբաղեցնում է գրեթե 120 հա տարածություն: Քաղաքից 4 կմ հեռու՝ Ողջի գետի աջ ափին, թավուտ անտառում է գտնվում Վահանավանքը (X դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով «Շիկահող» պետական արգելոցը:

Միսիանից 6 կմ հեռավորության վրա գտնվում է Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը՝ 18 մ):

ՀՀ Սյունիքի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: 2009 թվականին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերությունը՝ 14,1%, գյուղատնտեսությունը՝ 6,1%, շինարարությունը՝ 3,8%, մանրածախ առևտուրը՝ 1,0%, ծառայությունները՝ 1,0%: Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղերն են հանքարդյունաբերությունն ու էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացված է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրության) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծման) մեջ:

Պայմանական 10.000 բնակչի հաշվով զբաղվածությունը կազմում է 3235 մարդ: 2009 թվականի տվյալներով ՀՀ Սյունիքի մարզում գրանցվել են 6870 չգրադված քաղաքացիներ, որոնցից 6689-ը՝ որպես գործազուրկներ: Գործազուրկները կազմում են բնակչության ընդհանուր թվաքանակի շուրջ 4.4%-ը: Հարկ է նկատել, որ գործազուրկների թիվը վերջին տարիներին ունեցել է նվազման միտում: Մասնավորապես 2006 թվականին գրանցված 9829 գործազուրկի փոխարեն 2007 թվականին գրանցվել է 8341, իսկ 2008 թվականին՝ 6912 գործազուրկ: 2009 թվականի տվյալներով միջին տարեկան կտրվածքով

զբաղվածությունը կազմել է 49.5 հազար մարդ, որից արդյունաբերության ոլորտում՝ 8.1 հազար, գյուղատնտեսության, որսորդության և անտառտնտեսության ոլորտում՝ 23 հազար, շինարարության ոլորտում՝ 2 հազար և ծառայությունների ոլորտում 5.5 հազար մարդ: Զբաղվածների բաշխումն ըստ տնտեսության պետական և մասնավոր հատվածների 2009 թվականին միջին տարեկան կտրվածքով կազմել է՝ պետական հատվածում՝ 9.9 հազար, իսկ մասնավոր հատվածում 39.5 հազար մարդ:

ՀՀ Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհագրական նշանակության կարևոր դիրք, ունենալով հանքահումքային հարուստ պաշարներ և արտադրական մեծ ներուժ, լինելով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

3.2. Մարզի տարաբնակեցման համակարգի և բնակավայրերի տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունները


Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3904մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200մ, որը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը 350 մետրով [Այլ աղբյուր. 9]:

Ռելիեֆային բարդ պայմանների հետևանքով, բացառությամբ Գորիսի տարածաշրջանի մի շարք բնակավայրերի, մարզում գործնականում բացակայում է բնակավայրերի փնջային դասավորությունը. դրանք հիմնականում ձևավորվել են գետահովիտների տարածքներում և գետերի հունների երկայնքով, ինչը պատմականորեն ձևավորված իրողությունների և տրանսպորտային կապերի սահմանափակության պատճառով խոչընդոտել է առանձին տարածաշրջաններում զարգացած տեղային կենտրոնների կազմավորմանը:

Ըստ առանձին տարածաշրջանների՝ մարզի բնակավայրերը վերը նշված գործոնի ազդեցությամբ ձևավորվել են հետևյալ գետահովիտներում (տե՛ս քարտեզ 1).

Քարտեզ 1

Մյունիքի մարզի բնակավայրերի տեղաբաշխումը՝ պայմանավորված բնական-աշխարհագրական գործոններով



ա. Գորիսի տարածաշրջան՝

- Որոտանի և դրա վտակների հովիտներում կամ երկայնքով՝ Գորիս քաղաքը և Բռուն, Վերիշեն, Հարժիս, Սվարանց, Տաթև, Քաշունի, Հալիձոր, Շինուհայր, Որոտան, Քարահունջ և Քարաշեն գյուղերը,

- Հազարի գետի Ջաբուղ վտակի հովիտներում՝ Խոզնավար, Խնածախ, Վաղատուր գյուղերը,

բ. Կապանի տարածաշրջան՝

- Գեղիի և դրա վտակների հովիտներում՝ Նոր Աստղաբերդ, Աջաբաջ, Կարդ, Գետիշեն, Ոչեթի, Գեղի, Գեղավանք, Վերին Գեղավանք, Քարուտ, Կիցք, Կավճուտ գյուղերը,

- Ողջիի գետահովտում՝ Քաջարան և Կապան քաղաքները, Քաջարան, Լեռնաձոր, Մուսալլամ, Վերին Գիրաթաղ, Ներքին Գիրաթաղ, Սզնակ գյուղերը,

- Որոտանի Աճանան և այլ վտակների երկայնքով՝ Անտառաշատ, Վանեք, Վերին Խոտանան, Տավրուս, Եղեգ, Շրվենանց, Օխտար, Ձորաստան, Սևաքար, Չափնի, Նորաշենիկ, Առաջաձոր, Աճանան, Խորձոր գյուղերը,

- Ծավ գետի երկայնքով՝ Շիշկերտ, Ծավ, Ներքին Հանդ, Շիկահող գյուղերը,

գ. Մեղրիի տարածաշրջան՝

- Մեղրի գետի և վտակների երկայնքով՝ Մեղրի քաղաքը և Լեհվազ, Վարդանիձոր, Վահրավար, Գուդեմնիս, Կուրիս, Այգեձոր, Թխկուտ, Լիճք և Տաշտուն գյուղերը,

- Արաքս գետի վտակների երկայնքով՝ Ագարակ քաղաքը և Կարճևան, Ալվանք, Շվանիձոր, Նոնաձոր գյուղերը:

դ. Սիսիանի տարածաշրջան՝

- Որոտանի գետահովիտում՝ Սիսիան քաղաքը և Գորայք, Ծղուկ, Սպանդարյան, Շաղատ, Բալաք, Անգեղակոթ, Ույծ, Աղիտու, Վաղատնի, Որոտան, Շամբ, Լձեն գյուղերը,

- Որոտանի Սիսիան վտակի երկայնքով՝ Արևիս, Թանահատ, Թասիկ, Հացավան, Աշոտավան գյուղերը,

- Որոտանի Այրիգետ վտակի երկայնքով՝ Դաստակերտ քաղաքը և Յդունի, Նժդեհ, Տորունիք, Ախլաթյան, Բնունիս, Տոլորս գյուղերը,

- Լորաձոր վտակի երկայնքով՝ Շենաթաղ, Լոր, Գետաթաղ, Դարբաս գյուղերը:

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մարզի 134 բնակավայրերից մոտ 100-ը ձևավորվել են տարբեր գետերի և դրանց վտակների գետահովիտներում:

Բնական-աշխարհագրական գործոններից մարզի տարաբնակեցման համակարգի վրա որոշակի ազդեցություն են ունեցել նաև բարձունքային նիշերը: Ըստ այդմ՝ 32 բնակավայր (այդ թվում Դաստակերտ քաղաքը) ընդգրկված է հանրապետության լեռնային (ծովի մակերևույթից 1700 մետրից բարձր), 12 բնակավայր (այդ թվում Քաջարան քաղաքը)՝ բարձր լեռնային բնակավայրերի ցանկում (2000 մետրից բարձր) [Իրավ.ակտեր,12]: Ընդ որում, եթե բարձր լեռնային բնակավայրերի ցանկում ընդգրկված գյուղերի բնակչության միջին թիվն ավելի քան երկու անգամ պակաս է լեռնային բնակավայրերի բնակչության միջին թվից (համապատասխանաբար՝ 217 և 441 մարդ), ապա նույն օրինաչափությունը չի գործում այդ ցանկերում չընդգրկված գյուղերի պարագայում, որոնց բնակչության միջին թիվը հավասար է 353 մարդու [Ինտ.կայքեր, 8]: Տվյալ դեպքում բնակավայրերի բնակչության միջին թվի վրա առավել մեծ ազդեցություն ունեն դրանց արտաքին տրանսպորտային կապերի այլընտրանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչով որոշակիորեն չեզոքացվում է բարձունքային նիշի գործոնը (նշված հիմնախնդրին անդրադարձ կլինի հաջորդիվ):

Այսպիսով, Սյունիքի մարզի տարաբնակեցման համակարգին և բնակավայրերի տարածքային տեղաբաշխմանը բնորոշ առանձնահատկություններն են՝

ա. համակարգի տեղային կենտրոնների անհամաչափ բաշխվածությունը, ինչի հետևանքով որոշ տարածաշրջանների գյուղեր դուրս են մնում դրանց ազդեցության շրջանակներից,

բ. բնական աշխարհագրական գործոնների և հատկապես բարդ ռելիեֆի պատճառով բնակչության տեղաբաշխումը ևս շատ անհամաչափ է (նշված

գործունին, ինչպես նաև միջբնակավայրային կապերին առնչվող հիմնախնդիրներին անդրադարձ կլինի հաջորդիվ):

3.3. Սյունիքի մարզի վարչատարածքային բաժանումը

Համաձայն 1995 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Սյունիքի մարզը կազմված է 109 համայնքներից, որոնցից 7-ը՝ քաղաքային, 102-ը՝ գյուղական: Ի դեպ, 1995 թվականից մինչ օրս վերոհիշյալ օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները որևէ կերպ ՀՀ Սյունիքի մարզին չեն անդրադարձել և չեն վերաբերել (բացառությամբ համայնքների վարչական սահմանների նկարագրությանը վերաբերող փոփոխությունները): Մարզի տարածքում ընդհանուր առմամբ գոյություն ունի 134 բնակավայր: Մարզի 109 համայնքներից 10-ը կազմված են մեկից ավելի բնակավայրերից:

Դրանք են՝ Գեղանուշ գյուղական համայնքը, որը կազմված է Գեղանուշ և Գոմարան գյուղերից, Գեղի գյուղական համայնքը, որը կազմված է Գեղի, Գեղավանք, Կարդ, Կիցք, Վերին Գեղավանք և Քարուտ գյուղերից, Դարբաս գյուղական համայնքը, որը կազմված է Դարբաս և Շամբ գյուղերից, Լեռնաձոր գյուղական համայնքը, որը կազմված է Լեռնաձոր, Կավճուտ, Մուսալլամ, Ներքին Գիրաթաղ և Վերին Գիրաթաղ գյուղերից, Ծավ գյուղական համայնքը, որը կազմված է Ծավ և Շիշկերտ գյուղերից, Նժդեհ գյուղական համայնքը, որը կազմված է Նժդեհ և Ցղունի գյուղերից, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքը, որը կազմված է Նոր Աստղաբերդ, Աջաբաջ, Գետիշեն, Ոչեթի գյուղերից, Շուռնուխ գյուղական համայնքը, որը կազմված է Շուռնուխ, Աղբուլաղ, Վանանդ, Ձորակ գյուղերից, Սյունիք գյուղական համայնքը, որը կազմված է Սյունիք, Բարգուշատ, Դիցմայրի, Խորձոր, Սզնակ գյուղերից և Վարդանիձոր գյուղական համայնքը, որը կազմված է Վարդանիձոր, Այգեձոր, Թխկուտ գյուղերից:

Սյուս 99 համայնքները, այդ թվում՝ բոլոր քաղաքային համայնքները, կազմված են մեկական բնակավայրից, այսինքն՝ բնակավայրը ստացել է համայնքի

կարգավիճակ: Որպես կանոն, բացի համայնքի անվանումն ունեցող բնակավայրերից, մյուս գյուղերը հիմնականում լքված բնակավայրեր են, այսինքն՝ չունեն մշտական բնակչություն կամ արոտատեղի են, որտեղ ժամանակավոր բնակչության կարելի է հանդիպել միայն ամառվա մի քանի ամիսներին: Այսինքն՝ դասական իմաստով սրանք չի կարելի համարել խոշոր համայնքներ կամ դասել մեկից ավելի բնակավայրերի ընդգրկումով համայնքների շարքին:

Հարկ է նկատել, որ ՀՀ Սյունիքի մարզում գյուղական համայնքներն ընդհանուր առմամբ բավականին փոքր են: Մասնավորապես բնակչության թվաքանակի առումով մարզի ամենամեծ համայնքը մարզկենտրոն Կապանն է, որն ունի 45.488 բնակիչ: Մյուս խոշոր համայնքներն են Գորիսը (23.022 բնակիչ), Միսիանը (16.735 բնակիչ), Քաջարանը (8.498 բնակիչ), Ագարակը (4.881 բնակիչ) և Մեղրին (4.775 բնակիչ)⁶: Ամենամեծ գյուղական համայնքը Շինուհայրն է, որն ունի 2.865 բնակիչ: Ամենափոքր գյուղական համայնքը Քաշունին է, որն ունի ընդամենը 27 բնակիչ: Ստացվում է, որ մարզի ամենամեծ համայնքը ամենափոքրից մեծ է ավելի քան 1.685 անգամ, իսկ ամենամեծ գյուղական համայնքն ամենափոքրից մեծ է մոտ 106 անգամ: 109 համայնքներից 51-ը (46,8 %-ը) ունեն մինչև 300 բնակիչ: Մեկ համայնքի բնակչության միջին թիվը կազմում է 1.402 մարդ, ընդ որում, քաղաքային համայնքներում բնակչության միջին թիվը կազմում է 14.814 մարդ, իսկ գյուղական համայնքներում՝ 502 մարդ:

Եթե փորձենք ՀՀ Սյունիքի մարզի համայնքները խմբավորել ըստ բնակչության թվաքանակի, ապա ստացվում է, որ մարզում մինչև 100 բնակիչ ունեն 20 համայնքներ: Մեծ է նաև այն համայնքների քանակը, որոնք ունեն 201-ից 500 բնակիչ (32 համայնք): 16 համայնքներ ունեն 1.001-ից 3.000 բնակիչ (տե՛ս աղյուսակ 1): Ստացվում է, որ մինչև 1.000 բնակիչ ունեն ընդհանուր հաշվով 87 համայնքներ կամ ընդհանուրի շուրջ 80%-ը:

⁶«Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2010թ., էջ 270:

ՀՀ Մյունիքի մարզի համայնքները՝ խմբավորված ըստ բնակչության թվաքանակի՝
2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ⁷

	Համայնքներ
Մինչև 100 բնակիչ	20
101-200 բնակիչ	21
201-500 բնակիչ	32
501-1000 բնակիչ	14
1001-3000 բնակիչ	16
3001-5000 բնակիչ	2
5001-10000 բնակիչ	1
10.000-ից ավելի բնակիչ	3
Ընդամենը	109

Համայնքների փոքր չափերը չեն կարող բացասաբար չանդրադառնալ համայնքների կարողությունների և բյուջեների եկամուտների վրա, քանի որ համայնքների բյուջեների հարկային եկամուտները հավաքագրվում են համայնքի տարածքում հողի հարկից և գույքահարկից, հետևաբար, որքան փոքր է համայնքի տարածքը, այնքան փոքր է հարկման բազան: Մյուս կողմից, պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող դոտացիաների հաշվարկման հիմքում կարևորագույն ցուցանիշ է համայնքի բնակչության թվաքանակը: Ըստ գործոններից մեկի՝ որքան քիչ է բնակչությունը, այնքան քիչ դոտացիա է հաշվարկվում, մեկ ուրիշով փոքրաթիվ բնակչությամբ համայնքներում մեծ ցուցանիշ է ստացվում բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների մակարդակը որոշելիս, ինչն էլ պատճառ է դառնում փոքր ծավալի դոտացիայի հաշվարկման համար:

⁷ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2010թ., էջ 270-273:

ՀՀ Սյունիքի մարզում միջհամայնքային համագործակցությունը ցածր մակարդակի վրա է: Հարկ է նկատել, որ մարզի տարածքում 1996 թվականից ի վեր համայնքների միջև չեն կնքվել նպատակային, պայմանագրային հարաբերություններով միություններ: 2000 թվականի նոյեմբերին մարզի տարածքում միաժամանակ ձևավորվել են համայնքների չորս միություններ (հասարակական կազմակերպության կարգավիճակով)՝ ըստ տարածաշրջանների: Այդ միությունները տարբեր պատճառներով չեն կարողացել արդարացնել իրենց կենսունակությունը և ժամանակակից պայմաններում, ըստ էության, դադարեցրել են իրենց գործունեությունը: Համայնքների միջև փոխգործակցության միակ ձևական ինստիտուտ կարելի է համարել օրենքի պահանջով գործող մարզի խորհուրդը, որը լինելով մարզպետին կից գործող խորհրդակցական մարմին, չի կարող դասվել միջհամայնքային համագործակցության շարքին: Մարզի մի շարք համայնքներ անդամակցում են համայնքների հանրապետական ասոցիացիային, որը գործում է իրավաբանական անձանց միության կարգավիճակով:

Կարծում ենք, որ ինչպես մյուս մարզերի, այդպես էլ ՀՀ Սյունիքի մարզի կտրվածքով ՀՀ վարչատարածքային բաժանումը կարելի է համարել խիստ անարդյունավետ, ինչը լրջորեն խոչընդոտում է տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացմանը, ինչպես նաև համայնքների միջև միջհամայնքային համագործակցության խորացմանը: Ուստի առաջարկվում է համայնքների խոշորացման եղանակով իրականացնել համայնքային կարողությունների ամրապնդմանն ու զարգացմանը միտված վարչատարածքային բարեփոխումներ, ինչի արդյունքում պետք է զգալիորեն կրճատվի համայնքների թվաքանակը, կենտրոնացվեն համայնքների նյութական, ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսները՝ դրանք ուղղելով բնակչությանը հանրային բնույթի ծառայությունների մատուցման որակի բարձրացմանն ու ընդհանուր հետաքրքրության խնդիրների լուծմանը:

3.4. Առկա իրավիճակի վերլուծություն

3.4.1. Ծառայությունների մատուցում

ՏԻՄ-երին օրենքով վերապահված են մի շարք պարտադիր լիազորություններ, որոնք ըստ ծախսատարության պայմանականորեն կարելի է բաժանել երկու խոշոր խմբի՝ ֆինանսական ծախսեր պահանջող և լուրջ ֆինանսական ծախսեր չպահանջող: Առաջին խմբի մեջ են մտնում բնակչությանը ծառայություններ մատուցելուն ուղղված լիազորությունները (օրինակ՝ համայնքում սանիտարական մաքրման ու աղբահանության կազմակերպումը, կամ նախադպրոցական դաստիարակության կազմակերպումը և այլն), երկրորդ խմբի մեջ՝ թույլտվությունների տրամադրման և կառավարչական բնույթի լիազորությունները (օրինակ՝ համայնքի բյուջեի կազմումը, կամ համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության տրամադրումը և այլն): Եթե երկրորդ խմբի մեջ մտնող լիազորությունները հնարավոր է իրականացնել կառավարման ապարատի կողմից, և այդ լիազորությունների իրականացման համար, կառավարման ապարատի պահպանման ծախսերից բացի, լրացուցիչ ծախսերի կարիք չկա, ապա առաջին խմբի մեջ մտնող լիազորությունների իրականացման համար թե՛ կապիտալ և թե՛ ընթացիկ լուրջ ծախսեր կատարելու անհրաժեշտություն է առաջանում:

Ակնհայտ է, որ ֆինանսական, մարդկային և ենթակառուցվածքային տարբեր ռեսուրսներ ունեցող համայնքները տարբեր մակարդակով (ծավալ և ցանկ) են իրականացնում վերը նշված լիազորությունները: Այս դեպքում համայնքների խոշորացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն բանով, որ հնարավորություն է առաջանում տնտեսվող գումարները ուղղելու ֆինանսական ծախսեր պահանջվող ծառայություններ մատուցելուն:

Սույն ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է, թե Սյունիքի մարզում ինչ մակարդակի վրա է գտնվում համայնքների կողմից այդ ծառայությունների մատուցումը տարբեր թվակազմով բնակչությամբ համայնքներում:

Սյունիքի մարզում համայնքների կողմից ֆինանսական միջոցներ պահանջող ծառայությունների մատուցումը գնահատելու համար կազմվել է

համապատասխան հարցաթերթ, որը լրացվել է մարզի 15 համայնքներում (հարցաթերթի նմուշը, հարցում կատարած համայնքների ցանկը և համայնքային պաշտոնյայի մասին տեղեկությունները բերված են հավելված 1-ում):

Ստորև ներկայացված է ծառայությունների մատուցման պատկերն ընդհանուր գծերով:

Այսպես, կան ծառայություններ, որոնք, չնչին բացառություններով, ընդհանրապես չեն իրականացվում: Այդ ծառայություններն են՝

- համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների և այլ շինությունների պահպանումը, շահագործումը և նորոգումը,

- համայնքի սեփականություն համարվող ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը,

- համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը (որպես աչքի ընկնող բացառություն կարելի է նշել Գորիս համայնքը, որտեղ մարզական հիմնարկների գծով իրականացվում են միայն վարչական ծախսեր),

- համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը (բացառությամբ Քաջարան քաղաքի, որտեղ իրականացվում են լայնամասշտաբ ծրագրեր):

Մնացյալ ծառայությունները տարբեր թվակազմով բնակչությամբ համայնքներում իրականացվում են տարբեր ծավալով և որակով:

Այսպես, վարչական շենքերի պահպանման, շահագործման և նորոգման լիազորությունը բավարար մակարդակով իրականացվում է 1000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում՝ Քաջարան և Սյունիք համայնքներում նույնիսկ հասնելով գերազանց գնահատականի, իսկ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում հիմնականում այս ծառայության իրականացման մակարդակը անբավարար է, որոշ դեպքերում՝ նույնիսկ խիստ անբավարար:

Համայնքի սեփականություն համարվող ջրմուղի ցանցերի շահագործումը համայնքների մեծ մասում գտնվում է բավարար կամ ավելի բարձր մակարդակի վրա: Հակառակ դրա՝ կոյուղու ծառայությունները համայնքների մեծ մասում

կա՛մ ընդհանրապես չեն մատուցվում, կա՛մ մատուցման մակարդակը խիստ անբավարար է: Բացառություն է կազմում Քաջարան քաղաքը, որտեղ կոյուղու ծառայությունների մատուցման մակարդակը 5 բալանոց սանդղակով գնահատվել է 4:

Համայնքի բնակավայրերի կանաչապատման և բարեկարգման աշխատանքները բավարար մակարդակով իրականացվում են 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, իսկ մնացյալ համայնքներում կա՛մ ընդհանրապես չեն իրականացվում, կա՛մ էլ իրականացման մակարդակը անբավարար է:

Աղբահանությունը բավարար մակարդակով իրականացվում է 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում: Այստեղ հիմնականում ընթացիկ ծախսերից բացի կատարվում են նաև կապիտալ ներդրումներ, իսկ, օրինակ, Քաջարան համայնքում ծառայության մատուցումը նույնիսկ գնահատվում է գերազանց, քանի որ իրականացվում է 100 %-ով: Մնացյալ համայնքներում աղբահանությունը կամ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ գտնվում է շատ ցածր մակարդակի վրա, քանի որ չկան աղբամաններ, համապատասխան մեքենա-մեխանիզմներ, աղբավայրեր և այլն:

Գերեզմանատների գործունեության և դրանց պահպանման ծառայությունն ընդհանուր առմամբ ցածր մակարդակի վրա է գրեթե բոլոր համայնքներում՝ գոնե բավարար կամ մի փոքր ցածր գնահատվելով 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում:

Համատիրությունների կողմից չկառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանման աշխատանքները մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում ընդհանրապես չեն իրականացվում, իսկ 1000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում իրականացման մակարդակը անբավարար է կամ խիստ անբավարար:

Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների պահպանման լիազորությունն ընդհանուր առմամբ բարձր մակարդակով չի իրականացվում: Այն բավարար մակարդակով իրականացվում է 1000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, իսկ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում այս

լիազորության իրականացման մակարդակն անբավարար է կամ խիստ անբավարար:

Համայնքային ենթակայության ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման լիազորությունը մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում հիմնականում չի իրականացվում նման կառույցների բացակայության պատճառով, իսկ իրականացնելիս լավագույն դեպքում բավարար մակարդակի վրա է՝ կատարելով միայն վարչական բնույթի ծախսեր: 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում այս լիազորությունը հիմնականում այս կամ այն չափով իրականացվում է՝ երբեմն կատարելով միայն վարչական բնույթի ծախսեր, իսկ որոշ դեպքերում կատարելով նաև կապիտալ ներդրումներ:

Համայնքի հասարակական տրանսպորտի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման ծառայությունը մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում առհասարակ բացակայում է, իսկ 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում այս ոլորտում կատարվում են միայն ընթացիկ ծախսեր:

Նախադպրոցական դաստիարակության ոլորտում ծառայությունը մինչև 500 բնակիչ ունեցող համայնքներում ընդհանրապես չի մատուցվում, երբեմն նույնիսկ նախադպրոցական տարիքի երեխաների բացակայության պատճառով, 500-1000 բնակիչ ունեցող համայնքներում ծառայությունը մատուցվում է խիստ անբավարար մակարդակով, 1000-3000 բնակիչ ունեցող համայնքներում այս ծառայության մատուցման մակարդակը հասնում է բավարարի, այնտեղ երբեմն կատարվում են նույնիսկ կապիտալ ներդրումներ, իսկ 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում մակարդակը գնահատվում է բավարարից բարձր, կան դեպքեր, երբ մանկապարտեզները գտնվում են լավ վիճակում, նոր վերանորոգված են, ոլորտում կատարվում են կապիտալ ներդրումներ:

Մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում, բացառությամբ մեկի, արտադպրոցական հիմնարկներ ընդհանրապես չկան: Իսկ 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում այս ոլորտում թեպետ ծառայություններ մատուցվում են,

սակայն կապիտալ ներդրումներ կա՛մ շատ քիչ են կատարվում, կա՛մ ընդհանրապես չեն կատարվում:

Գրադարանային, կրթական և մշակութային այլ հիմնարկների (ակումբ, թանգարան և այլն) կողմից մատուցվող ծառայությունները մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում կա՛մ ընդհանրապես չեն մատուցվում, կա՛մ մատուցվում են անբավարար կամ խիստ անբավարար մակարդակով: Բացառություն են կազմում այն համայնքները, որտեղ ստեղծված են համայնքային կենտրոններ, որոնցում կենտրոնացված է այս ծառայությունների մեծ մասը և մատուցման մակարդակը բավարարից բարձր է, կատարվում են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսեր: Այս ծառայությունները քիչ թե շատ մատուցվում են 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում:

Համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործում, դրանց շինարարություն և վերանորոգում ծառայությունը համայնքներում, անկախ բնակչության թվից, կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ իրականացվում է հիմնականում անբավարար կամ խիստ անբավարար մակարդակով:

Ամփոփելով ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում ծառայությունների մատուցման նկարագիրը՝ կարելի է նշել, որ ծառայությունների մեծ մասի դեպքում դրանք քիչ թե շատ բավարար մակարդակով իրականացվում են 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում: Իսկ մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում մատուցվում են հատուկենտ ծառայություններ, այն էլ՝ ցածր մակարդակով:

3.4.2. Համայնքային բյուջեներ

Սյունիքի մարզում են գտնվում 109 համայնքներ (ՀՀ համայնքների 11.9 %-ը), որոնցից 7-ը քաղաքային համայնքներ են (ՀՀ քաղաքային համայնքների 14.3 %-ը), իսկ 102-ը՝ գյուղական (ՀՀ գյուղական համայնքների 11.8 %-ը):

Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը հանրապետության համայնքների բյուջեների ծախսերի կազմում տատանվում է 4.1 %-ից 5.2 %-ի սահմաններում, իսկ եկամուտների տեսակարար կշիռը՝ 4.1 %-ից 5.0 %-ի սահմաններում: Բնակչության մեկ շնչին ընկնող ծախսերի և եկամուտների

ցուցանիշով Սյունիքի մարզը փոքր-ինչ տարբերվում է միջին հանրապետական ցուցանիշից: Այդ տարբերությունը 2008-ին կազմել է -4.3 %, 2009-ին՝ +9.1 %, իսկ 2010-ին՝ -13.4 % (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության և Սյունիքի մարզի համայնքների ցուցանիշների համեմատություն

ՀՀ	Ցուցանիշ	Հայաստանի Հանրապետություն	Սյունիքի մարզ	Համեմատական
1	Համայնքների թիվը	915	109	11.9 %
2	Քաղաքային համայնք. թիվը	49	7	14.3 %
3	Գյուղական համայնքների թիվը	866	102	11.8 %
4	Բնակչության թիվը (2010 թ. տարեսկզբի դրությամբ) ⁸	3249.5 հազ. մարդ	152.9 հազ. մարդ	4.7 %
5	Համայնքների բյուջեների ծախսերը՝ 2008 թ. փաստացի 2009 թ. փաստացի 2010 թ. փաստացի	55643.7 մլն դ.	2519.3 մլն դ.	4.5 %
		54920.9 մլն դ.	2829.0 մլն դ.	5.2 %
		78968.1 մլն դ.	3217.7 մլն դ.	4.1 %
6	Համայնքների բյուջեների եկամուտները՝ 2008 թ. փաստացի 2009 թ. փաստացի 2010 թ. փաստացի	51720.8 մլն դ.	2562.5 մլն դ.	5.0 %
		58145.3 մլն դ.	2797.4 մլն դ.	4.8 %
		81367.9 մլն դ.	3308.1 մլն դ.	4.1 %
7	Բնակչության մեկ շնչին ընկնող ծախսերը՝ 2008 թ. փաստացի 2009 թ. փաստացի 2010 թ. փաստացի	17226.6 դ.	16487.8 դ.	-738.8 դ.
		16961.4 դ.	18502.1 դ.	+1540.7 դ.
		24301.6 դ.	21044.2 դ.	-3257.4 դ.
8	Բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտները՝ 2008 թ. փաստացի 2009 թ. փաստացի 2010 թ. փաստացի	16012.1 դ.	16770.0 դ.	+797.9 դ.
		17957.2 դ.	18295.8 դ.	+338.6 դ.
		25040.1 դ.	21635.8 դ.	-3404.4 դ.

Ծանոթություն 1: 2009 թ. բյուջետային նոր դասակարգման կիրառումից հետո որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել համայնքների բյուջեների ներկայացման ձևաչափում: Մասնավորապես ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը ներկայացվում են ծախսերի կազմում բացասական նշանով: Դրա արդյունքում ծախսերը ներկայացվում են որպես ընդհանուր ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի տարբերություն: Իսկ եկամուտները ներկայացվում են առանց ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի: Օրինակ՝ 2009 թ. բոլոր համայնքների բյուջեների ծախսերը կազմել են 49358.0 մլն դրամ: Սակայն եթե հաշվի առնենք,

⁸ Աղբյուրը՝ www.armstat.am

որ այս թվի մեջ ներառված են նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը՝ -5562.9 մլն դրամ, ապա պարզ է դառնում, որ իրական ծախսերն ավելի են, քան 49358.0 մլն դրամը: Իրական ծախսերը կազմում են 54920.9 մլն դրամ (49358.0+5562.9 մլն դրամ): Նույնը վերաբերում է նաև եկամուտներին:




Ցանոթություն 2: Սույն աշխատության մեջ եկամուտներ կամ ծախսեր ասելով նկատի են առնված ոչ թե բյուջեի ընդամենը եկամուտներ կամ ընդամենը ծախսեր հոդվածում գրված գումարները, այլ վերևում նկարագրված իրական ծախսերը և իրական եկամուտները: Այս վերապահումը վերաբերում է 2009 և 2010 թվականներին:

Սյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտները տարեցտարի աճել են՝ 2008-ին կազմելով 2562.5 մլն դրամ, 2009-ին՝ 2797.4 մլն դրամ, իսկ 2010-ին՝ 3308.1 մլն դրամ: Նշված եկամուտների կեսից ավելին բաժին է ընկնում 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներին (տե՛ս գծապատկեր 1): Տոկոսային արտահայտությամբ եկամուտները 2009 թ. ավելացել են 9.2 %-ով, իսկ 2010-ին՝ 18.3 %-ով:

Հետաքրքիր է նկատել, որ արդեն իսկ նշված 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներն ընդամենը 4-ն են: Դրանք Քաջարան, Սիսիան, Գորիս, Կապան քաղաքային համայնքներն են:

Գծապատկեր 1

Սյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների բաշխումն ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների միջև




Ընդհանուր առմամբ, մարզի համայնքների բյուջեների եկամուտների շուրջ 2/3-ը (2008-ին՝ 66.6 %-ը, 2009-ին՝ 66.6 %-ը, 2010-ին՝ 65.9 %-ը) բաժին է ընկնում մարզի 7 քաղաքային համայնքներին, իսկ մնացյալ մոտ 1/3-ը՝ 102 գյուղական համայնքներին: Քաղաքային համայնքների մեջ ամենամեծ մասնաբաժինն ունի Կապան քաղաքը, որի բյուջեի եկամուտները շատ քիչ են տարբերվում մարզի բոլոր գյուղական համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարից (տե՛ս գծապատկեր 2):

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների գրեթե կեսը ձևավորվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին: Ընդ որում, հետզհետե աճում է վերջիններիս մասնաբաժինը՝ 44.4 %-ից հասնելով 56.2 %-ի (տե՛ս աղյուսակ 3): Մարզում համայնքների բյուջեների եկամուտների հիմնական մասը դոտացիաներից հետո բաժին է ընկնում հողի հարկին, գույքահարկին, գույքի վարձակալությունից եկամուտներին և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերին (կապիտալի գործառնություններից եկամուտներին):

Գծապատկեր 2

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների բաշխումն ըստ քաղաքային և գյուղական համայնքների



Սյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտներն ըստ հիմնական եկամտատեսակների (հազ. դրամ)


ՀՀ	Եկամուտներ	2008	2009	2010	2008	2009	2010
	<i>Ընդամենը եկամուտներ, այդ թվում</i>	<i>2562449.2</i>	<i>2797435.2</i>	<i>3308106.6</i>	<i>100 %</i>	<i>100 %</i>	<i>100 %</i>
1	Գույքահարկ	153247.8	205173.4	196551.7	6.0 %	7.3 %	5.9 %
2	Հողի հարկ	167570.8	226980.4	227125.8	6.5 %	8.1 %	6.9 %
3	Պետական տուրքեր	25927.3	20040.0	21967.3	1.0 %	0.7 %	0.7 %
4	Տեղական տուրքեր	35229.3	50293.9	60346.3	1.4 %	1.8 %	1.8 %
5	Գույքի վարձակալությունից եկամուտներ	14933.0	177785.6	261367.0	0.6 %	6.4 %	7.9 %
6	Տեղական վճարներ	2079.5	4254.3	4383.4	0.1 %	0.2 %	0.1 %
7	Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով ստացվող միջոցներ	43418.1	66124.5	61954.7	1.7 %	2.4 %	1.9 %
8	Համայնքային հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարներ	4717.2	14582.7	4376.2	0.2 %	0.5 %	0.1 %
9	Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ	1138708.8	1428283.9	1858525.8	44.4 %	51.1 %	56.2 %
10	Պետական բյուջեից ստացվող կապիտալ տրանսֆերտներ	0.0	23000.0	123542.8	0.0 %	0.8 %	3.7 %
11	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր (եկամուտներ կապիտալի գործառնություններից)	506732.3	282815.5	314849.9	19.8 %	10.1 %	9.5 %

Ծանոթություն: Աղյուսակում ներկայացված են համայնքների բյուջեների եկամուտների հիմնական, բայց ոչ բոլոր եկամտատեսակները: Այդ պատճառով աղյուսակում ներկայացված եկամտատեսակների տեսակարար կշիռների հանրագումարը չի կազմում 100%: Դա արվել է տարբեր տարիների եկամուտների համադրելիությունն ապահովելու նպատակով:

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի եկամուտները խիստ անհավասար են: Բացարձակ արտահայտությամբ մարզի համայնքների բյուջեների վարչական մասի եկամուտները 2008, 2009 և 2010 թթ. կազմել են՝ համապատասխանաբար 2023.6 մլն դրամ, 2490.9 մլն դրամ և 2849.4 մլն դրամ, իսկ ֆոնդային բյուջեի եկամուտները՝ 559.0 մլն դրամ, 321.2 մլն դրամ և 500.5 մլն դրամ: Ընդ որում, եթե վարչական մասի եկամուտները տարեցտարի ավելանում են (2009-ին ավելացել են 23.1 %-ով, իսկ 2010-ին՝ 14.4 %-ով), ապա ֆոնդային մասի եկամուտների դինամիկան կայուն չէ: 2009 թ. եկամուտները նվազել են 42.5 %-ով, իսկ 2010-ին ավելացել 55.9 %-ով: Տոկոսային արտահայտությամբ ֆոնդային եկամուտների մասնաբաժինն ընդհանուր եկամուտների կազմում 2008-2010 թթ. տատանվում է 11.5 %-ից 21.8 %-ի սահմաններում (տե՛ս գծապատկեր 3): Եթե ֆոնդային մասի եկամուտների կազմից հանենք վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները, ապա ֆոնդային մասի եկամուտների տեսակարար կշիռը կլինի ավելի ցածր՝ 2008, 2009 և 2010 թթ. կազմելով՝ համապատասխանաբար 21.0 %, 10.9 % և 13.9 %:

Գծապատկեր 3

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի եկամուտների հարաբերակցությունը



Ծանոթություն: Գծապատկերում վարչական և ֆոնդային մասերի եկամուտների՝ ընդհանուր եկամուտների կազմում ունեցած տեսակարար կշիռների հանրագումարը գերազանցում է 100 %-ը, քանի որ հաշվարկի ժամանակ դիտարկվել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների գումարները:

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի եկամուտների դիտարկումը ցույց է տալիս, որ, անկախ բնակչության թվից, միննույն է, ընդհանուր եկամուտների կազմում ֆոնդային մասի եկամուտները մեծ տեսակարար կշիռ չունեն (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4


Մյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների կազմում

ՀՀ	Համայնքների դասակարգում	2008 թ.		2009 թ.		2010 թ.	
		Վարչական մաս	Ֆոնդային մաս	Վարչական մաս	Ֆոնդային մաս	Վարչական մաս	Ֆոնդային մաս
1	Մինչև 500 բնակիչ ունեցող	83.87%	16.15%	95.87%	4.13%	94.66%	6.59%
2	500-1000 բնակիչ ունեցող	69.25%	30.78%	95.03%	5.24%	86.24%	13.76%
3	1000-3000 բնակիչ ունեցող	82.81%	17.66%	89.10%	11.84%	91.82%	8.42%
4	3000-5000 բնակիչ ունեցող	92.38%	7.62%	92.29%	7.71%	85.12%	14.88%
5	5000 և ավելի բնակիչ ունեցող	76.71%	24.49%	86.60%	14.06%	82.76%	19.04%

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների կատարողականն այդքան էլ բարձր չէ (տե՛ս գծապատկերներ 4, 5, 6):

Գծապատկեր 4


Մյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների կատարողականը, 2008 թ.



Մարզի համայնքների եկամուտների կատարողականը տարբեր տարիների տատանվում է 79.9 %-ից մինչև 94.9 %-ի սահմաններում: Ընդ որում, տարեցտարի բարձրանում է եկամուտների կատարման տոկոսը:


Գծապատկեր 5

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների կատարողականը, 2009 թ.



Գծապատկեր 6

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների եկամուտների կատարողականը, 2010 թ.



Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքներում կատարողականը 2008-ին տատանվում է 66.1 %-ից մինչև 90.0 %-ի սահմաններում, 2009-ին՝ 73.2 %-ից 93.1 %-ի, իսկ 2010-ին՝ 92.4 %-ից 99.9 %-ի: 2008 և 2009 թթ. եկամուտների բարձր կատարողական է նկատվում միայն 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում, իսկ 2010-ին կատարողականը բարձր է բոլոր համայնքներում:


Ըստ վարչական և ֆոնդային մասերի եկամուտների կատարողականը դիտարկելիս շատ մեծ տատանումներ կարելի է նկատել համայնքների բյուջեների ֆոնդային մասում: Տարբեր տարիների ըստ բնակչության թվի դասակարգված տարբեր համայնքների բյուջեների ֆոնդային մասի եկամուտների կատարողականը տատանվում է 38.6 %-ից մինչև 293.8 %-ի սահմաններում:

Համայնքների բյուջեների եկամուտների վերլուծության ժամանակ հետաքրքիր է դիտարկել նաև որոշ առանձին եկամտատեսակներ:

Այսպես, մարզի համայնքների բյուջեների եկամուտների գրեթե կեսը կազմում են պետության կողմից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաները: Վերջիններիս տեսակարար կշիռը համայնքների բյուջեների եկամուտների կազմում 2008 թ. եղել է 44.4 %, 2009-ին՝ 51.1 %, իսկ 2010-ին՝ 56.2 %: Համեմատաբար փոքր է ֆինանսական համահարթեցման դոտացիաների մասնաբաժինը 500-1000 բնակիչ ունեցող համայնքներում: Իսկ առավելագույն արժեքն ունի 1000-3000 բնակիչ ունեցող համայնքներում (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7

Ֆինանսական համահարթեցման դոտացիաների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում




Պատկերը փոքր-ինչ այլ է ֆինանսական համահարթեցման դոտացիաներն ըստ առանձին համայնքների դիտարկելու դեպքում: Այսպես, 2010-ին 6 համայնքներում (2009-ին՝ 3, 2008-ին՝ 2 համայնքներում) դոտացիաների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում գերազանցում է 90 %-ը՝ Կաղնուտ համայնքում հասնելով նույնիսկ 100 %-ի: Նշված ցուցանիշը 2010-ին կազմել է 70-90 % մարզի 34 համայնքներում (2009-ին՝ 19, 2008-ին՝ 19 համայնքներում): Իսկ մարզի 7 համայնքներում 2010-ին այս ցուցանիշը չի գերազանցել 30 %-ը (2009-ին՝ 17, 2008-ին՝ 21 համայնքներում):

Համայնքների բյուջեների եկամուտների ձևավորման գործում համեմատաբար մեծ մասնակցություն ունեն նաև հարկային եկամուտները: Վերջիններիս տեսակարար կշիռը համայնքների բյուջեների եկամուտների կազմում 2008 թ. եղել է 12.5 %, 2009-ին՝ 15.4 %, իսկ 2010-ին՝ 12.8 %: Որոնցից գույքահարկի մասնաբաժինը նշված տարիներին կազմել է՝ համապատասխանաբար 6.0 %, 7.3 % և 5.9 %, իսկ հողի հարկինը՝ 6.5 %, 8.1 % և 6.9 %: Հարկային եկամուտներն ընդհանուր եկամուտների կազմում ամենամեծ մասնաբաժինն ունեն 500-1000 բնակիչ ունեցող համայնքներում, իսկ ամենափոքրը՝ 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8

Հարկային եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում



Առանձին համայնքներում հարկային եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում ունի տարբեր արժեքներ: 2010-ին մարզի 5 համայնքներում այդ ցուցանիշը գերազանցել է 50 %-ը (2009-ին՝ 11, 2008-ին՝ 7


համայնքներում): Իսկ 19 համայնքներում չի կազմում նույնիսկ 5 % (2009-ին՝ 11, 2008-ին 18 համայնքներում):

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը (կապիտալի գործառնություններից եկամուտները) 2008-ին կազմել են համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների 19.8 %-ը, 2009-ին՝ 10.1 %-ը, իսկ 2010-ին՝ 9.5 %-ը: Նշված եկամտատեսակը բավականին տատանվում է թե՛ ըստ տարիների և թե՛ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների՝ կազմելով ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների 2.2 %-ից մինչև 30.2 %-ը (տե՛ս գծապատկեր 9):

Հետաքրքիր է նկատել, որ 2010-ին մարզի համայնքների 66 %-ը (72 համայնքներ) առհասարակ չունեն կապիտալի գործառնություններից եկամուտներ: 2009-ին նման համայնքների թիվը դարձյալ կազմել է 66 % (72 համայնքներ), իսկ 2008-ին՝ 51 %-ը (56 համայնքներ):

Գծապատկեր 9

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում



Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերը նույնպես, ինչպես և եկամուտները, տարեցտարի աճել են՝ 2519.3 մլն դրամից հասնելով 3217.7 մլն դրամի, կամ, տոկոսային արտահայտությամբ՝ ավելանալով 27.7 %-ով: Տարեցտարի աճել են նաև ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ծախսերը (բացառությամբ 500-1000 բնակիչ ունեցող համայնքների): 2010 թ. աճի տեմպը 2008 թ. նկատմամբ մինչև 500 բնակիչ ունեցող համայնքներում

կազմել է 40.6 %, 500-1000 բնակիչ ունեցող համայնքներում՝ 36.4 %, 1000-3000 բնակիչ ունեցող համայնքներում՝ 42.6 %, 3000-5000 բնակիչ ունեցող համայնքներում՝ 26.1 %, իսկ 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում՝ 21.6 % (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5


Սյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ծախսերը (հազ. դրամ)

ՀՀ	Համայնքների դասակարգում	2008 թ.	2009 թ.	2010 թ.	Աճի տեմպ	
					2009թ.	2010 թ.
	Ընդամենը Սյունիքի մարզ	2519334.6	2828978.1	3217656.6	+12.3 %	+13.7 %
1	Մինչև 500 բնակիչ ունեցող	326316.8	371836.0	458713.3	+13.9 %	+23.4 %
2	500-1000 բնակիչ ունեցող	127292.8	194371.0	173659.4	+52.7 %	-10.7 %
3	1000-3000 բնակիչ ունեցող	310054.4	409429.0	442088.8	+32.1 %	+8.0 %
4	3000-5000 բնակիչ ունեցող	182200.2	189342.0	229774.8	+3.9 %	+21.4 %
5	5000 և ավելի բնակիչ ունեցող	1573470.4	1664000.1	1913420.3	+5.8 %	+15.0 %

Մարզի համայնքների բյուջեների ավելի քան 80 %-ը կազմում են վարչական մասի ծախսերը: Ընդ որում, հետզհետե նվազում է ֆոնդային մասի ծախսերի մասնաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ՝ 20.4 %-ից հասնելով 16.2 %-ի (տե՛ս գծապատկեր 10):

Գծապատկեր 10

Սյունիքի մարզի համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի ծախսերի հարաբերակցությունը



Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների վարչական մասի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում տարբեր տարիների տատանվում է 94.0 %-ից 74.4 %-ի սահմաններում (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Սյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի կազմում

ՀՀ	Համայնքների դասակարգում	2008 թ.		2009 թ.		2010 թ.	
		վարչական մաս	ֆոնդային մաս	վարչական մաս	ֆոնդային մաս	վարչական մաս	ֆոնդային մաս
1	Մինչև 500 բնակիչ ունեցող	91.34%	8.88%	94.04%	5.96%	93.34%	6.66%
2	500-1000 բնակիչ ունեցող	93.56%	6.44%	74.44%	25.56%	89.55%	10.45%
3	1000-3000 բնակիչ ունեցող	89.84%	10.68%	82.37%	17.63%	88.01%	11.99%
4	3000-5000 բնակիչ ունեցող	85.38%	14.62%	92.78%	7.22%	86.82%	13.18%
5	5000 և ավելի բնակիչ ունեցող	74.60%	26.58%	85.31%	14.69%	79.60%	20.40%

Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերի կատարողականը բարձր համարել չի կարելի, քանի որ 2009 թ. այդ ցուցանիշը չի կազմել նույնիսկ 50 %, իսկ առավելագույն արժեքը կազմել է ընդամենը 88.7 %: Համեմատաբար բարձր է համայնքների բյուջեների վարչական մասի ծախսերի կատարողականը: Ինչ վերաբերում է բյուջեների ֆոնդային մասի ծախսերի կատարողականին, ապա կարելի է ասել, որ այս ցուցանիշը խիստ անկայուն է: Տարբեր տարիների ըստ բնակչության թվի դասակարգված տարբեր համայնքներում այն կազմել է 13.2 %-ից մինչև 140.9 % (տե՛ս աղյուսակ 7):

Սյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ծախսերի կատարողականը

ՀՀ	Համայնքների դասակարգում	Ընդհանուր ծախսերի կատարողական (%)			Վարչական մասի ծախսերի կատարողական (%)			Ֆոնդային մասի ծախսերի կատարողական (%)		
		2008 թ.	2009 թ.	2010 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.
	Ընդամենը Սյունիքի մարզ	75.0	49.6	88.7	76.5	83.7	89.9	71.6	80.8	75.6
1	Մինչև 500 բնակիչ	64.2	13.0	82.0	66.0	75.2	85.7	50.7	36.2	45.6
2	500-1000 բնակիչ	43.1	73.2	84.5	51.1	70.6	88.9	13.2	81.9	58.8
3	1000-3000 բնակիչ	60.3	76.7	82.5	61.7	76.6	87.1	52.8	71.1	56.0
4	3000-5000 բնակիչ	69.2	82.2	85.9	73.0	79.6	90.4	53.1	140.9	64.6
5	5000 և ավելի բնակիչ	88.4	91.4	92.8	90.4	90.6	92.0	85.8	92.4	86.4


Համայնքների բյուջեների ծախսերի դիտարկումը տարբեր տեսանկյուններից հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու համայնքների բնակչությանը մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

Այս առումով հետաքրքիր ցուցանիշ է համայնքների բյուջեների ծախսերի կազմում աշխատավարձի վճարման ծախսերի տեսակարար կշիռը: Կարելի է ասել, որ եթե բարձր է այս ցուցանիշը, ապա համեմատաբար ցածր է ծառայությունների մատուցման մակարդակը: Սյունիքի մարզի համայնքների բյուջեներում աշխատավարձի վճարման ծախսերը (աշխատանքի վարձատրություն+պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ) 2008-ին կազմել են ընդհանուր ծախսերի 43.4 %-ը, 2009-ին՝ 46.8 %-ը, իսկ 2010-ին՝ 36.5 %-ը: Ընդ որում, որոշակի կապ է նկատվում համայնքի բնակչության թվի և այս ցուցանիշի միջև. որքան փոքր է համայնքի բնակչության թիվը, այնքան բարձր է այս ցուցանիշը: Օրինակ՝ մինչև 500 բնակիչ ունեցող համայնքներում աշխատանքի վարձատրության ծախսերն ընդհանուր ծախսերի մեջ 2009-ին կազմել են 83.3 %,

իսկ 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում 2010-ին այն կազմել է ընդամենը 21.6 % (տե՛ս գծապատկեր 11):

Գծապատկեր 11

Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը



Ըստ առանձին համայնքների այս ցուցանիշը դիտարկելիս կարելի է տեսնել, որ մարզի համայնքների գերակշիռ մասում այն ունի բավականին բարձր արժեք: 2010-ին նշված ցուցանիշը մարզի 15 համայնքներում կազմել է 90 %-ից ավելի՝ հասնելով մինչև 98.8 %-ի (2009-ին՝ 44, 2008-ին 36 համայնքներում): 2009-ին Օխտար համայնքի բյուջեի ծախսերն ամբողջությամբ կազմել են աշխատանքի վարձատրության ծախսերը: Այս ցուցանիշը 2010-ին 50-90 % է կազմել մարզի համայնքների 74 %-ում (81 համայնք), 2009-ին՝ մարզի համայնքների 50 %-ում (55 համայնք), 2008-ին՝ մարզի համայնքների 59 %-ում (64 համայնք):

Սյունիքի մարզում համայնքների կողմից ծառայությունների մատուցման մակարդակի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել նաև համայնքների բյուջեների ծախսերի՝ ըստ գործառնական դասակարգման ոլորտների վերլուծության միջոցով:

Մարզի համայնքների բյուջեների ոլորտային ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների բյուջեների միջոցների ավելի քան 1/3-ը ծախսվում է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վրա: Իսկ պաշտպանություն և հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեության ոլորտներում դիտարկվող տարիներին ծախսեր ընդհանրապես չեն կատարվել (տե՛ս աղյուսակներ 8, 9 և 10):

Մյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառնական դասակարգման, 2008 թ. (հազ. դրամ)

ՀՀ	Ծախսերն ըստ գործառնական դասակարգման	Ընդամենը համայնքներ	Մինչև 500 բնակիչ	500-1000 բնակիչ	1000-3000 բնակիչ	3000-5000 բնակիչ	5000 և ավելի բնակիչ
	Ընդամենը ծախսեր	2519334.6	326316.8	127292.8	310054.4	182200.2	1573470.4
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	910135.7	242961.5	84061.9	188066.0	35771.9	359274.4
2	Պաշտպանություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Հասարակական կարգի պահպանություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Կրթություն և գիտություն	485339.4	6770.3	10658.7	55140.3	65983.1	346787.0
5	Առողջապահություն	6492.2	0.0	0.0	0.0	0.0	6492.2
6	Մոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	43492.2	260.0	550.0	6113.1	1230.0	35339.1
7	Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն	363672.6	9439.9	0.0	11080.4	18468.6	324683.7
8	Բնակարանային կոմունալ տնտեսություն	360582.0	25.0	40.0	300.0	39375.5	320841.6
9	Վառելիքային և էներգետիկ համալիր	985.7	0.0	985.7	0.0	0.0	0.0
10	Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
11	Արդյունաբերություն, հանքային հանածոներ, շինարարություն և բնապահպանություն	10701.5	0.0	0.0	0.0	0.0	10701.5
12	Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	46719.6	0.0	0.0	9365.0	0.0	37354.6
13	Տնտեսական այլ ծառայություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
14	Հիմնական խմբին չդասվող ծախսեր	291213.8	66860.0	30996.5	39989.6	21371.3	131996.4

Սյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառնական դասակարգման, 2009 թ. (հազ. դրամ)

ՀՀ	Ծախսերն ըստ գործառնական դասակարգման	Ընդամենը համայնքներ	Մինչև 500 բնակիչ	500-1000 բնակիչ	1000-3000 բնակիչ	3000-5000 բնակիչ	5000 և ավելի բնակիչ
	<i>Ընդամենը ծախսեր</i>	2828978.1	371836.0	194371.0	409429.0	189342.0	1664000.1
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1109480.3	327226.2	130402.0	240874.9	52445.3	358531.9
2	Պաշտպանություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ	154704.1	30968.8	27981.7	16434.4	5448.9	73870.2
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	310603.7	0.0	0.0	1657.0	19754.9	289191.8
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	103856.6	0.0	12036.5	15282.3	7067.5	66739.0
7	Առողջապահություն	9849.7	2731.3	2850.0	0.0		6999.7
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	301420.1	2020.4	980.1	39842.9	21771.7	236804.9
9	Կրթություն	765713.9	4679.6	13065.0	83490.6	78762.1	585716.7
10	Մոցիալական պաշտպանություն	46539.4	1097.8	4397.0	10438.0	720.0	29886.6
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	26810.4	3111.9	2658.6	1409.0	3371.5	16259.4


Սյունիքի մարզի՝ ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառնական դասակարգման, 2010 թ.
 հազ. դրամ

ՀՀ	Ծախսերն ըստ գործառնական դասակարգման	Ընդամենը համայնքներ	Մինչև 500 բնակիչ	500-1000 բնակիչ	1000-3000 բնակիչ	3000-5000 բնակիչ	5000 և ավելի բնակիչ
	<i>Ընդամենը ծախսեր</i>	3217656.6	458713.3	173659.4	442088.8	229774.8	1913420.3
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1210116.0	389029.1	131914.1	297879.6	63885.9	327407.3
2	Պաշտպանություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ	210955.0	25601.6	8050.0	21612.3	9184.8	146506.3
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	404270.9	220.0	0.0	1327.6	45998.0	356725.2
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	115928.3	8453.2	3397.6	3264.6	2229.9	98583.0
7	Առողջապահություն	6547.0	0.0	0.0	0.0	0.0	6547.0
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	310903.2	15838.2	4344.1	6658.6	17294.5	266767.8
9	Կրթություն	837162.8	4777.7	14780.4	93005.8	86811.5	637787.4
10	Սոցիալական պաշտպանություն	47122.4	4534.5	5174.0	12044.0	1890.0	23479.9
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	74651.1	10259.0	5999.2	6296.4	2480.2	49616.3

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերը հիմնականում բաշխված են ծախսերի գործառնական դասակարգման 5 ոլորտների միջև: Դրանք են՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսական հարաբերությունների, շրջակա միջավայրի պաշտպանության, հանգստի, մշակույթի ու կրոնի և կրթության ոլորտները (տե՛ս գծապատկեր 12):

Գծապատկեր 12

Մյունիքի մարզի համայնքների բյուջեների ոլորտային ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի մեջ



Ծանոթություն: Գծապատկերի հորիզոնական առանցքի հերթական թվերը համապատասխանում են համայնքների բյուջեների ծախսերի գործառնական դասակարգման ոլորտներին, որոնք են՝

1. ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ,
2. պաշտպանություն,
3. հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն,
4. տնտեսական հարաբերություններ,
5. շրջակա միջավայրի պաշտպանություն,
6. բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն,
7. առողջապահություն,
8. հանգիստ, մշակույթ և կրոն,
9. կրթություն,
10. սոցիալական պաշտպանություն,
11. հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր:


Համայնքների բյուջեների ոլորտային ծախսերի վերլուծության ժամանակ 2008 թվականի ծախսերը չեն դիտարկվել, քանի որ բյուջետային նոր դասակարգման կիրառման հետևանքով վերջիններս արդեն համադրելի չեն 2009 և 2010 թվականների տվյալների հետ:

Հետաքրքիր է նկատել, որ բնակչության տարբեր թվակազմ ունեցող համայնքներում տարբեր է ծախսերի ոլորտային բաշխվածությունը: Այսպես, բնակչության աճին զուգընթաց, նվազում է համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի կազմում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը: Ընդ որում, բնակչության ամենափոքր և ամենամեծ թիվ

ունեցող համայնքներում այս ցուցանիշները միմյանցից տարբերվում են շուրջ 4 անգամ (տե՛ս գծապատկեր 13): Ասվածը նշանակում է, որ բնակչության ավելի մեծ թիվ ունեցող համայնքներում ավելի շատ են գումարներ ուղղվում համայնքի բնակչությանը ծառայություններ մատուցելուն:

Գծապատկեր 13

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը




Ինչպես արդեն նշվել է, պաշտպանության և հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտներում դիտարկվող տարիներին ոչ մի համայնքում ծախսեր ընդհանրապես չեն կատարվել:

Տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերի և համայնքների բնակչության թվի փոփոխության մեջ օրինաչափություն չի նկատվում: Այս ոլորտի ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերի մեջ առավելագույն արժեքն ընդունել է 2009-ին 500-1000 բնակիչ ունեցող համայնքներում՝ կազմելով 14.4 %, իսկ նվազագույնը՝ նույն 2009-ին 3000-5000 բնակիչ ունեցող համայնքներում՝ կազմելով 2.9 % (տե՛ս գծապատկեր 14): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 78 և 74 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 72 %-ը և 68 %-ը):


Գծապատկեր 14

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը



Գծապատկեր 15

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը




Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում ծախսեր կատարել են 3000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում: Ընդ որում, տարբեր տարիների այդ ծախսերն ունեն 10.4 %-ից մինչև 20.0 % մասնաբաժին ընդհանուր ծախսերի կազմում: Իսկ մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում այս ոլորտում կա՛մ ընդհանրապես ծախսեր չեն կատարվում, կա՛մ եթե կատարվում են, ապա դրանք շատ աննշան են (տե՛ս գծապատկեր 15): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 9 և 11 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 8 %-ը և 10 %-ը):

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտի ծախսերն անկայուն դինամիկա ունեն թե՛ ըստ տարիների և թե՛ ըստ բնակչության թվի: Այս

ուլորտում համեմատաբար շատ են ծախսեր կատարել 500-1000 բնակիչ և 5000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում (տե՛ս գծապատկեր 16): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 21 և 38 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 19 %-ը և 35 %-ը):

Գծապատկեր 16


Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը




Առողջապահության ոլորտի ծախսերի բաժինն ընդհանուր առմամբ շատ աննշան է Սյունիքի մարզի համայնքների բյուջեներում՝ շատ դեպքերում լինելով բացարձակ 0 (տե՛ս գծապատկեր 17): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 3 և 1 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 3 %-ը և 1 %-ը):

Գծապատկեր 17

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ առողջապահության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը




Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը



Հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծախսերի վերաբերյալ որոշ վերապահումներով կարելի է ասել, որ բնակչության թվի աճին զուգընթաց աճում են ընդհանուր ծախսերի կազմում այս ոլորտի ծախսերի մասնաբաժինները՝ 0.5 %-ից հասնելով 14.2 %-ի (տե՛ս գծապատկեր 18): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 32 և 55 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 29 %-ը և 50 %-ը):


Ընդհանուր առմամբ, համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի կազմում կրթության ոլորտի ծախսերի մասնաբաժինը համայնքների բնակչության թվի աճին զուգընթաց ավելացման միտում ունի: Այս ցուցանիշն առավելագույն արժեքն ունի 3000-5000 բնակիչ ունեցող համայնքներում՝ 2009 և 2010 թթ.՝ կազմելով՝ համապատասխանաբար 41.6 % և 37.8 % (տե՛ս գծապատկեր 19): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 29 և 30 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 27 %-ը և 28 %-ը):

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը



Սոցիալական պաշտպանության ոլորտում առանձնապես մեծ ծախսեր չեն կատարվում: Ընդ որում, որևէ կապ չի նկատվում ընդհանուր ծախսերի կազմում այս ոլորտում կատարվող ծախսերի մասնաբաժնի և համայնքների բնակչության թվի փոփոխության միջև: Այս ցուցանիշն առավելագույնը եղել է 3.0 % 2010-ին՝ 500-1000 բնակիչ ունեցող համայնքներում (տե՛ս գծապատկեր 20): Այս ոլորտում 2009-ին և 2010-ին ծախսեր են կատարել մարզի՝ համապատասխանաբար 27 և 44 համայնքներ (մարզի համայնքների՝ համապատասխանաբար 25 %-ը և 40 %-ը):


Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը



Ինչ վերաբերում է հիմնական բաժիններին չդասվող ծախսերին, ապա վերջիններս ընդհանուր ծախսերի մեջ կազմում են առավելագույնը 3.5 %, իսկ նվազագույնը 0.3 % (տե՛ս գծապատկեր 21):

Գծապատկեր 21

Ըստ բնակչության թվի դասակարգված համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ հիմնական բաժիններին չդասվող ծախսերի տեսակարար կշիռը



Ինչպես արդեն նշվել է, համայնքների կողմից կատարվող ծախսերը ներկայացվում են գործառնական դասակարգման 11 ոլորտներում: Ընդ որում, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների բաժնում ներկայացվող ծախսերը հիմնականում վարչական բնույթի ծախսեր են (օրինակ՝ կառավարման ապարատի պահպանման ծախսեր, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ և այլն) և շատ դեպքերում կապված են օրենքով իրենց վերապահված հանրային ծառայությունների մատուցման կազմակերպման, կառավարման և մի շարք այլ հարցերի հետ: Իսկ հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերը նախատեսված են անկանխատեսելի ծախսերի ֆինանսավորման համար: Ասվածը նշանակում է, որ կոնկրետ ծառայությունների մատուցման մասին պատկերացում ստանալու համար հարկ է դիտարկել ծախսերի գործառնական դասակարգման մյուս 9 ոլորտները: Իհարկե, պետք է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ՏԻՄ-երին վերապահված որոշ լիազորություններ կարող են իրականացվել համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից: Այդպիսին է, օրինակ, հետևյալ լիազորությունը.

«Համայնքի ղեկավարը հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը» (հոդված 41, մաս 3, կետ 3) և այլն: Այս դեպքում նման լիազորությունների իրականացման ծախսերը ներառվում են կառավարման ապարատի պահպանման ծախսերի մեջ, և դրանք հնարավոր չէ ֆինանսական առումով առանձնացնել ապարատի ծախսերից:

Եվ այսպես, Սյունիքի մարզի գյուղական համայնքների 2009 թ. բյուջեների ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ և հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր* ոլորտներից բացի, գյուղական համայնքները ծախսեր են կատարել առավելագույնը 6 ոլորտներում (տե՛ս աղյուսակ 11), ընդ որում՝

- **22 համայնքներ** ոչ մի այլ ոլորտում ծախսեր չեն կատարել,
- **36 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **1 ոլորտում**,
- **20 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **2 ոլորտում**,
- **16 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **3 ոլորտում**,
- **5 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **4 ոլորտում**,
- **2 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **5 ոլորտում**,
- **1 համայնք** ծախսեր է կատարել ընդամենը **6 ոլորտում**:

Փաստորեն ստացվում է, որ 2009-ին մարզի ընդհանուր համայնքների 20.2 %-ը, կամ գյուղական համայնքների 21.6 %-ը ծառայությունների մատուցումն արտահայտող ոլորտներում ընդհանրապես ծախսեր չեն կատարել:

Աղյուսակ 11

Սյունիքի մարզի գյուղական համայնքներն ըստ 2009 թ. կատարված ծախսերի ոլորտների⁹ թվի

Ծանոթություն: Փակագծերում ներկայացված են համապատասխան ոլորտների հանրագումարային ծախսերի տեսակարար կշիռները ընդհանուր ծախսերի մեջ: Այսինքն, եթե, օրինակ, համայնքը ծախսեր է կատարել 4 ոլորտներում, ապա փակագծում նշված թիվն իրենից ներկայացնում է բոլոր 4 ոլորտների ծախսերի ընդհանուր գումարի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ:

⁹ Ոլորտների թիվը հաշվարկելիս անտեսվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն ու հիմնական խմբին չդասվող ծախսերը:

Համայնքի անվանում	Ոլորտների անվանում
0 ոլորտ	
Լիճք, Աճանան, Տանձատափ, Աղվանի, Անտառաշատ, Առաջածոր, Բալաք, Գուղեմնիս, Թանահատ, Կաղնուտ, Կուրիս, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Շուռնուխ, Որոտան (Գորիսի շրջ.), Չափնի, Նժդեհ, Սևաքար, Տորունիք, Ուժանիս, Քաշունի, Օխտար	-
1 ոլորտ	
Ագարակ (2.4 %), Վանեք (4.9 %)	✓Սոցիալական պաշտպանություն
Ալվանք (1.1 %)	✓Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
Նորաշենիկ (13.3 %), Շրվենանց (23.3 %), Վաղատուր (9.5 %), Արավուս (13.1 %), Բարձրավան (17.9 %), Բնունիս (10.5 %), Գեղանուշ (10.8 %), Գետաթաղ (16.6 %), Տավրուս (21.2 %), Եղեգ (22.7 %), Եղվարդ (12.5%), Թասիկ (11.2 %), Խիրանց (22.2 %), Հարթաշեն (5.0 %), Հացավան (10.8 %), Չորաստան (21.5 %), Ճակատեն (16.0 %), Մուցք (12.7 %), Շիկահող (11.2 %), Սալվարդ (6.9 %), Սվարանց (18.0 %), Սրաշեն (16.9 %), Վահրավար (17.9 %), Վարդանիձոր (13.3 %), Վարդավանք (21.1 %), Վերին Խոտանան (16.3%), Տանձավեր (18.9 %), Տոլորս (11.7 %), Նոր Աստղաբերդ (17.0 %), Քաջարան (23.2 %)	✓Տնտեսական հարաբերություններ
Նորավան (1.8 %),	✓Հանգիստ, մշակույթ և կրոն
Աշոտավան (12.7 %), Ույծ (25.6 %)	✓Կրթություն
2 ոլորտ	
Գեղի (15.5 %) , Շվանիձոր (10.9 %), Աղիտու (10.9 %), Արևիս (21.0 %), Դարբաս (11.6 %), Լձեն (19.4 %), Լոր (11.1 %) , Ծղուկ (10.0 %), Իշխանասար (9.9 %), Սպանդարյան (8.5 %)	✓Տնտեսական հարաբերություններ ✓Հանգիստ, մշակույթ և կրոն
Դավիթ Բեկ (29.5 %), Լեռնաձոր (30.9 %), Ծավ (36.2 %), Շաղատ (22.5 %)	✓Տնտեսական հարաբերություններ ✓Կրթություն
Նոնաձոր (7.9 %), Քարաշեն (27.0 %), Ներքին Խնձորեսկ (13.1 %)	✓Տնտեսական հարաբերություններ ✓Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
Խոզնավար (8.9 %), Հալիձոր (9.1 %)	✓Տնտեսական հարաբերություններ ✓Սոցիալական պաշտպանություն
Որոտան (Սիսիանի շրջ.) (9.9 %)	✓Հանգիստ, մշակույթ և կրոն

	✓ Սոցիալական պաշտպանություն
3 ոլորտ	
Արժվանիկ (41.1 %), Անգեղակոթ (23.9 %), Սառնակունք (12.6 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն
Լեհվազ (22.1 %), Շինուհայր (45.3 %), Քարահունջ (28.1 %), Խնածախ (18.7 %), Խնձորեսկ (56.8 %), Խոտ (30.0 %), Հարժիս (24.7%), Տեղ (39.5 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Ախլաթյան (11.2 %), Շենաթաղ (10.8 %), Տաշտուն (19.5 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
Կարճևան (32.6 %)	✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն
Վաղասնի (18.9 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Սոցիալական պաշտպանություն
4 ոլորտ	
Կոռնիձոր (39.1 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Տաթն (62.7 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Առողջապահություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Ակներ (15.9 %)	✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Սոցիալական պաշտպանություն

Գորայք (16.7 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Առողջապահություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
Շաքի (21.5 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
5 ոլորտ	
Բոնակոթ (24.0 %), Սյունիք (75.0 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
6 ոլորտ	
Վերիշեն (45.5 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն

2010 թ., ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի ոլորտներից բացի, գյուղական համայնքները ծախսեր են կատարել առավելագույնը 6 ոլորտներում (տե՛ս աղյուսակ 12), ընդ որում՝

- **12 համայնքներ** ոչ մի այլ ոլորտում ծախսեր չեն կատարել,
- **33 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **1 ոլորտում**,
- **19 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **2 ոլորտում**,
- **18 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **3 ոլորտում**,
- **13 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **4 ոլորտում**,

- **6 համայնքներ** ծախսեր են կատարել ընդամենը **5 ոլորտում**,
- **1 համայնք** ծախսեր է կատարել ընդամենը **6 ոլորտում**:

Փաստորեն ստացվում է, որ 2009-ի համեմատ 2010-ին ավելի փոքր է մարզի այն գյուղական համայնքների թիվը, որոնք ծառայությունների մատուցումն արտահայտող ոլորտներում ընդհանրապես ծախսեր չեն կատարել: Այդպիսի համայնքները կազմում են ընդհանուր համայնքների 11.0 %-ը, կամ՝ գյուղական համայնքների 11.8 %-ը:

Աղյուսակ 12

Սյունիքի մարզի գյուղական համայնքներն ըստ 2010 թ. կատարված ծախսերի ոլորտների¹⁰ թվի

Համայնքի անվանում	Ոլորտների անվանում
0 ոլորտ	
Աղվանի, Անտառաշատ, Գեղի, Գուղեմնիս, Լձեն, Կաղնուտ, Կուրիս, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Որոտան (Միսիանի շրջ.), Չափնի, Ուժանիս	-
1 ոլորտ	
Ագարակ (5.7 %), Առաջածոր (2.0 %), Նորաշենիկ (3.3 %), Օխտար (4.4 %)	✓ Սոցիալական պաշտպանություն
Ալվանք (1.7 %), Վանեք (0.8 %), Քաշունի (2.5%)	✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
Աշոտավան (15.1 %)	✓ Կրթություն
Արավուս (20.7 %), Բարձրավան (9.0 %), Տավրուս (16.5 %), Եղեգ (13.3 %), Եղվարդ (9.4%), Թասիկ (7.7 %), Խդրանց (14.8 %), Չորաստան (13.3 %), Ճակատեն (10.5 %), Մուցք (13.2 %), Շրվենանց (13.8 %), Սրաշեն (11.2 %), Վահրավար (12.6 %), Վարդավանք (13.5 %), Վերին Խոտանան (12.3 %), Տանձավեր (12.4 %), Նոր Ասողաբերդ (8.1 %), Քաջարան (13.2 %), Քարաշեն (6.0 %)	✓ Տնտեսական հարաբերություններ
Բալաք (2.0 %), Գետաթաղ (1.7 %), Իշխանասար (2.2 %), Շուռնուխ (1.5 %), Որոտան (Գորիսի շրջ.) (2.6 %), Տանձատափ (3.5 %)	✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
2 ոլորտ	

¹⁰ Ոլորտների թիվը հաշվարկելիս անտեսվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն ու հիմնական խմբին չդասվող ծախսերը:

Ախլաթյան (19.7 %), Շիկահող (16.8 %), Վարդանիձոր (23.2 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
Բնունիս (9.0 %), Գեղանուշ (21.8 %), Հարթաշեն (7.9 %), Սվարանց (13.6 %), Տոլորս (10.1 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
Թանահատ (5.7 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
Լեռնաձոր (29.6 %), Ծավ (30.6 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Կրթություն
Լիճք (12.1 %), Նժդեհ (18.0 %), Տորունիք (2.3 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Աճանան (8.9 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Սոցիալական պաշտպանություն
Խոզնավար (11.9 %), Հալիձոր (4.7 %), Վաղատուր (9.3 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Սոցիալական պաշտպանություն
Ույծ (29.2 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն
3 ոլորտ	
Աղիտու (13.0 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Սոցիալական պաշտպանություն
Արծվանիկ (30.3 %), Դավիթ Բեկ (35.2 %), Խնձորեսկ (51.1 %), Հարժիս (27.2 %), Տեղ (42.4 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Գորայք (15.3 %), Լոր (18.6 %), Ծղուկ (10.7 %), Նորավան (14.7 %), Շենաթաղ (43.4 %), Շվանիձոր (10.8 %), Սալվարդ (16.7 %), Տաշտուն (14.4 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
Կարճևան (25.9 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Բնակարանային

	<ul style="list-style-type: none"> շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն
Հացավան (14.2 %), Սևաբար (22.5 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Սոցիալական պաշտպանություն
Ներքին Խնձորենկ (28.4 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն
4 ոլորտ	
Արևիս (28.9 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն
Դարբաս (13.3 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն
Լեհվազ (31.7 %), Խոտ (25.6 %), Շաղաստ (22.5%), Շաքի (24.0 %), Շինուհայր (26.0 %), Սյունիք (34.1 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Նոնաձոր (7.2 %), Մառնակունք (15.7 %), Սպանդարյան (31.8 %), Վաղատնի (31.7 %), Տաթև (26.3 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Սոցիալական պաշտպանություն
5 ոլորտ	
Անգեղակոթ (26.5 %), Բոնակոթ (24.4 %), Խնածախ (33.3 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Բնակարանային

	<ul style="list-style-type: none"> շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
Ակներ (13.6 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Սոցիալական պաշտպանություն
Կոոնիձոր (47.7 %), Քարահունջ (37.5 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն
6 ոլորտ	
Վերիշեն (38.9 %)	<ul style="list-style-type: none"> ✓ Տնտեսական հարաբերություններ ✓ Շրջակա միջավայրի պաշտպանություն ✓ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ✓ Հանգիստ, մշակույթ և կրոն ✓ Կրթություն ✓ Սոցիալական պաշտպանություն

Վերոնշյալ տվյալներից ուղղակիորեն պարզ է դառնում, որ մարզի գյուղական համայնքները լավագույն դեպքում իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունների միայն մի փոքր մասը՝ համայնքի բյուջեն ծախսելով ընդամենը մեկ կամ մի քանի

հանրային ծառայությունների մատուցման նպատակով, իսկ երբեմն նույնիսկ ընդամենը մի քանի հոգուց բաղկացած կառավարման ապարատի պահպանման համար: Օրինակ՝ 2010-ին տարբեր ոլորտներում ծառայությունների մատուցման վրա կատարվող ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերի մեջ կազմել է առավելագույնը 51.1 % Խնձորեսկ համայնքում, իսկ շատ համայնքներում այդ ծախսերը չեն կազմել նույնիսկ 5 %: Իսկ եթե հաշվի առնենք, որ այդ համայնքների բյուջետային ծախսերն ինքնին բավականին փոքր են՝ շատ դեպքերում կազմելով ընդամենը մի քանի միլիոն դրամ, ապա կարելի է պատկերացում կազմել մատուցվող ծառայությունների ծավալի և որակի վերաբերյալ:

Հետաքրքիր է նշել, որ 3 և ավելի ոլորտներում ծախսեր կատարել են հիմնականում 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքները:

Ինչ վերաբերում է մարզի քաղաքային համայնքներին, ապա վերջիններս ծախսեր կատարում են ոլորտների մեծ մասում՝ 5-6 ոլորտներում, բացառությամբ Դաստակերտ քաղաքի, որտեղ դիտարկված տարիներին ծախսեր են կատարվել ընդամենը 3 ոլորտներում: Համեմատաբար մեծ են նաև քաղաքային համայնքների բյուջեների կազմում ծառայությունների մատուցումն արտահայտող ոլորտներում կատարված ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի կազմում (տե՛ս աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Սյունիքի մարզի քաղաքային համայնքների բյուջեների ծախսերի կազմում ծառայությունների մատուցումն արտահայտող ոլորտներում կատարված ծախսերի տեսակարար կշիռը

ՀՀ	Քաղաքային համայնք	2009 թ.	2010 թ.
1	Կապան	81.0%	84.1%
2	Ագարակ	69.7%	77.0%
3	Գորիս	80.3%	80.6%
4	Դաստակերտ	19.8%	24.5%
5	Մեղրի	71.3%	65.4%
6	Սիսիան	75.8%	70.9%
7	Քաջարան	65.1%	74.8%

3.4.3. Ռեսուրսների գնահատում (բնական և մարդկային ռեսուրսներ)

3.4.3.1. Բնական ռեսուրսներ

Հումքային ռեսուրսներ

Սյունիքի մարզը հանրապետության լեռնահանքային արդյունաբերության կենտրոններից մեկն է: Ներկայումս այստեղ գործում են Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանը, Ագարակի պղնձամոլիբդենային, Կապանի պղնձի և բազմամետաղային լեռնահանքային ձեռնարկությունները, ինչպես նաև Տերտերասարի և Լիչքվազ-Թեյի ոսկի-բազմամետաղային հանքավայրերի հումքային բազայի վրա ստեղծված Այգեձորի ոսկեկորզիչ ֆաբրիկան: Կոնսերվացված (փակված) է Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հենքի վրա ստեղծված լեռնահանքային ձեռնարկությունը:

Մեղրի (Ագարակ)-Քաջարան (Կապան) տարածքի կենտրոնական մասում տեղակայված է Այգեձորի ոսկեկորզիչ ֆաբրիկան, հետախուզված են պղնձի, ոսկու, երկաթի, ոսկի-երկաթահանքային և ոսկեբեր ածուխների և այրվող թերթաքարերի հանքավայրեր:

Գեղի գետի ավազանում հայտնաբերված են մի շարք ոչ մետաղային օգտակար հանածոների, ինչպես նաև սև, գունավոր և թանկարժեք մետաղների, հատկապես երկաթի, պղնձի, բազմամետաղների ոսկեբեր հանքաերևակումներ և հանքավայրեր, որոնք կարող են ապահովել տեղական արտադրության պահանջարկը: Այստեղ արդեն շահագործվում են կրաքարեր, որոնք օգտագործվում են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնոլոգիական պրոցեսների համար:

Սյունիքի մարզի համար սկզբունքային նշանակություն ունի Միսիանի տարածաշրջանի հարավային և հարավ-արևմտյան հատվածի (Գորիսի տարածաշրջանի հարևանությամբ) հանքահումքային ռեսուրսների և հաշվարկված պաշարների ռացիոնալ օգտագործումը: Միսիան գետի վերին հոսանքներում հայտնաբերված են մի շարք հեռանկարային ոսկի և ոսկի-բազմամետաղային, պղինձ- մոլիբդենային հանքավայրեր ու հանքաերևակումներ, որոնք Դաստակերտի պղինձ - մոլիբդենային և Սվարանցի տիտանամագնետիտային

հանքային դաշտերի հետ մեկտեղ ստեղծում են մի ամբողջական հանքահումքային կենտրոն, որը տեղաբաշխված է Վայք - Գորիս Ստեփանակերտ և Գորիս-Նախիջևան ավտոմայրուղիների խաչմերուկում, Որոտան գետի աջ ափին, Զանգեզուրի ջրբաժանի և Որոտան գետի միջև՝ զբաղեցնելով հույժ կարևոր ռազմավարական դիրք Սյունիքի հյուսիսում:

Ռեկրեացիոն ռեսուրսներ

Սյունիքի մարզի ռեկրեացիոն պոտենցիալ հնարավորությունները մինչև այժմ գրեթե չեն օգտագործվել: Սյունիքը հարուստ է պատմամշակութային և բնական հուշարձաններով, հանքային ջրերով, կլիմայաբուժության պայմաններով, բայց ռելիեֆային բարդ պայմանները և տարածքի կտրտվածությունը (բարձր լեռներ, խոր, նեղ գետահովիտներ, ճանապարհային ցանցով ապահովվածության սահմանափակ բարենպաստ պայմաններ, անտառների մեծ տոկոսի տեղադրվածությունը թեք լանջերի վրա, լեռնահանքային հումքի, նրա մշակման արտադրությունների, թափոնադաշտերի առկայությունը) սահմանափակող գործոն են դարձել ռեկրեացիոն ճյուղի զարգացման համար:

Ջրաբուժության (բալնեոլոգիական) ռեսուրսներ

Մեղրու տարածաշրջանում հանքային ջրեր տարածված են Լիճք-Տաշտուն և Շվանիձորի հատվածներում: Ջրերի ելքերը հասնում են մինչև 5լ/վ-ի: Սահմանափակող գործոն է համարվում ջրերի պաշարների հաշվարկների բացակայությունը:

Կապանի տարածաշրջանում հանքային ջրերը տարածված են Քաջարանի և Լեռնաձորի հատվածում: Սահմանափակող գործոն է համարվում ջրերի պաշարների հաշվարկների բացակայությունը:

Գորիսի տարածաշրջանում հայտնի է հանքային ջրերի 3 խումբ՝ Քարաշենի, Գորիս-Քարահունջի, Տաթևի և առանձին ելքեր Վաղատուր և Խնածախ գյուղերի մոտ: Ջրերը հիմնականում խմելու-բուժիչ նշանակություն ունեն: Սահմանափակող գործոն է նրանց պաշարների հաշվարկների բացակայությունը:

Միսիանի տարածաշրջանում հանքային ջրերը տարածված են Միսիանի անտառոնկարանի, օդանավակայանի, Լեռնաշեն, Ույծ, Լոր, Շաղատ, Անգեղակոթ գյուղերի մոտակայքում (թվով 12 հատ):

Ջրերը խմելու-բուժիչ նշանակության են, կարելի է օգտագործել աղեստամոքսային տրակտի բուժման համար, ինչպես Հանքավանի ջրերը: Ռեկրեացիայի կազմակերպման համար սահմանափակող գործոն են հանքային ջրերի պաշարների հաշվարկների բացակայությունը և փորված հորատանցքերի տեխնիկական անբավարար վիճակը:

Կլիմայաբուժության ռեսուրսներ

Հաշվի առնելով Սյունիքի լանդշաֆտակլիմայական պայմանների բազմազանությունը՝ կլիմայաբուժության ռեսուրսները բացահայտվել են ըստ Միսիանի (համեմատաբար չոր, ցուրտ ձմեռով և շոգ, չոր ամառով), Գորիսի (գրավում է միջին դիրք Միսիանի ցամաքային կլիմայի և Մեղրի-Կապանի խոնավ կլիմայի միջև), Կապան-Մեղրու (չոր մերձարևադարձային տաք, առանց ձյան ծածկույթի ձմեռով և շոգ, խոնավ ամառով) տարածաշրջանների:

Միսիանի տարածաշրջանում կլիմայաբուժության ակտիվ գործոն են արևափայլի տևողությունը և ձմեռային սպորտի կազմակերպման պայմանները: Կոմֆորտային օդային վաննաներ ընդունելու համար ավելի բարենպաստ պայմաններ դիտվում են հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, որոնց ընթացքում 15-20 օր կարելի է կազմակերպել օդաբուժություն:

Գորիսի տարածաշրջանում ռեկրեացիոն ակտիվ գործոններ են արևափայլի տևողությունը (2120 ժամ՝ մեկ տարում) և անտառի առկայությունը:

Մայիս ամսվա երկրորդ կեսից սկսվում են կլիմայաբուժության կոմֆորտային պայմանները: Հունիս ամսին մեծանում է կլիմայաբուժության բարենպաստ պայմանների տոկոսը՝ հասնելով առավելագույնին հուլիս-օգոստոս ամիսներին:

Ձմռան ամիսներին 20-25 օր յուրաքանչյուր ամսվա ընթացքում կարելի է կազմակերպել կլիմայաբուժության տարբեր ձևեր (բուժիչ սպորտ):

Կապան-Մեղրի տարածաշրջանում կլիմայաբուժության պայմանները շատ բարենպաստ են: Այստեղ ամառվա բոլոր ամիսներին կարելի է կազմակերպել

օդաբուժություն և արևաբուժություն: Սկսած ապրիլ ամսից՝ ստեղծվում են կլիմայաբուժության համար առավել օպտիմալ օդերևութաբանական պայմաններ:

Ձմռանը այս տարածաշրջանում կարելի է զբաղվել բուժիչ սպորտով՝ հիմնականում կանխարգելման և կոփման նպատակներով:

Տուրիստական ռեսուրսներ

Սյունիքի մարզը հարուստ է տուրիստական ռեսուրսներով, հատկապես պատմամշակութային, բնական և ձմեռային սպորտի (լեռնադահուկային, ալպինիզմ) կազմակերպման բարենպաստ պայմաններով:

Մարզի պատմամշակութային, հնագիտական հուշարձանների թիվը 2812 է:

Բազմաթիվ են նաև բնական հուշարձանները (Մատանի կամուրջը Որոտան գետի վրա, բազմաթիվ քարայրներ, ռելիեֆի գեղատեսիլ տեղամասեր, Շաքիի ջրվեժը, սյունաձև բազալտներ, խոր կիրճեր, ալպյան գորգերը, չինգիլները և այլն):

Մարզի տուրիստական ռեսուրսների թվում առանձնահատուկ դերակատարում (հատկապես էկոտուրիզմի զարգացման տեսանկյունից) կարելի է վերապահել բնության հատուկ պահպանվող հետևյալ տարածքներին՝ ա) ավելի քան 12 հազար հեկտար զբաղեցնող Շիկահողի արգելոցին՝ Ծավ և Շիկահող գետերի ավազաններում: Արգելոցում առկա են կաղնուտա-բոխուտային անտառներ և դրանց բնորոշ բուսական և կենդանական համակեցություններ, 1074 տեսակ անոթավոր բույսեր, սոսու և կենու պուրակ, վայրենակերպ, հովազ, մուֆլոն, բեզոարյան այծ: Բ) 2728 հեկտար զբաղեցնող Բողաքարի արգելավայրին, որտեղ պահպանվում են հայկական ֆլորայի և ֆաունայի տիպիկ տեսակներ, «Սոսու պուրակ» (60 հա), «Սև լիճ» (240 հա) և Գորիսի (1900 հա) արգելավայրերը, որտեղ պահպանվում են էտալոնային, գիտական, պատմամշակութային և տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրներ:

Սյունիքում տարածքային բարենպաստ հնարավորություններ ձմեռային տարբեր մարզաձևերի կազմակերպման համար (հիմնականում լեռնադահուկային սպորտ, ալպինիզմ) ունեն միայն Սիսիանի և Գորիսի տարածաշրջանները:

Որոտան գետը հնարավոր է օգտագործել լեռնագետային սպորտի կազմակերպման համար, իսկ Սպանդարյանի, Տոլորսի ջրամբարները՝ ձկնորսության համար:

Մյունիքում հարթ տարածությունների առկայությունը (Միսիանի գոգավորությունը, Գորիսի սարահարթը) հնարավորություն կտա զբաղվելու պլաներային սպորտով:

Մարզի տուրիստական ռեսուրսները կնպաստեն զբոսաշրջային երթուղիների կազմակերպմանը:

Մյունիքի ռեկրեացիոն համակարգի տարածքային կազմակերպումը

Մյունիքի մարզի ռեկրեացիոն ռեսուրսների բաշխվածությունը, տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները, քաղաքաշինական և էկոլոգիական հիմնականախթների գոյություն ունեցող վիճակը և բարելավման անհրաժեշտությունը հնարավորություն են տալիս մարզում առանձնացնելու հետևյալ ռեկրեացիոն գոտիները՝

ա. Որոտան գետի ավազանի գոտի, որը կարելի է բաժանել հետևյալ ենթագոտիների.

- Միսիան. ընդգրկում է Որոտան գետի վերին և Միսիան գետի ստորին հոսանքի ավազանը, ռեկրեացիոն ուղղվածությունը՝ կլիմայաբուժություն, բալնեոլոգիա, կարճատև հանգիստ, ձմեռային սպորտ (լեռնադահուկային),

- Գորիս. ընդգրկում է Վարարակ գետի հովիտը, ռեկրեացիոն ուղղվածությունը՝ կլիմայաբուժություն, կարճատև հանգիստ, տուրիզմ, ձմեռային սպորտ (լեռնադահուկային),

բ. Ողջի գետի ավազանի գոտի, որը կարելի է բաժանել հետևյալ ենթագոտիների.

- Քաշունի հովիտ (Կարմրաքարի). ընդգրկում է Քաշունի գետի ավազանը. ռեկրեացիոն ուղղվածությունը՝ կլիմայաբուժություն, երկարատև, կարճատև հանգիստ, ձմեռային բուժիչ սպորտ, տուրիզմ,

- Գեղի հովիտ. ընդգրկում է Ողջի գետի ձախափնյա վտակ Գեղի հովիտը, ռեկրեացիոն ուղղվածությունը՝ կլիմայաբուժություն, կարճատև հանգիստ,

գ. Մեղրի գետի միջին հոսանքի գոտի (Լիճք-Տաշտուն), ընդգրկում է գետի միջին հոսանքի Լիճք, Տաշտուն աջափնյա վտակները: Ռեկրեացիոն ուղղվածությունը՝ կլիմայաբուժություն, կարճատև հանգիստ, բալնեոլոգիա:

Փանթություն. 3.4.3.բաժնում օգտագործված են ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի տվյալները [Ինտ.կայքեր, 5]:


Հողային ռեսուրսներ

Նկատի ունենալով, որ համայնքների սեփական եկամուտների մեծ մասը գոյանում է հողային ռեսուրսների կառավարումից (հողի հարկ, վարձավճարներ, համայնքային սեփականության հողերի օտարում), ինչը հատկապես գյուղական համայնքներում կազմում է սեփական եկամուտների առնվազն 80-90 տոկոսը, սույն ուսումնասիրության շրջանակներում բնական ռեսուրսներից ավելի հանգամանակից անդրադարձ է կատարված հողային ռեսուրսների կառավարմանը, ինչը ներառում է հողային հաշվեկշռի վերլուծությունը, առկա պաշարների օգտագործման արդյունավետության գնահատականները, ինչպես նաև համայնքների խոշորացման արդյունքում ակնկալվող փոփոխությունները և հողերի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

Մարզի հողային հաշվեկշիռը

Ըստ 2010 թ. հողային հաշվեկշռի [Ինտ.կայքեր, 7]՝ մարզի տարածքը կազմում է 450542 հեկտար, որի մոտ 70 տոկոսը (314641 հա) գյուղատնտեսական նշանակության հողեր են (տե՛ս աղյուսակ 1): Ընդհանուր տարածքի 57 տոկոսը (255642 հա) նախկինում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերն են, որոնց գերակշիռ հատվածը (194775 հա, կամ ընդհանուրի 76 տոկոսը) նույնպես գյուղատնտեսական նշանակության է (տե՛ս դիագրամ 1 և քարտեզ 2):

Սյունիքի մարզի հողային հաշվեկշիռը ըստ նպատակային նշանակության (համայնքների նախկին վարչական սահմաններում)



■ Գյուղատնտեսական-194775	■ Բնակավայրերի-9106
■ Մրդ., ընդերք. և այլ արտադրակ.-3037	■ Էներգ., տրանսպ., կապի և այլ ենթ.-981
■ Հատուկ պահպանվող-2009	■ Հատուկ նշանակության-672
■ Անտառային-41879	■ Ջրային-3184

Հարկ է նկատի ունենալ, որ Խորհրդային Հայաստանի վարչատարածքային բաժանմամբ երկրի ամբողջ տարածքը բաժանված էր վարչական 37 շրջանների, հանրապետական ենթակայության 21 քաղաքների և մայրաքաղաքի [Այլ աղբյուր, 5]: Անկախ պետականության առաջին վարչատարածքային բաժանմամբ երկրի տարածքը վերակազմավորվեց 10 մարզերի և Երևան քաղաքի, սակայն մարզերի տարածքներում, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերից բացի (1899351,7 հեկտար), զգալի թիվ էին կազմում համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերը՝ 1074907,7 հեկտար տարածքով, որոնց կառավարման լիազորությունները վերապահված էին մարզպետներին: Դրանք հիմնականում պետական սեփականություն հանդիսացող հեռագնա արոտների, անտառային ֆոնդի, բնության հատուկ պահպանվող տարածքների հողերն էին:

2002 թ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է, որ «Տեղական ինքնակառավարումը իրականացվում է ՀՀ ամբողջ տարածքում, իսկ 84-րդ՝ «Անցումային դրույթներ» հոդվածի 11-րդ կետը սահմանում է, որ վերը նշված դրույթն իրականացվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում [Իրավ.ակտեր, 5]:

ՀՀ կառավարության 2005 թ. հոկտեմբերի 27-ի «ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու մասին ծրագրի հայեցակարգը

հաստատելու մասին» թիվ 1873-Ն որոշումը [Իրավ.ակտեր, 13] կոչված էր սահմանելու ծրագրի իրականացման հիմնական սկզբունքները և ապահովելու օրենքի պահանջի կատարումը:

Ըստ այդմ, նկատի ունենալով, որ որոշման ընդունման պահին հանրապետության 916 քաղաքային և գյուղական համայնքներից խնդրո առարկա հողերին սահմանակից էին 465-ը, և դրանց բաժանումը բոլոր համայնքների միջև կատեղծեր բավականին խճողված համակարգ (համայնքի վարչական տարածքը պետք է ներառեր ընդհանուր սահման չունեցող հողեր), կառավարության հայեցակարգում սահմանվեց, որ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերը պետք է վերաբաշխվեն միայն դրանց սահմանակից համայնքների միջև:

Հայեցակարգի 4-րդ բաժնում սահմանված էին մի շարք էական սկզբունքներ՝

ա) համայնքների վարչական սահմաններում ներառվող վարելահողերը, բազմամյա տնկարկները և խոտհարքները համայնքներին փոխանցել սեփականության իրավունքով,

բ) գյուղատնտեսական նշանակության արոտները, այլ հողատեսքեր և մյուս նպատակային նշանակության հողերն առաջիկա 10 տարիներին թողնել որպես պետական սեփականություն՝ բացառելով դրանց մասնավորեցումը,

գ) առանձնահատուկ ուշադրություն դարձնել ջրային տարածքների, բնության հատուկ պահպանվող տարածքների, ներառյալ՝ արգելոցների, ազգային պարկերի, արգելավայրերի և անտառների խնդրին: Ելնելով հանրության շահերից՝ մշակել այնպիսի հստակ իրավական լուծում, որը կնպաստի այդ կատեգորիաների հողերի ոչ միայն պահպանմանը և զարգացմանը, այլև բնակչության լայն շրջանակների համար հասանելիության և օգտագործելիության խնդրի լուծմանը,

դ) բնության հատուկ պահպանվող տարածքների հողերն ընդգրկել հնարավորինս սահմանափակ թվով համայնքների վարչական սահմաններում,

ե) պետության կողմից հաշվառված և գրանցված օգտակար հանածոների պաշարներով տարածքները թողնել առանց օտարման իրավունքի:

Խնդիրը ներկա փուլում լուծելուց բացի, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման

համակարգի, ինչպես նաև երկրի ամբողջ տարածքում տեղական ինքնակառավարման կայացման ավելի արդյունավետ լուծումներ գտնելու հարցը (մասնավորապես համայնքների խոշորացման կամ միջհամայնքային միավորումների ձևավորումը)՝ հաշվի առնելով նաև միջազգային պրակտիկայում արմատավորված փորձը:

Այսպիսով, դեռևս հայեցակարգի ընդունման պահին պարզ էր, որ համայնքների վարչական սահմանների վերաձևումը առկա 916 համայնքների պարագայում հղի է համակարգի խճոճման, հատկապես արոտների և բնության հատուկ պահպանվող տարածքների մասնատման վտանգով, ինչն իր հերթին լրջագույն խոչընդոտներ կստեղծեր դրանց կառավարման արդյունավետությունը ապահովելու ճանապարհին:

Պարզ էր նաև, որ այդ հիմնախնդրի լուծման լավագույն ուղին կարող է լինել համայնքների խոշորացումը:

Այսուհանդերձ, թեև ծրագիրը գործնականում ավարտվել է և «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում [Իրավ ակտեր, 3] արդեն իսկ կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, հանրապետության 2010 թ. հողային հաշվեկշռի հավելվածներում դեռևս պահպանված է համայնքների վարչական սահմաններում և դրանցից դուրս հողերի տարանջատման սկզբունքը:

Ըստ էության, դեռևս վերջնականապես լուծված չեն այդ հողերի կառավարման լիազորությունների վերաբաշխման խնդիրները:

Ինչպես մարզի համայնքների վարչական սահմաններում, այնպես էլ դրանցից դուրս գտնվող տարածքներում համեմատաբար մեծ ծավալ են կազմում նաև անտառային հողերը՝ համապատասխանաբար 41878.5 և 38664.7 հա: Հատուկ պահպանվող տարածքները կազմում են 35797.3 հա, որոնց գերակշիռ մասը՝ 33788.1 հեկտարը (94 տոկոս), գտնվում է համայնքների վարչական սահմաններից դուրս:


Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության գնահատականը կարելի է տալ այն ընդհանրացված

տվյալների հիման վրա, որոնք առկա են հողային հաշվեկշռում և անշարժ գույքի շուկայի վերլուծություններում:

Աղյուսակ 14-ի տվյալներից երևում է, որ համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության 146610 հեկտար հողերից վարձակալության իրավունքով տրամադրված է ընդամենը 21204 հեկտարը, այսինքն՝ ընդհանուրի ընդամենը 14 տոկոսը, ինչը քավարար համարել չի կարելի [Ինտ.կայքեր, 7]:

Քարտեզ 2

Սյունիքի մարզի համայնքների նախկին վարչական սահմաններ




Մյունիքի մարզի հողային ֆոնդն ըստ 2010 թ. հողային հաշվեկշռի

	Հողերի նպատակային նշանակումը	Հողատեսքը	Համայնքների վարչական սահմաններում						Համայնքների վարչական սահմաններից դուրս	Ընդամենը մարզում
			Ընդամենը	Սեփականության սուբյեկտ						
				ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	Համայնքային	որից	վարչակազմի սուբյեկտ		
1	Գյուղատնտեսական	Վարելահող	42067.4	31038.3	137	1087.4	4785.2	20.7	1715.7	43783.1
		Բազմ. տնկ.	1051.5	839.2	0	212.3	85.5	0	9.6	1061.1
		Խոտհարք	5885.8	3658.3	0	2227.5	360	0	1736.6	7622.4
		Արոտ	71825.3	7.8	11	70042	7727.9	1764.3	91735.4	163561
		Այլ	73945.3	65	414.7	73040	8245.4	425.6	24668.4	98613.7
		Ընդամենը	194775	35608.6	562.7	146610	21204	2210.6	119866	314641
2	Բնակավայրերի	Ընդամենը	9106.2	4989.4	37.8	3924.7	164.7	154.4	40.7	9146.9
3	Արդյուն., րնդերքօգտ.	Ընդամենը	3036.8	94.7	217.1	1768.5	729.2	956.5	2019.8	5056.6
4	Էներգ. տրանսպ. կապ	Ընդամենը	980.5	5.6	54.4	168.2	54.5	752.2	147.3	1127.8
5	Հատուկ. պահպան.	Ընդամենը	2009.2	0	16.1	280.2	9	1712.9	33788.1	35797.3
6	Հատուկ նշանակ.	Ընդամենը	671.5	0	0	0	0	671.5	0	671.5
7	Անտառային	Ընդամենը	41878.5	0	0	0	0	41879	38664.7	80543.2
8	Զբոսային	Ընդամենը	3184.3	0	0	232.3	1	2951.9	373.3	3557.6
Ընդամենը			255642	4069	888.1	152983	22162	51289	194900	450542

Հիմնախնդիրը կարող է տարբեր պատճառներ ունենալ, բայց հիմնական պատճառը, կարծում ենք, մարզի ժողովրդագրական իրավիճակն է, այսինքն՝ հողային և մարդկային ռեսուրսների բաշխվածության անհամամասնությունը:

Դիագրամ 1.1

Մարզի հողային ֆոնդն ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների (համայնքների նախկին վարչական սահմաններում), հազար հա



Հողերի բաշխվածությունն ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների ներկայացված է 1.1 դիագրամում: Ըստ այդմ՝ համայնքների սեփականության ներքո գտնվում է հողերի ավելի քան 60 տոկոսը՝ 153 հազար հեկտար:

Ընդհանուր առմամբ հանրապետությունում գյուղատնտեսական հողերի բաշխվածությունն ըստ մարզերի շատ անհամաչափ է, հատկապես, եթե հաշվի առնվի 1 տնային տնտեսությանը հասանելիք հողաբաժինը [Այլ աղբյուր.10]: Այսպես, եթե Արարատի մարզում քաղաքացիների սեփականության հողերի 1 տնտեսության միջին հողաբաժինը կազմում է 0.5 հա, ապա Սյունիքի մարզում այդ ցուցանիշը հավասար է 2 հա-ի, այսինքն՝ 4 անգամ ավելի (տե՛ս աղյուսակ 15): Նույն պատկերն է նաև համայնքային սեփականության հողերի պարագայում. Արմավիրի մարզում այն կազմում է 0.56 հա, Սյունիքում՝ 10.96 հա:

Աղյուսակ 15

Գյուղատնտեսական հողերի բաշխվածությունը գյուղական համայնքներում ըստ մարզերի (ըստ 2009 թ. հողային հաշվեկշռի)

Մարզ	Գյուղական համայնքների տնտեսութ. քանակը	Գյուղատնտեսական հողեր (հա)	Որից		1 տնտեսությանը հասնող գյուղ. հողեր	Որից	
			Քաղ. սեփական.	Համայնք. սեփակ.		Քաղ. սեփական.	Համայնք. սեփակ.
1 Արագածոտն	32539	173763	54581	119182	5.34	1.68	3.66
2 Արարատ	55340	81517	27434	54083	1.47	0.50	0.98
3 Արմավիր	47442	74903	48265	26638	1.58	1.02	0.56
4 Գեղարքունիք	53809	181185	57611	123574	3.37	1.07	2.30
5 Լոռի	33560	151190	43672	107518	4.51	1.30	3.20
6 Կոտայք	32440	93648	35400	58248	2.89	1.09	1.80
7 Շիրակ	29689	169644	58625	111019	5.71	1.97	3.74
8 Սյունիք	13356	180569	34196	146373	13.52	2.56	10.96
9 Վայոց ձոր	11443	139530	13218	126312	12.19	1.16	11.04
10 Տավուշ	25139	55392	18723	36669	2.20	0.74	1.46
Ընդամենը	334757	1301342	391725	909616	3.89	1.17	2.72

Առավել ցայտուն անհամամասնություններ են առկա ըստ տարածաշրջանների գյուղատնտեսական հողերի բաշխվածության

ցուցանիշներում: Եթե Մասիսի տարածաշրջանի գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմում է 0.5 հա (քաղաքացիների և համայնքային սեփականության հողերի գումարային արժեքով), ապա Մեղրիի տարածաշրջանում այն հավասար է 24.7 հա-ի (համապատասխանաբար՝ 0.7 և 24 հա), Միսիանի տարածաշրջանում՝ 16.9 հա-ի (3.5 և 13.4 հա):

Մեղրիի տարածաշրջանի ցուցանիշները շուրջ 50 անգամ գերազանցում են Մասիսի տարածաշրջանի ցուցանիշին (տե՛ս աղյուսակ 16):

Ներկայացված անհամամասնության հիմնական պատճառը, ինչպես նշվեց վերևում, թույլ յուրացված և սահմանամերձ տարածաշրջանների ժողովրդագրական իրավիճակն է՝ բնակավայրերի բնակիչների փոքրաթիվություն, բնակչության ցածր խտություն և այլն:

Նշյալ գործոնի հետևանքով մեծ անհամամասնություններ կան նաև մարզի տարբեր համայնքներում 1 բնակչի հաշվով գյուղատնտեսական հողերի բաշխվածության ցուցանիշներում (տե՛ս հավելվածներ 2 և 3):

Աղյուսակ 16

ՀՀ Արարատի և Սյունիքի մարզերի գյուղական համայնքներում գյուղատնտեսական հողերի բաշխվածության համեմատական տվյալներ

Մարզ	Տարածաշրջան	տն. տնտեսութ. քանակը	Գյուղատնտեսական հողեր (հա)	Որից		1 տնտեսությունը հասնող գյուղ. հողեր	Որից	
				Քաղ. սեփական.	Համայնք. սեփակ.		Քաղ. սեփական.	Համայնք. սեփակ.
Արարատ	Արարատ	18587	54228	13499	40729	2.9	0.7	2.2
	Արտաշատ	19387	18009	9479	8530	0.9	0.5	0.4
	Մասիս	17366	9280	4456	4824	0.5	0.3	0.3
	Ընդամենը (միջինը)	55340	81517	27434	54083	1.5	0.5	1.0
Սյունիք	Գորիս	5056	46469	13776	32693	9.2	2.7	6.5
	Կապան	2733	33390	3337	30053	12.2	1.2	11.0
	Մեղրի	841	20733	586	20147	24.7	0.7	24.0
	Միսիան	4726	79977	16497	63480	16.9	3.5	13.4
	Ընդամենը (միջինը)	13356	180569	34196	146373	15.7	2.0	13.7

3-րդ հավելվածի տվյալները ցույց են տալիս, որ 1 բնակչի հաշվով գյուղատնտեսական հողերի ծավալները զգալի են հատկապես փոքր համայնքներում, մասնավորապես՝ Գեղիում, Թանահատում, Նոր Աստղաբերդում, Նոնաձորում, Քաշունիում, որոնց բնակչությունը պակաս է 200 մարդուց, յուրաքանչյուր բնակչի հաշվով գյուղատնտեսական հողերը 20 հեկտարից ավելի են: Իհարկե, դրանց գերակշիռ մասը համայնքային սեփականության հողեր են, սակայն արդյունավետ օգտագործման պարագայում դրանք կարող են որոշակի դրական ազդեցություն ունենալ համայնքների զարգացման վրա:

Քաղաքային համայնքները չհաշված՝ 1 բնակչի հաշվով գյուղատնտեսական հողերի նվազագույն քանակը Գորիսի տարածաշրջանի Որոտան գյուղում է՝ 0.26 հա, առավելագույնը՝ Նոնաձորում՝ ավելի քան 36 հա, այսինքն՝ 138 անգամ ավելի, քան Որոտանում: Հարկ է նկատել, որ հաշվարկներում ներառված չեն համայնքային կամ քաղաքացիների սեփականության արոտները և այլ հողերը. այդ պարագայում տարբերությունը ավելի զգալի կլինի:

Համայնքների խոշորացման պարագայում, ի լրումն այլ գործոնների, հարկ կլինի գնահատել նաև խոշորացվող համայնքների համարժեք ցուցանիշները, այն նկատառումով, որ այդ տարբերությունները հնարավորինս մեղմվեն:

Հետաքրքիր է գյուղատնտեսական և անհատական բնակարանաշինության նպատակներով համայնքային սեփականության հողերի օտարման ծավալների պատկերը [Ինտ.կայքեր, 7]:

2006-2010 թվականներին մարզում գյուղատնտեսական հողերի վաճառքի ծավալների աճի միտում է արձանագրվել՝ հանրապետության մասշտաբով նվազման միտումների պարագայում (տե՛ս աղյուսակ 17): Այսուհանդերձ, եթե հանրապետության կտրվածքով օտարվել է գյուղատնտեսական հողերի 3.22 տոկոսը, ապա Սյունիքում այդ թիվը կազմում է ընդամենը 0.39 տոկոս:

Աղյուսակ 17

Սյունիքի մարզում և հանրապետությունում 2006-2010 թթ. օտարված գյուղատնտեսական նշանակության հողերի համեմատական տվյալներ

Տարածաշրջան	Գյուղ. հողեր (հա)	Օտարված հողերն ըստ տարիների					ընդամենը	%
		2006	2007	2008	2009	2010		
Գորիս	50028	0	0.5	2.92	40.35	2.18	45.95	0.09
Կապան	38210	2	73.63	52.27	101.73	39.38	269.01	0.70
Մեղրի	23489	0.28	15.6	0.51	0	406.93	423.32	1.80
Միսիան	83652	0	5.85	8.69	6	0	20.54	0.02
Ընդամենը (միջ.)	195379	2.28	95.58	64.39	148.08	448.49	758.82	0.39
ՀՀ	975298	11499	8135.6	4869.6	5049.7	1864.1	31417.61	3.22

2004-2009 թվականներին Արարատի մարզում որպես տնամերձ օտարվել է 295.8 հեկտար հող, մինչդեռ Սյունիքում՝ ընդամենը 5.17 հեկտար (տե՛ս աղյուսակ 18):

Բերված թվերը վկայում են մարզում հողի շուկայի՝ գործնականում բացակայության մասին:

Աղյուսակ 18

Որպես տնամերձ օտարված հողերի ծավալները Արարատի և Սյունիքի մարզերում

Մարզ	Տարածաշրջան	Օտարված հողերի ծավալներն ըստ տարիների (հա)						
		2004	2005	2006	2007	2008	2009	Ընդամ.
Արարատ	Արարատ	31.45	7.21	2.5	6.46	2.78	0.25	50.65
	Արտաշատ	58.01	22.66	27.61	34.07	24.72	8.07	175.14
	Մասիս	11.36	6.91	13.21	19.51	18.12	0.93	70.04
	Ընդամենը	100.82	36.78	43.32	60.04	45.62	9.25	295.83
Սյունիք	Գորիս	0	0	0.25	0.06	0.5	0.04	0.85
	Կապան	0.2	0	0.4	0.45	2.41	0.15	3.61
	Մեղրի	0	0	0	0.05	0.44	0.07	0.56
	Միսիան	0	0	0	0	0.15	0	0.15
	Ընդամենը	0.2	0	0.65	0.56	3.5	0.26	5.17

Ծանոթություն. Տվյալները վերցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի Անշարժ գույքի շուկայի վերլուծության բաժնից.¹¹


Սյունիքի մարզում գյուղատնտեսական հողերի պահուստային շոշափելի պաշարների, ռեկրեացիոն և տուրիստական ռեսուրսների, ինչպես նաև հումքային

¹¹ <http://www.cadastre.am/page/informer>




ռեսուրսների տարածքային բաշխվածության սխեման ներկայացված է քարտեզ 3-ում:

Քարտեզ 3

Մարզի որոշ ռեսուրսների տարածքային բաշխվածությունը



Պայմանական նշաններ

-  Ռեկրեացիոն և տուրիստական ռեսուրսներ
-  Հումքային ռեսուրսներ
-  Հողային ռեսուրսներ (համայնքային սեփականության գյուղատնտեսական հողեր)

3.4.3.2. Մարդկային ռեսուրսներ

Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի ընդհանուր համապատկերում ամենամտահոգիչ իրավիճակը Սյունիքի մարզում է: Տարածքային կազմակերպման առումով այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են բնակավայրերի միջին մարդաշատությունը, դրանց քանակն ըստ բնակչության թվի, ինչպես նաև բնակչության խտությունը, Սյունիքի մարզում անհամեմատ բարձր խոցելիություն ունեն: Աղյուսակ 19-ից երևում է, որ Սյունիքի մարզում են գտնվում մշտական բնակչություն չունեցող 34 բնակավայրերից 11-ը (32 տոկոս), մինչև 100 բնակիչ ունեցող 62 բնակավայրերից 22-ը (35 տոկոս), 101-200 բնակիչ ունեցող 85 բնակավայրերից 34-ը (40 տոկոս), ընդ որում, այդ առումով առավել մտահոգիչ են Կապանի և Մեղրիի տարածաշրջանների բնակավայրերի ցուցանիշները [Ինտ.կայքեր, 2, 8]:

Աղյուսակ 19

Բնակավայրերի քանակը ՀՀ մարզերում ըստ բնակչության թվի (2001 թ. մարդահամարի տվյալներով)


Մարզ	Բնակավայրերի թիվը	Այդ թվում								
		Մշտական բնակչություն չունեցող	Մինչև 100 բնակիչ	101-200 բնակիչ	201-500 բնակիչ	501-1000 բնակիչ	1001-3000 բնակիչ	3001-5000 բնակիչ	5001-10000 բնակիչ	10000 բնակիչից ավել
Արագածոտն	12	3	7	16	30	37	19	6	1	1
Արարատ	98	1	0	1	5	16	59	9	3	4
Արմավիր	98	0	1	2	3	18	60	10	2	2
Գեղարքունիք	97	3	2	7	21	15	25	11	9	4
Լոռի	13	4	9	9	40	24	35	4	1	4
Կոտայք	69	0	1	2	6	16	27	8	5	4
Շիրակ	13	4	16	10	32	36	28	2	1	2
Սյունիք	13	11	22	34	33	17	11	2	1	3
Վայոց ձոր	55	7	3	4	15	9	13	1	3	0
Տավուշ	65	1	1	0	14	15	23	7	2	2
Ընդամենը	99	34	62	85	199	203	300	60	2	26

Հանրապետությունում գյուղական համայնքների բնակչությունը միջինը 1228 մարդ է, մինչդեռ Սյունիքի մարզում այդ թիվը կազմում է 447 մարդ (հանրապետության նվազագույն ցուցանիշը, տե՛ս դիագրամ 2):

Ինչ վերաբերում է տարածաշրջաններին, ամենացածր ցուցանիշները Մեղրիի և Կապանի տարածաշրջաններում են՝ 228 և 231 մարդ (տե՛ս հավելված 4):

Դիագրամ 2

Գյուղական համայնքների բնակչության միջին թիվն ըստ մարզերի



Պակաս մտահոգիչ չեն բնակչության խտության ցուցանիշները, հատկապես մարզի գյուղական համայնքներում: Եթե հանրապետությունում այդ ցուցանիշը 68 մարդ/քառ.կմ է, ապա Սյունիքի մարզում այն հավասար է 20 մարդ/քառ.կմ-ի, ինչը բնականոն կենսամիջավայրի համար անհրաժեշտ խտության նվազագույն շեմին է հավասար [Այլ աղբյուր. 12,13]: Բացի այդ, եթե հանրապետության կտրվածքով քաղաքային համայնքների բնակչության խտությունը 7.6 անգամ է գերազանցում գյուղական համայնքների բնակչության խտությանը, ապա Սյունիքի մարզում այն գերազանցում է 22.4 անգամ (տե՛ս հավելված 5):

Ընդհանուր առմամբ, բարենպաստ կենսամիջավայրին բնորոշ նվազագույն խտության շեմից (20 մարդ/քառ.կմ) պակաս խտություն ունեն մարզի 102 գյուղական համայնքներից 61-ը: Վիճակն առավել մտահոգիչ է հատկապես Մեղրիի տարածաշրջանում, որտեղ, քաղաքային համայնքներից բացի, միայն Լեհվազում այդ ցուցանիշը կարելի է բավարար համարել (տե՛ս հավելված 6):

Կապանի տարածաշրջանի 35 գյուղական համայնքներից բնակչության խտությունը նվազագույն շեմից ցածր է 22-ում, Մխիթանի տարածաշրջանի 32 համայնքներից՝ 24-ում:


Ժողովրդագրական մեկ այլ ցուցանիշի՝ բնակչության փոփոխությունների դինամիկան ևս մարզի բնակավայրերի մեծ մասում բացասական հաշվեկշիռ ունի: 2001 թ. մարդահամարի տվյալների հետ համեմատած՝ 2009 թվականին 63 բնակավայրում դիտվել է մշտական (հաշվառված) բնակչության նվազում, ընդ որում, այդ միտումը բնորոշ է հատկապես Մեղրիի և Կապանի տարածաշրջաններին, որոնցից առաջինում բնակչությունը նվազել է առկա 15 բնակավայրից 11-ում, իսկ Կապանի տարածաշրջանում՝ 55 բնակավայրից 42-ում: Բացի այդ, տարածաշրջանի 7 բնակավայրում ընդհանրապես չկա մշտական բնակչություն (տե՛ս հավելված 7), այսինքն՝ նշված տարածաշրջաններում ժողովրդագրական իրավիճակն արդեն իսկ ծայրաստիճան մտահոգիչ է, իսկ առկա միտումները շարունակվելու պարագայում նույնիսկ տեսանելի ապագայում անդառնալի կորուստներ կարձանագրվեն:

(2009 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքների բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները վերցված են «ՀՀ Սյունիքի մարզի 2001-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» 12.1 հավելվածից):

Դիագրամ 3-ում ներկայացված է մարզի բնակավայրերում բնակչության թվաքանակի դինամիկան ըստ տարածաշրջանների:

Դիագրամ 3

Մարզի բնակավայրերում բնակչության թվաքանակի դինամիկան 2001-2009 թթ.



Հարկ է նշել, որ բնակչության նվազման միտումներն առավել զգալի են մարզի Կապանի և Մեղրիի տարածաշրջանի փոքր բնակավայրերում: Այսպես, Կապանի

տարածաշրջանում բնակչությունը նվազել է 500-ից պակաս բնակիչ ունեցող 46 բնակավայրից 39-ում, Մեղրիի տարածաշրջանում՝ 14 բնակավայրից 11-ում:

3.4.4. Ենթակառուցվածքներ

Մարզի տրանսպորտային ենթակառուցվածքները և միջբնակավայրային կապերի առկա վիճակը

Սույն ուսումնասիրության շրջանակներում վերլուծության առարկա են հանդիսացել ներքոհիշյալ գործոնները և դրանց ազդեցությունը բնակչության տեղաբաշխման ցուցանիշների վրա՝

ա. բնակավայրերի դիրքը միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմայրուղիների նկատմամբ,

բ. բնակավայրերի հեռավորությունը Երևանից, մարզկենտրոնից և տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնից,

գ. մինչև տեղային կենտրոն ավտոճանապարհի բնույթը,

դ. բնակավայրերի փակուղային և մեկուսացած դիրքը [Այլ աղբյուր.11]:

Միջպետական նշանակության ավտոմայրուղիներին անմիջականորեն հարակից է 21 բնակավայր (2-ը՝ Սիսիանի, 7-ը՝ Գորիսի, 5-ը՝ Մեղրիի և 7-ը Կապանի տարածաշրջաններում), հանրապետական նշանակության մայրուղիներին՝ 20 բնակավայր (5-ը՝ Սիսիանի, 4-ը՝ Գորիսի, 10-ը՝ Կապանի և 1-ը Մեղրիի տարածաշրջաններում, տե՛ս աղյուսակ 20):

Հարկ է նկատի ունենալ, որ Ծավ, Սրաշեն, Շիշկերտ, Ներքին Հանդ և Շիկահող բնակավայրերը, հարակից լինելով հանրապետական նշանակության H-46 մայրուղուն, որոշակիորեն մեկուսացած են տարաբնակեցման համակարգի փնջային օղակներից: Մեղրի-Ծավ այլընտրանքային ավտոմայրուղու կառուցումը տարածական առումով գործնականում չի մեղմում այդ մեկուսացումը (մեկուսացած բնակավայրերին անդրադարձ կլինի հաջորդիվ): Այն կարող է դրական ազդեցություն թողնել այդ բնակավայրերի զարգացման վրա, սակայն խնդրո առնչությամբ դեռևս հնարավոր չէ գնահատականներ հնչեցնել. դրա համար դեռ որոշակի ժամանակ կպահանջվի:

Մարզի միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիներին հարող բնակավայրերն ըստ տարածաշրջանների

	Տարածաշրջան	Միջպետական ավտոմայրուղիներ (կմ)	Հանրապետական ավտոմայրուղի (կմ)	Ընդամենը միջպետական և հանրապետական մայրուղիներ (կմ)	Բնակավայրերի թիվը	Միջպետական և հանրապետական մայրուղիներին հարող բնակավայրեր	Տոկոս՝ ընդհանուրից	Բնակավայրերի տեղաբաշխման ցուցանիշը մայրուղիներին նկատմամբ (կմ) բնակ.
1	Գորիս	82	35	117	28	11	39	10.6
2	Մեղրի	85	18	103	15	6	40	17.2
3	Կապան	67	78	145	55	17	31	8.5
4	Սիսիան	69	25	94	36	7	19	13.4
	ընդ./միջ.	303	156	459	134	41	30	12.4

Տոկոսային հարաբերությամբ նման բնակավայրերն ավելի շատ են Մեղրիի տարածաշրջանում, սակայն դրանց միջին խտությունը նվազագույնն է՝ 17.2 կմ-ի վրա 1 բնակավայր: Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմայրուղիներին հարող բնակավայրերի ամենամեծ խտությունը Կապանի տարածաշրջանում է՝ 8.5 կմ-ի վրա 1 բնակավայր:

Համեմատության համար արժե նշել, որ Արմավիրի մարզում այդ ցուցանիշը հավասար է 4.3-ի:

Մարզի տարածքում միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիներին հարող բնակավայրերի միջին խտությունը կազմում է 12.4կմ/բնակավայր:

Մարզի 134 բնակավայրերից 93-ը գտնվում են տեղական նշանակության մայրուղիներին հարող տարածքներում:

Միջպետական նշանակության ավտոմայրուղիներն անցնում են մարզի 7 քաղաքներից 4-ով (Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի), հանրապետական նշանակության մայրուղիները՝ Սիսիան, Դաստակերտ և Ագարակ քաղաքներով:

Հավելված 8-ում ներկայացված են մարզի բնակավայրերի հեռավորությունը հանրապետության մայրաքաղաքից, մարզկենտրոնից և տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնից, ընդ որում, որպես տեղային կենտրոններ են դիտարկված քաղաքային բնակավայրերը՝ բացառությամբ Դաստակերտ քաղաքի, որն ինչպես աշխարհագրական դիրքով, այնպես էլ մարդկային ռեսուրսների ու ենթակառուցվածքների մակարդակով ի վիճակի չէ իրականացնել տեղային կենտրոնի գործառույթներ:

Առանձին վերլուծության է ենթարկվել տեղային կենտրոնի հետ ճանապարհային կապի բնույթը՝

- բնակավայրեր, որոնք տեղային կենտրոնի հետ կապված են հիմնականում տեղային, ինչպես նաև հանրապետական նշանակության մայրուղիներով,
- բնակավայրեր, որոնք տեղային կենտրոնի հետ կապված են հիմնականում միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիներով:

Աղյուսակ 21

Գյուղական բնակավայրերի բնակչության միջին թիվը՝ պայմանավորված արտաքին տրանսպորտային կապերի բնույթով

1	Տարածաշրջան	Գյուղական բնակավայրերի թիվը	Բնակչությունը	Հիմնականում տեղական և հանրապետական մայրուղիներից օգտվող բնակավայրեր			Հիմնականում միջպետական և հանրապետական մայրուղիներից օգտվող բնակավայրեր			Տարբերությունը (անգամ)
				Բնակավայրերի թիվը	Ընդհանուր բնակչությունը	1 բնակավայրի բնակչության միջին թիվը	Բնակավայրերի թիվը	Ընդհանուր բնակչությունը	1 բնակավայրի բնակչության միջին թիվը	
1	Գորիս	27	22638	7	3040	434	2	19598	1153	2.7
2	Կապան	53	7420	19	1621	101	3	5799	187	1.8
3	Սիսիան	34	18432	26	4364	168	8	14068	1759	10.5
4	Մեղրի	13	2428	8	1401	175	5	1027	257	1.5
	Ընդամենը (միջ.)	12	48490	60	10426	220	6	38064	839	3.8

Աղյուսակ 21-ի տվյալները ցույց են տալիս, որ հիմնականում տեղային և հանրապետական նշանակության մայրուղիներից օգտվող բնակավայրերի բնակչության միջին թիվը զգալիորեն զիջում է միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիներից օգտվող բնակավայրերի բնակչության միջին թվին 3.8 անգամ, ընդ որում, այդ տարբերությունը մեծ է հատկապես Սիսիանի տարածաշրջանում, որտեղ այն կազմում է 10.5 անգամ:

Հետաքրքիր պատկեր է ներկայացնում նաև տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնից բնակավայրերի հեռավորության գործոնը (տե՛ս աղյուսակ 22):

Աղյուսակ 22

Գյուղական բնակավայրերի բնակչության միջին թիվը՝ պայմանավորված տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնից ունեցած հեռավորությամբ

	Տարածաշրջան	Գյուղական բնակավայրերի թիվը	Գյուղական բնակավայրերի բնակչությունը	Բնակավայրի հեռավորությունը տեղային կենտրոնից						Տարբերությունը (անգամ)
				Մինչև 20 կմ			20 կմ-ից ավել			
				Բնակավայրերի թիվը	Բնակչությունը	1 բնակավայրի բնակչության միջին թիվը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը	1 բնակավայրի բնակչության միջին թիվը	
1	Գորիս	27	22638	16	18017	1126	1	4621	420	2.7
2	Մեղրի	13	2428	10	1990	199	3	438	146	1.4
3	Կապան	53	7420	27	4381	162	2	3039	117	1.4
4	Սիսիան	34	18432	23	14068	612	1	4364	397	1.5
	ընդ./միջ	127	50918	7	38456	506	5	12462	244	2.1

127 գյուղերից 51-ը տեղային կենտրոնից հեռու են ավելի քան 20 կմ և այդ բնակավայրերի բնակչության միջին թիվը 1.5-2.7 անգամ պակաս է այն բնակավայրերի բնակչության միջին թվից, որոնք տեղային կենտրոնից հեռու են մինչև 20 կմ:

Հարկ է նկատի ունենալ, որ նշված օրինաչափությունը չի գործում մարզկենտրոնից ունեցած հեռավորության պարագայում: Բացառությամբ Կապանի տարածաշրջանի՝ մյուս տարածաշրջանների գյուղական բնակավայրերի բնակչության միջին թիվը պայմանավորված չէ մարզկենտրոնից ունեցած

հեռավորությամբ: Պայմանականորեն 1.5 ժամվա հասանելիության տիրույթը (90 կմ) որպես հաշվարկների հիմք ընդունելու պարագայում ստացվում է աղյուսակի 23-ի պատկերը:

Աղյուսակ 23

Գյուղական բնակավայրերի բնակչության միջին թիվը՝ պայմանավորված մարզկենտրոնից ունեցած հեռավորությամբ

	Տարածաշրջան	Գյուղական բնակավայրերի թիվը	Գյուղական բնակավայրերի բնակչությունը	Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից					
				Մինչև 90 կմ			90 կմ-ից ավել		
				Բնակավայրերի թիվը	Բնակչությունը	1 բնակավայրի բնակչության միջին թիվը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը	1 բնակավայրի բնակչության միջին թիվը
1	Գորիս	27	22638	22	18356	834	5	4282	856
2	Մեղրի	13	2428	9	1320	147	4	1108	277
3	Սիսիան	34	18432	0	0	0	34	18432	542
	ընդ./միջ.	74	43498	31	19676	635	43	23822	554

Կատարված հաշվարկները փաստում են, որ բնակավայրերի կենսունակության համար շատ ավելի կարևոր է տեղային, քան տարածաշրջանային կենտրոնի հասանելիությունը:

Հայաստանի Հանրապետությունում երբևէ պատշաճ ուշադրություն չի դարձվել տարաբնակեցման համակարգի և տարածքային կազմակերպման վրա բնակավայրերի փակուղային դիրքի ունեցած ազդեցությունը: «Փակուղային» բնակավայր ասելով նկատի է առնվում ոչ միայն արտաքին աշխարհի հետ միայն մեկ տրանսպորտային կապ ունեցող բնակավայրը, այլև այն բնակավայրերը, որոնց արտաքին կապերի այլընտրանքները տանում են դեպի այլ փակուղային բնակավայրեր: Ասվածը կարելի է ներկայացնել Կապանի տարածաշրջանի՝ Գեղիի գետահովտում գտնվող բնակավայրերի օրինակով, որտեղ Կիցք (Քիրս), Աջաբաջ, Կարո, Վերին Գիրաթաղ բնակավայրերը լիովին փակուղային են, իսկ մնացած գյուղերը գործնականում դարձյալ փակուղային են, քանի որ գումարային հաշվով ընդամենը 1 էլք ունեն դեպի արտաքին աշխարհ:

Ինչպես հանրապետությունում, այնպես էլ Սյունիքի մարզում հարկ է, փակուղային բնակավայրերից բացի, առանձին քննարկման առարկա դարձնել

տարաբնակեցման համակարգի խմբային (փնջային) օղակներից որոշակիորեն մեկուսացած և այն բնակավայրերի խնդիրը, որոնք մասնագիտական գրականության մեջ դիտարկվում են որպես «օազիսային» կամ ինքնավար հիմունքներով զարգացող բնակավայրեր:


Նման բնակավայրերը տարածքային տեղաբաշխման պատճառով զուրկ են տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնների հետ տարբեր գործառնական կապեր ձևավորելու հնարավորությունից, ուստի դրանց կայուն զարգացման հիմնախնդիրները կարիք ունեն առանձնահատուկ մոտեցումների և համալիր գնահատականների՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքին բնորոշ լուծումներ գտնելու անհրաժեշտությամբ թելադրված:

Մարզի փակուղային և մեկուսացած բնակավայրերի ցանկը և դրանց բնակչության թիվը 2001-2009 թթ. ներկայացված է հավելված 9-ում: Ըստ այդմ՝ մարզում առկա է գործնականում փակուղային դիրք ունեցող 56 բնակավայր, ևս 14 բնակավայր ունեն տարաբնակեցման համակարգի խմբային օղակներից մեկուսացած դիրք: Փակուղային բնակավայրերից 5-ը չունեն մշտական բնակչություն, 27 բնակավայրում բնակչությունը նվազել է, ընդ որում, այդ միտումները ավելի բնորոշ են Կապանի տարածաշրջանի բնակավայրերին: Նվազել է նաև մեկուսացած բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը: Մարզի բնակչության ընդհանուր թվի աճի պարագայում նշված բնակավայրերի բնակչության նվազման միտումները կարող են հանգեցնել դրանց աստիճանական մարդաթափման:



Փակուղային և մեկուսացած բնակավայրերի տեղաբաշխումն ըստ տարածաշրջանների ներկայացված է քարտեզներ 4-7-ում:

Ինչպես արդեն նշվել է, Մեղրի-Ծավ-Կապան նոր ավտոմայրուղին, որոշակի դրական ազդեցություն ունենալով տարածաշրջանի հեռանկարային զարգացման վրա, գործնականում չի ազդում և չէր կարող ազդել տարաբնակեցման համակարգի փնջային օղակներից բնակավայրերի մեկուսացածության գործոնի վրա: Բացի այդ, Շիշկերտ և Ներքին Հանդ բնակավայրերի փակուղային դիրքը չի վերանում:


Գորիսի տարածաշրջան: Փակուղային և մեկուսացած բնակավայրեր



Պայմանական նշաններ

-  Փակուղային բնակավայրեր
-  Մեկուսացած բնակավայրեր


Կապանի տարածաշրջան: Փակուղային և մեկուսացած բնակավայրեր



Մեղրիի տարածաշրջան: Փակուղային և մեկուսացած բնակավայրեր



Միսիանի տարածաշրջան: Փակուղային և մեկուսացած բնակավայրեր



Բացի այդ, փակուղային և մեկուսացած բնակավայրերի բնակչության միջին թիվը 1.5 անգամ պակաս է այլ բնակավայրերի բնակչության միջին թվից: Նշված միտումն ավելի շոշափելի է Միսիանի տարածաշրջանում, որտեղ այդ տարբերությունը հավասար է 2.3-ի (տե՛ս աղյուսակ 24):

Մարզի փակուղային և մեկուսացած բնակավայրերի բնակչության միջին թիվը

	Տարածաշրջան	Գյուղական բնակավայրերի թիվը	Որից		Գյուղական բնակավայրերի բնակչությունը	Որից				Տարբերությունը (անգամ)
			Փակուղային և մեկուսացած բնակավայրեր	Այլ բնակավայրեր		Փակուղային և մեկուսացած բնակավայրերում	Այլ բնակավայրերում	Փակուղային և մեկուսացած բնակավայրի բնակչության միջին թիվը	Ոչ փակուղային և մեկուսացած բնակավայրի բնակչության միջին թիվը	
1	Գորիս	27	9	18	22638	4738	17900	526	994	1.9
2	Մեղրի	13	6	7	2428	1400	1028	233	147	0.6
3	Կապան	53	37	16	7420	4939	2481	133	155	1.2
4	Սիսիան	34	18	16	18432	6106	12326	339	770	2.3
	ընդ./միջ	127	70	57	50918	17183	33735	245	592	1.5

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ի թիվս այլ գործոնների, Սյունիքի մարզում բնակավայրերի հատկապես միջին մարդաշատության և բացասական հաշվեկշռի ձևավորման առումով էական կարելի է համարել բնակավայրերի տրանսպորտային կապերով պայմանավորված հետևյալ գործոնները՝

ա. բնակավայրերի հեռավորությունը միջպետական նշանակության ավտոմայրուղիներից,

բ. բնակավայրերի հեռավորությունը տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնից և այդ կենտրոնի հետ կապող ճանապարհի բնույթը,

գ. արտաքին տրանսպորտային կապերի այլընտրանքների բացակայությունը (բնակավայրերի փակուղային դիրքը) և տարաբնակեցման համակարգի խմբային օղակներից մեկուսացած լինելը:

3.5. Վարչատարածքային բարեփոխումների առաջարկվող լուծումներ

3.5.1. Ըստ բնակչության տարաբնակեցման և ռեսուրսների տեղաբաշխման

Մարզի տարաբնակեցման համակարգի առավել խոցելի տարածաշրջանների և բնակավայրերի բացահայտման, համայնքների խոշորացման և դրանց կենտրոնների հնարավոր տարբերակների ընտրության նկատառումով համեմատական վերլուծության են ենթարկվել բոլոր բնակավայրերի զարգացման հնարավորությունների գնահատման՝ 6-ական պոզիտիվ և նեգատիվ գործոններ (ուժեղ և թույլ կողմեր):

Նեգատիվ գործոններ են ընտրվել՝

1. հանրային ծառայությունների և սպասարկումների բավարար մակարդակ և ներուժ ունեցող բնակավայրի (տեղային կենտրոնի) բացակայությունը՝ դրա ավելի քան 20 կմ հեռու գտնվելը տվյալ բնակավայրից: Որպես տեղային կենտրոնի ներուժ ունեցող են դիտարկվել՝

1. առնվազն 3000 բնակիչ ունեցող բնակավայրերը.
2. 500-ից պակաս բնակչությունը,
3. բնակչության նվազման միտումները (2001-2009 թթ.),
4. բարենպաստ կենսամիջավայրի նվազագույն շեմից (20 մարդ/քառ.կմ) ցածր բնակչության խտությունը,
5. փակուղային կամ տարաբնակեցման համակարգի փնջային օղակներից որոշակիորեն մեկուսացած դիրքը,
6. բարձունքային նիշը (1700մ նիշից բարձր):

Պոզիտիվ գործոններ են ընտրվել՝

1000-ից ավելի բնակիչ ունենալը,
բնակչության աճի միտումները,
հողային մեծ պաշարների առկայությունը (1 բնակչի հաշվով՝ 3 հա-ից ավելի),
հանքահումքային պաշարների առկայությունը,
ռելիեաֆիոն և տուրիստական պաշարների առկայությունը,

Միջպետական նշանակության ավտոմայրուղիներին մոտ լինելը (մինչև 5 կմ):

Ընտրված գործոնների վերլուծությամբ առանձնացվել են առավել խոցելի և զարգացման առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրերը, ընդ որում, առանձնացման հիմքում դրվել է 4 և ավելի գործոնների առկայությունը տվյալ բնակավայրում: Վերլուծության արդյունքները ներկայացված են հավելված 10-ի աղյուսակում:

Ըստ տարածաշրջանների առավել խոցելի բնակավայրերն են՝

Գորիսի տարածաշրջան՝ Սվարանց, Քաշունի, Աղբուլլաղ, Վանանդ, Չորակ գյուղերը,

Կապանի տարածաշրջան՝ Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Գեղանուշ, Գոմարան, Գեղի, Գեղավանք, Կարդ, Կիցք, Վերին Գեղավանք, Քարուտ, Եղեգ, Լեռնաձոր, Մուսալլամ, Ներքին Գիրաթաղ, Վերին Գիրաթաղ, Խղրանց, Ծավ, Շիշկերտ, Կաղնուտ, Չորաստան, Ներքին Հանդ, Նոր Աստղաբերդ, Աջաբաջ, Գետիշեն, Ոչերթի, Շիկահող, Շրվենանց, Չափնի, Սևաքար, Սրաշեն, Վարդավանք, Վերին Խոտանան, Ուժանիս, Քաջարան, Օխտար գյուղերը,

Մեղրիի տարածաշրջան՝ Լիճք, Կարճևան, Նոնաձոր գյուղերը,

Միսիանի տարածաշրջան՝ Ախլաթյան, Արևիս, Բնունիս, Գետաթաղ, Գորայք, Թանահատ, Լծեն, Լոր, Ծղուկ, Մուցք, Նժդեհ, Ցղունի, Շենաթաղ, Սավարդ, Սպանդարյան, Տոլորս, Տորունիք գյուղերը և Դաստակերտ քաղաքը:

Չարգացման առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրերն են՝

Գորիսի տարածաշրջան՝ Տեղ, Խնձորեսկ, Քարահունջ գյուղերը,


Կապանի տարածաշրջան՝ Քաջարան քաղաքը և Լեռնաձոր, Կավճուտ, Մուսալլամ, Ներքին Գիրաթաղ գյուղերը,

Մեղրիի տարածաշրջան՝ Մեղրի քաղաքը և Լեհվազ, Թխկուտ գյուղերը,

Միսիանի տարածաշրջան՝ Անգեղակոթ, Արևիս, Թանահատ, Թասիկ, Լոր, Ծղուկ, Շաղատ, Շենաթաղ գյուղերը:

Առավել խոցելի և զարգացման առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրերի տեղաբաշխումն ըստ տարածաշրջանների ներկայացված է քարտեզներ 8-11-ում:


Գորիսի տարածաշրջանի առավել խոցելի և զարգացման առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրեր



Պայմանական նշաններ

- ▲ Խոցելի բնակավայրեր
- Ներուժ ունեցող բնակավայրեր


Մեղրիի տարածաշրջանի: Առավել խոցելի և զարգացման
առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրեր



Պայմանական նշաններ

- ▲ Խոցելի բնակավայրեր
- Ներուժ ունեցող բնակավայրեր


Կապանի տարածաշրջանի առավել խոցելի և զարգացման առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրեր



Պայմանական նշաններ

- ▲ Խոցելի բնակավայրեր
- Ներուժ ունեցող բնակավայրեր

Միսիանի տարածաշրջանի առավել խոցելի և զարգացման
առավել մեծ ներուժ ունեցող բնակավայրեր



Մյունիքի մարզի տարաբնակեցման համակարգի և տարածքային կազմակերպման ընդհանուր նկարագրի վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

ա. Բնակավայրերի տարածքային տեղաբաշխման և ժողովրդագրական ցուցանիշների վրա առավել մեծ ազդեցություն են ունեցել ներքոնշյալ գործոնները՝

- *բնական-աշխարհագրական (ռելիեֆային պայմանները),*

- *բնակավայրերի փակուղային կամ տարաբնակեցման համակարգի փնջային օղակներից որոշակիորեն մեկուսացած դիրքը,*

- *տեղային կենտրոնից հեռավորությունը և դրա հետ տրանսպորտային կապի բնույթը (հեռավորությունը միջպետական և հանրապետական նշանակության ավտոմայրուղիներից),*

- *բնակավայրի բարձունքային նիշը (լեռնային կամ բարձր լեռնային բնակավայրի կարգավիճակը):*

բ. Մարզում մեծ թիվ են կազմում փոքր բնակավայրերը, և այդ հանգամանքը առանձին տարածաշրջաններում խոչընդոտել է տեղային կենտրոնի ձևավորմանը:

գ. Առանձին տարածաշրջաններում համապատասխան ենթակառուցվածքներով և մարդկային ռեսուրսներով ապահովված գոնե մեկ բնակավայրի բացակայության պատճառով համայնքների խոշորացումը չի կարող տեսանելի ապագայում բավարար արդյունք ապահովել՝ անկախ տարածաշրջանի բնակավայրերի քանակից: Այդ տարածաշրջանների տեղաբաշխումը ներկայացված է քարտեզ 12-ում: Ըստ այդմ՝ դրանց խոշորացումը կարող է իրականացվել միայն որոշակի հեռավորության վրա գտնվող որևէ տեղային (համայնքային) կենտրոնի առկայությամբ, կամ նման դեպքերում պետք է ցուցաբերել այլ մոտեցումներ, այդ թվում՝ անցումային կամ ժամանակավոր բնույթի:

դ. Կապանի և Մեղրիի տարածաշրջանների բնակավայրերի մեծ մասում 2001-2009 թթ. առկա են բնակչության նվազման միտումներ, բացի այդ, հատկապես Կապանի տարածաշրջանում առկա են մեծ թվով բնակավայրեր, որոնք չունեն մշտական բնակչություն:

ե. Մարզում ժողովրդագրական իրավիճակի պատճառով առկա են չօգտագործվող հողային ռեսուրսներ, որոնք մեծ անհամամասնությամբ են տեղաբաշխված տարբեր համայնքներում:

զ. Մարզի հատկապես Կապանի, Մեղրիի և Սիսիանի տարածաշրջանները հարուստ են ինչպես արդյունահանվող, այնպես էլ դեռևս չչահագործվող հանքահումքային ռեսուրսներով:

է. Մարզը հարուստ է ռեկրեացիոն և տուրիստական ռեսուրսներով, որոնք դեռևս պատշաճ ձևով չեն օգտագործվում՝ հիմնականում համապատասխան ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

Կատարված ուսումնասիրությունների և դրանց հիման վրա կատարված եզրակացությունների արդյունքում ընտրվել են համայնքների խոշորացման հետևյալ տարբերակները.

1. Որպես խոշորացվող համայնքների համեմատաբար լիարժեք կենտրոններ (տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոններ) կարող են ձևավորվել մարզի քաղաքները (բացառությամբ Դաստակերտի), ինչպես նաև Գորիսի տարածաշրջանի Խնածախ, Շինուհայր, Տեղ, Տաթև և Սիսիանի տարածաշրջանի Անգեղակոթ, Բոնակոթ գյուղերը:

2. Որոշակի ենթակառուցվածքների ձևավորման պարագայում տեղային կենտրոններ կարող են կազմավորվել նաև Սիսիանի տարածաշրջանի Դարբաս, Սառնակունք գյուղերում և Դաստակերտ քաղաքում, ինչպես նաև Կապանի տարածաշրջանի Սյունիք գյուղում:

3. Գորիսի տարածաշրջանի Բարձրավան, Շուռնուխ (Աղբուլլաղ, Վանանդ, Ձորակ) գյուղերի, Կապանի տարածաշրջանի Շիկահող, Ծավ (Շիշկերտ), Ներքին Հանդ և Սրաշեն գյուղերի, Գեղիի գետահովտում գտնվող բնակավայրերի, ինչպես նաև Ողջիի Աճանան վտակի վերին հոսանքում գտնվող գյուղերի պարագայում համայնքների խոշորացումը տեսանելի ապագայում չի կարող ցանկալի արդյունք ապահովել համեմատաբար խոշոր բնակավայրերից հեռու գտնվելու պատճառով:

Նշված տարածաշրջանների վերաբերյալ առաջարկվող լուծումները դիտվում են որպես անցումային կամ ժամանակավոր, մասնավորապես՝

ա. Բարձրավան և Շուռնուխ (համայնքի կազմում գտնվող Աղբուլլաղ, Վանանդ, Ձորակ գյուղերով, որոնք չունեն մշտական բնակչություն) գյուղերում մեկ

համայնքի ձևավորումը դրանց աշխարհագրական դիրքի պատճառով պարտադրված լուծում է,

բ. պարտադրված լուծում է նաև Գեղիի գետահովտում գտնվող համայնքները (Գեղի, Նոր Աստղաբերդ) և դրանց կազմում գտնվող 10 բնակավայրերը, որոնց ընդհանուր բնակչությունը չի հասնում 400-ի, իսկ 6-ը չունեն մշտական բնակչություն, Քաջարանի համայնքում ընդգրկելը: Ընդ որում, մշտական բնակչություն չունեն նաև ներկայումս Լեռնաձորի համայնքում ընդգրկված Վերին Գիրաթաղ և Ներքին Գիրաթաղ գյուղերը, որոնք նույնպես ներառվում են Քաջարանի համայնքում,


գ. Աճանան (Խալաջ) գետի վերին հոսանքներում գտնվող համայնքների միավորումը՝ որպես համայնքի կենտրոն դիտարկելով Նորաշենիկ գյուղը (թեև վերջինս ունի ընդամենը 118 բնակիչ), պայմանավորված է համեմատաբար փոքր տարածքի վրա շուրջ 10 բնակավայրի փնջային դասավորությամբ: Բացի այդ, նշված բնակավայրերի մեծ մասը տեղադրված է Կապան-Գորիս (Միսիան) այլընտրանքային միակ կապի՝ հանրապետական նշանակության ավտոմայրուղուն հարակից տարածքներում և կարող է ձեռք բերել ռազմավարական նշանակություն՝ կարիք ունենալով այդ տարածաշրջանում պետության կողմից որոշակի ծրագրերի իրականացման,

դ. համարժեք մոտեցում է ցուցաբերված նաև Ծավ, Շիկահող, Ներքին Հանդ և Սրաշեն համայնքների պարագայում, որոնք նույնպես աշխարհագրական դիրքի պատճառով կարիք ունեն պետական առանձին ծրագրերի իրականացման:

4. Առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերված Մեղրիի տարածաշրջանի նկատմամբ, որտեղ երկու քաղաքային բնակավայրի առկայության պարագայում առաջարկվել է կազմավորել 1 համայնք՝ նախկին շրջանի ընդգրկումով: Հարկ է նշել, որ այս տարածաշրջանում ևս առկա են բնակավայրեր, որոնք որոշակիորեն մեկուսացած դիրք ունեն (Լիճք, Տաշտուն և առանձնապես Նոնաձոր գյուղերը):

Համայնքների կենտրոնների ընտրության վերաբերյալ առաջարկությունները՝ խնդրահարույց և առանձնահատուկ մոտեցումներ պահանջող տարածաշրջանների ամրագրումով, ներկայացված են քարտեզ 13-ում:

Համայնքների կենտրոնների և խնդրահարույց տարածաշրջանների տեղաբաշխման սխեմա



Պայմանական նշաններ

- ⦿ Որպես խոշորացվող համայնքների կենտրոն ընտրված բնակավայրեր
- Բնակավայրեր, որտեղ համայնքի կենտրոնի գործառույթների ապահովման համար անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ
- ⦿ Խնդրահարույց տարածաշրջաններ, որոնց վերաբերյալ առաջարկվող լուծումները կրում են ժամանակավոր բնույթ, և որտեղ պետական առանձնահատուկ մոտեցումների անհրաժեշտություն կա

3.5.2. Ըստ հայեցակարգային չափորոշիչների

ՀՀ Սյունիքի մարզում ՀՀ կառավարության կողմից ի գիտություն ընդունված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի» կիրառման հիմնական ուղղությունը պետք է հանդիսանա վարչատարածքային համակարգի վերակազմակերպմամբ համայնքների խոշորացումը, այսինքն՝ համայնքների միավորումը: Ընդ որում, կարծում ենք, մոտեցումը խնդրին պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն ստեղծվի ոչ միայն լուծելու արդեն քայքայման եզրին հասած և գրեթե բնակչություն չունեցող համայնքների միավորման հարցը, այլև այս բարեփոխումների արդյունքում ձևավորելու հնարավորին չափ խոշոր համայնքներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի հետագայում ստանալ ՀՀ կառավարության հայեցակարգով ակնկալվող արդյունքները: Այսինքն՝ այս դեպքում խոսքը վարչատարածքային բաժանման լայնածավալ բարեփոխումների մասին է, որոնք ածանցյալ կերպով ենթադրելու են բարեփոխումներ տեղական ինքնակառավարման համակարգում առհասարակ: Այս բարեփոխումներով պետք է ամրապնդվեն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հիմքերը, մեծացվի և ավելի նշանակալի դառնա տեղական ինքնակառավարման համակարգի դերը հանրային կառավարման համակարգում:

Առաջարկում ենք ՀՀ Սյունիքի մարզի տարածքում կազմավորել 18 համայնքներ՝ ներկայիս 109-ի փոխարեն: Այսինքն՝ մեկ բարեփոխման արդյունքում կրճատել համայնքների թվաքանակը միանգամից 6,0 անգամ: Մեր առաջարկությունները հիմնվում են ինչպես տնտեսական, այնպես էլ աշխարհագրական, բնակլիմայական, սոցիալական և այլ ընդհանրությունների, ինչպես նաև արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման սկզբունքների վրա:

1. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Գորայք, Ծղուկ, Սառնակունք** և **Սպանդարյան** համայնքների միավորմամբ՝ *համայնքային*

կենտրոն սահմանելով Սառնակունք գյուղը: Արդյունքում կստացվի 4 բնակավայրից կազմված համայնք, որը կունենա 2.036 բնակիչ և 18.892 հա տարածք: Բնակավայրերը, որոնք առաջարկվում է միավորել մեկ համայնքում, տեղաբաշխված են Երևան-Մեղրի ավտոմայրուղու երկու տարբեր կողմերում: Այս դեպքում բնակչության թվաքանակով ամենամեծ բնակավայրը Գորայքն է, սակայն Սառնակունքը որպես համայնքային կենտրոն ընտրելը առավել նպատակահարմար է այդ բնակավայրի աշխարհագրական դիրքը հաշվի առնելով (այն գտնվում է նոր կազմավորվելիք համայնքի բնակավայրերի կենտրոնական մասում): Բացի այդ, Սառնակունքը բնակչության թվով երկրորդ գյուղն է Գորայքից հետո:

Հիշատակված համայնքների միավորումով նոր համայնքի ձևավորումն արդարացված է նաև աշխարհագրական առումով: Տնտեսության գործառնական կառուցվածքով այդ համայնքները նման են և ունեն գրեթե նույն հիմնախնդիրները:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նախկինում հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Սիսիանի շրջանի վարչական տարածքում, ինչը ենթադրում է որոշակի ենթակառուցվածքային ընդհանրություններ, պատմական և մշակութային կապվածություն:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 2140-ից 2220 մետր բարձրությունների վրա: Ծովի մակերևույթից գրեթե նույն բարձրության վրա գտնվելու հանգամանքը վկայում է հիշյալ բնակավայրերի բնակլիմայական ընդհանրությունների մասին: Դրանք բոլորն էլ գյուղատնտեսական, հիմնականում անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներ են, ինչը հետագայում կարող է հնարավորություն տալ նոր կազմավորվելիք տեղական ինքնակառավարման մարմիններին մշակելու և իրականացնելու ընդհանուր զարգացման ռազմավարական ծրագրեր:

Առաջարկվող Սառնակունք համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Սառնակունք	Գորայք	1	7535	2140	580
	Ծղուկ	1	4971	2220	451
	Սառնակունք	1	4076	2170	519
	Սպանդարյան	1	2310	2150	486
	Ընդամենը	4	18 892	-	2 036

2. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Անգեղակոթ, Շաղատ, Մուծք և Բալաք** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Անգեղակոթ գյուղը**: Արդյունքում կստացվի 4 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 3.864 բնակիչ և 13.304 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Սիսիանի շրջանի վարչական տարածքում:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1700-ից 1870 մետր բարձրությունների վրա:

Հատկանշական է, որ այս համայնքներից Երևան-Մեղրի միջպետական ավտոմայրուղուն ավելի մոտ է գտնվում Անգեղակոթ համայնքը: Այսինքն՝ մյուս բոլոր համայնքներից դեպի միջպետական մայրուղի ճանապարհն անցնում է Անգեղակոթ բնակավայրի միջով, ինչն ավելի հիմնավոր է դարձնում վերջինս համայնքային կենտրոնի վերածելու մեր պնդումը: Բնակավայրերը սփռված են Շաղատի ջրամբարի շուրջը, այսինքն՝ ջրամբարը կներառվի նոր ձևավորվելիք համայնքի վարչական տարածքում, ինչը հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործելու դրա ռեսուրսները: Հատկանշական է նաև այն

հանգամանքը, որ բնակավայրերի այս խումբը, որոնց միավորումով առաջարկվում է ձևավորվել նոր համայնքը, բավականաչափ մեծ հեռավորության վրա է գտնվում հարևան Սառնակունք և Սիսիան համայնքների խմբից, ինչը առավել հիմնավոր է դարձնում դրանց առանձին հանդես գալու հանգամանքը:

Աղյուսակ 26

Առաջարկվող Անգեղակոթ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Անգեղակոթ	Անգեղակոթ	1	4583	1840	2 057
	Բալաք	1	1030	1700	213
	Սուծք	1	2931	1870	375
	Շաղատ	1	4760	1760	1 219
	Ընդամենը	4	13 304	-	3 864

3. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Սիսիան, Աղիտու, Իշխանասար, Նորավան, Շաքի, Տոլորս, Ույծ** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Սիսիան քաղաքը**: Արդյունքում կստացվի 7 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 20.481 բնակիչ և 17.92 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Սիսիանի շրջանի վարչական տարածքում, ինչը ենթադրում է որոշակի ենթակառուցվածքային ընդհանրություններ, պատմական և մշակութային կապվածություն: Ավելին՝ Աղիտու, Իշխանասար, Նորավան, Շաքի, Տոլորս, Ույծ բնակավայրերը ոչ մեծ հեռավորության վրա են գտնվում այս տարածաշրջանի ամենամեծ բնակավայր Սիսիան քաղաքից, որը նախկինում եղել է համանուն շրջանի շրջկենտրոնը: Ուսումնասիրություններն արդարացնում են այն կանխատեսումները, որ համայնքների խոշորացման արդյունքում խոշոր բնակավայրերի շուրջ գտնվող համայնքների միավորման շնորհիվ ձևավորված համայնքներն ավելի մեծ

արդյունավետությամբ են աչքի ընկնում: Օգտվելով Միսիան քաղաքում առկա ներուժից՝ հարևան համայնքները կարող են համատեղ ջանքերով լուծել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող և կենսական նշանակություն ունեցող խնդիրները:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1600-ից 1900 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 27

Առաջարկվող Միսիան համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի Վիվել	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Միտումնորիթի Բնակչություն
Միսիան	Միսիան	1	3320	1600	16 735
	Աղիտու	1	1928	1650	304
	Բշխանասար	1	1425	1900	271
	Նորավան	1	2117	1700	524
	Շաքի	1	3762	1720	1 611
	Տոլորս	1	2106	1720	450
	Ուլծ	1	3262	1600	586
	Ընդամենը	7	17 920	-	20 481

4. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Բոնակոթ, Հացավան, Աշոտավան, Թասիկ, Սալվարդ, Թանահատ և Արևիս** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Բոնակոթ գյուղը**: Արդյունքում կստացվի 7 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 4.145 բնակիչ և 15.161 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Միսիանի շրջանի վարչական տարածքում: Աշխարհագրորեն դրանք գտնվում են այնպիսի դիրքում, որ միմյանց հետ կապված են ընդհանուր ճանապարհով: Այդ ճանապարհը միանում է Միսիան քաղաքին (նախկին վարչական կենտրոնին), իսկ այնուհետև

միջպետական ավտոմայրուղուն՝ անցնելով Բոնակոթ գյուղի միջով, որն էլ, որպես ամենամեծ բնակավայր, առաջարկվում է սահմանել համայնքի կենտրոն:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1700-ից 1940 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 28

Առաջարկվող Բոնակոթ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Բոնակոթ	Աշոտավան	1	1172	1750	647
	Արևիս	1	1926	1950	140
	Բոնակոթ	1	5109	1700	2 315
	Թանահատ	1	1132	1920	76
	Թասիկ	1	1844	1740	291
	Հացավան	1	796	1730	280
	Սալվարդ	1	3182	1940	396
Ընդամենը	7	15 161	-	4 145	

5. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Ախլաթյան, Բնունիս, Տորունիք, Նժդեհ և Դաստակերտ** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Դաստակերտ քաղաքը**: Արդյունքում կստացվի 6 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 1.276 բնակիչ և 11.678 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Սիսիանի շրջանի վարչական տարածքում: Աշխարհագրորեն դրանք գտնվում են այնպիսի դիրքում, որ միմյանց հետ կապված են ընդհանուր ճանապարհով: Բնակավայրերի այդ դասավորությունից ելնելով՝ դրանք ինչպես նախկինում, այնպես էլ այժմ պայմանականորեն դասակարգվում են որպես «ենթաշրջան»: Չնայած այն բանին, որ հիշյալ բնակավայրերը Սիսիան քաղաքին միանում են՝ անցելով Տոլրս

համայնքի միջով, այնուամենայնիվ, որպես համայնքի կենտրոն առաջարկվում է Դաստակերտ քաղաքային համայնքը: Հարկ է նկատել, որ տարաբնակեցման հայեցակարգային ծրագրով նախատեսվում է կառուցել նոր միջպետական ավտոճանապարհ, որը պետք է անցնի Դաստակերտ քաղաքին հարող տարածքներով: Այդ դեպքում այդ տարածքի տնտեսական ներուժը նկատելիորեն կմեծանա, ինչի արդյունքում էլ ավելի կամրապնդվի դրա՝ որպես համայնքային կենտրոնի դիրքերը:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1750-ից 2015 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 29

Առաջարկվող Դաստակերտ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Դաստակերտ	Դաստակերտ	1	1933	1920	303
	Ախլաթյան	1	3519	1750	459
	Բնունիս	1	1600	1830	188
	Նժդեհ	2	2868	2015	188
	Տորունիք	1	1758	1840	138
	Ընդամենը	6	11 678	-	1 276

6. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Վաղատնի, Որոտան, Դարբաս, Լծեն, Գետաթաղ, Լոր և Շենաթաղ** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Դարբաս գյուղը**: Արդյունքում կստացվի 8 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 3.512 բնակիչ և 17.592 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Սիսիանի շրջանի վարչական տարածքում, ինչը ենթադրում է որոշակի ենթակառուցվածքային

ընդհանրություններ, պատմական և մշակութային կապվածություն: Բնակավայրերի աշխարհագրական դասավորությունից ելնելով՝ դրանք ինչպես նախկինում, այնպես էլ այժմ պայմանականորեն դասակարգվում են որպես «ենթաշրջան»: Դարբաս գյուղը նպատակահարմար է սահմանել համայնքային կենտրոն՝ հաշվի առնելով մյուս բնակավայրերի նկատմամբ կենտրոնական դիրքը: Բացի այդ, Դարբասը հիշյալ բնակավայրերից բնակչության առավելագույն թվաքանակն ունեցող բնակավայրն է:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1450-ից 1760 մետր բարձրությունների վրա

Աղյուսակ 30

Առաջարկվող Դարբաս համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչությունը
Դարբաս	Գետաթաղ	1	1312	1470	220
	Դարբաս	2	2743	1500	1 234
	Լճեն	1	1615	1560	178
	Լոր	1	1814	1680	420
	Շենաթաղ	1	4312	1760	422
	Որոտան, Միսիան	1	1812	1450	282
	Վաղատնի	1	3984	1580	756
	Ընդամենը	8	17 592	-	3 512

7. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Հարժիս, Խոտ, Շինուհայր, Հալիձոր** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Շինուհայր գյուղը**: Արդյունքում կստացվի 4 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 5.665 բնակիչ և 9.988 հա տարածք: Հիշյալ բոլոր

բնակավայրերը ընդգրկված են եղել Գորիսի շրջանի վարչական տարածքում: Բնակավայրերի այս խմբից համեմատաբար առանձնացված դիրքում է գտնվում միայն Հարժիս գյուղը, որը, սակայն, առանձին ճանապարհով կապված է համայնքային կենտրոն առաջարկվող Շինուհայր համայնքի հետ: Համայնքների այս խումբը գտնվում է Տաթևի վանական համալիրի հետ կապող ճոպանուղու և կիրճի աջ մասում, որտեղ համայնքային կենտրոն առաջարկվող Շինուհայր գյուղն ունի կենտրոնական դիրք մյուսների նկատմամբ: Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության կողմից Տաթևի վանական համալիրը որպես տուրիստական կենտրոն հռչակելուց հետո հիմնովին վերանորոգվել է այդ համայնքները միմյանց կապող ավտոճանապարհը, ինչն ավելի մատչելի է դարձնում հիշյալ բնակավայրերի հաղորդակցությունը:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1250-ից 1700 մետր բարձրությունների վրա: Ծովի մակերևույթից գրեթե նույն բարձրության վրա գտնվելու հանգամանքը վկայում է հիշյալ բնակավայրերի բնակլիմայական ընդհանրությունների մասին:

Աղյուսակ 31

Առաջարկվող Շինուհայր համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Շինուհայր	Խոտ	1	1795	1350	1 079
	Հալիձոր	1	1809	1250	707
	Հարժիս	1	3386	1700	1 014
	Շինուհայր	1	2998	1480	2 865
	Ընդամենը	4	9 988	-	5 665

8. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Տաթև, Սվարանց, Տանձատափ, Աղվանի, Քաշունի և Տանձավեր** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Տաթև գյուղը**: Արդյունքում կստացվի 6 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 1.589 բնակիչ և 10.129 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը, բացառությամբ Տանձավեր և Աղվանի գյուղերի, ընդգրկված են եղել Գորիսի շրջանի վարչական տարածքում:

Ի դեպ, այս առաջարկությունը ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Սյունիքի մարզերում համայնքների խոշորացման ուսումնասիրության շրջանակներում միակ բացառությունն է, երբ խախտվում է նախկին վարչական շրջանի բնակավայրերի ընդգրկմամբ համայնքներ ձևավորելու սկզբունքը:

Նոր կազմավորվելիք համայնքի կենտրոն է առաջարկվում Տաթև գյուղը, որի տարածքում է գտնվում ՀՀ կառավարության կողմից զբոսաշրջության կենտրոն հռչակված Տաթևի վանական համալիրը: Բացի այդ, Տաթև գյուղը հիշյալ բնակավայրերի կազմում ամենաշատ բնակչությունն ունի:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1400-ից 1720 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 32

Առաջարկվող Տաթև համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Տաթև	Աղվանի	1	447	1720	88
	Սվարանց	1	1621	1700	270
	Տաթև	1	6545	1610	892
	Տանձավեր	1	255	1600	212
	Տանձատափ	1	566	1400	100
	Քաշունի	1	695	1500	27
	Ընդամենը	6	10 129	-	1 589

9. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Գորիս, Վերիշեն, Ակներ, Քարահունջ, Որոտան և Հարթաշեն** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Գորիս քաղաքը**: Արդյունքում կստացվի 6 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 29.219 բնակիչ և 14.327 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Գորիսի շրջանի վարչական տարածքում:

Աղյուսակ 33

Առաջարկվող Գորիս համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի Վիվել	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Միտոյումովի բնակչության թվաքանակը
Գորիս	Գորիս	1	5039	1300	23 022
	Ակներ	1	1734	1700	1 338
	Հարթաշեն	1	3167	1350	717
	Որոտան, Գորիս	1	146	720	307
	Վերիշեն	1	2449	1600	2 532
	Քարահունջ	1	1792	1250	1 303
	Ընդամենը	6	14 327	-	29 219

Ավելին՝ Վերիշեն, Ակներ, Քարահունջ և Հարթաշեն բնակավայրերը ոչ մեծ հեռավորության վրա են գտնվում այս տարածաշրջանի ամենամեծ բնակավայր Գորիս քաղաքից, որը նախկինում համանուն շրջանի շրջկենտրոնն էր: Ուսումնասիրություններն արդարացնում են այն կանխատեսումները, որ համայնքների խոշորացման արդյունքում խոշոր բնակավայրերի շուրջ գտնվող համայնքների միավորման շնորհիվ ձևավորված համայնքներն ավելի մեծ արդյունավետությամբ են աչքի ընկնում: Օգտվելով Գորիս քաղաքում առկա ներուժից՝ հարևան համայնքները կարող են համատեղ ջանքերով լուծել

ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող և կենսական նշանակություն ունեցող խնդիրները:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 720-ից 1700 մետր բարձրությունների վրա:

10. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Վաղատուր, Խոզնավար և Խնածախ** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Խնածախ գյուղը**: Արդյունքում կստացվի 3 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 1.956 բնակիչ և 6.337 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Գորիսի շրջանի վարչական տարածքում: Ընդամենը երեք բնակավայրից համայնք կազմավորվելու անհրաժեշտությունը պայմանավորված է տվյալ բնակավայրերի աշխարհագրական դիրքով: Դրանք բավականաչափ հեռու են գտնվում մյուս բնակավայրերից և տարածքային կենտրոններից՝ ընդհանուր համայնք ձևավորելու համար: Համայնքային կենտրոն է առաջարկվում Խնածախ գյուղը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն բնակչության թվով ամենամեծ բնակավայրն է: Հիշյալ երեք բնակավայրերն էլ գտնվում են սահմանամերձ գոտում և ունեն բազմաթիվ ընդհանրություններ:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1380-ից 1592 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 34

Առաջարկվող Խնածախ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Խնածախ	Խնածախ	1	2906	1380	1 073
	Խոզնավար	1	1738	1592	407
	Վաղատուր	1	1693	1550	476
	Ընդամենը	3	6 337	-	1 956

11. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Քարաշեն, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Տեղ, Արավուս և Կոռնիձոր** համայնքների միավորման արդյունքում՝ **համայնքային կենտրոն սահմանելով Տեղ գյուղը**: Արդյունքում կստացվի 6 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 7.294 բնակիչ և 15.434 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերը ընդգրկված են եղել Գորիսի շրջանի վարչական տարածքում, սփռված են Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու երկու կողմերում: Տեղ գյուղն առաջարկվում է համայնքային կենտրոն ոչ միայն ավտոմայրուղու վրա գտնվելու՝ աշխարհագրական բարենպաստ դիրքի համար, այլև հաշվի առնելով բնակչության թվով ամենամեծ բնակավայրը լինելու հանգամանքը:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1125-ից 1580 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 35

Առաջարկվող Տեղ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	միլիոնով հավանաբար
Տեղ	Արավուս	1	443	1390	227
	Խնձորեսկ	1	6713	1580	2 260
	Կոռնիձոր	1	2417	1125	1 326
	Ներքին Խնձորեսկ	1	624	1580	321
	Տեղ	1	3867	1360	2 520
	Քարաշեն	1	1370	1540	640
	Ընդամենը	6	15 434	-	7 294

12. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Բարձրավան և Շուռնուխ** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Շուռնուխ գյուղը**: Արդյունքում կստացվի 5 բնակավայրից կազմված մի համայնք,

որը կունենա 399 բնակիչ և 1.396 հա տարածք: Հիշյալ բնակավայրերն ընդգրկված են եղել Գորիսի շրջանի վարչական տարածքում: Ընդհանուր առաջարկությունների մեջ Շուռնուխ համայնքն ամենափոքրն է ինչպես տարածքի, այնպես էլ բնակչության թվաքանակի ցուցանիշով: Սակայն այդ բնակավայրերի աշխարհագրական դիրքը, մյուս բնակավայրերից ակնհայտորեն կտրված լինելու հանգամանքն առայժմ թույլ չի տալիս քննարկել դրանց ընդգրկումը այլ համայնքների կազմի մեջ: Այս դեպքում տնտեսական արդյունավետության որևէ ազդեցություն ակնկալելն անիմաստ է: Առաջարկվող լուծումը չի համապատասխանում նաև սույն հետազոտության շրջանակներում մշակված «համայնքի» տեսլականին, սակայն այլ խելամիտ լուծումներ, մեր կարծիքով, ներկա պահին դժվար է գտնել: Չի կարելի բացառել ոչ հեռավոր ապագայում այդ բնակավայրերից բնակչության տարհանման և առավել նպաստավոր պայմաններում բնակեցման հնարավորությունը:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերն ընկած են 1480-ից 1520 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 36

Առաջարկվող Շուռնուխ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Շուռնուխ	Բարձրավան	1	514	1520	175
	Շուռնուխ	4	882	1480	224
	Ընդամենը	5	1 396	-	399

13. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս Ագարակ, Արծվանիկ, Դավիթ Բեկ, Եղեգ, Եղվարդ, Խդրանց, Կաղնուտ, Չափնի, Սյունիք, Սևաքար, Վարդավանք և Ուժանիս համայնքների միավորմամբ՝ *համայնքային կենտրոն սահմանելով Սյունիք գյուղը*: Արդյունքում կստացվի 16 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 3.753 բնակիչ և 14.863 հա տարածք: Հիշյալ բոլոր

բնակավայրերն ընդգրկված են եղել Կապանի շրջանի վարչական տարածքում: Բացառությամբ մեկ-երկու գյուղերի՝ սրանք ամենանոսր բնակեցված համայնքներն են, որոնք աշխարհագրորեն տեղակայված են Գորիս-Կապան ճանապարհահատվածի ձախ մասում: Հատկանշական է, որ 16 բնակավայրերից կազմված համայնքն ունի ընդամենը 3.753 բնակիչ: Որպես համայնքային կենտրոն առաջարկվող Սյունիք համայնքն արդեն իսկ կազմված է 5 բնակավայրերից, համեմատաբար մեծ է և մյուս բնակավայրերի նկատմամբ գտնվում է կենտրոնական դիրքում:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 950-ից 1540 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 37

Առաջարկվող Սյունիք համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի ընդամենը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության ընդամենը
Սյունիք	Ագարակ	1	1666	950	183
	Արծվանիկ	1	1981	1140	578
	Դավիթ Բեկ	1	1551	1100	813
	Եղեգ	1	979	1300	113
	Եղվարդ	1	1295	1135	272
	Խղրանց	1	697	1030	55
	Կաղնուտ	1	582	1540	109
	Չափնի	1	1048	1040	56
	Սյունիք	5	1930	720	1 294
	Սևաքար	1	1450	980	102
	Վարդավանք	1	639	1120	91
	Ուժանիս	1	1045	1120	87
	Ընդամենը	16	14 863	-	3 753

14. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Անտառաշատ, Առաջածոր, Չորաստան, Ներքին Խոտանան, Նորաշենիկ, Շրվենանց, Վանեք, Վերին Խոտանան, Տավրոս և Օխտար** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Նորաշենիկ գյուղը**: Արդյունքում կստացվի 10

բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 1.062 բնակիչ և 5.684 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերն ընդգրկված են եղել Կապանի շրջանի վարչական տարածքում, միայնց հետ կապված են մեկ ընդհանուր ճանապարհով, որտեղ, որպես համայնքային կենտրոն առաջարկվող Նորաշենիկ գյուղն ունի կենտրոնական դիրք: Սրանք նույնպես նոսր բնակեցված համայնքներ են, որոնք առանձին վերցրած երբևէ չեն կարող ունենալ բավարար ներուժ տեղական ինքնակառավարում իրականացնելու համար: Չնայած այն բանին, որ խոշորացման արդյունքում ևս այդ համայնքում բավարար ներուժ չի ձևավորվում, սակայն առաջին փուլում առաջարկվում է հիշյալ 10 բնակավայրերի միավորումը մեկ համայնքում: Հետագա տարիներին կարելի է քննարկել հարևան համայնքների հետ նոր միաձուլման կամ միջհամայնքային միավորումներ ձևավորելու հարցերը:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1060-ից 1360 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 38

Առաջարկվող Նորաշենիկ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Նորաշենիկ	Անտառաշատ	1	579	1300	120
	Առաջաձոր	1	539	1100	164
	Ձորաստան	1	433	1210	61
	Ներքին Խոտանան	1	325	1160	70
	Նորաշենիկ	1	832	1060	118
	Շրվենանց	1	514	1120	76
	Վանեք	1	196	1240	71
	Վերին Խոտանան	1	1527	1360	199
	Տավրոս	1	375	1120	96
	Օխտար	1	364	1070	87
	Ընդամենը	10	5 684	-	1 062

15. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Կապան, Աճանան Գեղանուշ, Ճակատեն** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Կապան քաղաքը**: Արդյունքում կստացվի 5 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 46.065 բնակիչ և 9.087 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերն ընդգրկված են եղել Կապանի շրջանի վարչական տարածքում:

Ավելին՝ Աճանան, Գեղանուշ և Ճակատեն բնակավայրերը ոչ մեծ հեռավորության վրա են գտնվում այս տարածաշրջանի ամենամեծ բնակավայր Կապան քաղաքից, որը նախկինում համանուն շրջանի շրջկենտրոնն էր, իսկ ներկայումս ՀՀ Սյունիքի մարզի մարզկենտրոնն է: Հատկանշական է, որ Աճանան, Գեղանուշ և Ճակատեն բնակավայրերը միասին վերցրած ունեն ընդամենը 577 բնակիչ:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 910-ից 1100 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 39

Առաջարկվող Կապան համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Կապան	Կապան	1	4864	910	45 488
	Աճանան	1	800	880	154
	Գեղանուշ	2	2223	1040	286
	Ճակատեն	1	1200	1100	137
	Ընդամենը	5	9 087	-	46 065

16. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Ծավ, Ներքին Հանդ, Շիկահող և Սրաշեն** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Ծավ գյուղը**: Արդյունքում կստացվի 5 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 709 բնակիչ և 9.370 հա տարածք: Հիշյալ բոլոր

բնակավայրերն ընդգրկված են եղել Կապանի շրջանի վարչական տարածքում: Այս դեպքում նույնպես համայնքների խոշորացումը իրական տնտեսական ազդեցություն չի կարող տալ, սակայն համայնքների աշխարհագրական դիրքն ու առանձնահատկությունները թույլ չեն տալիս առաջարկություններ ներկայացնել Կապան համայնքի հետ մեկ ընդհանուր համայնք ձևավորելու վերաբերյալ: Կարծում ենք՝ այդ խնդիրը կարող է քննարկվել վարչատարածքային բարեփոխումների հաջորդ փուլում, իսկ տեսանելի ապագայում կարելի է առաջարկություններ ներկայացնել հարևան համայնքների հետ միջհամայնքային միավորումների ձևավորման և դրանց միջոցով ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծման ուղղությամբ:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 950-ից 1025 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 40

Առաջարկվող Ծավ համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության դասակարգման թվաքանակը
Ծավ	Ծավ	2	6125	1080	351
	Ներքին Հանդ	1	794	950	78
	Շիկահող	1	1601	980	189
	Սրաշեն	1	850	1025	91
	Ընդամենը	5	9 370	-	709

17. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս **Քաջարան քաղաքային, Քաջարան գյուղական, Լեռնաձոր, Գեղի, Նոր Աստղաբերդ** համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Քաջարան քաղաքը**: Արդյունքում կստացվի 17 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 9.488 բնակիչ և 24.738 հա տարածք: Հիշյալ բոլոր բնակավայրերն ընդգրկված են եղել Կապանի շրջանի վարչական տարածքում: Նախկինում

Քաջարան քաղաքն ունեցել է հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ, իսկ նրա շուրջ գտնվող բնակավայրերը որոշակիորեն կապված են եղել Քաջարան քաղաքի հետ: Հատկանշական է, որ առանց Քաջարան քաղաքի, մյուս բոլոր համայնքները կազմված են 16 բնակավայրից և ունեն ընդամենը 990 բնակիչ:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 1600-ից 1970 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 41

Առաջարկվող Քաջարան համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը

Համայնքի կենտրոն	Համայնքներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Քաջարան	Քաջարան	1	1411	1950	8 498
	Գեղի	6	7974	1600	138
	Նոր Աստղաբերդ	4	2830	1850	93
	Լեռնաձոր	5	11335	1600	547
	Քաջարան	1	1188	1970	212
	Ընդամենը	17	24 738	-	9 488

18. Առաջարկվում է մեկ համայնք ձևավորել ներկայիս Մեղրի, Ագարակ, Ալվանք, Գուդեմիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն համայնքների միավորմամբ՝ **համայնքային կենտրոն սահմանելով Մեղրի քաղաքը**: Արդյունքում կստացվի 15 բնակավայրից կազմված մի համայնք, որը կունենա 12.071 բնակիչ և 39.943 հա տարածք: Կարևոր է այն հանգամանքը, որ այս առաջարկությամբ նոր համայնք է ձևավորվում նախկին վարչական շրջանի ամբողջ ընդգրկմամբ: Նախնական քննարկումները ցույց են տալիս, որ ինչպես փորձագիտական, այնպես էլ քաղաքական շրջանակներում կան տեսակետներ, որ նոր ձևավորվելիք համայնքները կարելի է կառուցել նախկին շրջանների սահմաններում: Չնայած այն բանին, որ նոր

ձևավորվելիք համայնքները հիմնականում ընդգրկում են նախկին շրջանների բնակավայրերը, սակայն, այնուամենայնիվ առաջարկվում է մեկ տարբերակ, որի դեպքում համայնքի սահմանները համընկնում են նախկին շրջանի սահմանների հետ: Այդ առումով Մեղրու շրջանը նպատակահարմար է գտնվել ոչ միայն տնտեսաաշխարհագրական, այլև քաղաքական տեսանկյունից: Սահմանակից լինելով Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ Մեղրու տարածաշրջանը մշտապես գտնվել է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Այն որպես մեկ համայնք ներկայացնելը հնարավորություն կտա կառավարությանը շարունակելու իր քաղաքական ծրագրերի իրականացումը՝ համագործակցելով մեկ միասնական համայնքի հետ:

Համայնքների սահմաններում գտնվող բնակավայրերը տեղաբաշխված են 620-ից 1950 մետր բարձրությունների վրա:

Աղյուսակ 42

Առաջարկվող Մեղրի համայնքը, դրա կազմի մեջ մտնող համայնքները, բնակավայրերը, տարածքը, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և բնակչության թվաքանակը


Համայնքի կենտրոն	Համայնք-ներ	Բնակավայրերի թիվը	Տարածքը, հա	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը	Բնակչության թվաքանակը
Մեղրի	Մեղրի	1	3201	620	4 775
	Ազարակ	1	326	660	4 881
	Ալվանք	1	6298	670	343
	Գուղեմիս	1	704	1400	39
	Լեհվազ	1	1008	900	605
	Լիճք	1	2993	1730	156
	Կարճևան	1	3284	920	292
	Կուրիս	1	1446	1365	61
	Նոնաձոր	1	11773	650	140
	Շվանիձոր	1	4112	640	306
	Վահրավար	1	801	1380	47
	Վարդանիձոր	3	2273	1050	292
Տաշտուն	1	1724	1950	134	
	Ընդամենը	15	39 943	-	12 071

Առաջարկվող փոփոխությունների արդյունքում ձևավորվող համայնքների ընդհանուր նկարագիրը ներկայացված է քարտեզ 14-ում:

Քարտեզ 14

Սյունիքի մարզի համայնքների խոշորացման ընդհանուր նկարագիրը

	ՀԱՍՏՅՆՔ	ԹՆԱԿՉ. ԹԻՎԸ	ՎԱՌՉ. ՏԱՐԱԾՔ
1	ԳՈՐԻՍ	29219	19215
2	ԽՆԱԾԱՆ	1956	7634
3	ՏԵՂ	7294	15712
4	ՇԻՆՈՒՀԱՅՐ	5665	15447
5	ՏԱԹԵՎ	1589	13604
6	ՇՈՒՌՆՈՒԽ	399	5139
7	ԿԱՊԱՆ	46065	18927
8	ՆՈՐԱՇԵՆԻԿ	1062	14108
9	ՄՅՈՒՆԻՔ	3753	18799
10	ՔԱԶԱՐԱՆ	9492	40300
11	ԾԱՎ	709	25013
12	ՄԵՂՐԻ	12071	66066
13	ՄԻՄԻԱՆ	20481	30571
14	ԳԱՍՏԱԿԵՐՏ	1276	18661
15	ՄԱՌՆԱԿՈՒՆՔ	2036	49095
16	ԱՆԳԵՂԱԿՈԹ	3864	26699
17	ԲՈՆԱԿՈԹ	4135	25366
18	ԳԱՐՔԱՍ	3512	22232



Այս քաղաքականության արդյունքում նոր կազմավորվելիք 18 համայնքներից բնակչության թվով ամենամեծը կլինի Կապանը՝ 46.065 բնակչով, իսկ

ամենափոքրը՝ Շուռնուխը 399 բնակչով: Տարածքով ամենամեծ համայնքը Մեղրին է՝ 66066 հա, իսկ ամենափոքրը՝ Շուռնուխը՝ 5139 հա: Համեմատության համար կարելի է նշել, որ մինչև համայնքների միավորումը ամենամեծ և ամենափոքր համայնքների միջև բնակչության թվաքանակի տարբերությունը 1.685 անգամ էր, իսկ միավորումից հետո այդ տարբերությունը կլինի մոտ 65 անգամ: Միավորման արդյունքում մեկ համայնքի բնակչության միջին թիվը կկազմի մոտ 9.093,2 մարդ, իսկ տարածքը՝ 15.049,6 հա:

ՀՀ Սյունիքի մարզում համայնքների խոշորացման վերաբերյալ առաջարկվող լուծումները և դրանց համեմատական վերլուծությունը սույն հետազոտության շրջանակներում ներկայացված առաջարկությունների հետ

ՀՀ Սյունիքի մարզում համայնքների խոշորացման խնդիրն արտացոլված է նաև ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 782-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում»: Մասնավորապես հիշյալ ծրագրի 12.2 «Տեղական ինքնակառավարում» բաժնի «Համայնքային խնդիրներ» ենթաբաժնի 718 կետում շարադրված է. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման ներկա ֆոնի վրա, հաշվի առնելով մարզի աշխարհագրական դիրքը, ռազմավարական նշանակությունը, սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրեր ունեցող համայնքների մեծ տեսակարար կշիռը (79.8%), բնակավայրերի միջև եղած հեռավորությունը, բնակավայրերի բնակչության համատեղելիության և մենթալության մակարդակը (1990-ական թվականներին գյուղխորհուրդների և բնակավայրերի տարանջատումից հետո, անցած մոտ 20 տարիների ընթացքում ձևավորվել է մի սերունդ, որի համար տեղային հայրենասիրության գաղափարը որոշակիորեն արմատավորվել և դարձել է գյուղապահպանման կարևոր գործոններից մեկը)՝ անհրաժեշտ է այս հարցում Սյունիքի մարզում ցուցաբերել որոշակի տարբերակված մոտեցում: Մարզի համայնքների խոշորացման խնդիրը քննարկվել է մարզպետարանում և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է

ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակներից մեկը, որը շեշտադրել է «Մեկ բնակավայր մեկ համայնք» սկզբունքի առավելագույն կիրառման անհրաժեշտությունը»: *Ըստ այդմ՝ առաջարկվել է համայնքների խոշորացում իրականացնել միայն 30 համայնքների ընդգրկմամբ, որի արդյունքում պետք է կազմավորվի 13 նոր համայնք:*


**ՀՀ Սյունիքի մարզի համայնքների խոշորացման
հնարավոր տարբերակ**

<i>ՀՀ.</i>	<i>Համայնքի կենտրոնը</i>	<i>Միավորվող համայնքները</i>
<i>1</i>	<i>Ագարակ</i>	<i>Ագարակ</i>
		<i>Խղրանց</i>
<i>2</i>	<i>Եղվարդ</i>	<i>Եղվարդ</i>
		<i>Ուժանիս</i>
<i>3</i>	<i>Սյունիք</i>	<i>Սյունիք</i>
		<i>Վարդավանք</i>
<i>4</i>	<i>Վ.Խոտանան</i>	<i>Վ.Խոտանան</i>
		<i>Տավրոս</i>
		<i>Շրվենանց</i>
		<i>Ն.Խոտանան</i>
<i>5</i>	<i>Սվարանց</i>	<i>Սվարանց</i>
		<i>Քաշունի</i>

6	Շաղատ	Շաղատ
		Բալար
7	Լեհվազ	Լեհվազ
		Վահրավար
8	Լիճք	Լիճք
		Տաշտուն
9	Կուրիս	Կուրիս
		Գուդեմիս
10	Թասիկ	Թասիկ
		Թանասիատ
11	Սևաքար	Սևաքար
		Չափնի
		Եղեգ
12	Գորիս	Գորիս
		Վերիշեն
		Ակներ
13	Խնձորեսկ	Խնձորեսկ
		Ներքին Խնձորեսկ

Նշված միավորման արդյունքում նոր ձևավորվող համայնքների սխեմատիկ սահմանները ներկայացված են քարտեզ 15-ում:

Մյունիքի մարզի զարգացման ծրագրով առաջարկվող՝ խոշորացվող համայնքների սխեմատիկ սահմաններ (համայնքների համարակալումը համապատասխանում է ծրագրում ներկայացված համարակալմանը)



Ցավոք, հիշյալ առաջարկությունները հիմնավորող փաստարկներ ներկայացված չեն, սակայն, հարկ է նկատել, որ բոլոր առաջարկությունները, առանց բացառության, տեղ են գտել սույն ուսումնասիրությունում, պարզապես ավելի ընդգրկուն և մեծ մասշտաբներով: Այսինքն՝ ուսումնասիրությունների արդյունքում ներկայացված առաջարկությունները

որն է հակասության չունեն «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում» ներկայացված առաջարկությունների հետ, ավելին՝ դրանք ավելի մասշտաբային են և, ըստ էության՝ ավելի հիմնավոր:

Մասնավորապես, եթե «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում» առաջարկվել է կազմավորել Ագարակ համայնք՝ Ագարակ և Խդրանց համայնքների միավորմամբ, ապա սույն հետազոտության շրջանակներում առաջարկվել է կազմավորել Սյունիք համայնք, որի կազմի մեջ, բացի հիշյալ Ագարակ և Խդրանց համայնքներից, առաջարկվել է ընդգրկել ևս 10 համայնք, ինչի արդյունքում Սյունիքի համայնքում կլինեն 12 նախկին համայնքներ՝ 16 բնակավայրերի ընդգրկումով: Նույն տրամաբանությունը պահպանվել է մյուս բոլոր դեպքերում: Այսինքն՝ առանց հակասության մեջ լինելու «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» այս բաժնին վերաբերող առաջարկությունների հետ, սույն հետազոտության շրջանակներում առաջարկվել է համայնքների խոշորացումն իրականացնել ավելի լայն և ընդգրկուն մասշտաբներով:

3.5.3 Նոր ձևավորվող համայնքների որոշ ցուցանիշների գնահատում

Մինչև համայնքների խոշորացման վերաբերյալ առաջարկվող տարբերակի տնտեսական գնահատականներին անդրադառնալը, հարկ է գնահատել նաև, թե համայնքների խոշորացումը ինչ ազդեցություններ կարող է ունենալ տարաբնակեցման համակարգի բարելավման, մասնավորապես բնակավայրերի խոցելիության նվազեցման, մարզի բնական (հողային, ռելիեֆային, անտառային, հանքահումքային) և մարդկային ռեսուրսները համայնքների միջև հնարավորինս հավասարակշռված տեղաբաշխելու առումով:

3.5.3.1. Տարաբնակեցման համակարգի և բնակավայրերի խոցելիության և զարգացման ներուժի համադրում

ա. Խնածախ և Շինուհայր համայնքներում բացակայում են ինչպես խոցելի, այնպես էլ զարգացման ներուժ ունեցող բնակավայրերը.

բ. Գորիս համայնքի 6 բնակավայրերից (Քարահունջ) զարգացման ներուժ ունի 1-ը, Տեղ համայնքի նույնքան բնակավայրերից՝ 2-ը (Տեղ, Խնձորեսկ),

գ. Անգեղակոթ համայնքի 4 բնակավայրերից 1-ը (Մուցք) խոցելի է, 2-ը՝ զարգացման ներուժ ունեցող (Անգեղակոթ, Շաղատ),

դ. Միսիան համայնքի 7 բնակավայրերից խոցելի է 1-ը (Տոլորս), Տաթև, Սառնակունք, Կապան և Բարձրավան համայնքներում առկա է 3-ական խոցելի բնակավայր, ընդ որում, Սառնակունք համայնքի Ծղուկ բնակավայրը, խոցելի լինելով հանդերձ, ունի զարգացման ներուժ,

ե. Մեղրի համայնքի 16 բնակավայրերից 3-ը (Լիճք, Կարճևան, Նոնաձոր) խոցելի են, 3-ը՝ զարգացման ներուժ ունեցող (Մեղրի, Լեհվազ, Թխկուտ),

զ. Նորաշենիկի 10 և Սյունիքի 16 բնակավայրերից խոցելի են՝ համապատասխանաբար 5-ը և 8-ը, ընդ որում, այդ համայնքներում՝ զարգացման ներուժ ունեցող բնակավայրեր գործնականում չկան,

է. Բոնակոթ համայնքի 7 բնակավայրից խոցելի են Սալվարդ, Արևիս և Թանահատ բնակավայրերը, ընդ որում, վերջին երկուսն ունեն զարգացման ներուժ, զարգացման ներուժ ունի նաև Թասիկը,

ը. Դարբաս համայնքի 8 բնակավայրերից խոցելի են 4 ը (Գետաթաղ, Լձեն, Լոր, Շենաթաղ), ընդ որում, վերջին 2-ը միաժամանակ օժտված են զարգացման ներուժով,

թ. Քաջարան համայնքի 17 բնակավայրերից 15-ը խոցելի են, ընդ որում, դրանցից 8-ում բացակայում է մշտական բնակչությունը. խոսքը Գեղիի գետահովտում գտնվող բնակավայրերի մասին է: Քաջարանը և Կավճուտն օժտված են զարգացման ներուժով,

ժ. Շուռնուխ համայնքի 5 բնակավայրերից 3-ում չկա մշտական բնակչություն (Աղբուլլաղ, Վանանդ, Ձորակ),

ժա. Ծավ և Դաստակերտ համայնքների բոլոր բնակավայրերը (համապատասխանաբար՝ 5 և 6) խոցելի են:

Նոր կազմավորվող համայնքներում խոցելի և զարգացման ներուժ ունեցող բնակավայրերի քանակի ընդհանուր նկարագիրը ներկայացված է աղյուսակ 43-ում:

Ծանոթություն. *բնակավայրերի խոցելիության և զարգացման ներուժի գնահատականները տրված են միայն սույն ուսումնասիրության շրջանակներում դիտարկված այն գործոնների վերլուծության արդյունքում, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ տարաբնակեցման համակարգի և բնակավայրերի տարածքային կազմակերպման վրա (տե՛ս բաժին 3.5.1): Ավելի*

ընդգրկուն ուսումնասիրությունների պարագայում հարկ է անդրադառնալ նաև այնպիսի գործոնների, ինչպիսիք են արտադրական կարողությունների տեղաբաշխումը, աշխատունակ բնակչության տոկոսը, տարբեր ենթակառուցվածքներով (ինժեներական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական ապահովվածությունը և այլն):

Աղյուսակ 43

Խոշորացվող համայնքներում տարաբնակեցման համակարգի խոցելի և զարգացման ներուժ ունեցող բնակավայրերի քանակը

	Համայնքի անվանումը	Բնակավայրերի ընդամենը	այդ թվում՝	
			Խոցելի բնակավայրեր	Զարգացման ներուժ ունեցող բնակավայրեր
1	ք.Գորիս	6	0	1
2	Խնածախ	3	0	0
3	Տեղ	6	0	2
4	Շինուհայր	4	0	0
5	Տաթև	6	3	0
6	Շուռնուխ	5	3	0
7	ք.Կապան	5	3	0
8	Նորաշենիկ	10	5	0
9	Սյունիք	16	8	0
10	ք.Քաջարան	17	15	2
11	Ծավ	5	5	0
12	ք.Մեղրի	16	3	3
13	ք.Սիսիան	7	1	0
14	ք.Դաստակերտ	6	6	0
15	Սառնակունք	4	3	1
16	Անգեղակոթ	4	1	2
17	Բոնակոթ	7	3	2
18	Դարբաս	8	4	2
	Ընդամենը	135	63	15

3.5.3.2. Նկատառումներ ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ

1. 2003 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով «Հյուսիս-հարավ» հիմնական միջպետական ավտոմայրուղու Միսիան-Մեղրի հատվածում նախատեսված էր նոր ծրագիր (трасса)՝ 3 թունելների կառուցում Մեղրի-Քաջարան, Քաջարան-Գեղիի գետահովիտ և Գեղիի գետահովիտ-Դաստակերտ հատվածներում, որի շնորհիվ միայն Քաջարան-Միսիան ավտոմայրուղու երկարությունը կկրճատվի ավելի քան 60 կիլոմետրով, իսկ Երևան-Մեղրի ավտոմայրուղու երկարությունը ներկայիս 387 կմ-ի փոխարեն կկազմի 280 կմ (նախագծի 2.1.5.11 բաժին):

Ավելորդ է ասել, թե նշված մայրուղու կառուցումը ինչ դրական ազդեցություն կարող էր ունենալ ինչպես հանրապետության ու մարզի համար ընդհանրապես, այնպես էլ Գեղիի գետահովտում գտնվող տարածաշրջանի բնակավայրերի համար մասնավորապես, սակայն ներկայումս իրականացման փուլում գտնվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու ծրագիրը մարզի տարածքում գործնականում համընկնում է գոյություն ունեցող ավտոմայրուղու հետ, ինչը թե՛ համապետական, թե՛ հատկապես Սյունիքի մարզի կտրվածքով չի կարող շոշափելի ռազմավարական արդյունք տալ:

Ինչ վերաբերում է Մեղրի-Ծավ նոր ավտոմայրուղուն, ապա վերջինս որոշակի դրական ազդեցություն կարող է ունենալ Կապանի տարածաշրջանի հարավարևելյան հատվածում գտնվող բնակավայրերի զարգացման վրա: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ ավտոմայրուղին անհրաժեշտ, սակայն դեռևս բավարար պայման չէ նշված տարածաշրջանի զարգացումն ապահովելու համար: Այդ հիմնախնդրի լուծումը ենթադրում է պետության կողմից տարածաշրջանի հարուստ ռեկրեացիոն ու տուրիստական ռեսուրսների լիարժեք օգտագործմանը միտված ծրագրերի իրականացում:

2. Ինչպես մարզի, այնպես էլ հանրապետության մակարդակով կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակավայրերի փակուղային դիրքը (արտաքին տրանսպորտային կապի այլընտրանքի բացակայությունը) շոշափելի բացասական ազդեցություն ունի բնակավայրերի մարդաշատության վրա, ուստի

տարածքային հատակագծման նախագծերի մշակման շրջանակներում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել փակուղային բնակավայրերի համար այլընտրանքային տրանսպորտային կապերի ձևավորման խնդրին:

Ընդ որում, Սյունիքի մարզի համար այդ փաստաթղթի մշակումը անհրաժեշտ է դիտարկել որպես պետական գերակայություն (ներկայումս տարածքային հատակագծման նախագծեր մշակված են Գեղարքունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերի համար):

3. Նկատի ունենալով, որ բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի վրա զգալի ազդեցություն ունի ոչ այնքան մարզկենտրոնից (տարաբնակեցման համակարգի տարածաշրջանային կենտրոնից), որքան տեղային կենտրոնից հեռու լինելն ու ճանապարհի բնույթը, հարկ է նոր կազմավորվող համայնքների համար առաջնահերթորեն կարևորել բնակավայրերի և համայնքի կենտրոնի (տեղային կենտրոնի) միջև գործող ավտոճանապարհների որակի բարելավման խնդիրը:

3.5.3.3. Հողային և բնական այլ ռեսուրսների տեղաբաշխման համադրում

Հողային ռեսուրսների ծավալների գնահատման պարագայում շեշտը դրված է համայնքային ու պետական սեփականության հողերի վրա, ընդ որում, համայնքային սեփականության հողերի պարագայում հաշվի են առնվել նախկինում համայնքների վարչական սահմաններում գտնվող վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների և արոտների ծավալները, պետական սեփականության հողերի պարագայում՝ խոտհարքների և արոտների ծավալները: Երկու դեպքում էլ հաշվի չեն առնվել հողային հաշվեկշիռներում ընդգրկված այլ տողերի հողատեսքերը՝ նկատի ունենալով, որ այդ տողում ընդգրկված են գործնականում չօգտագործվող հողերը*:

Համայնքային սեփականության հողերի պարագայում ներկայումս մեկ բնակչի հաշվով միջին հողատարածքի նվազագույն ցուցանիշը գյուղական

* Գյուղատնտեսական հողերի կազմում ներառված «այլ հողերը» նախկինում «անօգտագործելի» սահմանված հողերն էին, որոնց կազմում ընդգրկված են քարքարուտները, ավազուտները, բարձրադիր և գառիթափ լեռնալանջերը և բոլոր այն հողերը, որոնք հնարավոր չէ օգտագործել գյուղատնտեսական նպատակներով: Դրանց կազմում ներառված են նաև նախկինում արոտների կազմում գտնվող այն հողերը, որոնք ներկայումս էռոզիայի են ենթարկվել և այլևս չեն կարող օգտագործվել այդ նպատակով:

համայնքներից Վերիշենում է՝ 0.03 հա (Որոտանում դրանք բացակայում են), առավելագույնը՝ Գեղիում՝ 29.01 հա, այսինքն՝ 967 անգամ ավելի: Խոշորացումից հետո այդ տարբերությունը մեղմվում է. նվազագույնը Շինուհայրում է՝ 0,23 հա, առավելագույնը՝ Քաջարանում՝ 8.69 հա, այսինքն՝ մոտ 38 անգամ ավելի: Ընդհանուր առմամբ, տարբերությունը մեղմվում է 25 անգամ (հավելվածներ 11 և 12): Նոր ձևավորվող 18 համայնքներից 14-ում 1 բնակչի հաշվով համայնքային սեփականության հողային պաշարները կարելի է համարել բավարար. դրանք կազմում են մոտ 1 հեկտար և ավելի:

Ներկայումս մարզի 46 համայնքներում պետական սեփականության հողեր չկան, ինչը հատկապես լուրջ խնդիրներ կարող է առաջացնել անասնապահության ոլորտում՝ նկատի ունենալով, որ դրանց կազմում ընդգրկված են հիմնականում արոտները և խոտհարքները (տե՛ս հավելված 13): Համայնքների խոշորացումից հետո միայն Սյունիք համայնքում է առկա նման պատկեր, գործնականում պետական սեփականության հողեր չկան նաև Տեղ համայնքում: Վերջինս հետևանք է այն բանի, որ նշված համայնքների հարևանությամբ նախկինում չեն եղել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողեր, ինչն իր ազդեցությունն է թողնելու նաև դրանց խոշորացման պարագայում:

Այսուհանդերձ, համայնքների խոշորացումը դրական ազդեցություն կարող է ունենալ մարզի հատկապես գյուղական բնակչության գերակշիռ մասի վրա՝ պետական սեփականության հողերից օգտվելու առումով:

Համանման պատկեր է նաև անտառային ֆոնդի, հատուկ պահպանվող տարածքների, արդյունաբերության, ընդերքօգտագործման և արտադրական այլ նշանակության, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի պարագայում: Եթե մինչև համայնքների խոշորացումը անտառային հողեր չկան 23 համայնքներում, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 26 համայնքներում, ապա խոշորացումից հետո դրանք կարող են լինել բոլոր համայնքներում: Եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ տվյալ պարագայում խնդիրն անմիջականորեն առնչվում է նաև ռեկրեացիոն ու տուրիստական ռեսուրսներին, ապա ակնհայտ է, որ համայնքների խոշորացումը կարող է նպաստել այդ ռեսուրսների հասանելիությանը բոլոր բնակիչների համար:

Համայնքների խոշորացման շնորհիվ արտադրական և ընդերքօգտագործման ենթակառուցվածքները նույնպես համեմատաբար հավասարակշռված կտեղաբաշխվեն տարբեր համայնքներում (տե՛ս հավելված 14):

3.5.3.4. Հողօգտագործման արդյունավետության բարձրացման մեխանիզմները (ներկայացվող առաջարկություններն ընդհանրական են, ուստի կարող են կիրառելի լինել նաև այլ մարզերի պարագայում)

Հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը ենթադրում է առնվազն 2 նախապայմանի առկայություն՝

ա. հողօգտագործումը և քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթեր (հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ, տարածքային հատակագծման նախագծեր, համայնքների գլխավոր հատակագծեր),

բ. լիարժեք տեղեկատվություն առկա իրավիճակի վերաբերյալ (հողային ֆոնդի բաշխումն ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների, ըստ նպատակային ու գործառնական նշանակության):

Քանի որ հողաշինարարական կամ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ապահովվածության մակարդակը ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Սյունիքի մարզի համայնքներում շատ ցածր է, և տեսանելի ապագայում այդ խնդրի լուծումը գործնականում քիչ հավանական է՝ նկատի ունենալով թե՛ պետական, թե՛ տեղական բյուջեների առկա հնարավորությունները, հարկ է ներկայացնել այդ փաստաթղթերի բացակայության պարագայում հողային ռեսուրսների կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվության բնույթը, դրանցից օգտվելու, դրանց հիման վրա գործողություններ նախանշելու վերաբերյալ որոշ առաջարկություններ:

Իհարկե, ստորև ներկայացվող մեխանիզմները համապարփակ չեն և վերաբերում են հիմնականում համայնքների խոշորացման արդյունքում ստեղծված իրավիճակում նախատեսվող գործողություններին, որոնք իրենց հերթին պետք է միտված լինեն համայնքների սեփական եկամուտների որոշակի

շերտի կայուն մակարդակն ապահովելուն և հողային ռեսուրսներն այնպես օգտագործելուն, որ համարժեք հնարավորություններ ունենան նաև ապագա սերունդները:

Խոշորացվող համայնքներում հողօգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված գործողությունները

1. Նոր ձևավորվող համայնքների համար կազմել սահմանված ձևի հողային հաշվեկշիռ՝ դրանում ընդգրկելով ինչպես միավորվող համայնքների, այնպես էլ դրանց վարչական սահմաններից դուրս գտնվող այն հողերը, որոնք պետք է ներառվեն համապատասխան համայնքի կազմում:

2. Հաշվեկշռի ամփոփ ձևը լրացնելուց բացի, անհրաժեշտ է կազմել հողամասերի անվանացանկերն ըստ նպատակային նշանակության (առաջին հերթին՝ գյուղատնտեսական), ըստ հողատեսքերի ու գործառնական նշանակության, ինչպես նաև՝ ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների (պետություն, համայնք, մասնավոր հատված):

3. Ստացված անվանացանկերը կապակցել կադաստրային (հերթապահ) քարտեզների հետ՝ օգտվելով դրանց կադաստրային ծածկագրերից:

4. Անվանացանկերում և կադաստրային քարտեզներում առանձնացնել այն հողամասերը, որոնք տրամադրված են վարձակալության կամ կառուցապատման իրավունքով՝ նշելով պայմանագրերի գործողության ժամկետները:

5. Կադաստրային քարտեզներում և անվանացանկերում առանձնացնել այն հողերը, որոնք, համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածի, ենթակա չեն օտարման քաղաքացիներին ու իրավաբանական անձանց, ձեռնպահ մնալ այդ հողերը կառուցապատման իրավունքով տրամադրելուց:

6. Ձեռնպահ մնալ նաև բնակավայրերին, ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքների և ջրային օբյեկտների առափնյա շերտերի հողերն օտարելուց՝ մինչև քաղաքաշինական կամ հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի մշակումը:

7. Համայնքային սեփականության հողերն օտարելիս որպես առաջնահերթություն դիտարկել վարելահողերի և բազմամյա տնկարկների օտարումը՝ հնարավորինս զերծ մնալով դրանց հետագա մասնատումից, նույն մոտեցումը ցուցաբերել նաև ներկայումս համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության համարժեք հողամասերի օտարման դեպքում:

8. Ձեռնպահ մնալ մեծ մակերեսներ ունեցող համայնքային սեփականության խոտհարքներն ու արոտները օտարելուց և դրանք տրամադրել միայն վարձակալության իրավունքով:

9. Փոքր մակերես ունեցող, կտրտված կամ մասնատված խոտհարքները և արոտները օտարելիս ստեղծել նախադրյալներ, որպեսզի օտարումը նպաստի մասնատվածության նվազեցմանը:

10. Այն համայնքներում, որտեղ առկա է սեփականաշնորհված հողերի մասնատվածության հիմնախնդիրը, համայնքային սեփականության հողերից պահուստավորել որոշակի տարածքներ՝ հետագայում հողերի խոշորացման հնարավոր ծրագրեր իրականացնելիս որպես փոխանակման ֆոնդ օգտագործելու համար:

11. Գյուղատնտեսական նշանակության հողերը (այդ թվում՝ պետական սեփականության արոտները) վարձակալության տրամադրելիս մրցութային փաստաթղթերի փաթեթում ներառել այնպիսի նախապայմաններ, որոնք որոշակի երաշխիքներ կպարունակեն ներդրումներ կատարելու և հողօգտագործման արդյունավետությունն ապահովելու առումով: Մասնավորապես մրցույթում հաղթողին որոշելիս, գնառաջարկից բացի, անհրաժեշտ է հաշվի առնել նաև օրենսդրությամբ նախատեսված հետևյալ պահանջները՝

- մասնակցի ներկայացրած բիզնես ծրագիրը,
- հողամասերի օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորումները,
- հողերի բարելավման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների իրականացման, նոր հողերի յուրացման վերաբերյալ առաջարկությունները,
- արտադրության կազմակերպման, հողամասի ռացիոնալ օգտագործման երաշխիքները,
- տվյալ համայնքի, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, ազատ աշխատուժի օգտագործման հնարավորությունները,
- տվյալ համայնքի կամ մարզի մշտական բնակիչ լինելու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը և այլն:

Նշված պահանջներն ինչպես մրցույթի պայմաններում, այնպես էլ հողօգտագործման (վարձակալության) պայմանագրում որպես վարձակալի պարտավորություններ (նշելով դրանց իրականացման ժամկետները) ամրագրելու դեպքում համայնքը ձեռք է բերում գործուն լծակներ՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու պարագայում այն վաղակետ լուծելու համար:

12. Չոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման դեպքում հողերի օտարման պայմանները նախապես համաձայնեցնել ջրօգտագործման լիազոր մարմնի (ջրային տնտեսության պետական կոմիտե, ջրօգտագործողների ընկերություն) հետ՝ օտարվող հողերը ռոռգելի դարձնելու հնարավորությունները ճշտելու նկատառումով:

13. Հողօգտագործման ոլորտում մասնավոր հատվածին աջակցելու նպատակով կազմավորել չօգտագործվող հողերի բանկ և, սեփականատերերի հետ բանակցելով ու նրանց ցանկությունները կամ մտադրությունները պարզելով, մշակել չօգտագործվող հողերը տնտեսական շրջանառության մեջ ներառելու և օգտագործելի դարձնելու գործողությունների ծրագրեր (փոխանակություն, առքուվաճառք, վարձակալություն, նպատակային նշանակության փոփոխություն և այլն):

14. Այն համայնքներում (բնակավայրերում), որտեղ առկա են մեծ թվով չկառուցապատված տնամերձ հողամասեր, ձեռնպահ մնալ նույն նպատակով համայնքային սեփականության հողերի օտարումից:

3.5.3.5. Բնակչության խտությունների համադրում

Ներկայումս մարզի համայնքներում բնակչության առավելագույն խտությունը Ագարակում է՝ 1453 մարդ/քառ.կմ, նվազագույնը՝ Նոնաձորում՝ 1 մարդ/քառ.կմ, ինչը խոսում է տարբեր համայնքներում առկա բնակչության ակնհայտ անհամամասնության մասին (տե՛ս հավելված 7): Համայնքների խոշորացումից հետո առավելագույն խտությունը կլինի Կապանում՝ 243 մարդ/քառ.կմ, նվազագույնը՝ Ծավում՝ 3 մարդ/քառ.կմ: Չնայած մարդկային ու տարածքային ռեսուրսների դեռևս պահպանվող շոշափելի անհամաչափությանը՝ այդ տարբերությունը խոշորացման պարագայում մեղմվում է մոտ 18 անգամ (տե՛ս հավելված 15): Բհարկե, տվյալ պարագայում խոսքը համապատասխան տարածաշրջանների կամ բնակավայրերի խոցելիության նվազման մասին չէ, պարզապես տարբեր վարչատարածքային միավորների միջև համապատասխան ցուցանիշների՝ հնարավորինս համարժեք ծավալները ժամանակի ընթացքում կարող են դրական ազդեցություն ունենալ խոցելիության աստիճանի նվազեցման վրա:

3.6 Վարչատարածքային բարեփոխումների տնտեսական արդյունավետությունը

3.6.1. Համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկման մոտեցումները

Համայնքների խոշորացման արդյունքում ստացվում են որոշակի տնտեսական օգուտներ, ձևավորվում են ազատ միջոցներ, որոնք հնարավոր է ուղղել բնակչությանը նոր ծառայություններ մատուցելուն և մատուցվող ծառայությունների ծավալներն ընդլայնելուն, որակն ու մատչելիությունը բարձրացնելուն:

Համայնքների խոշորացման տնտեսական օգուտներն առաջին հերթին արտահայտվում են վարչական ծախսերի մեջ աշխատակազմի պահպանման ծախսերի կրճատմամբ, ինչը պայմանավորված է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի թվաքանակի կրճատմամբ: Ակնհայտ է, որ համայնքների խոշորացմամբ նոր ձևավորվող համայնքում համայնքի ղեկավարների կամ աշխատակազմի քարտուղարների թիվը չի կարող լինել մեկից ավելի: Ուստի անհրաժեշտություն է առաջանում վերանայելու նոր ձևավորվող համայնքի հաստիքացուցակն ու կրճատել «ավելորդ» հաստիքները:

Գործնականում բավականին դժվար է հաշվարկել, թե կոնկրետ քանի միավոր հաստիք կկրճատվի, և որքան գումար կազատվի համայնքների խոշորացման արդյունքում, քանի որ ներկայումս չկան համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի վերաբերյալ սահմանված նորմատիվներ: Իհարկե, կան պաշտոններ, որոնց մասին միանշանակ կարելի է ասել, որ նոր ձևավորված մեկ համայնքում դրանք չեն կարող լինել մի քանիսը: Սակայն, երբ խոսքը կոնկրետ մասնագետների մասին է, շատ դժվար է ենթադրել, թե նրանցից քանիսը կկրճատվեն: Ավելին՝ նոր ձևավորված համայնքում աշխատակազմի կրճատման շնորհիվ տնտեսված գումարների հաշվին նոր ծառայությունների մատուցումը կարող է ենթադրել նոր աշխատողների ներգրավում:

Ելնելով վերը շարադրվածից՝ Սյունիքի մարզում համայնքների խոշորացման արդյունքում վարչական ապարատի պահպանման ծախսերի կրճատման հաշվարկը կատարվում է միմիայն փորձագիտական գնահատմամբ՝ հենվելով ծախսերի *նվազագույն կրճատման* գաղափարի վրա: Այսինքն՝ հաշվարկը կատարելիս դիտարկվել են այն պաշտոնները, որոնք փորձագիտական կարծիքով միանշանակ ենթակա են կրճատման: Ստացվում է, որ հաշվարկների արդյունքում կպարզվի, որ տնտեսվելու է *առնվազն* մի իքս թվով գումար՝ իրականում գիտակցելով, որ այդ գումարը կարող է լինել ավելին:

Հաշվարկները կատարելիս դիտարկվում է նաև խոշորացման արդյունքում նոր պաշտոններ հիմնելու անհրաժեշտությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նոր ձևավորված համայնքի բնակավայրերում (բացի համայնքի կենտրոնի բնակավայրից) «վարչական ներկայացուցչի» պաշտոնին, ով կհանդիսանա նախկին համայնքի տարածքում նոր ստեղծված համայնքի ղեկավարի ներկայացուցիչը: Իհարկե, «վարչական ներկայացուցչի» գործառույթներն էականորեն կտարբերվեն համայնքի ղեկավարի գործառույթներից, և, բնականաբար, այդ հաստիքի պահպանման համար շատ մեծ ծախս չեն ենթադրի:

Փորձագիտական գնահատմամբ նոր ձևավորվող համայնքի վարչական ծախսերի նվազագույն չափով կրճատման գումարները հաշվարկելու նպատակով կիրառվել է 2 տարբեր մոտեցում՝ պայմանավորված այն հանգամանքով, թե նոր ձևավորվող համայնքի կազմի մեջ մտնող համայնքներն ինչ կարգավիճակ ունեն (քաղաքային կամ գյուղական): Ստորև ներկայացված է այդ մոտեցումների մանրամասն նկարագիրը:

3.6.1.1. Միայն գյուղական կարգավիճակ ունեցող համայնքների խոշորացում՝ առաջին մոտեցում

Այս մոտեցումը կիրառվել է այն դեպքերում, երբ նոր համայնքը ձևավորվել է միևնույն, այն է՝ գյուղական կարգավիճակ ունեցող համայնքների խոշորացման արդյունքում:

Համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար նախ դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները: Այնուհետև այդ հաստիքացուցակների հաստիքային միավորների (դիտարկվել են միմիայն վարչական բնույթի հաստիքները, ծառայությունների մատուցում ենթադրող հաստիքները, օրինակ, ակումբավարինը, չեն դիտարկվել) մեխանիկական գումարման միջոցով հաշվարկվել է, թե որքան միավոր հաստիք կունենար նոր ձևավորվող համայնքը, եթե չկատարվեին կրճատումներ, և որքան գումար կպահանջվեր նրանց պահպանման համար:

Փորձագիտական գնահատմամբ առաջարկվել է խոշորացվող համայնքի նոր հաստիքացուցակը՝ ճշգրտելով մեխանիկական գումարմամբ ձևավորված հաստիքացուցակը հետևյալ կերպ.

- Մինչև 1 միավոր կրճատվել են բոլոր այն հաստիքները, որոնք ենթադրում են վարչական բնույթի աշխատանք, օրինակ՝ համայնքի ղեկավարի հաստիքը:

- Չի գրոյացվել ոչ մի հաստիքային միավոր:

- Քանի որ հստակ հայտնի չեն մասնագետների գործառնությունները, ապա շատ դժվար է ասել, թե որ մասնագետները կկրճատվեն, և քանի միավոր հաստիքի անհրաժեշտություն կառաջանա: Այդ պատճառով յուրաքանչյուր համայնքում, ելնելով փորձագիտական դատողություններից, սահմանվել են մասնագետների տարբեր թվով հաստիքներ:

- Ենթադրվել է, որ խոշորացվող բոլոր նախկին համայնքների տարածքում կձևավորվի նոր՝ «վարչական ներկայացուցչի» պաշտոն (բացի համայնքի կենտրոնի բնակավայրից):

Ինչ վերաբերում է նոր ձևավորված համայնքի աշխատակիցների աշխատավարձերին, ապա դրանք սահմանվել են՝ հիմք ընդունելով գործող համայնքներում համապատասխան հաստիքային միավորի դրույքաչափերից ամենաբարձրը՝ ավելացնելով 20%: Այս տրամաբանությունն առաջ է եկել այն գաղափարից, որ նոր ձևավորված համայնքն ավելի մեծ է, քան նախկինները, և հետևաբար, աշխատանքն ավելի ծանրաբեռնված է:

Հաշվարկների կատարման ժամանակ երբեմն անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն շեղվել նշված մոտեցումներից՝ ելնելով նպատակահարմարությունից: Օրինակ՝ Դաստակերտ համայնքում համայնքի ղեկավարի տեղակալի աշխատավարձը հավասարեցվել է աշխատակազմի քարտուղարի աշխատավարձին՝ 54.0 հազ. դրամից հասնելով 100.0 հազ. դրամի և այլն: Այդ ճշգրտումները, եթե այդպիսիք կան, ներկայացված են կոնկրետ համայնքի խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկների մեջ:

Հաշվարկները կատարելիս լրիվ անփոփոխ են մնացել անասնաբույժների և՛ հաստիքների թիվը, և՛ աշխատավարձը, քանի որ անասնաբույժի ծառայությունը համարվում է պետության կողմից պատվիրակված լիազորություն և ամբողջությամբ ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հաշվարկների կատարման ժամանակ ենթադրվել է, որ խոշորացվող համայնքում նոր ձևավորվող «վարչական ներկայացուցչի» պաշտոնը կլինի վճարովի, և վճարի չափը կարող է տատանվել՝ կախված նախկին համայնքի բնակչության թվից: Հաշվարկների կատարման նպատակով ընտրվել է միջինացված թիվ, այն է՝ 50.0 հազ. դրամ:

3.6.1.2. Տարբեր կարգավիճակներ (գյուղական և քաղաքային) ունեցող համայնքների խոշորացում՝ երկրորդ մոտեցում

Այս մոտեցումը կիրառվել է այն դեպքերում, երբ նոր համայնքը ձևավորվել է տարբեր, այն է՝ թե՛ գյուղական և թե՛ քաղաքային կարգավիճակներ ունեցող համայնքների խոշորացման արդյունքում:

Այսպես, ենթադրվել է, որ քաղաքային համայնքի գործող վարչական ապարատի պահպանման ծախսերի հաշվին հնարավոր կլինի սպասարկել խոշորացված համայնքն ամբողջությամբ: Ասվածը նշանակում է, որ նախ խոշորացման արդյունքում անհրաժեշտություն չի առաջանա ձևավորել նոր հաստիքներ (բացառությամբ վարչական ներկայացուցչի պաշտոնի), և կտնտեսվեն խոշորացվող գյուղական համայնքների աշխատակազմերին աշխատավարձի

վճարման և սոցալ հատկացումների գծով ծախսերն ամբողջությամբ: Փաստորեն այս դեպքում նոր ձևավորված համայնքի առաջարկվող հաստիքացուցակն ըստ էության իրենից ներկայացնում է խոշորացվող համայնքների կազմի մեջ մտնող քաղաքային համայնքի հաստիքացուցակը: Բացի այդ, կտնտեսվեն նաև խոշորացվող գյուղական համայնքների մյուս վարչական ծախսերը, ինչպիսիք են, օրինակ, վարչական շենքի պահպանման ծախսերը և այլն: Այսինքն՝ նշյալ համայնքների խոշորացման արդյունքում կտնտեսվեն քաղաքային համայնքին միացվող բոլոր գյուղական համայնքների վարչական ծախսերն ամբողջությամբ:

Այս մոտեցման դեպքում նույնպես խոշորացվող համայնքում նոր ձևավորվող «վարչական ներկայացուցչի» պաշտոնի վճարի չափը սահմանվել է միջինացված թիվ, այն է՝ 50.0 հազ. դրամ:

Նկարագրված մոտեցմամբ համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը հաշվարկվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$ՆՏԳ = ՎԾ - ՎՆԾ,$$

որտեղ՝

ՆՏԳ-ն նվազագույն տնտեսվող գումարն է,

ՎԾ-ն՝ տվյալ քաղաքային համայնքին միացվող բոլոր գյուղական համայնքների բյուջեների վարչական ծախսերի հանրագումարը,

ՎՆԾ-ն՝ խոշորացվող նախկին գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցալ. հատկացումներ) ծախսերը:

Խոշորացման շնորհիվ գումարների տնտեսման էֆեկտն ավելի ակնառու դարձնելու նպատակով այդ գումարները համադրվել են խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ:

Համայնքներում ծառայությունների մատուցման մակարդակի մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել տարբեր ցուցանիշների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, բնակչության մեկ շնչին ընկնող վարչական (աշխատակազմի պահպանման) ծախսերի և համայնքի բյուջեի ծախսերի կազմում վարչական (աշխատակազմի պահպանման) ծախսերի տեսակարար կշիռն արտահայտող

ցուցանիշները: Տրամաբանությունը հուշում է, որ նույն եկամուտների պայմաններում որքան ցածր են այդ ցուցանիշները, այնքան շատ գումարներ են ազատվում, որոնք կարող են ուղղվել համայնքային ծառայությունների մատուցմանը կամ կապիտալ բյուջե: Ելնելով ծախսերի նվազագույն կրճատման գնահատականից՝ հաշվարկվել են, թե այս երկու ցուցանիշները ինչպիսի փոփոխություն կկրեն Սյունիքի մարզում համայնքների խոշորացման արդյունքում:

Հարկ է նշել, որ համայնքների խոշորացման շնորհիվ միայն աշխատավարձի գծով ծախսը չէ, որ կարող է տնտեսվել: Միանշանակ կարելի է պնդել, որ զգալի տնտեսումներ կլինեն նաև նախկին համայնքների վարչական շենքերի պահպանման ծախսերի գծով, քանի որ խոշորացման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա պահպանելու ընդամենը մեկ վարչական շենք: Բացի այդ, հնարավոր է, որ տնտեսումներ լինեն նաև գործող հիմնարկների պահպանման գծով: Համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունը հաշվարկելիս դիտարկվել են, թե նոր ձևավորվող համայնքում ինչ գործող հիմնարկներ կան, տրվել են փորձագիտական գնահատականներ, թե որ հիմնարկների թիվն է հնարավոր կրճատել՝ դրանով կատարելով որոշ տնտեսումներ: Մասնավորապես հաշվարկներ են կատարվել, թե ինչ տնտեսումներ կլինեն գրադարանների և մանկապարտեզների կրճատման հաշվին:

Գրադարանների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները հաշվելու համար ենթադրվել է, որ բոլոր այն գյուղական բնակավայրերում, որտեղ կան գրադարաններ, գրքային ֆոնդերը կհանձնվեն գյուղերի դպրոցներին, հետևաբար, գրադարանների ծախսերը կտնտեսվեն: Քաղաքային բնակավայրերի (խոշորացվող համայնքի կենտրոնի) գրադարանները նույնությամբ կշարունակեն գործել, հետևաբար, այս դեպքում գրադարանների պահպանման ծախսերի տնտեսում չի ակնկալվում:

Գրադարանների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները հաշվարկելու համար դարձյալ կիրառվել է ծախսերի նվազագույն կրճատման գաղափարը: Այսինքն՝ ենթադրվել է, որ տնտեսվող գումարը կլինի **առնվազն**

կրճատվող գրադարանների աշխատողների աշխատավարձի գումարի չափ, ընդ որում կարող են լինել նաև գրադարանների այլ ծախսեր, որոնք նույնպես կկրճատվեն:

Մանկապարտեզների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները հաշվարկելու համար դիտարկվել են խոշորացված համայնքում առկա գործող մանկապարտեզների թիվն ու խոշորացված համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի տարածքային բաշխվածությունը: Փորձագիտական գնահատմամբ ենթադրվել է, որ կարող են կրճատվել այն բնակավայրերի մանկապարտեզները, որոնք հեռու չեն հարևանությամբ գործող մանկապարտեզ ունեցող բնակավայրերից: Այս դեպքում ենթադրվել է, որ մանկապարտեզների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները կլինեն դրանց պահպանման ծախսերն ամբողջությամբ:

Հարկ է նշել, որ համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունն արտահայտվում է ոչ միայն համայնքային մակարդակում, այլ նաև պետական մակարդակում: Քանի որ խոշորացվող համայնքներում կան, օրինակ, դպրոցներ, որոնց պահպանման ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից: Մարզի գրեթե բոլոր համայնքներում կան հանրակրթական դպրոցներ: Սակայն նրանց մեծ մասում մատուցվող ծառայությունները գտնվում են ցածր մակարդակի վրա (չկան շենքային նորմալ պայմաններ, աշակերտների թիվն է խիստ սահմանափակ, չկա անհրաժեշտ մանկավարժական անձնակազմ պահելու հնարավորություն, ինչի հետևանքով նույն մանկավարժը կարող է դասավանդել տարբեր առարկաներ և այլն): Համայնքները խոշորացնելով հնարավոր կլինի համայնքի բնակավայրերում կրճատել դպրոցների թիվը և ձեռք բերել, օրինակ, տրանսպորտային միջոց, որը հասանելի կդարձնի տվյալ ծառայությունը այն համայնքների բնակիչների համար, որտեղ կրճատվել են դպրոցները, իսկ կրճատման արդյունքում տնտեսված գումարներն ուղղել գործող դպրոցի շենքի վերանորոգմանը, բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի ներգրավմանը, գրքային ֆոնդի ստեղծմանը և այլն: Այս ամենը հնարավորություն կտա ապահովելու որակյալ կրթություն: Փաստորեն համայնքների խոշորացմամբ տնտեսական օգուտներ ստանալը կարևոր է ոչ միայն

նոր ծառայություններ մատուցելու, այլև մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու տեսանկյունից՝ թե՛ համայնքային, թե՛ պետական մակարդակներում:

Պետական մակարդակում համայնքների խոշորացումից տնտեսական արդյունքներ կարող են ստացվել նաև պատվիրակված լիազորությունների գծով: Օրինակ՝ գյուղական համայնքներից շատերում կան անասնաբույժի հաստիքներ, որոնց թիվը, և, հետևաբար, այդ հաստիքների պահպանման ծախսերը կարող են կրճատվել համայնքների խոշորացման հաշվին:

3.6.2. Մյուսիքի մարզում համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունը

Մառնակունք համայնք

Մառնակունք համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Գորայք, Ծղուկ, Մառնակունք, Սպանդարյան (ընդամենը՝ 4 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 16.1): Այսպիսով, մինչև խոշորացումը Մառնակունք խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 24.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 22117.8 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 18192.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 3925.8 հազ. դրամ (տե՛ս հավելված 16.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 12 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 12378.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 10296.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 2082.0 հազ. դրամ (տե՛ս հավելված 16.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 2 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.8 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 9739.8** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **44.0** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 7896.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 43.4 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 1843.8 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 47.0 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն մի փոքր է զիջում Սառնակունք կամ Ծղուկ համայնքների բյուջեների ծախսերին, իսկ Սպանդարյան համայնքի բյուջեի ծախսերը նույնիսկ գերազանցում է (տե՛ս հավելված 16.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 11760.3 դրամից մինչև 19373.1 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 16287.3 դրամ (տե՛ս հավելված 16.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**9739.8** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **11568.4** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 1.7 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 68.2 %-ից մինչև 89.3 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 16.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**9739.8** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **58.5** %: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.2-ից մինչև 1.5 անգամ:

Մառնակունք խոշորացվող համայնքում գործող մանկապարտեզներ չկան, ուստի մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Մառնակունք խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 2.8 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գադարանավարի հաստիքներ են 1-ական միավոր Գորայք և Սպանդարյան, իսկ 0.8 միավոր Ծղուկ նախկին համայնքներում: Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 1303.2 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1008.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 295.2 հազ. դրամ: Քանի որ Մառնակունք խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1303.2** հազ. դրամ:

Անգեղակոթ համայնք

Անգեղակոթ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Անգեղակոթ, Բալաք, Մուծք և Շաղատ (ընդամենը՝ 4 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 17.1): Այսպիսով, մինչև խոշորացումը Անգեղակոթ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 31.75 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 34080.1 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 28427.6 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 5652.5 հազ. դրամ (տե՛ս հավելված 17.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 18.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 23777.3 հազ. դրամ, որից

աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 20211.6 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 3565.7 հազ. դրամ (տե՛ս հավելված 17.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.7 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.4 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 10302.8** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **30.2** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 8216.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 28.9 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 2086.8 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 36.9 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ ավելի է, քան Բալաք և Մուծք համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած (տե՛ս հավելված 17.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 2102.0 դրամից մինչև 11941.8 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 6465.6 դրամ (տե՛ս հավելված 17.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**10302.8** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **5028.6** դրամ: Այս ցուցանիշը փոքր է միջինից 1.3 անգամ, իսկ առավելագույն ցուցանիշից՝ 2.4 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 73.5 %-ից մինչև 98.0 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 17.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**10302.8** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **60.6** %: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.2-ից մինչև 1.6 անգամ:

Անզեղակոթ խոշորացվող համայնքում կան 2 գործող մանկապարտեզներ՝ համայնքի կենտրոն Անզեղակոթում և Շաղատում: Համայնքի կազմի մեջ մտնող

բնակավայրերի տարածքային տեղաբաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքում գործող մանկապարտեզների կրճատում և դրանից բխող տնտեսական օգուտներ չարժե ակնկալել:

Անգեղակոթ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 2.0 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գադարանավարի հաստիքներ են 0.5-ական միավոր Բալաք և Մուծք, իսկ 1 միավոր՝ Շաղատ նախկին համայնքներում: Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 1128.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 840.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 288.0 հազ. դրամ: Քանի որ Անգեղակոթ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1128.0** հազ. դրամ:

Միսիան համայնք

Միսիան համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Միսիան, Աղիտու, Իշխանասար, Նորավան, Շաքի, Տոլորս և Ույծ (ընդամենը՝ 7 համայնք):*

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է երկրորդ մոտեցումը:

Խոշորացվող համայնքներում 2010 թ. կլինեն 86.4 միավոր հաստիք, որից՝

- Միսիան համայնքում՝ 44 միավոր,
- Աղիտու համայնքում՝ 5.8 միավոր,
- Իշխանասար համայնքում՝ 5 միավոր,
- Նորավան համայնքում՝ 6.6 միավոր,
- Շաքի համայնքում՝ 12 միավոր,
- Տոլորս համայնքում՝ 7 միավոր,
- Ույծ համայնքում՝ 6 միավոր:

Փաստորեն, երկրորդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվի 36.4 միավոր հաստիք, իսկ հաստիքների ընդհանուր թիվը կդառնա 50 միավոր, որոնցից 44-ը Միսիան քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, իսկ 6 հաստիք նախատեսված է խոշորացվող նախկին համայնքում նոր ձևավորվող վարչական ներկայացուցիչների համար:

Նկարագրված մոտեցմամբ հաշվարկները կատարելու դեպքում համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը կկազմի՝

ՆՏԳ = ՎԾ – ՎՆԾ = 56856.5 հազ. դրամ – 4428.0 հազ. դրամ = 52428.5 հազ. դրամ,

որտեղ՝

ՎԾ-ն Միսիան քաղաքային համայնքին միացվող Աղիտու, Իշխանասար, Նորավան, Շաքի, Տոլորս և Ույծ գյուղական համայնքների 2010 թ. բյուջեների վարչական ծախսերն է,

ՎՆԾ-ն՝ Աղիտու, Իշխանասար, Նորավան, Շաքի, Տոլորս և Ույծ գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցալ. հատկացումներ) ծախսերը:

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն ավելի է, քան Աղիտու, Իշխանասար, Նորավան, Ույծ և Տոլորս գյուղական համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած (տե՛ս հավելված 18.1):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 4610.2 դրամից մինչև 25820.3 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 6543.1 դրամ (տե՛ս հավելված 18.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (52428.5 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը 3983.2 դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշների միջինից 1.6 անգամ, նվազագույն ցուցանիշից՝ 1.2 անգամ, իսկ առավելագույնից՝ 6.5 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 29.1 %-ից մինչև 97.8 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 18.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (52428.5 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **24.3 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների նվազագույն ցուցանիշից 1.2 անգամ, իսկ առավելագույնից՝ 4.0 անգամ:

Միսիան խոշորացվող համայնքում կան 6 գործող մանկապարտեզներ, որոնցից 4-ը՝ Միսիանում և 1-ական՝ Շաքի և Ույծ նախկին համայնքներում: Համայնքի բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքի կենտրոնը, որտեղ գործում են 4 մանկապարտեզներ, գտնվում է հարաբերականորեն կենտրոնական դիրքում: Ուստի կարելի է ասել, որ բոլոր բնակավայրերի բնակիչներն էլ կկարողանան օգտվել Միսիանի մանկապարտեզներից: Հետևաբար, խոշորացման արդյունքում հնարավոր է, որ կրճատվեն Շաքիի և Ույծի մանկապարտեզները և դրանց պահպանման գծով ծախսերը՝ համապատասխանաբար՝ 3500 հազ. դրամ և 2863.0 հազ. դրամ, կտնտեսվեն: Ընդհանուր առմամբ, ենթադրվում է, որ համայնքների խոշորացման արդյունքում Միսիան համայնքում մանկապարտեզների գծով տնտեսվող գումարը կկազմի 6363.0 հազ. դրամ:

Միսիան խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին գյուղական համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 5.5 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի (Իշխանասար համայնքում ակումբ-գրադարանի վարիչ) հաստիքներ են՝

- Աղիտու՝ 1 միավոր
- Իշխանասար՝ 1 միավոր
- Նորավան՝ 0.8 միավոր
- Շաքի՝ 1 միավոր
- Տոլորս՝ 0.7 միավոր
- Ույծ՝ 1 միավոր:

Միսիան խոշորացվող համայնքում գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի հենց այս 5.5 միավոր հաստիքի պահպանման գծով ծախսերը՝ **3013.5** հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 2370.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 643.5 հազ. դրամ:

Բոնակոթ համայնք

Բոնակոթ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Աշոտավան, Արևիս, Բոնակոթ, Թանահատ, Թասիկ, Հացավան և Մալվարդ (ընդամենը՝ 7 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 19.1): Այսպիսով, մինչև խոշորացումը Բոնակոթ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 48.8 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 39599.9 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 32401.2 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 7198.7 հազ. դրամ (տե՛ս հավելված 19.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 24 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 23673.5 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 19759.2 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 3914.3 հազ. դրամ (տե՛ս հավելված 19.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 2 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.7 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 15926.4** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **40.2** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 12642.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 39.0 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 3284.4 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 45.6 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն քիչ է զիջում Արևիս, Թանահատ և Թասիկ համայնքների բյուջեների ծախսերին միասին վերցրած կամ նույնիսկ ավելի է, քան Հացավան և Սալվարդ համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած և այլն (տե՛ս հավելված 19.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 12240.2 դրամից մինչև 44634.9 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 15293.6 դրամ (տե՛ս հավելված 19.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**15926.4** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **11451.3** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.1-ից մինչև 3.9 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 71.1 %-ից մինչև 94.3 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 19.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**15926.4** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **60.4 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.2-ից մինչև 1.6 անգամ:

Բռնակոթ խոշորացվող համայնքում կան 2 գործող մանկապարտեզներ՝ Աշոտավան և Բռնակոթ նախկին համայնքներում: Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների թվի կրճատում և դրանից բխող տնտեսական օգուտներ չարժե ակնկալել:

Բռնակոթ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 3.3 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են՝

- Աշոտավան՝ 0.75 միավոր
- Բռնակոթ՝ 0.8 միավոր

- Թասիկ՝ 0.75 միավոր
- Սալվարդ՝ 1 միավոր:

Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 1585.8 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1212.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 373.8 հազ. դրամ: Քանի որ Բոնակոթ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1585.8** հազ. դրամ:

Դաստակերտ համայնք

Դաստակերտ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Դաստակերտ, Ախլաթյան, Բնունիս, Նժդեհ և Տորունիք (ընդամենը՝ 5 համայնք)*:

Թեպետ նշյալ խոշորացվող համայնքների կազմում կա քաղաքային համայնք, սակայն համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, քանի որ Դաստակերտ քաղաքային համայնքի աշխատակազմը մեծ չէ, և դժվար թե այդ աշխատակազմով հնարավոր կլինի սպասարկել խոշորացված համայնքն ամբողջությամբ: Եվ այսպես, համաձայն առաջին մոտեցման՝ դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 20.1): Նշենք, որ մինչև խոշորացումը Դաստակերտ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. կլիներ 25.35 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվեր 20542.4 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 16737.6 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 3804.8 հազ. դրամ (տե՛ս հավելված 20.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նորաստեղծ համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 14 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 12909.5 հազ. դրամ, որից

աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 10683.6 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 2225.9 հազ. դրամ (տե՛ս հավելված 20.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.8 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.6 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 7632.9** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **37.2** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 6054.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 36.2 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 1578.9 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 41.5 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն շատ քիչ է զիջում Դաստակերտ քաղաքային համայնքի բյուջետային ծախսերին (տե՛ս հավելված 20.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 19541.9 դրամից մինչև 36005.4 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 23792.6 դրամ (տե՛ս հավելված 20.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**7632.9** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **18083.6** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշների միջինից 1.3 անգամ, իսկ առավելագույն ցուցանիշից՝ 2.0 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 75.5 %-ից մինչև 97.7 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 20.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**7632.9** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **63.8** %: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 1.5 անգամ:

Դաստակերտ խոշորացվող համայնքում գործող մանկապարտեզներ չկան, ուստի մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Դաստակերտ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 3.05 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են հետևյալ խոշորացվող համայնքներում`

- Դաստակերտ` 1 միավոր
- Ախլաթյան` 1 միավոր
- Բնունիս` 0.75 միավոր
- Տորունիք` 0.3 միավոր:

Քանի որ Դաստակերտ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներից մեկը` Դաստակերտը, քաղաքային է, ապա խոշորացման արդյունքում գրադարանների գծով տնտեսումը կլինի Ախլաթյան, Բնունիս և Տորունիք նախկին գյուղական համայնքների գրադարանավարի հաստիքների կրճատումից: Տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1147.0** հազ. դրամ, որից աշխատավարձի գծով` 786.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով` 361.0 հազ. դրամ:

Դարբաս համայնք

Դարբաս համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով` *Գետաթաղ, Դարբաս, Լծեն, Լոր, Շենաթաղ, Որոտան (Մխսիանի շրջ.)* և *Վաղատնի (ընդամենը` 7 համայնք):*

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 21.1): Այսպիսով, մինչև խոշորացումը Դարբաս խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 44.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 42417.5 հազ. դրամ,

որից աշխատավարձի գծով՝ 35230.8 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 7186.7 հազ. դրամ (տե՛ս հավելված 21.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 25 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 23251.1 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 19726.8 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 3524.3 հազ. դրամ (տե՛ս հավելված 21.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.8 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.5 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 14738.4** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **34.7** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 11904.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 33.8 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 2834.4 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 39.4 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ ավելի է, քան Վաղատնի համայնքի բյուջեի ծախսերը կամ Լծեն և Լոր համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած և այլն (տե՛ս հավելված 21.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 11319.4 դրամից մինչև 29693.8 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 16287.5 դրամ (տե՛ս հավելված 21.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**14738.4** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **12086.9** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 2.5 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 56.6 %-ից մինչև 100.0 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 21.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**14738.4** հազ. դրամ) նոր ձևավորված

համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **56.7 %**: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 1.8 անգամ:

Դարբաս խոշորացվող համայնքում կա ընդամենը 1 գործող մանկապարտեզ համայնքի կենտրոնում, ուստի մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Դարբաս խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 7.2 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են՝

- Գետաթաղ՝ 0.7 միավոր
- Դարբաս՝ 2 միավոր
- Լծեն՝ 0.5 միավոր
- Լոր՝ 1 միավոր
- Շենաթաղ՝ 1 միավոր
- Որոտան՝ 1 միավոր
- Վաղատնի՝ 1 միավոր:

Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 3857.4 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 3012.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 845.4 հազ. դրամ: Քանի որ Դարբաս խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **3857.4** հազ. դրամ:

Շինուհայր համայնք

Շինուհայր համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Խոտ, Հալիձոր, Հարժիս և Շինուհայր (ընդամենը՝ 4 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները

(տե՛ս հավելված 22.1): Այսպիսով, մինչև խոշորացումը Շինուհայր խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 31.8 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 33780.9 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 28226.4 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 5554.5 հազ. դրամ (տե՛ս հավելված 22.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 18 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 18137.4 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 15204.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 2933.4 հազ. դրամ (տե՛ս հավելված 22.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.8 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.9 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 15643.5** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **46.3** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը՝ 13022.4 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 46.1 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 2621.1 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 47.2 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն քիչ է զիջում Հարժիս նախկին համայնքի բյուջեի ծախսերին (տե՛ս հավելված 22.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 11617.9 դրամից մինչև 27146.9 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 15982.1 դրամ (տե՛ս հավելված 22.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**15643.5** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **13220.7** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 2.1 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 68.1 %-ից մինչև 91.4 %-ի

սահմաններում (տե՛ս հավելված 22.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**15643.5** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **63.1 %**: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 1.4 անգամ:

Շինուհայր խոշորացվող համայնքում կան 3 գործող մանկապարտեզներ՝ 1-ական Խոտ, Հարժիս և Շինուհայր բնակավայրերում: Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խոտ բնակավայրը մոտիկ է գտնվում համայնքի կենտրոնին և հնարավոր է ակնկալել, որ կկրճատվի Խոտի մանկապարտեզը: Այսպիսով, համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատումից կարելի է ակնկալել տնտեսական օգուտներ դրանց պահպանման ծախսերի չափով՝ **2700.0** հազ. դրամ:

Շինուհայր խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 2.8 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են՝

- Խոտ՝ 1 միավոր
- Հալիձոր՝ 0.8 միավոր
- Հարժիս՝ 1 միավոր:

Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 1662.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1320.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 342.0 հազ. դրամ: Քանի որ Շինուհայր խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1662.0** հազ. դրամ:

Տաթև համայնք

Տաթև համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Աղվանի, Սվարանց, Տաթև, Տանձավեր, Տանձատալի, Քաշունի (ընդամենը՝ 6 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 23.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Տաթև խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 32.3 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 23017.5 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 18648.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 4369.5 հազ. դրամ (տե՛ս հավելված 23.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 16 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 13122.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 10776.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 2346.0 հազ. դրամ (տե՛ս հավելված 23.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 2.0 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.8 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 9895.5** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **43.0** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 7872.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 42.2 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 2023.5 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 46.3 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն ավելի է, քան Ադվանի և Սվարանց կամ Տանձավեր և Տանձատափի համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած (տե՛ս հավելված 23.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 15390.2 դրամից մինչև 127281.9 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 21053.3 դրամ (տե՛ս հավելված 23.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**9895.5** հազ. դրամ) նոր

ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **14825.8** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 8.6 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 72.0 %-ից մինչև 96.6 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 23.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**9895.5** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **56.9 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.3-ից մինչև 1.7 անգամ:

Տաթև խոշորացվող համայնքում գործող մանկապարտեզներ չկան: Հետևաբար, խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատում և դրանցից բխող տնտեսական օգուտներ չեն ակնկալվում:

Տաթև խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 5.55 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են՝

- Աղվանի՝ 1 միավոր
- Սվարանց՝ 1 միավոր
- Տաթև՝ 0.75 միավոր
- Տանձավեր՝ 1 միավոր
- Տանձատափ՝ 0.8 միավոր
- Քաշունի՝ 1 միավոր:

Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 2447.7 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1878.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 569.7 հազ. դրամ: Քանի որ Տաթև խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **2447.7** հազ. դրամ:

Գորիս համայնք

Գորիս համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ Գորիս, Ակներ, Հարթաշեն, Որոտան (Գորիսի շրջ.), Վերիշեն և Քարահունջ (*ընդամենը՝ 6 համայնք*):

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է երկրորդ մոտեցումը:

Խոշորացվող համայնքներում 2010 թ. կլինեն 99.9 միավոր հաստիք, որից՝

- Գորիս համայնքում՝ 40 միավոր
- Ակներ համայնքում՝ 18 միավոր
- Հարթաշեն համայնքում՝ 9.4 միավոր
- Որոտան համայնքում՝ 4 միավոր
- Վերիշեն համայնքում՝ 17 միավոր
- Քարահունջ համայնքում՝ 11.5 միավոր:

Փաստորեն, վերևում նկարագրված երկրորդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվի 54.9 միավոր հաստիք և առկա կլինի ընդհանուր թվով 45 միավոր հաստիք, որոնցից 40-ը Գորիս քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, իսկ 5-ը՝ խոշորացվող նախկին համայնքում նոր ձևավորվող վարչական ներկայացուցչի հաստիքը:

Նկարագրված մոտեցմամբ հաշվարկները կատարելու դեպքում համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը կկազմի՝

ՆՏԳ = ՎԾ – ՎՆԾ = 92509.0 հազ. դրամ – 3690.0 հազ. դրամ = 88819.0 հազ.

Դրամ,

որտեղ՝

ՎԾ-ն Գորիս քաղաքային համայնքին միացվող Ակներ, Հարթաշեն, Որոտան, Վերիշեն և Քարահունջ գյուղական համայնքների 2010 թ. բյուջեների վարչական ծախսերն է,

ՎՆԾ-ն՝ Ակներ, Հարթաշեն, Որոտան, Վերիշեն և Քարահունջ գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցալ. հատկացումներ) ծախսերը:

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն շատ քիչ է զիջում Գորիս քաղաքային համայնքին միացվող բոլոր գյուղական համայնքների բյուջեների ծախսերին միասին վերցրած (տե՛ս հավելված 24.1):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 2626.0 դրամից մինչև 14251.4 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 4259.0 դրամ (տե՛ս հավելված 24.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**88819.0** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) **1219.3** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշների միջինից 3.5 անգամ, նվազագույն ցուցանիշից՝ 2.2 անգամ, իսկ առավելագույնից՝ 11.7 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 17.7 %-ից մինչև 97.4 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 24.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**88819.0** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) **8.2** %: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների նվազագույն ցուցանիշից 2.2 անգամ, իսկ առավելագույնից՝ 11.9 անգամ:

Գորիս խոշորացվող համայնքում կան 9 գործող մանկապարտեզներ, որոնցից 7-ը Գորիսում և 1-ական Վերիշեն և Քարահունջ նախկին համայնքներում: Համայնքի բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վերիշենը այնքան էլ հեռու չէ Գորիսից, և, կարելի է ենթադրել, որ Վերիշենի և Ակների բնակիչները կարող են օգտվել Գորիսի մանկապարտեզներից: Սակայն, մյուս կողմից, Հարթաշենն ու Որոտանը հեռու են Գորիսից և դժվար է ակնկալել, որ նշյալ երկու բնակավայրերի բնակիչները հնարավորություն կունենան օգտվելու Գորիսի մանկապարտեզներից: Ասվածը նշանակում է, որ եթե

անգամ փակվի Վերիշենի մանկապարտեզը, ապա միննույն է, հավանական է, որ Հարթաշենում կամ Որոտանում նոր մանկապարտեզներ բացելու անհրաժեշտություն առաջանա: Ասվածը նշանակում է, որ խոշորացվող Գորիս համայնքում մանկապարտեզների պահպանման գծով ծախսերի տնտեսում չարժե ակնկալել:

Գորիս խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին գյուղական համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 2.8 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են հետևյալ խոշորացվող գյուղական համայնքներում`

- Ակներ` 1 միավոր
- Հարթաշեն` 0.8 միավոր
- Քարահունջ` 1 միավոր:

Գորիս խոշորացվող համայնքում գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի հենց այս 2.8 միավոր հաստիքի պահպանման գծով ծախսերը` 1386.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով` 1080.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով` 306.0 հազ. դրամ:

Խնածախ համայնք

Խնածախ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով` *Խնածախ, Խոզնավար և Վաղատուր (ընդամենը` 3 համայնք):*

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 25.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Խնածախ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 19.1 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 18358.7 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով` 15163.2 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով` 3195.5 հազ. դրամ (տե՛ս հավելված 25.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նորաստեղծ համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 12.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 13878.5 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 11647.2 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 2231.3 հազ. դրամ (տե՛ս հավելված 25.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.5 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.3 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 4719.5** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **25.7** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 3516.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 23.2 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 1203.5 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 37.7 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն շատ չի զիջում Խոզնավար համայնքի բյուջեի ծախսերին (տե՛ս հավելված 25.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 11064.9 դրամից մինչև 15954.6 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 12790.0 դրամ (տե՛ս հավելված 25.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**4719.5** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **10377.2** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.1-ից մինչև 1.5 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 65.9 %-ից մինչև 90.7 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 25.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**4719.5** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **62.1** %: Նման ցուցանիշ չի

գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.1-ից մինչև 1.5 անգամ:

Խնածախ խոշորացվող համայնքում կա 1 գործող մանկապարտեզ համայնքի կենտրոնում, ուստի մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Խնածախ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 2.3 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիք են՝

- Խնածախ՝ 1 միավոր
- Խոզնավար՝ 0.5 միավոր
- Վաղատուր՝ 0.8 միավոր:

Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 1257.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 960.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 297.0 հազ. դրամ: Քանի որ Խնածախ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1257.0** հազ. դրամ:

Տեղ համայնք

Տեղ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Արավուս, Խնձորեսկ, Կոռնիձոր, Ներքին Խնձորեսկ, Տեղ և Քարաշեն (ընդամենը՝ 6 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 26.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Տեղ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 47.6 միավոր հաստիք, որոնց

պահպանման համար պահանջվել է 49047.9 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 41094.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 7953.9 հազ. դրամ (տե՛ս հավելված 26.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նորաստեղծ համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 26.8 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 26512.2 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 22435.2 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 4077.0 հազ. դրամ (տե՛ս հավելված 26.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.8 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.9 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 22535.7** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **45.9** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 18658.8 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 45.4 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 3876.9 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 48.7 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն մի փոքր է զիջում Արավուս, Ներքին Խնձորեսկ և Քարաշեն համայնքների բյուջեների ծախսերին միասին վերցրած կամ ավելի է, քան Կոռնիձոր համայնքի բյուջեի ծախսերը և այլն (տե՛ս հավելված 26.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 6781.2 դրամից մինչև 23170.3 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 8611.6 դրամ (տե՛ս հավելված 26.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**22535.7** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **5522.0** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի

գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.2-ից մինչև 4.2 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 48.1 %-ից մինչև 83.9 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 26.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**22535.7** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **36.8 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.3-ից մինչև 2.3 անգամ:

Տեղ խոշորացվող համայնքում կան 4 գործող մանկապարտեզներ՝ 2-ը համայնքի կենտրոնում և 1-ական՝ Խնձորեսկ և Կոռնիձոր բնակավայրերում: Խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոռնիձոր բնակավայրը հեռու չէ համայնքի կենտրոնից, և, ենթադրվում է, որ հնարավոր կլինի փակել Կոռնիձորի մանկապարտեզը, իսկ Կոռնիձորի բնակիչները կկարողանան օգտվել համայնքի կենտրոնի մանկապարտեզներից: Այս դեպքում մանկապարտեզի կրճատումից առաջացող հնարավոր տնտեսական օգուտները կկազմեն **6000.0** հազ. դրամ:

Տեղ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 4.8 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են՝ 1-ական միավոր՝ Արավուս, Խնձորեսկ, Կոռնիձոր և Տեղ, իսկ 0.8 միավոր՝ Ներքին Խնձորեսկ նախկին համայնքներում: Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 2241.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1740.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 501.0 հազ. դրամ: Քանի որ Տեղ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող

ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **2241.0** հազ. դրամ:

Շուտնուխ համայնք

Շուտնուխ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Բարձրավան և Շուտնուխ (ընդամենը՝ 2 համայնք):*

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 27.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Շուտնուխ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 9.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 7540.8 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 6132.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 1408.8 հազ. դրամ (տե՛ս հավելված 27.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 6.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 6528.6 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 5340.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 1188.6 հազ. դրամ (տե՛ս հավելված 27.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.5 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.2 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 1012.2** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **13.4** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 792.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 12.9 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 220.2 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 15.6 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն

կազմում է խոշորացվող համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի շուրջ 1/11-րդ մասը (տե՛ս հավելված 27.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 19039.3 դրամից մինչև 34673.2 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 25896.3 դրամ (տե՛ս հավելված 27.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**1012.2** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **23359.4** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների առավելագույն ցուցանիշից 1.5 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 91.0 %-ից մինչև 92.2 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 27.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**1012.2** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **82.5 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.1 անգամ:

Շուտնուխ խոշորացվող համայնքում գործող մանկապարտեզներ չկան, ուստի մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Շուտնուխ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 1 միավոր հաստիք: Դա գրադարանավարի հաստիքն է Բարձրավան նախկին համայնքում, որի պահպանման համար կպահանջվեր 462.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 360.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 102.0 հազ. դրամ: Քանի որ Բարձրավան նախկին համայնքը գյուղական է, ապա այդ հաստիքի պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **462.0** հազ. դրամ:

Մյունիք համայնք

Մյունիք համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացմամբ՝ *Ագարակ, Արծվանիկ, Դավիթ Բեկ, Եղեգ, Եղվարդ, Խղրանց, Կաղնուտ, Չափնի, Մյունիք, Սևաքար, Վարդավանք և Ուժանիս (ընդամենը՝ 12 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի՝ դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 28.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Մյունիք խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 59.38 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 45124.2 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 36639.6 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 8484.6 հազ. դրամ (տե՛ս հավելված 28.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 23 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 21180.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 17595.6 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 3584.4 հազ. դրամ (տե՛ս հավելված 28.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 2.6 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 2.1 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է **առնվազն 23944.2** հազ. դրամ (կամ նախկին ծախսի **53.1** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 19044.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 52.0 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 4900.2 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 57.8 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ մի փոքր ավելի է, քան Արծվանիկ և Դավիթ Բեկ համայնքների բյուջեների

ծախսերի հանրագումարը կամ Ագարակ, Եղեգ, Եղվարդ, Խդրանց և Կաղնուտ համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարը (տե՛ս հավելված 28.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 6822.5 դրամից մինչև 70922.6 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 18431.2 դրամ (տե՛ս հավելված 28.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**23944.2** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **12051.2** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 5.9 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 54.7 %-ից մինչև 100.0 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 28.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**23944.2** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **46.1 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.2-ից մինչև 2.2 անգամ:

Սյունիք խոշորացվող համայնքում կան 3 գործող մանկապարտեզներ՝ 1-ական Արծվանիկ, Դավիթ Բեկ և Սյունիք նախկին համայնքներում: Խոշորացվող համայնքների կազմի մեջ մտնող բնակավայրերի տարածքային տեղաբաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Սյունիք խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 12 միավոր հաստիք: Դրանցից 3 միավորը ակումբ-գրադարանի վարիչի հաստիքներ են՝ 1-ական միավոր՝ Ագարակ, Խդրանց և Ուժանիս համայնքներում, 0.5 միավորը գրադարանի վարիչի հաստիք է Եղեգ համայնքում և 8.5 միավորը գրադարանավարի հաստիքներ են՝ 1-ական միավոր՝ Արծվանիկ, Դավիթ Բեկ, Եղվարդ, Սևաքար և Վարդավանք համայնքներում, 0.5 միավոր՝ Կաղնուտ համայնքում և 3 միավոր՝ Սյունիք համայնքում: Այդ հաստիքների պահպանման

համար կպահանջվեր 4816.2 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 3720.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 1096.2 հազ. դրամ: Քանի որ Սյունիք խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **4816.2** հազ. դրամ:

Նորաշենիկ համայնք

Նորաշենիկ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացմամբ՝ *Անտառաշատ, Առաջաձոր, Չորաստան, Ներքին Խոտանան, Նորաշենիկ, Շրվենանց, Վանեք, Վերին Խոտանան, Տավրոս և Օխտար (ընդամենը՝ 10 համայնք):*

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 29.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Նորաշենիկ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 39.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 28716.6 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 23292.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 5424.6 հազ. դրամ (տե՛ս հավելված 29.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 19 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 14891.4 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 12156.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 2735.4 հազ. դրամ (տե՛ս հավելված 29.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 2.1 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.9 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է

առնվազն 13825.2 հազ. դրամ (կամ նախկին ծախսի **48.1 %**-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 11136.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 47.8 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 2689.2 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 49.6 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ ավելի է, քան, օրինակ, Վանեք, Վերին Խոտանան և Տավրոս համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարը և այլն (տե՛ս հավելված 29.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 19868.2 դրամից մինչև 64331.4 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 36361.0 դրամ (տե՛ս հավելված 29.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**13825.2** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **23342.9** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 2.8 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 80.0 %-ից մինչև 100.0 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 29.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**13825.2** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **56.9 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.4-ից մինչև 1.8 անգամ:

Նորաշենիկ խոշորացվող համայնքում գործող մանկապարտեզներ չկան, ուստի մանկապարտեզների կրճատում և դրանից տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Նորաշենիկ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 4 միավոր հաստիք: Դրանցից 2 միավորը ակումբ-գրադարանի վարիչի հաստիքներ են՝ 1-ական միավոր՝ Ներքին Խոտանան և Տավրոս նախկին համայնքներում, իսկ 2 միավորը գրադարանավարի հաստիքներ են՝ 1-ական միավոր՝ Անտառաշատ և

Օխտար նախկին համայնքներում: Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 2014.8 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1584.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 430.8 հազ. դրամ: Քանի որ Նորաշենիկ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **2014.8** հազ. դրամ:

Կապան համայնք

Կապան համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ Կապան, Աճանան, Գեղանուշ և Ճակատեն (*ընդամենը՝ 4 համայնք*):

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է երկրորդ մոտեցումը:

Խոշորացվող համայնքներում 2010 թ. կլինեն 91.25 միավոր հաստիք, որից՝

- Կապան համայնքում՝ 75 միավոր
- Աճանան համայնքում՝ 5 միավոր
- Գեղանուշ համայնքում՝ 5.5 միավոր
- Ճակատեն համայնքում՝ 5.75 միավոր:

Փաստորեն, վերը նկարագրված երկրորդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվի 13.25 միավոր հաստիք և առկա կլինի ընդհանուր թվով 78 միավոր հաստիք, որոնցից 75-ը Կապան քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, իսկ 3-ը՝ խոշորացվող նախկին համայնքում նոր ձևավորվող վարչական ներկայացուցչի հաստիքները:

Նկարագրված մոտեցմամբ հաշվարկները կատարելու դեպքում համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը կկազմի՝

ՆՏԳ = ՎԾ – ՎՆԾ = 17749.9 հազ. դրամ – 2214.0 հազ. դրամ = 15535.9 հազ. դրամ,

որտեղ՝

ՎԾ-ն Կապան քաղաքային համայնքին միացվող Աճանան, Գեղանուշ և Ճակատեն գյուղական համայնքների 2010 թ. բյուջեների վարչական ծախսերն է,

ՎՆԾ-ն՝ Աճանան, Գեղանուշ և Ճակատեն գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցապ. հատկացումներ) ծախսերը:

Խոշորացման շնորհիվ տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ ավելի է, քան Աճանան և Ճակատեն նախկին համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած (տե՛ս հավելված 30.1):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 2826.8 դրամից մինչև 45275.8 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 3176.7 դրամ (տե՛ս հավելված 30.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (15535.9 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **2839.4** դրամ: Այն գրեթե հավասար է Կապան քաղաքային համայնքի համապատասխան ցուցանիշին: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 15.9 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 12.5 %-ից մինչև 88.6 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 30.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (15535.9 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **12.4 %**: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 7.1 անգամ:

Կապան խոշորացվող համայնքում կան 14 գործող մանկապարտեզներ՝ բոլորն էլ համայնքի կենտրոնում: Նշանակում է, որ Կապան համայնքում համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատում և դրանից բխող տնտեսական օգուտներ չարժե ակնկալել:

Կապան խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին գյուղական համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 2.75 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիք են՝

- Աճանան՝ 1 միավոր
- Գեղանուշ՝ 1 միավոր
- Ճակատեն՝ 0.75 միավոր:

Կապան խոշորացվող համայնքում գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի հենց այս 2.75 միավոր հաստիքի պահպանման գծով ծախսերը՝ **1406.7** հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1098.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 308.7 հազ. դրամ:

Ծավ համայնք

Ծավ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Ծավ, Ներքին Հանդ, Շիկահող և Սրաշեն (ընդամենը՝ 4 համայնք)*:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է առաջին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տե՛ս հավելված 31.1):

Այսպիսով, մինչև խոշորացումը Ծավ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները միասին 2010 թ. ունեին 17 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 15873.7 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 13124.4 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 2749.3 հազ. դրամ (տե՛ս հավելված 31.2):

Ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 10 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 10758.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 9000.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 1758.0 հազ. դրամ (տե՛ս հավելված 31.3):

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին գործող հաստիքների թիվը կարող է կրճատվել 1.7 անգամ, իսկ դրանց պահպանման ծախսերը՝ 1.5 անգամ: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է

5115.7 հազ. դրամ (կամ նախկին ծախսի **32.2** %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 4124.4 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 31.4 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 991.3 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 36.1 %-ը):

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ ավելի է, քան Ներքին Հանդ համայնքի բյուջեի ծախսերը կամ մի փոքր է զիջում Սրաշեն համայնքի բյուջեի ծախսերին (տե՛ս հավելված 31.4):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 18560.8 դրամից մինչև 54335.5 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 29199.1 դրամ (տե՛ս հավելված 31.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**5115.7** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **21983.7** դրամ: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշների համեմատ միջինից 1.3 անգամ, իսկ առավելագույն ցուցանիշից՝ 2.5 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 68.2 %-ից մինչև 98.3 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 31.5): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**5115.7** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) **61.0** %: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.1-ից մինչև 1.6 անգամ:

Ծավ խոշորացվող համայնքում կա 1 գործող մանկապարտեզ համայնքի կենտրոնում, ուստի համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատում և դրանից բխող տնտեսական օգուտներ հնարավոր չէ ակնկալել:

Ծավ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 3.8 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գադարանավարի հաստիք են՝ 1-ական միավոր՝ Ներքին Հանդ,

Շիկահող և Սրաշեն, իսկ 0.8 միավոր՝ Ծավ նախկին համայնքներում: Այդ հաստիքների պահպանման համար կպահանջվեր 1848.6 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1440.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 408.6 հազ. դրամ: Քանի որ Ծավ խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին բոլոր համայնքներն էլ գյուղական են, ապա խոշորացման արդյունքում այդ հաստիքների պահպանման գծով կատարվող ծախսերն ամբողջությամբ կտնտեսվեն: Այսինքն՝ գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի **1848.6** հազ. դրամ:

Քաջարան համայնք

Քաջարան համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ Քաջարան քաղաք, Գեղի, Նոր Աստղաբերդ, Լեռնաձոր և Քաջարան գյուղ (*ընդամենը՝ 5 համայնք*):

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է երկրորդ մոտեցումը:

Խոշորացվող համայնքներում 2010 թ. կլինեն 60.9 միավոր հաստիք, որից՝

- Քաջարան քաղաքային համայնքում՝ 44 միավոր
- Գեղի համայնքում՝ 4.8 միավոր
- Նոր Աստղաբերդ համայնքում՝ 3.6 միավոր
- Լեռնաձոր համայնքում՝ 5 միավոր
- Քաջարան գյուղական համայնքում՝ 3.5 միավոր:

Փաստորեն, երկրորդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվի 12.9 միավոր հաստիք, կմնա ընդհանուր թվով 48 միավոր հաստիք, որոնցից 44-ը Քաջարան քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, իսկ 4-ը՝ խոշորացվող նախկին համայնքում նոր ձևավորվող վարչական ներկայացուցչի հաստիքը:

Նկարագրված մոտեցմամբ հաշվարկները կատարելու դեպքում համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը կկազմի՝

ՆՏԳ = ՎԾ – ՎՆԾ = 24919.9 հազ. դրամ – 2952.0 հազ. դրամ = 21967.9 հազ. դրամ,

որտեղ՝

ՎԾ-ն Քաջարան քաղաքային համայնքին միացվող Գեղի, Նոր Աստղաբերդ, Լեռնաձոր և Քաջարան գյուղական համայնքների 2010 թ. բյուջեների վարչական ծախսերն է,

ՎՆԾ-ն՝ Գեղի, Նոր Աստղաբերդ, Լեռնաձոր և Քաջարան գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցալ. հատկացումներ) ծախսերը:

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն նույնիսկ ավելի է, քան Նոր Աստղաբերդ և Լեռնաձոր նախկին համայնքների բյուջեների ծախսերը միասին վերցրած (տե՛ս հավելված 39.1):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 7203.5 դրամից մինչև 73497.2 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 9078.3 դրամ (տե՛ս հավելված 32.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**21967.9** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **6763.0** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշների միջինից 1.3 անգամ, նվազագույն ցուցանիշից՝ 1.1 անգամ, իսկ առավելագույնից՝ 10.9 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 22.2 %-ից մինչև 100.0 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 32.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**21967.9** հազ. դրամ) նորաստեղծ համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **21.0 %**: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից մինչև 4.8 անգամ:

Քաջարան խոշորացվող համայնքում կան 4 գործող մանկապարտեզներ, որոնցից 3-ը՝ համայնքի կենտրոնում, 1-ը՝ Լեռնաձոր նախկին համայնքում: Համայնքի բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Լեռնաձորը հեռու չէ համայնքի կենտրոնից, և, կարելի է ակնկալել, որ համայնքների խոշորացման արդյունքում հնարավոր կլինի կրճատել

Լեռնաձորի մանկապարտեզը: Սակայն, մյուս կողմից, օրինակ, Գեղին ոչ միայն հեռու է Քաջարանից և Լեռնաձորից, այլ նաև քարտեզից երևում է, որ չկան Գեղին Լեռնաձորին կամ համայնքի կենտրոնին կապող ուղիղ ճանապարհներ: Այսինքն՝ հնարավոր է, որ անհրաժեշտություն առաջանա նոր մանկապարտեզ կառուցելու, հնարավոր է՝ ոչ, քանի որ Գեղին ունի շատ քիչ բնակչություն: Ուստի այս համայնքի դեպքում գերադասելի է գերծ մնալ համայնքի խոշորացման արդյունքում մանկապարտեզների հնարավոր կրճատման կանխատեսումներից:

Քաջարան խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին գյուղական համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 1.5 միավոր հաստիք Լեռնաձոր համայնքում, որոնցից 1 միավորը գրադարանի վարիչի հաստիք է, 0.5 միավորը՝ գրադարանավարի հաստիքը, և 1-ական միավոր գրադարանավարի հաստիքներ Գեղի և Նոր Աստղաբերդ համայնքներում: Քաջարան խոշորացվող համայնքում գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմեն հենց այս 3.5 միավոր հաստիքի պահպանման գծով ծախսերը՝ 1848.0 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 1440.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 408.0 հազ. դրամ:

Մեղրի համայնք

Մեղրի համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ Մեղրի, Ագարակ, Ալվանք, Գուղեմիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն (*ընդամենը՝ 13 համայնք*):

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է երկրորդ մոտեցումը՝ կատարելով որոշ վերապահումներ: Վերապահումների անհրաժեշտությունն առաջացել է այն պատճառով, որ խոշորացվող համայնքների կազմում կան 2 քաղաքային համայնքներ: Այս դեպքում որպես խոշորացված համայնքի հաստիքացուցակ կլինի Մեղրի քաղաքային համայնքի հաստիքացուցակը՝ գումարած Ագարակ քաղաքային համայնքի այն հաստիքները, որոնք ենթադրում են մասնագիտական բնույթի աշխատանք (աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ 4 միավոր, առաջատար մասնագետ՝ 4 միավոր և առաջին կարգի մասնագետ՝ 2 200

միավոր): Այսինքն, այլ կերպ ասած, կրճատվում են խոշորացվող բոլոր գյուղական համայնքների հաստիքներն ու Ագարակ քաղաքային համայնքի վարչական բնույթի հաստիքները (համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի տեղակալ, համայնքի ղեկավարի օգնական, աշխատակազմի քարտուղար, վարորդ և հավաքարար):

Խոշորացվող համայնքներում 2010 թ. կլինել 94.7 միավոր հաստիք, որից՝

- Մեղրի համայնքում՝ 21 միավոր
- Ագարակ համայնքում՝ 17 միավոր
- Ալվանք համայնքում՝ 5 միավոր
- Գուղեմիս համայնքում՝ 4.5 միավոր
- Լեհվազ համայնքում՝ 8 միավոր
- Լիճք համայնքում՝ 3.6 միավոր
- Կարճևան համայնքում՝ 4.6 միավոր
- Կուրիս համայնքում՝ 4 միավոր
- Նոնաձոր համայնքում՝ 6 միավոր
- Շվանիձոր համայնքում՝ 6.5 միավոր
- Վահրավար համայնքում՝ 4.5 միավոր
- Վարդանիձոր համայնքում՝ 4.5 միավոր
- Տաշտուն համայնքում՝ 5.5 միավոր:

Փաստորեն, երկրորդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվի 51.7 միավոր հաստիք և կմնա ընդհանուր թվով 43 միավոր հաստիք, որոնցից 21-ը Մեղրի քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, 10-ը՝ Ագարակ քաղաքային համայնքում առկա մասնագիտական աշխատանք ենթադրող հաստիքները, իսկ 12-ը՝ խոշորացվող նախկին համայնքում նոր ձևավորվող վարչական ներկայացուցչինը:

Նկարագրված մոտեցմամբ հաշվարկները կատարելու դեպքում համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը կկազմի՝

$$\text{ՆՏԳ} = \text{ՎԾ} - \text{ՎՆԾ} -- \text{ԼՀԾ} = 97774.9 \text{ հազ. դրամ} - 8856.0 \text{ հազ. դրամ} - 8898.0^{12} \\ \text{հազ. դրամ} = 80020.9 \text{ հազ. դրամ},$$

¹² Այս գումարը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով կոնկրետ հաստիքային միավորների համար սահմանված պաշտոնային դրույքաչափերը:

որտեղ՝

ՎԾ-ն Մեղրի քաղաքային համայնքին միացվող Ալվանք, Գուդեմիս, Լեհվագ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն գյուղական համայնքների և Ագարակ քաղաքային համայնքի 2010 թ. բյուջեների վարչական ծախսերն է,

ՎՆԾ-ն՝ Ալվանք, Գուդեմիս, Լեհվագ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն գյուղական համայնքներում և Ագարակ քաղաքային համայնքում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցալ. հատկացումներ) ծախսերը,

ԼՀԾ-ն՝ լրացուցիչ հաստիքների պահպանման ծախսերը, ավելի հստակ՝ Ագարակ քաղաքային համայնքի 10 մասնագետների պահպանման ծախսերը:

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ այն քիչ է զիջում Մեղրի քաղաքային համայնքին միացվող բոլոր գյուղական համայնքների բյուջեների ծախսերին միասին վերցրած (տե՛ս հավելված 33.1):

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 5220.0 դրամից մինչև 108887.1 դրամի սահմաններում՝ կազմելով միջինը 11281.7 դրամ (տե՛ս հավելված 33.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**80020.9** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը **4652.6** դրամ: Նման ցուցանիշ ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշների միջինից 2.4 անգամ, նվազագույն ցուցանիշից՝ 1.1 անգամ, իսկ առավելագույնից՝ 23.4 անգամ:

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 22.4 %-ից մինչև 100.0 %-ի սահմաններում (տե՛ս հավելված 33.2): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (**80020.9** հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը **17.7 %**: Նման ցուցանիշ չի

գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների նվազագույն ցուցանիշից 1.3 անգամ, իսկ առավելագույնից՝ 5.6 անգամ:

Մեղրի խոշորացվող համայնքում կան 7 գործող մանկապարտեզներ, որոնցից 4-ը՝ Մեղրիում և 1-ական՝ Ագարակ, Լեհվազ և Կարճևան նախկին համայնքներում: Համայնքի բնակավայրերի տարածքային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատում և դրանից բխող տնտեսական օգուտներ ակնկալել չարժե:

Մեղրի խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին գյուղական համայնքներում 2010 թ. նախատեսված էր գրադարանների սպասարկման 7.3 միավոր հաստիք: Դրանք բոլորն էլ գրադարանավարի հաստիքներ են հետևյալ խոշորացվող գյուղական համայնքներում՝

- Լեհվազ՝ 1 միավոր
- Լիճք՝ 0.6 միավոր
- Կարճևան՝ 0.7 միավոր
- Կուրիս՝ 1 միավոր
- Նոնաձոր՝ 1 միավոր
- Շվանիձոր՝ 1 միավոր
- Վահրավար՝ 0.5 միավոր
- Վարդանիձոր՝ 0.5 միավոր
- Տաշտուն՝ 1 միավոր:

Մեղրի խոշորացվող համայնքում գրադարանների գծով տնտեսվող նվազագույն գումարը կկազմի հենց այս 7.3 միավոր հաստիքի պահպանման գծով ծախսերը՝ **3558.6** հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 2700.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով՝ 858.6 հազ. դրամ:

Սյունիքի մարզում համայնքների խոշորացման շնորհիվ առաջացող տնտեսական օգուտների ամփոփ պատկերը

ՀՀ	Համայնք	Բնակավայրեր	Ընդամենը տնտեսական օգուտներ (հազ. դրամ)	Որից՝		
				Վարչական ծախսերի կրճատումից տնտեսական օգուտներ (հազ.դրամ)	Մանկապարտեզների կրճատումից տնտեսական օգուտներ (հազ.դրամ)	Գրադարանների կրճատումից տնտեսական օգուտներ (հազ.դրամ)
1	Սառնակունք	4	11043	9739.8	-	1303.2
2	Անգեղակոթ	4	11430.8	10302.8	-	1128.0
3	Սիսիան	7	61805	52428.5	6363.0	3013.5
4	Բռնակոթ	7	17512.2	15926.4	-	1585.8
5	Դաստակերտ	6	8779.9	7632.9	-	1147.0
6	Դարբաս	8	18595.8	14738.4	-	3857.4
7	Շինուհայր	4	20005.5	15643.5	2700.0	1662.0
8	Տաթև	6	12343.2	9895.5	-	2447.7
9	Գորիս	6	90205	88819.0	-	1386.0
10	Խնածախ	3	5976.5	4719.5	-	1257.0
11	Տեղ	6	30776.7	22535.7	6000.0	2241.0
12	Շուռնուխ	5	1474.2	1012.2	-	462.0
13	Սյունիք	16	28760.4	23944.2	-	4816.2
14	Նորաշենիկ	10	15840	13825.2	-	2014.8
15	Կապան	5	16942.6	15535.9	-	1406.7
16	Ծավ	5	6964.3	5115.7	-	1848.6
17	Քաջարան	17	23815.9	21967.9	-	1848.0
18	Մեղրի	15	83579.5	80020.9	-	3558.6
	<i>Ընդամենը</i>		<i>465850.5</i>	<i>413804</i>	<i>15063</i>	<i>36983.5</i>

3.6.3. Սյունիքի մարզում միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետությունը

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն միջհամայնքային համագործակցության տարբեր ձևեր (տե՛ս 2.4.), որոնք իրականացնող կառույցներն իրենց ձևավորման (ստեղծման) սկզբունքներով հիմնականում բաժանվում են 2 խմբի՝ կամավոր և պարտադիր (օրենքով ստեղծվող): ՀՀ օրենսդրությունը որպես միջհամայնքային համագործակցության ձև ամրագրել է միջհամայնքային միավորումների ինստիտուտը, որի մասին դեռևս ոչ մի նկարագրություն, բացատրություն և պարզաբանում չկա:

Միջազգային պրակտիկայում համայնքային ծառայությունների արդյունավետ մատուցման նպատակով հիմնականում օգտագործվում են միջհամայնքային համագործակցության հետևյալ 2 ձևերը՝ *նպատակային միություններ և միջհամայնքային միավորումներ*:

3.6.3.1. Նպատակային միություն

Արդեն նշեցինք, որ Հայաստանում միջհամայնքային համագործակցության ոլորտը օրենսդրորեն կանոնակարգված չէ:

Ներկայումս Հայաստանում միջհամայնքային համագործակցությունը փաստացի գործառվում է այսպես կոչված «միջհամայնքային միավորումների»¹³ միջոցով, որոնք իրենց կազմի մեջ մտնող համայնքների համար իրականացնում են որոշակի լիազորություններ: Այդ լիազորություններից հիմնականը և ամենատարածվածը հարկային վարչարարությունն է (հողի հարկի և գույքահարկի մասով), ինչը կատարվում է ուղղակի կնքվող պայմանագրերի միջոցով:

Այս միջհամայնքային համագործակցությունը ավելի շատ նման է նպատակային միությանը, որը ձևավորվում է մեկ ընդհանուր «նպատակի» (այս դեպքում՝ հարկային վարչարարության) իրականացման համար:

Ակնհայտ է, որ համայնքների համար հարկային վարչարարության լիազորությունը պահանջում է որոշակի ֆինանսական ծախսեր, և այդ լիազորությունից բխող գործառույթների համատեղ իրականացումը

¹³ Այս կառույցները արդարադատության նախարարությունում գրանցված են որպես իրավաբանական անձանց (համայնքների) միություններ:

2010 թվականի սկզբին Հայաստանում հարկային վարչարարություն իրականացնում էին 75 կառույցներ:

հնարավորություն կստեղծի ինչ-որ չափով կրճատելու (օպտիմալացնելու) համայնքի կողմից կատարվող ծախսերը:

Միջհամայնքային համագործակցության արդյունքում առաջացող տնտեսական արդյունավետությունը հաշվարկելու համար որպես օրինակ վերցնենք հարկային վարչարարության իրականացման պարտադիր լիազորությունը և հաշվարկները կատարենք ըստ հետևյալ մեթոդաբանության.

Մեթոդաբանություն

Դիտարկենք 2 հնարավոր տարբերակ՝

Տարբերակ 1 - Համայնքը ինքնուրույն է իրականացնում այդ լիազորությունը:

Տարբերակ 2 - Համայնքները այդ լիազորությունը իրականացնում են միասին:

Տարբերակ 1

Կազմակերպչական կառուցվածք

Լիազորությունը ինքնուրույն իրականացնելու պարագայում այդ լիազորությունից բխող գործառույթները կատարելու համար համայնքը՝

ա. իր աշխատակազմում ստեղծում է առանձին հարկային ստորաբաժանում, կամ այդ գործառույթը իրականացնում են աշխատակազմի 2 և ավելի աշխատակիցներ (խոշոր համայնքներ),

բ. իր աշխատակազմում ունենում է հարկերի գծով առանձնացված մեկ աշխատակից (միջին չափի համայնքներ),

գ. գործառույթները համատեղության կարգով դնում է աշխատակազմի գործող հաստիքներից որևէ մեկի վրա (փոքր համայնքներ):

ՀՀ համայնքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշոր համայնքները (հիմնականում քաղաքային) ինքնուրույն են իրականացնում այս լիազորությունները և միջհամայնքային համագործակցության անհրաժեշտություն չեն զգում, հետևաբար, սույն աշխատանքում որպես ուսումնասիրության առարկա դիտարկվում են տարբերակ 1-ի միայն բ. և գ. դեպքերը:

Հարկային վարչարարությունը իրականացնելու համար համայնքը կատարում է որոշակի ծախսեր հետևյալ ուղղություններով՝ աշխատավարձ, սոց. վճարներ, համակարգչային տեխնիկայի և գույքի ձեռքբերում, ծրագրային

ապահովում, գրասենյակային և կոմունալ ծախսեր, ջեռուցում, կապ, էլեկտրաէներգիա, գործուղում, ուսուցում և այլն:

Նշված ծախսերը կարող են ըստ համայնքների տարբեր լինել՝ պայմանավորված համայնքում հարկման ենթակա հողի հարկի և գույքահարկի բազաներում առկա հարկման օբյեկտների քանակով (կամ հարկատուների քանակով): Մակայն կան ծախսեր, որոնք հիմնականում կախված չեն այս ցուցանիշից, և բոլոր համայնքները կատարում են դրանք գրեթե հավասարաչափ (պայմանական հաստատուն ծախսեր): Դիտարկենք այդ ծախսերը տարբերակ 1-ի բ. և գ. դեպքերի համար (տե՛ս աղյուսակ 45):

Աղյուսակ 45

Հարկային վարչարարության գծով իրականացվող համայնքային ծախսերի դասակարգումը

	Ծախսային ուղղություններ	բ. դեպք		գ. դեպք	
		Փոփոխական ծախսեր	Պայմանական հաստատուն ծախսեր	Փոփոխական ծախսեր	Պայմանական հաստատուն ծախսեր
1	Աշխատավարձ	-	✓	-	✓
2	Սոց. ապահով. վճարներ	-	✓	-	✓
3	Կոմունալ և տնտեսական ծախսեր՝ էլ.էներգիա, կապ, ջեռուցում, աղբահ., ջրամատ., տնտեսական ծախսեր, և այլ	-	✓	-	-
4	Համակարգչային տեխնիկա և գույք	-	✓	-	✓
5	Ծրագրային ապահովում և սպասարկում	✓	-	✓	-
6	Գրասենյակային ծախսեր	✓	-	✓	-
7	Գործուղում	-	✓	-	✓
8	Ուսուցում	-	✓	-	✓

Հաշվարկելով յուրաքանչյուր համայնքի կողմից կատարվող ծախսերը և դրանք գումարելով իրար՝ կստանանք միջհամայնքային համագործակցության կազմի մեջ մտնող համայնքների հանրագումարային ընդհանուր ծախսերը, եթե պայմանականորեն ընդունենք, որ նրանք հարկերի վարչարարության գծով լիազորությունը իրականացնում են ինքնուրույն:

Տարբերակ 2

Լիազորությունը համատեղ իրականացնելու տարբերակի դեպքում հարկային վարչարարության գծով կատարվող ընդհանուր ծախսերի գնահատման համար կարող ենք որպես հիմք ընդունել և հաշվարկներում օգտագործել գործող միջհամայնքային համագործակցության կառույցների փաստացի կատարվող ծախսերը:

Տարբերակ 1-ի և տարբերակ 2-ի համադրությունը ցույց կտա այն տնտեսական էֆեկտի չափը (բացարձակ արժեքով), որը կարող է ստացվել կոնկրետ համայնքների խմբի համար հարկային վարչարարության գծով միջհամայնքային համագործակցության արդյունքում:

Նպատակային միության օրինակի ներկայացում

Վերոնշյալ մեթոդաբանությունը օգտագործենք Սյունիքի մարզի Սիսիանի միջհամայնքային համագործակցության կառույցի օրինակով:

Սիսիանի միջհամայնքային կառույցը սպասարկում է Սիսիանի տարածաշրջանի 30 համայնքների՝ բացառությամբ Սիսիան և Դաստակերտ քաղաքային և Վաղատնի գյուղական համայնքները:

Կազմակերպչական կառուցվածք

Կառույցում կա 3 հաստիք՝ տնօրեն, քարտուղար և հաշվապահ: Քարտուղարը և հաշվապահը միաժամանակ նաև հողի հարկի և գույքահարկի գծով համակարգչային համապատասխան ծրագրի օպերատորներ են:

Ստորև բերվում է Միսիանի միջհամայնքային համագործակցության կառույցի 2011 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (տե՛ս աղյուսակ 46):

Աղյուսակ 46

Միսիանի միջհամայնքային համագործակցության կառույցի 2011 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ¹⁴

	Անվանումը	Գումար (հազ. դրամ)
Եկամտային մաս		
1	Տարեկզբի մնացորդ	628.066
2	Անդամավճարի ապառք առ 01.01.2011թ. ¹⁵	613.737
3	2011 թ. անդամավճար ¹⁶	5192.492
4	Այլ ներդրում	1157.705
Ընդամենը		7592
Ծախսային մաս		
1	Աշխատավարձ	4140
2	Սոց. ապահովագրության վճարներ	777
3	Գույքի ձեռքբերում	460
4	Գրասենյակային ծախսեր	300
5	Էլ. էներգիա, ջեռուցում	300
6	Գործուղում	200
7	Կապի ծառայություն	250
8	Տրանսպորտային ծախս	500
9	Ջրամատակարարում, աղբահանություն	40
10	Բանկային ծառայություն	25
11	Համակարգչային «Օրակլ» ծրագրի սպասարկում	240
12	Տարածքի վարձակալություն	360
Ընդամենը		7592

Փորձագիտական գնահատմամբ հաշվարկենք այն բոլոր հնարավոր ծախսերը, որոնք կարող են առաջանալ առանձին վերցրած համայնքներում ըստ

¹⁴ Տվյալները վերցրված են Միսիան համայնքների միությունից:

¹⁵ Իրականում մուտքային մասում նախատեսվող գումարները ոչ թե անդամավճարներ են, այլ ծառայության դիմաց վճարներ, որոնք հաշվարկվում են ըստ հողի հարկի և գույքահարկի բազաներում առկա հարկման օբյեկտների քանակի. հողի հարկի գծով՝ բազայում առկա 1 միավորի համար 300 դրամ, գույքահարկի գծով՝ 1 միավորի համար 200 դրամ:

¹⁶ Նույնը:

վերոնշյալ մեթոդաբանության, եթե համայնքները ինքնուրույն իրականացնեն հարկային վարչարարությունը (տե՛ս աղյուսակ 47):

Աղյուսակ 47

Հարկային վարչարարության գծով իրականացվող տարեկան ծախսերը Սիսիանի համայնքներում

	Ծախսային ուղղություններ	բ. դեպք	գ. դեպք
<i>Ինքնուրույն լիազորություն իրականացնող մեկ համայնքի ծախսերի հաշվարկ</i>			
1	Աշխատավարձ (դրամ) 46000 ¹⁷ x12ամիս	552 000	-
1	Աշխատավարձի ավելացում (դրամ) Համատեղող հաստիքի աշխատավարձը փորձագիտական գնահատմամբ յուրաքանչյուր ամիս կավելանա մոտավորապես 10000 դրամով: 10000 x12ամիս	-	120 000
2	Սոց. ապահով. վճար կամ վճարի ավելացում (դրամ)	130 000	18 000
3	Կոմունալ և տնտեսական ծախսեր (դրամ) էլ.էներգիա, կապ, ջեռուցում, աղբահ., ջրամատ., տնտեսական ծախսեր և այլն: Փորձագիտական գնահատմամբ կոմունալ և տնտեսական ծախսերը կավելանան յուրաքանչյուր ամիս մոտավոր հաշվարկներով 2500 դրամով ¹⁸ :	30000	-
4	Համակարգչային տեխնիկա և գույք (դրամ) (համակարգչային տեխնիկա – 325000 դրամ, գույք – 85000 դրամ) ¹⁹ . Ծառայության ժամկետները պայմանականորեն ընդունվում է՝ համակարգչային տեխնիկայի համար՝ 5 տարի, գույքի համար՝ 10 տարի: 325000 դրամ/5= 65000 դրամ, 85000 դրամ/10= 8500 դրամ	73 500	73 500
5	Ծրագրային ապահովում և սպասարկում ²⁰ (դրամ) Ծրագրային սպասարկման պայմանագրային գները բերված են հավելված 34 -ում	55000	21600

¹⁷ Մյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի գյուղական համայնքների աշխատակազմերում 2011թ. հունվարի 1-ի դրությամբ փաստացի առկա «համակարգչային օպերատոր» հաստիքի դրույքաչափի միջին թվաբանական արժեքն է:

Տվյալները վերցրած են Մյունիքի մարզպետարանից:

¹⁸ Ծախսերը հիմնականում կավելանան էլեկտրաէներգիայի և ջեռուցման հողվածներով, ինչը պայմանավորված է համակարգչային տեխնիկայի շահագործման համար անհրաժեշտ տեխ. պայմանից:

¹⁹ Համակարգչային տեխնիկայի և գույքի գները վերցված են ԳՏՀՀ –ի «Քաղաքացիների սպասարկման գրասենյակների ստեղծում» ծրագրի շրջանակներում մեկ սպասարկման միավորի (մեկ սեղանի) կահավորման և տեխնիկայով ապահովման փաստացի կատարված ծախսերից: Բացի վերը նշվածից, որոշակի ծախսերի անհրաժեշտություն կլինի նաև համակարգչային սենյակի դռների և պատուհանների համար մետաղական ճաղավանդակներ ձեռք բերելու և տեղադրելու ուղղությամբ:

²⁰ Գույքահարկի և հողի հարկի գծով հարկային վարչարարության համար նախատեսված «Օրակ» համակարգչային ծրագիրը մշակվել է «Վեկտոր պլյուս» կազմակերպության կողմից, որը ծրագիրը տեղադրում և սպասարկում է պայմանագրային հիմունքներով:

Հաշվարկներում օգտագործված են «Վեկտոր պլյուս» կազմակերպության կողմից առաջարկվող սպասարկման գները:

6	Գրասենյակային ծախսեր (դրամ) Գրասենյակային ծախսերը, խիստ մոտավոր, հավասար կլինեն միջհամայնքային համագործակցության կառույցի նմանատիպ ծախսերի 1/30-ին, քանի որ վերջիններս այդ ծախսերը կատարում են անդամ 30 համայնքի համար ընդհանուր (300000դրամ/30=10000դրամ)	10000	10000
7	Գործուղում Գործուղման ծախսերը հաշվարկվել են փորձագիտական եղանակով, հիմք ընդունելով Սյունիքի մարզում մեկ համայնքային ծառայողին ընկնող տարեկան միջին ծախսերը և սույն աշխատատեղի յուրահատկությունները:	28000	28000
8	Ուսուցում ²¹	-	-
Ընդամենը (հազ. դրամ)		848.5	271.1
9	Համայնքների թիվը ա. և բ. դեպքերով համայնքների տարանջատումը կատարված է փորձագիտական ճանապարհով. որպես անցումային սահմանային ցուցանիշ ընդունվել է հարկման ենթակա հողային և գույքային 500 միավորը:	21	9
Ընդամենը ծախսերը՝ ըստ ա. և բ. դեպքերի (հազ. դրամ) (Տող 8x տող 9)		17 818.5	2 439.9
Ընդամենը ամբողջ ծախսեր (հազ. դրամ) (ա. և բ. դեպքերի հանրագումար)		20 258.4	

Փաստորեն ստացվում է, որ հարկային վարչարարության գծով միջհամայնքային համագործակցության արդյունքում փորձագիտական գնահատմամբ կարող է տնտեսվել (20 258.4 -7 592) 12666.4 հազ. դրամ, որը կազմում է առանձին համայնքների կողմից այդ գործառույթի իրականացման համար գնահատվող ծախսերի հանրագումարի 62.5 %-ը:

Ընդ որում, միջհամայնքային համագործակցության արդյունքում գումարները տնտեսվում են հատկապես աշխատավարձի և սոցիալական ապահովագրության հողվածների գծով: Այսպես, տնտեսվող գումարի 84.1 %-ը նշյալ երկու հողվածների գծով տնտեսումներն են: Տնտեսվող գումարի մնացյալ խոշոր մասը՝ 13.8 %-ը, ձևավորվում է գույքի ձեռքբերման գծով ծախսերի տնտեսումից: Մնացյալ շուրջ 2 %-ը տնտեսվել է այլ հողվածների գծով:

²¹ Ներկա պահին հարկային վարչարարության գծով համապատասխան համայնքային ծառայողների վերապատրաստումը կատարվում է ոչ համայնքային միջոցների հաշվին (մինչ այժմ ծախսերը ֆինանսավորվել են պետական բյուջեից կամ դոնոր կազմակերպությունների կողմից):

3.6.3.2. Միջհամայնքային միավորում

Ներկայումս Հայաստանում միջհամայնքային միավորումներ կամ նմանակող կառույցներ չկան: Դրանց ստեղծման ուղղությամբ կատարվող քայլերը դեռևս գտնվում են նախապատրաստական փուլում (վերլուծությունների և հայեցակարգերի մշակում, քննարկումների և լսումների կազմակերպում, դիտողությունների և առաջարկությունների ուսումնասիրում և այլն): Կառավարության «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգը միակ պաշտոնական փաստաթուղթն է, որը որոշակի պատկերացումներ է տալիս միջհամայնքային միավորումների մասին:

Ստորև բերվող տնտեսական արդյունավետության հաշվարկներում որպես հիմք ընդունվել են վերը նշված հայեցակարգի դրույթները՝ անհրաժեշտության դեպքում կատարելով որոշ փորձագիտական ճշգրտումներ:

Մեթոդաբանություն

Միջհամայնքային միավորումների ձևավորման արդյունքում համայնքների վարչական ապարատի կրճատման հաշվին կարող են գոյանալ որոշ տնտեսական օգուտներ, որոնց հաշվարկման համար կիրառվել են ներքոնշյալ մոտեցումները:

Ենթադրվել է, որ միջհամայնքային համագործակցության կազմի մեջ մտնող բոլոր այն համայնքներում, որոնց բնակչության թիվը 200-ից պակաս է, աշխատակազմ չի ձևավորվում²²: Կլինի միայն համայնքի ղեկավարի հաստիք, որի վարձատրության դրույքաչափը պայմանականորեն սահմանվել է 50.0 հազ. դրամ:

Քանի որ միջհամայնքային միավորման աշխատակազմը միաժամանակ նաև միավորման անդամ համայնքների աշխատակազմն է²³, ապա 200-ից մինչև 500 բնակիչ ունեցող համայնքներում ձևավորվող աշխատակազմերում նախատեսվել

²² ՀՀ կառավարության «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգի համաձայն՝ միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող 100-ից կամ 50-ից պակաս բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմեր չեն ձևավորում:

Սույն վերլուծության շրջանակներում աշխատակազմ չունեցող համայնքների համար որպես բնակչության թվաքանակի առավելագույն սահմանային արժեք ընդունվում է 200 բնակիչը: Հայեցակարգում տեղ գտած բնակչության թվաքանակի «100 կամ 50» արժեքի փոփոխումը «200»-ով պայմանավորված է փորձագիտական գնահատումներով, որոնք հիմնավորվել են Սյունիքի մարզում կատարած ուսումնասիրությունների արդյունքում:

²³ ՀՀ կառավարության «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգային դրույթ՝ հոդված 19:

են միայն համայնքի ղեկավարի և մասնագետների հաստիքներ՝ ենթադրելով, որ, օրինակ, հաշվապահի և աշխատակազմի քարտուղարի գործառույթները կիրականացնեն միջհամայնքային միավորման հաշվապահն ու քարտուղարը: Միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող՝ 500-ից ավելի բնակչությամբ համայնքներում նախատեսվում է նաև 5 հաստիքից ոչ ավելի աշխատակազմ²⁴:

Վերոնշյալ հաստիքների դրույքաչափերը սահմանվել են՝ որպես հիմք վերցնելով գործող համայնքների համապատասխան հաստիքների դրույքաչափերը՝ առանց որևէ փոփոխության:

Միջհամայնքային միավորման աշխատակազմի հաստիքների դրույքաչափերը սահմանվել են՝ հիմք ընդունելով միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմերի հաստիքների դրույքաչափերի առավելագույնը՝ ավելացնելով ևս 20%:

Միջհամայնքային միավորումների ստեղծման արդյունքում առաջացած տնտեսական արդյունավետության չափը հավասար է միավորման կազմի մեջ մտնող համայնքների՝ նախքան միավորումը և միավորումից հետո ձևավորված աշխատակազմերի պահպանման ծախսերի տարբերությունից հանած միջհամայնքային միավորման աշխատակազմի պահպանման ծախսերը:

Օսնոթություն: Աշխատակազմերի պահպանման ծախսեր ասելով նկատի է առնվում միայն աշխատավարձն ու սոցալ գումարները տարեկան կտրվածքով: Գրասենյակային ծախսերը հաշվարկների մեջ չեն դիտարկվում:

Այս մեթոդաբանությունը կիրառվել է Սյունիքի մարզում 3 միջհամայնքային միավորումների (Տաթև, Նորաշենիկ և Խնածախ) օրինակում՝ պայմանականորեն ընդունելով, որ միջհամայնքային միավորումները ձևավորվում են խոշորացված համայնքների նույն տարածքների վրա:

Տաթևի միջհամայնքային միավորում

Տաթևի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող 6 համայնքներում միասին առկա է 32.3 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 23017.5 հազ. դրամ (տե՛ս հավելված 23.2):

²⁴ ՀՀ կառավարության «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգի համաձայն՝ միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմի աշխատակիցների թիվը չի կարող գերազանցել հինգը, որոնց թվում են նաև համայնքի ղեկավարի տեղակալը, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը և հաշվապահը:

Միջհամայնքային համագործակցության արդյունքում Տաթևի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմերը փորձագիտական գնահատմամբ կարող են կրճատվել մի քանի ձևով:

Այսպես, քանի որ Աղվանի, Տանձատափի և Քաշունի համայնքներում բնակչության թիվը 200-ից պակաս է, ապա այս համայնքներում աշխատակազմ չի ձևավորվի:

Այս համայնքներում կլինեն միայն համայնքների ղեկավարներ, որոնց պահպանման համար կպահանջվի՝

$$3 \cdot (12 \cdot 50.0 \text{ հազ. դրամ} + 12 \cdot 11.5 \text{ հազ. դրամ}) = 2214.0 \text{ հազ. դրամ}$$

200-ից բարձր բնակչություն ունեցող Սվարանց, Տաթև և Տանձավեր համայնքներում առաջարկվում է պահել համայնքի ղեկավարի հաստիքն ու, բնակչության թվով պայմանավորված, մեկ կամ մի քանի մասնագետներ:

Այսպես, նշյալ 3 համայնքներում առաջարկվում է ձևավորել 9 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 7672.2 հազ. դրամ (տե՛ս աղյուսակ 48):

Աղյուսակ 48

Տաթևի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմերն ու դրանց պահպանման ծախսերը

Անվանում	Սվարանց (մինչև 500 բնակիչ)			Տաթև (500-ից ավելի բնակիչ)			Տանձավեր (մինչև 500 բնակիչ)		
	Միավոր	փոհումով սպասարկման ծախսեր (մլ.ժուր)	միավոր սպասարկման ծախսեր (մլ.ժուր)	միավոր	փոհումով սպասարկման ծախսեր (մլ.ժուր)	միավոր սպասարկման ծախսեր (մլ.ժուր)	միավոր	փոհումով սպասարկման ծախսեր (մլ.ժուր)	միավոր սպասարկման ծախսեր (մլ.ժուր)
Համայնքի ղեկավար	1	70.0	1014.0	1	110.0	1554.0	1	80.0	1152.0
Աշխատակազմի քարտուղար	-	-	-	1	61.0	889.8	-	-	-
Հաշվապահ	-	-	-	1	60.0	876.0	-	-	-
Մասնագետ	1	48.0	710.4	2	60.0	876.0	1	40.0	600.0
Ընդամենը	2	-	1724.4	5	-	4195.8	2	-	1752.0

Տաթևի միջհամայնքային միավորման համար առաջարկվում է ձևավորել 9 միավոր հաստիքով աշխատակազմ, որի պահպանման համար կպահանջվի 8190.6 հազ. դրամ (տե՛ս աղյուսակ 49):

Տաթևի միջհամայնքային միավորման աշխատակազմը

Անվանում	Հաստի- քային միավոր	Դրույքա- չափ (հազ. դրամ)	Տարեկան ծախս (հազ. դրամ)		
			Ընդամենը	Աշխատա- վարձ	Մոցապ. հատկա- ցումներ
Գործադիր ղեկավար	1	132.0	1831.2	1584.0	247.2
Աշխատակազմի քարտուղար	1	73.0	1055.4	876.0	179.4
Հաշվապահ	1	72.0	1041.6	864.0	177.6
Մասնագետներ	4	54.0	3172.8	2592.0	580.8
Հավաքարար	1	36.0	544.8	432.0	112.8
Պահակ	1	36.0	544.8	432.0	112.8
Ընդամենը	9		8190.6	6780.0	1410.6

Այսպիսով, Տաթևի միջհամայնքային միավորման ձևավորման արդյունքում կառավարման ապարատի կրճատումից ակնկալվող տնտեսական օգուտները կկազմեն **4940.7** հազ. դրամ (23017.5 հազ. դրամ - 2214.0 հազ. դրամ - 7672.2 հազ. դրամ - 8190.6 հազ. դրամ):

Նորաշենիկի միջհամայնքային միավորում

Նորաշենիկի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող 10 համայնքներում միասին առկա է 39.5 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 28716.6 հազ. դրամ (տե՛ս հավելված 29.2):

Միջհամայնքային համագործակցության արդյունքում Նորաշենիկի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմերը փորձագիտական գնահատմամբ կարող են կրճատվել հետևյալ կերպ.

քանի որ Նորաշենիկի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող բոլոր համայնքներում էլ բնակչության թիվը 200-ից պակաս է, ապա այս համայնքներից և ոչ մեկում աշխատակազմ չի ձևավորվի:

Այս համայնքներում կլինեն միայն համայնքների ղեկավարներ, որոնց պահպանման համար կպահանջվի՝

$$10 \cdot (12 \cdot 50.0 \text{ հազ. դրամ} + 12 \cdot 11.5 \text{ հազ. դրամ}) = 7380.0 \text{ հազ. դրամ}$$

Նորաշենիկի միջհամայնքային միավորման համար առաջարկվում է ձևավորել 9 միավոր հաստիքով աշխատակազմ, որի պահպանման համար կպահանջվի 8229.0 հազ. դրամ (տե՛ս աղյուսակ 50):

Նորաշենիկի միջհամայնքային միավորման աշխատակազմը

Անվանում	Հաստիքային միավոր	Դրույթա- չափ (հազ. դրամ)	Տարեկան ծախս (հազ. դրամ)		
			Ընդամենը	Աշխատա- վարձ	Սոցալ. հատկա- ցուցիչներ
Գործադիր ղեկավար	1	96.0	1372.8	1152.0	220.8
Աշխատակազմի քարտուղար	1	67.0	972.6	804.0	168.6
Հաշվապահ	1	66.0	958.8	792.0	166.8
Մասնագետներ	4	66.0	3835.2	3168.0	667.2
Հավաքարար	1	36.0	544.8	432.0	112.8
Պահակ	1	36.0	544.8	432.0	112.8
Ընդամենը	9		8229.0	6780.0	1449.0

Այսպիսով, Նորաշենիկ միջհամայնքային միավորման ձևավորման արդյունքում կառավարման ապարատի կրճատումից ակնկալվող տնտեսական օգուտները կկազմեն **13107.6** հազ. դրամ (28716.6 հազ. դրամ-7380.0 հազ. դրամ - 8229.0 հազ. դրամ):

Խնածախի միջհամայնքային միավորում

Խնածախի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող 3 համայնքներում միասին առկա է 19.1 միավոր հաստիք, որոնց պահպանման համար պահանջվել է 18358.7 հազ. դրամ (տե՛ս հավելված 25.2):

Միջհամայնքային համագործակցության արդյունքում Խնածախի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմերը փորձագիտական գնահատմամբ կարող են կրճատվել հետևյալ կերպ. նշյալ 3 համայնքներում առաջարկվում է ձևավորել 9 միավոր հաստիք, որոնց պահպանման համար կպահանջվի 11348.4 հազ. դրամ (տե՛ս աղյուսակ 51):

Խնածախի միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքների աշխատակազմերն ու դրանց պահպանման ծախսերը

Անվանում	Խնածախ (500-ից ավելի բնակիչ)			Խոզնավար (մինչև 500 բնակիչ)			Վաղատուր (մինչև 500 բնակիչ)		
	միավոր	դրույթաչափ	պահպանման ծախսեր (հազ. դր)	միավոր	դրույթաչափ	պահպանման ծախսեր (հազ. դր)	միավոր	դրույթաչափ	պահպանման ծախսեր (հազ. դր)
Համայնքի ղեկավար	1	130.0	1806.0	1	80.0	1152.0	1	150.0	2058.0
Աշխատակազմի քարտուղար	1	80.0	1152.0	-	-	-	-	-	-
Հաշվապահ	1	75.0	1083.0	-	-	-	-	-	-
Մասնագետներ	2	75.0	2166.0	1	63.0	917.4	1	70.0	1014.0
<i>Ընդամենը</i>	<i>5</i>	<i>-</i>	<i>6207.0</i>	<i>2</i>	<i>-</i>	<i>2069.4</i>	<i>2</i>	<i>-</i>	<i>3072.0</i>

Խնածախի միջհամայնքային միավորման համար առաջարկվում է ձևավորել 10 միավոր հաստիքով աշխատակազմ, որի պահպանման համար կպահանջվի 13251.6 հազ. դրամ (տե՛ս աղյուսակ 52):

Խնածախի միջհամայնքային միավորման աշխատակազմը

Անվանում	Հաստիքային միավոր	Դրույթաչափ (հազ. դրամ)	Տարեկան ծախս (հազ. դրամ)		
			Ընդամենը	Աշխատա- վարձ	Մոտավ. հատկա- ցումներ
Գործադիր ղեկավար	1	180.0	2436.0	2160.0	276.0
Աշխատակազմի քարտուղար	1	118.0	1654.8	1416.0	238.8
Հաշվապահ	1	90.0	1290.0	1080.0	210.0
Մասնագետներ	5	90.0	6450.0	5400.0	1050.0
Հավաքարար	1	48.0	710.4	576.0	134.4
Պահակ	1	48.0	710.4	576.0	134.4
<i>Ընդամենը</i>	<i>10</i>		<i>13251.6</i>	<i>11208.0</i>	<i>2043.6</i>

Այսպիսով, Խնածախի միջհամայնքային միավորման ձևավորմամբ կառավարման ապարատի կրճատումից տնտեսական օգուտներ չեն ակնկալվում,

այլ առաջանում են լրացուցիչ ծախսեր **6241.3** հազ. դրամ գումարի չափով (18358.7 հազ. դրամ-11348.4 հազ. դրամ - 13251.6 հազ. դրամ):

3.6.3.3. Համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետության համեմատություն

Աղյուսակ 53

Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման տնտեսական արդյունավետության համեմատություն

Համայնք	Տարբերություն (խոշորացում- միջհամայնքային համագործակցություն)	Տնտեսական օգուտներ	
		Խոշորացում ²⁵	Միջհամայնքային համագործակցություն
Տաթև	4954.8	9895.5	4940.7
Նորաշենիկ	717.6	13825.2	13107.6
Խնածախ	10960.8	4719.5	-6241.3
<i>Ընդամենը</i>	<i>16633.2</i>	<i>28440.20</i>	<i>11807.00</i>

Միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետության հաշվարկի ժամանակ ընտրվել են տարբեր մոդելներ՝ ըստ վերջինիս կազմի մեջ ընդգրկված համայնքների բնակչության թվի: Դրանք են՝

1. Նորաշենիկի միջհամայնքային միավորումը, որի կազմում ընդգրկված բոլոր 10 համայնքներում բնակչության թիվը 200-ից պակաս է,

2. Տաթևի միջհամայնքային միավորումը, որի կազմում ընդգրկված են թե՛ մինչև 200, թե՛ 200-500 և թե՛ 500-ից ավելի բնակիչ ունեցող 6 համայնքներ,

3. Խնածախի միջհամայնքային միավորումը, որի կազմում ընդգրկված են 200-500 և 500-ից ավելի բնակիչ ունեցող 3 համայնքներ:

Առաջին դեպքում (տե՛ս աղյուսակ 53) միջհամայնքային համագործակցությունը բավականին նման է համայնքների խոշորացմանը այն պատճառով, որ 200-ից պակաս բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմ չի ձևավորվում, այլ, ինչպես խոշորացման դեպքում, պահվում է միայն համայնքի ղեկավարի հաստիք: Ուստի, այս դեպքում միջհամայնքային

²⁵ Ներկայացված են միայն ապարատի կրճատումից առաջացած տնտեսական օգուտները, մանկապարտեզների ու գրադարանների կրճատումից առաջացող օգուտները չեն դիտարկվել, քանի որ դրանք համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման տարբերակներում նույնն են:

համագործակցության տնտեսական արդյունավետությունը գրեթե համընկնում է խոշորացման ժամանակ առաջացող տնտեսական արդյունավետությանը:

Երկրորդ և երրորդ դեպքերում (տե՛ս աղյուսակ 34) միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետությունը խոշորացման համեմատ նվազում է, քանի որ 200-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում անհրաժեշտություն կա ձևավորելու աշխատակազմ: Երրորդ դեպքում միջհամայնքային համագործակցության արդյունքում նույնիսկ առաջանում են լրացուցիչ ծախսեր:

Լրացուցիչ ծախսերից խուսափել և տնտեսական արդյունավետությունը բարձրացնել կարելի է, եթե միջհամայնքային համագործակցության կազմում ընդգրկված համայնքների թիվն ավելացվի: Սակայն նույնիսկ այս դեպքում, միևնույնն է, միջհամայնքային համագործակցության արդյունքում առաջացող տնտեսական օգուտները կզիջեն խոշորացման օգուտներին:

3.7. Եզրակացություններ համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության սկզբունքների վերաբերյալ

Սույն ուսումնասիրության շրջանակներում կատարված վերլուծությունները (ներառյալ տնտեսական արդյունավետության գնահատականները) հանգեցնում են հետևյալ եզրակացություններին.

Վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելիս որպես գերակա ուղղություն պետք է դիտարկել համայնքների խոշորացումը, ինչը կապահովի առավելագույն տնտեսական օգուտներ: Ընդ որում, բարեփոխումներն ավելի շոշափելի արդյունքներ կարող են ապահովել համայնքների խոշորացման ավելի «արմատական» լուծումների պարագայում: Այդ սկզբունքով առաջնորդվելը թույլ կտա լուծել տարածքային զարգացման անհամամասնությունները չեզոքացնելու հիմնախնդիրը՝ նպաստելով հետընթաց ապրող տարածաշրջանների առաջանցիկ զարգացմանը և տարածքների կազմակերպման միակենտրոն կամ բևեռացված մոդելից աստիճանաբար անցում կատարել բազմակենտրոն մոդելի:




ՀՀ Սյունիքի մարզի համայնքների խոշորացման վերաբերյալ ներկայացվող առաջարկությունները «խոշորացված համայնքի տեսլականում» (տե՛ս բաժին 2.5.) սահմանված պայմաններին համապատասխանության տեսանկյունից ներկայացված են աղյուսակ 54-ում:

Աղյուսակ 54

ՀՀ Սյունիքի մարզի խոշորացվող համայնքների ցուցնիշների համապատասխանությունը «խոշոր համայնքի տեսլականում» սահմանված պայմաններին

	Համայնք	«խոշոր համայնքի տեսլականով» սահմանված պայմաններ						Ընդամենը
		Ծառայությունների ամբողջական մատուցում	Բնական ռեսուրսների առկայություն	Մարդկային ռեսուրսների առկայություն	Ֆինանսական ռեսուրսների հնարավորություն	Ենթակառուցվածքներով ապահովվածություն	Տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնի առկայութ.	
1	ԳՈՐԻՍ							6/0/0
2	ԽՆԱԾԱԽ							1/4/1
3	ՏԵՂ							2/4/0
4	ՇԻՆՈՒՂԱՅՐ							2/4/0
5	ՏԱԹԵՎ							1/4/1
6	ՇՈՒՌՆՈՒԽ							0/1/5
7	ԿԱՊԱՆ							6/0/0
8	ՆՈՐԱՇԵՆԻԿ							1/1/4
9	ՍՅՈՒՆԻՔ							0/2/4
10	ԱՋԱՐԱՆ							5/1/0
11	ԾԱՎ							1/0/5
12	ՄԵՂՐԻ							6/0/0
13	ՄԻՍԻԱՆ							6/0/0
14	ԴԱՍՏԱԿԵՐՏ							1/1/4
15	ՍԱՌՆԱԿՈՒՆՔ							1/4/1
16	ԱՆԳԵՂԱԿՈԹ							2/4/0
17	ԲՈՆԱԿՈԹ							2/4/0
18	ԴԱՐԲԱՍ							2/4/0
	Ընդամենը	5/8/5	16/2/0	10/6/2	5/8/5	4/9/5	5/5/8	

Պայմանական նշաններ

-  Սահմանված պայմանները լիովին բավարարող
-  Սահմանված պայմանները մասնակիորեն բավարարող
-  Սահմանված պայմանները չբավարարող

Միջհամայնքային համագործակցության այլ տարբերակները, մասնավորապես՝ միջհամայնքային միավորումները կամ նպատակային միությունները, կարելի է կիրառել ինչպես խոշորացված, այնպես էլ այդ գործընթացից դուրս մնացած համայնքների պարագայում:

***Ծանոթություն:** Աղյուսակում, «մարդկային ռեսուրսներ» սյունակում, որպես «տեսլականին» լիարժեքորեն համապատասխանող պայման դիտարկվել է 3000-ից ավելի բնակչության թվաքանակը, որպես մասնակիորեն բավարարող՝ 1001-3000 թվաքանակը, որպես բոլորովին չբավարարող՝ 1000 թվաքանակը:*

Աղյուսակում ներկայացված պայմանների համեմատական վերլուծությունից երևում է հետևյալը.

«Տեսլականով» սահմանված բոլոր 6 պայմանները լիովին բավարարում են Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի համայնքները. Քաջարան համայնքը լիարժեքորեն բավարարում է 5 պայման, իսկ ենթակառուցվածքների գնահատականը պայմանավորված է Գեղիի գետահովտում տեղաբաշխված բնակավայրերի մեկուսացածությամբ և համայնքի կենտրոնից հեռավորությամբ:

Տեղ, Շինուհայր, Անգեղակոթ, Բռնակոթ համայնքները լիովին բավարարում են 2 պայման, մասնակիորեն՝ 4 պայման, Դարբասը լիովին բավարարում է 2 պայման, մասնակիորեն՝ 3, Խնածախ, Տաթև և Սառնակունք համայնքները լիովին բավարարում են 1 պայման, մասնակիորեն՝ 4: Նշված համայնքներում համայնքային կենտրոնին բնորոշ գործառույթների ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ամբողջական ձևավորումը ենթադրում է պետության կողմից որոշակի աջակցություն:


Շուռնուխ, Նորաշենիկ, Սյունիք, Ծավ և Դաստակերտ համայնքները գործնականում չեն համապատասխանում «տեսլականով» սահմանված պայմաններին: Այս պարագայում առաջարկվող լուծումները պարտադրված են հիմնականում բնական-աշխարհագրական գործոններով և կարող են դիտարկվել որպես անցումային: Այդ համայնքներում առկա հիմնախնդիրները կարիք ունեն լրացուցիչ քննարկումների, իսկ դրանց լուծումները կարող են պայմանավորվել ինչպես տարածաշրջանային առանձնահատկություններով, այնպես էլ պետության տարածքային քաղաքականության գերակայություններով:

Քարտեզ 16-ում ներկայացված է մարզի համայնքների տեղաբաշխումն ըստ խոշորացված համայնքի տեսականում սահմանված պայմաններին համապատասխանության աստիճանի:

Քարտեզ 16

Համայնքների տեղաբաշխումն ըստ խոշորացված համայնքի տեսականում սահմանված պայմանների

Խոշոր համայնքի տեսականին լիովին բավարարող	Միսիան, Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի
Խոշոր համայնքի տեսականին մասնակիորեն բավարարող	Սառնակունք, Բոնակոթ, Անգեղակոթ, Դարբաս, Տեղ, Խնածախ, Շինուհայր, Տաթև
Խոշոր համայնքի տեսականին չբավարարող	Դաստակերտ, Շուռնուխ, Լորաշենիկ, Սյունիք, Ծավ



**ԳԼՈՒԽ IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ (ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼԻ)
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

4.1. Ներածություն

Հաշվի առնելով համայնքների խոշորացման հիմնախնդրի ինչպես քաղաքական կողմը, այնպես էլ հասարակական հնչեղությունն ու իրականացման սոցիալ-հոգեբանական և իրավական դժվարությունները՝ Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումները կպահանջեն որոշակի ժամանակ: Ըստ էության, հիմնախնդիրը կարող է լուծվել հետևյալ հնարավոր տարբերակներով.

ա. ***Բարեփոխումների իրականացում ՀՀ կառավարության գործող հայեցակարգի դրույթների կիրառումով:*** Այս տարբերակը, ինչպես հիմնավորվել է սույն ուսումնասիրության շրջանակներում, չի կարող ցանկալի արդյունքի հանգեցնել, քանի որ չի համապատասխանում խոշոր համայնքի տեսլականով սահմանված պայմաններին: Այլ կերպ ասած՝ թույլ, մարդկային ու տնտեսական բավարար ներուժ չունեցող բնակավայրերի միավորումը մեկ համայնքում, անկախ բնակավայրերի քանակից, չի կարող նպաստել բնակավայրերի զարգացմանը, եթե դրանց մեջ բացակայում է տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոն հանդիսացող (կամ նման հեռանկարի ներուժ ունեցող) մեկ խոշոր բնակավայր:

բ. ***Արմատական և համապարփակ լուծման տարբերակ,*** ինչը ենթադրում է բոլոր մարզերի կտրվածքով ծավալուն և մեծ ժամանակ պահանջող նախապատրաստական աշխատանքների կատարում (հրավիճակի, վերլուծություն, վարչատարածքային բարեփոխման նախնական տարբերակների մշակում, հանրային քննարկումների կազմակերպում, օրենսդրական ամբողջական փաթեթի նախապատրաստում, տեղական հանրաքվեների անցկացում և այլն): Այս տարբերակը, առաջին հայացքից հրապուրիչ լինելով հանդերձ, զուրկ չէ որոշակի ռիսկերից, որոնք կարող են ձախողել բարեփոխումների ողջ ընթացքը: Այդ ռիսկերը պայմանավորված են՝

- ժամանակի գործոնով (գործընթացի իրականացման ժամանակահատվածի անորոշություն),

- անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման համար անհրաժեշտ միջոցների բացակայությամբ (ամբողջ հանրապետությունում միաժամանակյա փոփոխությունները կպահանջեն անհամեմատ մեծ միջոցներ),

- քաղաքական գործոնով (տվյալ ժամանակահատվածում գործադիր և օրենսդիր մարմինների, ինչպես նաև քաղաքական ուժերի որդեգրած գերակայություններ):

գ. *Սույն ուսումնասիրության շրջանակներում արված եզրահանգումների հիման վրա բարեփոխումների իրականացման տարրերակ:* Այս մոտեցումը թույլ կտա թիրախային տարածքներում (մարզերում կամ տարածաշրջաններում) խոշորացված համայնքների գործունեության արդյունավետությունը և բնակչության օգուտները տեսանելի դարձնել հանրության համար, ինչն իր հերթին կնպաստի հետագա բարեփոխումները սահուն անցկացնելուն: Միաժամանակ, փուլային լուծումը թույլ կտա բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ միջոցները բաշխել ողջամիտ ժամկետների միջև՝ զուգահեռաբար լուծելով նաև պակասող ենթակառուցվածքների ձևավորման խնդիրը:

4.2. Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումների իրականացման փուլերը

Վարչատարածքային բարեփոխումների, մասնավորապես՝ համայնքների խոշորացման ծրագրերի իրականացման հիմնական փուլերն են.

- *Թիրախ հանդիսացող մարզի կամ տարածքի ընտրություն:*
- *Ընտրված տարածքի համար, ՀՀ կառավարության «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգի բարեփոխված (նորացված) չափորոշիչներին համապատասխան, վարչատարածքային բարեփոխումների իրականացման աշխատանքային տարրերակի մշակում:*

• Աշխատանքային տարբերակի շուրջ բազմաոլորտ մասնագիտական (փորձագիտական) քննարկումների կազմակերպում (պետական և անկախ փորձագետների ընդգրկում):

• Քննարկումների արդյունքում ստեղծված վարչատարածքային բարեփոխումների առաջարկությունների միասնական փաթեթի ձևակերպում:

• Առաջարկությունների նախնական քննարկումը ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում (անհրաժեշտության դեպքում քննարկումներին կարելի է ներգրավել նաև պետական և հանրային այլ կառույցների ներկայացուցիչներին):

• Առաջարկությունների քննարկում բարեփոխվող տարածքի մարզային, համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

• Վերոհիշյալ քննարկումների արդյունքում, ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների փաթեթի լրամշակում:

• Առաջարկությունների քննարկում միջգերատեսչական հանձնաժողովի նիստում:

• Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում և անցկացում:

• Վարչատարածքային բարեփոխման իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում և դրանց քննարկում ՀՀ կառավարությունում:

• Վարչատարածքային բարեփոխումների կատարման համար անհրաժեշտ ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում ՀՀ Ազգային ժողով:

• ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենքների, մասնավորապես «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների ընդունում:

• Նոր կազմավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում:

4.3. Վարչատարածքային բարեփոխումների համար տեղեկատվության ապահովումը

Վարչատարածքային բարեփոխումների համար անհրաժեշտ տեղեկույթը և դրա ձեռքբերման հնարավոր աղբյուրները տրված են ներքոբերյալ ցանկում:

	Տեղեկույթի տեսակը	Տեղեկույթի հնարավոր աղբյուրները
1	Նախկին և ներկա վարչատարածքային բաժանում	«ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, նախկին և ներկա վարչական քարտեզներ
2	Վարչատարածքային բաժանմանը, տեղական ինքնակառավարմանը, բյուջետային համակարգին, հողային և բնական այլ ռեսուրսների կառավարմանը, տարածքային կառավարմանը և կազմակերպմանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առնչվող նորմատիվ իրավական ակտեր	Նորմատիվ իրավական ակտերի տեղեկատու ինտերնետային կայք, պաշտոնական տեղեկագրեր
3	Թիրախային մարզերի և համայնքների տնտեսության ընդհանուր նկարագիր	Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, համայնքների զարգացման ծրագրեր, վիճակագրական տվյալներ
4	Բնական-աշխարհագրական գործոններ	Ֆիզիկական քարտեզներ և ատլասներ, տեղադիրտական ուսումնասիրություններ, հանրագիտարանային գրականություն
5	Բնական ռեսուրսներ (հող, անտառ, օգտակար հանածոներ), հնարավորության պարագայում՝ դրանց արտացոլում կադաստրային կամ տեղագրական հանույթների վրա	Մարզի և համայնքների հողային հաշվեկշիռներ՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության իրավունքի սուբյեկտների
6	Ենթակառուցվածքներ՝ <i>ինժեներատրանսպորտային (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղի և այլն, մայրուղիների կարգը և նշանակությունը) արտադրական</i>	Ճանապարհային ատլասներ, մարզպետարան, համայնք Մարզի և համայնքների զարգացման ծրագրեր, մարզպետարան, համայնք

	<i>սոցիալական (կրթություն, առողջապահություն, մշակույթ և այլն)</i>	Մարզի և համայնքների զարգացման ծրագրեր, մարզպետարան, համայնք
7	Տարածքային և համայնքային զարգացման ծրագրեր և նախագծեր	Մարզի և համայնքների զարգացման ծրագրեր, մարզի տարածքային հատակագծման նախագիծ, համայնքների գլխավոր հատակագծեր, հողաշինարարական և անտառաշինական նախագծեր (առկայության պարագայում)
8	Ժողովրդագրական տվյալներ	Ազգային վիճակագրական ծառայության կայքէջ, համայնք
	Բնակչության թիվը և դրա փոփոխությունների դինամիկան	Ազգային վիճակագրական ծառայության կայքէջ, համայնք
	Բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունները	Տեղական ինքնակառավարման մարմիններ, սոցիալական ծառայություններ, մարզպետարան, համայնք
9	Համայնքների կողմից մատուցվող ծառայությունների առկա մակարդակը	Տեղական ինքնակառավարման մարմիններ
10	Համայնքների ֆինանսական կարողությունները	Տեղական ինքնակառավարման մարմիններ
	Բյուջեի եկամուտներ և ծախսեր	
	Հատուկ ծառայություններ	
	Ներդրումներ	
	Սուբսիդիաներ	
	Դոտացիաներ	

Թվարկված տեղեկությից բացի, տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված, կարող են անհրաժեշտ լինել նաև տեղեկություններ ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքների, բնակչության մենթալային համատեղելիության, բնակավայրերի լեռնային, բարձրլեռնային կամ սահմանամերձ կարգավիճակի վերաբերյալ և այլն:

4.4. Ուսումնասիրությունների իրականացման մեթոդաբանությունը

Վարչատարածքային բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ ուսումնասիրությունները ենթադրում են փորձագետների թիմային աշխատանք՝ հետևյալ հիմնական ոլորտների մասնագետների ընդգրկումով.

ա. տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում,

բ. բյուջետային համակարգ և ֆինանսներ,

գ. տնտեսություն և տնտեսական աշխարհագրություն,

դ. հողային ռեսուրսների կառավարում,

ե. տարածքային կազմակերպում և քաղաքաշինություն:

Ուսումնասիրությունների բովանդակությունն ու կառուցվածքը պետք է ունենան հետևյալ առանցքային ուղղությունները՝

• խոշոր համայնքի տեսլականի սահմանում,

• իրավիճակի նկարագրություն, ինչը ենթադրում է վարչատարածքային բաժանման առկա կառուցվածքի բնութագրումը, դրա ձևավորման նախապատմությունը և հիմնական գործոնները: Կարող են հաշվի առնվել նաև անցյալի պատմական, ինչպես նաև մշակութային և էթնիկ գործոններ:

• առկա իրավիճակի վերլուծություն հետևյալ ուղղություններով՝

ա. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մակարդակ,

բ. ֆինանսներ և բյուջե,

գ. բնական ռեսուրսներ (հողային, անտառային, ընդերք, ռեկրեացիա),

դ. մարդկային ռեսուրսներ,

ե. ենթակառուցվածքներ,

զ. տարաբնակեցման համակարգ:

Ծառայությունների մատուցման վերլուծությունը ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակը, դրանց մատչելիությունը, ինչպես նաև արդյունավետությունը (օրենքով սահմանված ծառայություններից որոնք են մատուցվում և ինչ որակով) պարզելը:

Համայնքի ֆինանսներն ու բյուջեն վերլուծվում են ըստ բյուջետային եկամուտների և ծախսումների ուղղությունների, այդ թվում՝ մեկ բնակչի հաշվով;

Բնական ռեսուրսներից առանձնակի կարևորություն պետք է վերապահել հողերին, հատկապես՝ գյուղատնտեսական նշանակության հողերին:

Հողային ռեսուրսների նկատմամբ հատուկ ուշադրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց արդյունավետ կառավարման մակարդակից է կախված համայնքների սեփական եկամուտների գերակշիռ մասը:

Բնական ռեսուրսներից հետազոտության առարկա պետք է լինեն նաև անտառները, ընդերքի հարստությունները և ռեկրեացիոն ռեսուրսները:

Առանձին ուսումնասիրությունների առարկա կարող են լինել զբոսաշրջային ռեսուրսները:

Մարդկային ռեսուրսների ուսումնասիրությունը ենթադրում է դրանց տարածքային բաշխվածությունն ըստ բնակավայրերի և համայնքների, բնակավայրերի միջին մարդաշատությունը, բնակչության փոփոխությունների դինամիկան և բնակչության խտությունը:

Ենթակառուցվածքներից առանձին պետք է վերլուծել տրանսպորտային կապերը՝ որպես համայնքների խոշորացման արդյունքների վրա էականորեն ազդող գործոն (այլ վերլուծությունները, այդ թվում՝ սոցիալական ենթակառուցվածքներին առնչվողները, դիտարկվում են բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակում):

Վերլուծության այս բաժնում դիտարկման ենթակա են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բնակավայրերի դիրքը միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմայրուղիների նկատմամբ, դրանց հեռավորությունը Երևանից, մարզկենտրոնից և տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնից, մինչև տեղային կենտրոն ավտոճանապարհի բնույթը, բնակավայրերի փակուղային և այլ բնակավայրերից մեկուսացած դիրքը:

Տարաբնակեցման համակարգի ընդհանուր նկարագիրը ենթադրում է բնական-աշխարհագրական պայմաններով, մայրուղային տրանսպորտային կապերով և պատմական իրողություններով պայմանավորված՝ բնակավայրերի տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունների բացահայտումը: Տարաբնակեցման համակարգի, բնական և մարդկային ռեսուրսների, ինչպես նաև ենթակառուցվածքների վերլուծության արդյունքում բացահայտվում են այն

բնակավայրերը, որոնք առավել խոցելի պայմաններում են գտնվում, ինչպես նաև զարգացման որոշակի ներուժ ունեցող բնակավայրերը:

Որպես համայնքների կարողությունների գնահատման (կամ ուժեղ և թույլ կողմերի բացահայտման) գործոններ կարող են ընտրվել՝

Նեգատիվ բնույթի գործոնները.

- հանրային ծառայությունների և սպասարկումների բավարար մակարդակ և ներուժ ունեցող բնակավայրի (տեղային կենտրոնի) բացակայությունը, բնակչության փոքր թիվը (մինչև 500 մարդ),

- բնակչության փոփոխությունների բացասական հաշվեկշիռը (բնակչության նվազման միտումներ),

- բարենպաստ կենսամիջավայրի նվազագույն շեմից (20 մարդ/քառ.կմ) ցածր բնակչության խտությունը,

- փակուղային կամ տարաբնակեցման համակարգի փնջային օղակներից որոշակիորեն մեկուսացած դիրքը:

Որպես նեգատիվ գործոններ կարող են դիտվել նաև բնական, ռելիեֆային կամ տուրիստական ռեսուրսների բացակայությունը, չօգտագործվող գյուղատնտեսական հողերի մեծ ծավալները և դրանց մասնատվածությունը, անշարժ գույքի երկրորդային շուկայի ցածր ակտիվությունը, բնակչության արտագաղթը և այլ գործոններ՝ կախված տարածաշրջանային առանձնահատկություններից:

Պոզիտիվ բնույթի գործոնները՝

- բնակավայրի մեծությունը (1000-ից ավելի բնակչություն),
- բնակչության աճի միտումները,
- 1 բնակչի կամ տնային տնտեսության հաշվարկով հողային մեծ պաշարների առկայությունը,

- հանքահումքային պաշարների առկայությունը,

- ռելիեֆային և տուրիստական պաշարների առկայությունը,

- մոտիկությունը միջպետական նշանակության ավտոմայրուղիներին:

Տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված՝ պոզիտիվ գործոնների թվում կարելի է նշել բնակչության զբաղվածության բարձր

տոկոսը, արտագաղթի բացակայությունը, սոցիալական ենթակառուցվածքներով հագեցածությունը և այլն:

Ուսումնասիրությունների ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար այցելել թիրախային համայնքներ՝ դաշտային տեղադրությունների և համայնքային կառույցների հետ հանդիպումների նպատակով: Այդ հանդիպումների ընթացքում ինչպես բանավոր հարցումների, այնպես էլ հարցաթերթիկների միջոցով կարող են ճշգրտվել ուսումնասիրությունների համար անհրաժեշտ տվյալները:

4.5. Ուսումնասիրությունների արդյունքում ձևավորվող եզրակացությունների և առաջարկությունների փաթեթը

Նախորդ բաժնում կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ձևավորվում են համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության հնարավոր մոդելների ընտրության վերաբերյալ նախնական մոտեցումները:

Համայնքների խոշորացման տարբերակների ընտրությունը կատարվում է ՀՀ կառավարության հայեցակարգում առկա և սույն ուսումնասիրության արդյունքում լրամշակված չափորոշիչների կիրառմամբ:

Այս փուլում կարևոր խնդիր է ապագա խոշորացվող համայնքի կենտրոնի ընտրությունը՝ հետևյալ տարբերակներից որևէ մեկով կամ դրանց համադրմամբ.

- *համայնքային կենտրոնն դարձնել առավել մեծ թվով բնակիչ ունեցող բնակավայրը,*
- *համայնքային կենտրոնն դարձնել բոլոր բնակավայրերի համեմատ կենտրոնական դիրք ունեցող բնակավայրը,*
- *համայնքային կենտրոնն դարձնել այն բնակավայրը, որը մյուս բնակավայրերը հիմնական ճանապարհների հետ կապող տրասնպորտային հանգույց է:*

Բացի վերը շարադրվածից՝ համայնքի կենտրոնն պետք է ընտրվի այնպիսի բնակավայր, որը միաժամանակ կլինի տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոն:

Համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության ընտրված նախնական մոդելի նկատմամբ ենթադրվում է տալ **փորձագիտական գնահատականներ** հետևյալ ուղղություններով՝

- *տնտեսական արդյունավետության գնահատում,*
- *մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնման, որակի բարձրացման և մատչելիության մեծացման հնարավորությունների ուսումնասիրություն,*
- *բնական (հող, անտառ, ընդերք) և ռեկրեացիոն ռեսուրսների հասանելիության դիտարկում,*
- *մարդկային ռեսուրսների հնարավորինս հավասար բաշխվածության փաստի ուսումնասիրություն,*
- *տարաբնակեցման համակարգի բազմակենտրոն մոդելի ձևավորման հնարավորություն:*

Միջհամայնքային համագործակցության տարբեր մոդելները կարող են կիրառելի լինել վարչատարածքային բարեփոխումների վերը նշված ցանկացած մոդելի պարագայում:

Ստացված գնահատականների հիման վրա կազմվում է վարչատարածքային բարեփոխումների (համայնքների խոշորացում և միջհամայնքային համագործակցության ձևեր) նախնական տարբերակը՝ դրա գրաֆիկական (քարտեզային) ամրագրումով:

ԳԼՈՒԽ V. ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀՀ վարչատարածքային բարեփոխումների, մասնավորապես՝ համայնքների խոշորացման ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մի շարք նորմատիվ իրավական ակտերում: «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգից բացի, համարժեք փոփոխություններ և լրացումներ պետք է նախատեսվեն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենքներում, բյուջետային օրենսդրությունում, ինչպես նաև ՀՀ ընտրական և հողային օրենսգրքերում: Ըստ էության, խնդիրն առնչվում է ոչ միայն գուտ վարչատարածքային փոփոխություններին, այլև տեղական ինքնակառավարման համակարգի ամրապնդման, զարգացման և հզորացման ընդհանուր ծրագրերին, որոնք իրենց հերթին կարող են նպաստել երկրի հավասարակշռված տարածքային զարգացմանը: Առաջարկվող փոփոխությունները պետք է հիմնված լինեն ստորև շարադրվող սկզբունքային մոտեցումների վրա:

5.1. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման հայեցակարգ»

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության կողմից ընդունված հայեցակարգը իր բովանդակությամբ գրեթե հավասար կարևորություն և նշանակություն է տալիս ինչպես համայնքների խոշորացմանը, այնպես էլ միջհամայնքային միավորումների ձևավորմանը (տե՛ս գծապատկերներ 10 և 11):

Սույն ուսումնասիրությունն ու վերլուծությունները, ինչպես նաև տարբեր պետությունների փորձի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հայեցակարգում փոփոխություններ իրականացնելիս պետք է վերանայվեն շեշտադրումները՝ հիմնականում կարևորելով համայնքների խոշորացումը: Ընդ որում, միջհամայնքային միավորումների ձևավորումը չպետք է պայմանավորել խոշորացման գաղափարով, քանզի միջհամայնքային միավորումներ կարող են

ձևավորել և գործել ոչ միայն փոքր, այլև խոշորացված համայնքների պարագայում:
Ըստ այդմ՝

- Հայեցակարգում պետք է նախատեսել նոր ձևավորվող համայնքներում առնվազն մեկ համեմատաբար խոշոր բնակավայրի (առաջարկվում է, որպես կանոն, առնվազն 3000 բնակչի սահմանում) առկայության վերաբերյալ դրույթ: Փոքր բնակավայրերի միավորումը մեկ համայնքում, անկախ բնակավայրերի քանակից, չի կարող բավարար արդյունք ապահովել: Համայնքների խոշորացումը պետք է ստեղծի նախադրյալներ միջազգային պրակտիկայում կիրառվող՝ տարածքային կազմակերպման բազմակենտրոն մոդելի ձևավորման համար, ինչը ենթադրում է, որ համայնքների կենտրոնները պետք է միաժամանակ ձևավորվեն որպես տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոններ:

- Հայեցակարգում անհրաժեշտ է վերանայել համայնքների խոշորացման 3-րդ կետով սահմանված չափորոշիչը, ըստ որի նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից պետք է լինի մոտ 5 կմ: Կատարված ուսումնասիրությունների վրա հիմնված առաջարկությունները վկայում են, որ այս չափորոշիչը կարող է արհեստական խոչընդոտ դառնալ արդյունավետ որոշումներ ընդունելիս: Առկա ճանապարհների պայմաններում գոյություն ունեն դեպքեր, երբ մինչև 5 կմ երկարություն ունեցող ճանապարհներն ավելի դժվար անցանելի են, քան դրանցից ավելի երկար, սակայն բարեկարգ ճանապարհները: Պատահական չէ, որ եվրոպական շատ երկրներում, որպես չափման միավոր գործածվում է ոչ թե ճանապարհի հեռավորությունը կիլոմետրերով, այլ անցանելիությունը՝ րոպեներով: Կարելի է առհասարակ ձեռնպահ մնալ նման չափորոշիչի կիրառումից կամ այն սահմանել որպես բացառապես խորհրդատվական բնույթի, ընդ որում, որպես կանոն՝ դիտարկելով 0,5 ժամանոց կամ մինչև 20 կմ հասանելիության տիրույթը:

- Հայեցակարգում առանձնահատուկ կարևորություն և նշանակություն պետք է տալ առավելապես ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերին կամ համայնքներին: Իհարկե, հայեցակարգի չափորոշիչներից 7-րդը պահանջում է հաշվի առնել նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի բնակիչների համատեղելիությունն ու մենթալությունը, սակայն, կարծում ենք,

հնարավորինս հստակ ձևակերպումները կարող են ավելի հասկանալի դարձնել հետագա լուծումները: Մասնավորապես պետք է սահմանել, որ ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքները կարող են խոշորացվել միայն առավելապես նույն ազգի ներկայացուցիչներով բնակեցված համայնքների հետ:

- Չպետք է աչքաթող անել բոլոր համայնքների համար բնական պաշարներից օգտվելու առավելագույնս հավասար հնարավորությունների ստեղծումը, ինչը ենթադրում է հայեցակարգում համապատասխան դրույթի ներառում:


- Հայեցակարգում ցանկալի է ներառել նաև առանձին բաժին՝ մշտական բնակիչ չունեցող բնակավայրերի հիմնախնդրի լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ: Առանձին քննարկման կարիք ունի փոքր (կարող են դիտարկվել մինչև 50 կամ 100 բնակչով) բնակավայրերի հիմնախնդիրը:

Եթե փորձենք համեմատության մեջ դնել գործող հայեցակարգի կիրառման արդյունքում ձևավորվող լուծումները սույն ուսումնասիրությամբ առաջարկվող մոտեցումների հետ, ապա կստանանք հետևյալ պատկերները՝


ա. գործող հայեցակարգի համաձայն՝ համայնքների խոշորացման հնարավոր տարբերակները ներկայացված են թիվ 10 գծապատկերում, միջհամայնքային միավորումների ձևավորման տարբերակները՝ թիվ 11 գծապատկերում:

Գծապատկեր 10

Համայնքների խոշորացման հնարավոր տարբերակները գործող հայեցակարգով



Միջհամայնքային միավորումների ձևավորման տարբերակները գործող հայեցակարգով




★ Միջհամայնքային միավորման կենտրոններ

Միջհամայնքային միավորումներ

բ. Համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության հնարավոր տարբերակները սույն ուսումնասիրության շրջանակներում առաջարկվող փոփոխությունների հիման վրա ներկայացված են թիվ 12 գծապատկերում, որից ակնհայտ է դառնում հատկապես համայնքների խոշորացման առաջարկվող տարբերակի ավելի ամբողջական և ընդգրկուն բնույթը:

Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հնարավոր տարբերակները «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգի դրույթների լրամշակումից (փոփոխություններից) հետո



5.2. Փոփոխություններ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

1. Ակնհայտ է, որ վարչատարածքային բարեփոխումներն առաջին հերթին փոփոխությունների անհրաժեշտություն են առաջացնելու «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Մասնավորապես այս փուլում որևէ փոփոխության անհրաժեշտություն չկա ՀՀ մարզերի մակարդակում վարչատարածքային բաժանումը վերանայելու ուղղությամբ, ուստի անհրաժեշտ է փոփոխությունների նախագիծ նախապատրաստել ՀՀ Սյունիքի մարզի համայնքների և բնակավայրերի ցանկի վերաբերյալ՝ ըստ ներկայացված նոր առաջարկությունների:

Միաժամանակ չափազանց կարևոր է բնակավայրերի անվանումների պահպանումը բոլոր դեպքերում: Այս երևույթը ունի կարևոր սոցիալ-հոգեբանական նշանակություն:

Ինչ վերաբերում է համայնքների անվանումներին, ապա ներկայացված առաջարկություններում որպես օրինաչափություն պահպանվել է այն մոտեցումը, որ նոր ձևավորվող համայնքի անվանումը համընկնում է դրա կազմում բնակչության թվաքանակով ամենամեծ բնակավայրի անվանման հետ: Անշուշտ, կան նաև բացառություններ, որոնք ունեն իրենց հիմնավորումները: Այս կապակցությամբ վիճահարույց հարցերի առաջացման դեպքում, կարծում ենք, խնդիրը կարելի է քննարկել համայնքի բնակիչների հետ: Ընդ որում, ամբողջությամբ ընդունելի է համարվում այն տարբերակը, որ վիճելի դեպքերում համայնքին կարելի է տալ նոր անվանում, որը չի կրկնում դրա կազմի մեջ մտնող բնակավայրերի անվանումներից ոչ մեկը, իսկ բնակավայրերը կշարունակեն կոչվել իրենց անուններով: Այս դեպքում չեն փոխվի նաև գործող հասցեները, ինչը խնդիրներ չի առաջացնի ոստիկանության և զինվորական կոմիսարիատների համար:

2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում իրականացվելիք մյուս փոփոխությունը,

որը պայմանավորված է այս առաջարկությունների իրականացմամբ, վերաբերում է համայնքների կարգավիճակների (գյուղական և քաղաքային) վերանայմանը: Ներկայումս օրենքի հոդված 5-ը սահմանում է, որ քաղաքի դասակարգում ունեցող բնակավայր ընդգրկող համայնքները կոչվում են քաղաքային համայնքներ, իսկ միայն գյուղերի դասակարգմամբ բնակավայրեր ընդգրկող համայնքները՝ գյուղական համայնքներ: Առաջարկվում է առհասարակ հրաժարվել համայնքները քաղաքային կամ գյուղական դասակարգելու մոտեցումից՝ պահպանելով սակայն գոյություն ունեցող բնակավայրերի դասակարգումը: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բավարարվում է «համայնք» հասկացության կիրառմամբ, ուստի առաջարկվող փոփոխությունները Մայր օրենքին հակասող իրավական խնդիրներ չեն առաջացնի:

Հարկ է նկատել, որ իրականացված ուսումնասիրություններով պարզվել է, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով ՀՀ Սյունիքի մարզում ամրագրված են բնակավայրեր, որտեղ մշտական բնակչություն գոյություն չունի: Այդ խնդիրը կարիք ունի առանձին քննարկումների:

5.3. Փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում

Առաջարկվում է փոփոխություններ իրականացնել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում՝ *ավելացնելով համայնքի ավագանու անդամների թիվը*: Այդ իմաստով, կարծում ենք, լուրջ դժվարություններ չկան, քանի որ 2005 թվականին իրականացված սահմանադրական փոփոխություններով վերացվել է համայնքի ավագանու անդամների առավելագույն թվաքանակի սահմանափակումը (մինչև 15 անդամ), միաժամանակ գոյություն ունի ավագանու մեծ թվաքանակի (60 անդամ) նախադեպ Երևան համայնքում: Առաջարկվում է սահմանել համայնքի ավագանու տեղերի թիվը՝ ըստ բնակչության թվի հետևյալ հարաբերակցության.

- 15 անդամ, մինչև 5.000 բնակչություն ունեցող համայնքում,

-21 անդամ, 5.001-ից մինչև 10.000 բնակչություն ունեցող համայնքում,

- 31 անդամ, 10.001-ից ավելի բնակչություն ունեցող համայնքում:

Այս առաջարկությունը հիմնավորվում է նրանով, որ, կենտրոնացնելով տարբեր համայնքների (բնակավայրերի) ներուժն ու ռեսուրսները, ունենալով համայնքի մեծ բյուջե, սեփականություն, ավելի մեծ ծավալի լիազորություններ, համայնքի ավագանին, ըստ էության փոխելու է ներկայիս իր այն դերակատարությունը, որ ունի սահմանափակ ռեսուրսների պայմաններում: Նոր իրավիճակներում, մեծ համայնքների պարագայում, կարծում ենք, կմեծանա համայնքի բնակիչների շահագրգռվածությունը և ցանկությունը՝ ընտրվելու համայնքի ավագանու անդամ և մասնակից լինելու կառավարչական որոշումների ընդունմանը (ինչը մինչ այժմ նկատելի է քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում, որտեղ, ի տարբերություն փոքր գյուղական համայնքների, մշտապես լուրջ մրցակցություն է առաջանում համայնքի ավագանու ընտրություններում): Համայնքի ավագանու անդամների մեծ թիվը օբյեկտիվորեն կփոքրացնի համայնքի ղեկավարի ազդեցությունը համայնքի ավագանու և դրա կողմից ընդունվող որոշումների վրա՝ համայնքի ավագանին դարձնելով իրական հակակշիռ համայնքի ղեկավարին: Համայնքի ավագանու անդամների թվի ավելացումը նաև հնարավորություն կընձեռի, որ համայնքի ավագանու անդամներ ընտրվեն ոչ միայն համայնքային կենտրոնից կամ առավել շատ բնակիչ ունեցող բնակավայրերից, այլև տվյալ համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերից: Միաժամանակ համայնքի ավագանու անդամների թվաքանակի մեծացումը, առավել ևս խոշոր համայնքների պարագայում, կմեծացնի քաղաքական ուժերի հետաքրքրվածությունը համայնքների ավագանիների ընտրություններին կազմակերպված մասնակցություն ցուցաբերելու հարցում, ինչը մինչ օրս արտահայտվել է միայն համայնքների ղեկավարների ընտրություններում:

Համայնքի ավագանու ընտրությունների մեխանիզմների վերանայում:

Ներկայումս ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում ստեղծվում է մեկ բազմամանդատ

մեծամասնական ընտրատարածք²⁶: Այս դեպքում համայնքի ավագանու անդամ են ընտրվում համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվաքանակին համապատասխան առավելագույն ձայներ հավաքած թեկնածուները:

Համայնքների միավորման և խոշոր համայնքների կազմավորման պարագայում այս ընտրական համակարգը վերանայման կարիք ունի: Նախ օրենքով, գոնե անցումային դրույթներով, պետք է սահմանվի նորմ, ըստ որի առնվազն բարեփոխումներին հաջորդող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում համայնքի կազմի մեջ մտնող, մշտական բնակչությամբ յուրաքանչյուր բնակավայր պետք է հնարավորություն ունենա ընտրելու համայնքի ավագանու որոշակի թվով անդամների: Սա, իհարկե, որոշ չափով սահմանափակում է ժողովրդավարության սկզբունքը, ուստի երկու ընտրություններից հետո այս սահմանափակումը կդադարի գործելուց, ինչը հնարավորություն կտա համայնքի ավագանու անդամ ընտրվելու հասարակության մեջ առավել մեծ վստահություն և հեղինակություն վայելող գործիչներին: Սակայն սկզբնական շրջանում բոլոր բնակավայրերին պետք է հնարավորություն տրվի իր «ներկայացուցիչների» միջոցով մասնակցություն ունենալու որոշումների ընդունման գործընթացին: Մյուս դեպքերում համայնքի ավագանու անդամի պաշտոնում առաջադրումները պետք է իրականացվեն ոչ թե ինքնաառաջադրման սկզբունքով (ինչպես կատարվել է մինչ այժմ, ինչի հետևանքով համայնքի ավագանու անդամ են ընտրվում համայնքի ղեկավարի հետ բարեկամական, ազգակցական կամ ոչ ձևական փոխհարաբերություններով կապված և նրա ազդեցության ներքո գտնվող մարդիկ), այլ քաղաքական կուսակցությունների կողմից՝ նախապես համամասնական ցուցակներ կազմելով: Փաստորեն այս առաջարկության տրամաբանությունը հուշում է, որ համայնքի ավագանին պետք է ձևավորվի ոչ միայն մեծամասնական, այլև համամասնական եղանակով: Համայնքի ավագանու ձևավորման համամասնական եղանակն արդեն կիրառվել է Երևանի ավագանու ձևավորման դեպքում, ավելին՝ Երևանի

²⁶ ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 120:

պարագայում նախատեսված է նաև քաղաքապետի անուղղակի ընտրություն: Նոր առաջարկով կկիրառվեն ավագանու կազմավորման կոմբինացված (միաժամանակ ն՛ մեծամասնական, ն՛ համամասնական) մոդելները, ինչը ՀՀ ընտրական համակարգում կիրառվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ձևավորելիս: Մեծամասնական ընտրակարգով համայնքի ավագանու անդամ կարող են ընտրվել համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերից (կախված բնակչության թվաքանակից՝ մեկ կամ երկու անդամ), իսկ ավագանու մյուս անդամները կընտրվեն համամասնական եղանակով՝ կուսակցական ցուցակներով:

Այս առաջարկությունը հնարավորություն կտա ապակենտրոնացնելու նաև ՀՀ քաղաքական համակարգը՝ մեծացնելով քաղաքական կուսակցությունների, հատկապես դրանց տարածքային կառույցների դերը և մասնակցությունը հանրային կյանքին:

5.4. Փոփոխություններ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

Համայնքի ղեկավարի ներկայացուցիչների կամ վարչական օգնականների ինստիտուտի հիմնում: Քանի որ նոր միավորման պարագայում նախկին համայնքները կորցնում են իրենց կարգավիճակը, ապա, բնականաբար, այնտեղ առանձին չեն կարող ձևավորվել տեղական ինքնակառավարման մարմիններ: Սա կհանգեցնի նաև նախկին համայնքի ղեկավարի աշխատակազմերի լուծարմանը (ինչն էլ այս քաղաքականության հիմնական տնտեսական հիմնավորումներից մեկն է): Մտավախություն կա, որ իշխանության տեղական մարմինների բացակայությունը կարող է համայնքի լուծարման պատճառ դառնալ: Չհամաձայնելով այդ կարծիքի հետ՝ այնուամենայնիվ ընդունում ենք, որ կա խնդիրների որոշակի շրջանակ, որոնցով պայմանավորված՝ համայնքի բնակիչներն առնչվում են տեղական իշխանությունների հետ՝ ստիպված լինելով անհարմարություններ կրել՝ իրենց բնակության վայրից համայնքային կենտրոն

